

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՈՒ ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ  
ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿՆԵՐ / 1885-1914 ԹԹ. /



ԵՐԵՎԱՆ 2003

1. The first part of the document discusses the importance of maintaining accurate records of all transactions and activities. It emphasizes that this is crucial for ensuring transparency and accountability in the organization's operations.

2. The second part of the document outlines the specific procedures and protocols that must be followed to ensure that all records are properly maintained and updated. It includes detailed instructions on how to handle data entry, storage, and retrieval, as well as the roles and responsibilities of the staff involved in the process.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՈՒ ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ  
ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿՆԵՐ / 1885-1914 ԹԹ. /

A II  
88346



ՀՏԴ 329.78  
ԳՄԴ 66.6  
Հ 2 40

Գիրքը երաշխավորվել է Հրատարակութան ՀՀ ԳԱԱ Պատմութան ինստիտուտի Գիտխորհրդի կողմից:

Խմբագիր՝ պատմ. գիտ. դոկտոր Ա. Ա. Կոստանդյան

Գրավստոսներ՝ ՀՀ ԳԱԱ, ակադեմիկոս Հ. Ա. Ավետիսյան  
պ. գ. դ. Ա. Ա. Մեկբոնյան

Հ 240 ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՈՒ ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ  
ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿՆԵՐ / 1885-1914 ԹԹ. /

Եր., «Եգես», 2003, 202էջ

Գիտական հոդվածների ժողովածուն նվիրված է Հայ իրականության մեջ ձևավորված և դորձող քաղաքական կուսակցությունների պատմությունը դրանց ստեղծումից մինչև առաջին աշխարհամարտն ընկած ժամանակահատվածը:

Ժամանակագրորեն ներկայացված են Արմենական, Սոցիալ-դեմոկրատ հնչակյան, Հայ հեղափոխական դաշնակցություն, Վերակազմյալ հնչակյան, Հայ սահմանադրական ռամկավար, Սոցիալիստ-հեղափոխականների (Էսէռների), Սպեցիֆիկների կուսակցությունների, ՌՍԴ(Բ)Կ Անդրկովկասի և Հայաստանի կազմակերպությունների հիմնադրման պատմությունը:

Գիրքը նախատեսված է պատմաբաններին, դասավստոսներին և ընթերցող լայն հասարակայնության համար:

Հ 0802000000  
069 (01)-2003

ԳՄԴ 66.6

ԱՐՄԵՆԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ  
ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

1870-ական թվականների վերջին քաղաքական իրադարձութ-  
յունները՝ ռուս-թուրքական պատերազմը, Սան-Ստեֆանոյի պայմա-  
նագիրը, Բեռլինի վեհաժողովը, նրա ընդունած 61-րդ հոդվածը, Հայ-  
կական հարցի միջազգայնացումը, գաղափարական նոր ալեբախում-  
ներ առաջացրին Հայ հասարակական շրջաններում: Արևմտյան Հա-  
յաստանի ազատագրության հարցը դարձավ Հայ գործիչների մտահո-  
գոթյան առարկան, մտասեռուն գաղափարը: Տարբեր վայրերում  
մինչ այդ ստեղծված գաղտնի քաղաքական խմբակները հիմքեր էին  
ստեղծել առավել հաստատուն մարմինների ստեղծման համար: Աստի-  
ճանաբար հասունանում էր մարտական, գաղափարական ավելի կռու-  
կազմակերպության գաղափարը՝ քաղաքական կուսակցությունների  
ստեղծման անհրաժեշտությունը: Այդ գործին իր առաջին ներդրումն  
ունեցավ Վանի երիտասարդությունը:

Վան-Վասպուրականում 19-րդ դարի 70-80-ական թթ. կրթա-  
կան-լուսավորական և գաղափարա-քաղաքական հուժկու գործու-  
նեությունը առանձնացան երկու այնպիսի անհատներ, ինչպիսիք էին  
Մ. Փորթուզալյանն ու Մ. Խրիմյանը: Նրանք նախապատրաստեցին  
ազգանվեր մաքառողների մի նոր սերունդ էպան նպաստելով Արմե-  
նական կուսակցության կազմավորմանը:

Խրիմյանի, Փորթուզալյանի և նրանց աշակերտների ջանքերով  
1870-1880-ական թթ. Վանում ծնունդ առած ազգային-քաղաքական  
ոգեչունջ մթնոլորտն անհրաժեշտ պայմաններ էր ստեղծել Հայկական  
Հինավուրց այդ կենտրոնում քաղաքական կուսակցության ձևավոր-  
ման համար: Հոգեկան-մտավոր ընդհանուր զարթոնքը Հայրենասիրա-  
կան ջերմ զգացումներով խանդավառել էր Վանի երիտասարդությա-  
նը: Դեռևս 1872թ. սկզբներին Հայրենասեր գործիչների ջանքերով  
Վանում ստեղծվեց «Միություն ի փրկություն» գաղտնի ընկերութ-  
յունը, որի նպատակն էր արևմտահայությանն ազատագրել թուրքա-  
կան դժնդակ լծից<sup>1</sup>:

1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո Վանում  
կազմավորվեց նոր գաղտնի կազմակերպություն, որը կրեց «Սև  
խաչ» անվանումը: Այն ծավալեց առավել հետևողական և ընդգրկուն  
գործունեություն, կապեր ստեղծեց Կարինի «Պաշտպան Հայրենյաց»  
կազմակերպության հետ<sup>2</sup>: «Սև խաչը» գործնական հողի վրա դրեց ա-

<sup>1</sup> Տես Հայ ժողովրդի պատմություն, Հայկ. ՍՍՀ Գա իրատ., հ. 6, 1981, էջ 132:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 140:

գատազրական շարժման գործիչների տեսական գրույթները՝ Վանի ա-  
գատամիտ երիտասարդությանը վարժեցնելով գինական աշխատանք-  
ներին և զազանի գործունեությունների նրբություններին:

Բացառիկ կարևոր նշանակություն ստացավ «Սև խաչի» գոր-  
ծունեությունը նաև Արմենական կուսակցության ձևավորման գոր-  
ծընթացում:

Նույն այս ժամանակամիջոցում Վանում բացված արական և  
իգական տարրեր կարգի վարժարանները դարձան ազգային ինքնագի-  
տակցություն վերելքի և ազատագրական զազափարների տարածման  
կենտրոններ:

Սկզբնց կրթական մի աննախադեպ շարժում, զարկ տրվեց  
գալուցական ցանցի լայն զարգացմանը, առանց որի հնարավոր չէր  
սլափափախ այնպիսի հեղափոխական սերունդ, որը խանդավառված  
ազգային զազափարներով ի վիճակի լիներ սլաքարի ելնելու թուրքա-  
կան բռնակալության դեմ: Ազգային ինքնագիտակցության բավարար  
մակարդակ նվաճած այդ սերունդը պարզորոշ գիտակցեց, որ բարոյա-  
կան ու կրթա-մշակութային շատ ավելի բարձր արժանիքներ ունեցող  
հայությունը չպետք է ստրուկ մնա իր իսկ հայրենիքում:

Իրար ետևից կազմակերպվեցին բազմաթիվ կրթա-մշակութա-  
յին ընկերություններ. «...Թաղային, Կրթասիրաց, Ուսումնասիրաց,  
Բարեսիրաց, Արհեստաւորաց, ինչպէս նաև Զինավարժութեան Միու-  
թիւններ» : Յուրաքանչյուր միություն ուներ իր ծրագիրն ու գրողա-  
կր: Նրանցից յուրաքանչյուրն իր շուրջն էր համախմբում հայրենաս-  
տեր երիտասարդներին: Ազգային ինքնագիտակցության վերելքի և ա-  
զատագրական զազափարների տարածման գործում առանձնահատուկ  
դեր խաղաց Մ. Փորթուզալյանի հիմնած Վանի «Կեդրոնական» վար-  
ժարանը, որտեղ ազգային արժանապատվությունյան ոգով հոգևոր  
անունը ստացան, աճեցին և զատախարակվեցին ազգային գործիչների  
փայլուն շարք: Հենց Փորթուզալյանի սփռած ազգային-ազատաշունչ  
միջնորդութուն ձևավորված այդ երիտասարդությունն էր վիճակված  
սկսելու կազմակերպված քաղաքական շարժումը հիմք դնելով առա-  
ջին հայ քաղաքական կուսակցությանը:

1880թ. աշնանը Փորթուզալյանի նախաձեռնությունյամբ և «Հայ-  
կազյան» ընկերության նախնու ջանքերով կազմակերպվեց Վանի  
անդրանիկ «Բաղաքական տկումբը», ուր համախմբված երիտասարդու-  
թյունը մտորում և խորհում էր ազգօգուտ գործերի մասին: Ընթերցա-  
նությունը տարածված էր ողջ երիտասարդություն շրջանում: Ականա-  
տեսի վկայությունյամբ «Գամառ-Բաթիպայի հայրենաշունչ երգերը գի-  
շերները կարճապանք էին Այգեատանի սաղարթախիտ պարտեզնէլու:

<sup>1</sup> ՏրԱկուշ եւմ Եր., Գանձեր Վասպուրականի, Պոսթոն, 1966թ., հատ. 1, էջ 626:

մէջ: Բաֆֆիի ու Մերենցի վկայերը նոր և անդիմադրելի թափով մը կը հրդեհէին մոխիրներու տակ թաղուած կայծերը»<sup>1</sup>:

Փորթուզալյանական շարժումը հետզհետև հզորացավ: Այն հասունացող ազգային-քաղաքական կուսակցութեան սաղմն ու ոգին դարձավ: Վանի հասարակայնութեան բոլոր ոլորտներում փորթուզալյանականները ճանաչված էին որպես ազգային ճշմարիտ արժեքների կրողներ ու անկեղծ պաշտպաններ: Հինց փորթուզալյանականներից ծնունդ առավ և կազմակերպչորեն ձևավորվեց Արմենական կուսակցութունը:

Մ. Փորթուզալյանի սաներից մեկը՝ Գրիգոր Պետրիկյանը իր հուշերում պատմում է, որ 1884թ. ամառային մի երեկո ճոխ սեղանի շուրջ հավաքված էին «Կեդրոնական» վարժարանի առաջին և երկրորդ տարվա շրջանավարտները: Տոնահանգեսին մասնակցում էր Վանի հայ հասարակութեան ընտրանին: Որպես նախագահող Խրիմյան հայրիկը ջերմ, ոգիշուկ խոսքով դիմելով հավաքվածներին ընդգծում է, որ հավաքական ուժերով պետք է աշխատել ազգի կողմից իրենց վրա դրված պարտականությունների կատարման համար. «... ի մեծ սպոփանք իմ և համայն ազգին»<sup>2</sup>: Այդ պատմական խնջույքից մի քանի օր անց Մ. Փորթուզալյանը իր մոտ հրավիրելով «Կեդրոնականի» մի քանի շրջանավարտների, բացատրում և համոզում է «Գործակցական Միութիւնը» ստեղծելու անհրաժեշտությունը: Մեծ ուրախութեամբ ընդունվում է առաջարկը և հիմնվում «Գործակցական Միութիւնը» անունով մի ընկերություն: Այն բաղկացած էր «Կեդրոնականի» 12 շրջանավարտներից, որոնց թվում էին Մ. Ավետիսյանը, Ռ. Շատիրյանը, Գր. Պետրիկյանը, Գր. Թերլեմեզյանը /Մ. Ավետիսյանի եղբայրը/, Գր. Աճեմյանը /Գուրգեն Մահարու հայրը/, Գար. Բաղեշյանը, Ղ. Խանջյանը /Աղասի Խանջյանի հայրը/, Գր. Օտյանը, բժիշկ Գ. Ասլանյանը<sup>3</sup>:

«Գործակցական Միութիւնը» փաստորեն դարձավ ապագա Արմենական կուսակցութեան կազմակերպական կորիզը: Այս «Միութիւնը» կազմավորումից հետո «Կեդրոնականի» շրջանավարտների շրջանում հրամայական պահանջ դրացվեց «ի մի հաւաքելու եւ պատրաստելու իրենց ապագայ հասարակական գործունէութեան ծրագիր-ուղեկիւղը»<sup>4</sup>:

Հարկավոր էր ունենալ մի հավաքավայր, Ակումբ, բայց սա կապված էր մեծ դժվարությունների հետ: Վանում այդ ժամանակ արևամուտից մեկուկես ժամ հետո դադարում էր օրինական երթևեկությունը, իսկ զիջերապահ օստիկանները բանտարկում էին օրինազանցներին: Ուստի պետք էր ընտրել մի այնպիսի վայր, ուր կարելի

<sup>1</sup> Յու շեր Արմենակ եկարեանի, Այսու հետև: Ար. եկարեան, Գահիրե, 1947, էջ 6:

<sup>2</sup> Տե՛ս Պետրիկյան Գր., Խարի տու Ա, «Վասարու րական» /Խանդեա/, 1941թ., Բ տարի, թիվ 3:

<sup>3</sup> Նույն տեղում:

<sup>4</sup> Նույն տեղում:

լինե՞ր անցկացնել ողջ զիշկրային ժամանակը: Երկար որոնումներից հետո հարմար դռնվեց հավաքավայր ընտրել Մկրտիչ և Գրիգորիս Ավետիսյան /Թեբրեմեզյան/ ևղբայրների հայրենական այգու հնձանը, որի միակ «կահաւորումն էր չոր դետնի վրայ փռուած մի հնամաշ խսիր, որի անուկով Խսրի տուն կոչեցաւ այդ հաւաքավայր-ակումբը»: Մտրի տուն-հավաքավայրին անդամակցում էին վերոհիշյալ 12 շրջանավարտներից Զ-ը, քանզի Եղիշե Գոնտակճյանը տեսչական պաշտոնով մեկնել էր Բաղնշ, իսկ Գալուստ Աւանյանն ու Գարրիել Նաթանյանը Պոլսում հաճախում էին բժշկագիտութեան և իրավաբանութեան բարձրագույն դասընթացներին: Խսրի տունը քաղաքական և ընկերային մի ակումբ էր: Այս քաղաքական անշուք ակումբում որոշվեց վերակազմել ազգային պաշտոնական մարմինները, վտարելով «... ազգային Առաջնորդարանից մի կարգ վաշխառու և շահամոլ ծոչ ադաներին» և դրանց փոխարեն ազատ ու անկաշկանդ քվեարկութեամբ «ընտրել տալով պարտաճանաչ և իրենց դերին դիտակից անդամներ»: Որոշվեց վերաբացել Փորթուզայանի ձեռնարկած կիրակնօրյա վարժարանները, վերջ տալ Վանի պատանիների ու երիտասարդների թաղային անմիտ կռիվներին, և բացատրել նրանց՝ «իրենց դերի մեծութիւնն և միացրած լինելու գանոնք դադափարական սերտ կապով»:

Բննութեան է առնվում Պարսկաստանի վրայով արտասահմանի հետ հարաբերութեաններ հաստատելու հարցը արգելված թերթեր, ինչպիսիք էին «Մշակն» ու «Արձադանքը» ստանալու համար, նաև ազատաշուկայ գրականութուն: Ակումբի յուրաքանչյուր անդամ հանձն էր առել մի որևէ պարտականութեուն:

Այսպիսով, Արմենական կուսակցութեան փաստացի հիմնադրումը տեղի ունեցավ Խսրի տան մեջ, 1885 թ. աշնանը, երբ Մ. Փորթուզայանն արդեն հեռացել էր Եվրոպա և Մարսելում հրատարակում էր «Արմենիա» լրագիրը:

Կուսակցութեունը հիմնադրեցին Փորթուզայանի աշակերտները, բայց ոչ անձամբ ինքը՝ Մ. Փորթուզայանը: Կուսակցութեան կորիզն արդեն կազմավորված էր, երբ Փորթուզայանը աքսորվեց Վանից:

Արմենական կուսակցութեունը ծնվեց ծածուկ, խիստ գաղտնիութեան պայմաններում, առանց աղմկալից հայտարարութեաններին:

Ի վերջո, Արմենականների ծնունդը օրինաչափ հետևանքն էր Վասպուրականում 1870-1880-ական թթ. ազգային-քաղաքական, կրթական-մշակութային կյանքի բուռն վերելքի, որը նախորդ շրջանում Պոլսի պատրիարքարանի մեջ սահմանափակված Հայկական հար-

<sup>1</sup> Տե՛ս Դեռոյիկյան Գր., Խսրի տու Ա, «Ասարու լավան» Խանդեա՛, 1941թ., Բ տարի, թիվ 3:

<sup>2</sup> Նույն տեղում:

<sup>3</sup> Նույն տեղում, թիվ 9:

ցը փոխադրեց գավառ, ուր այն ժողովրդականութուն ձևւք բերեց և ստացալ «Նոր Երևույթ մը, որ պիտի յանգէր Հայ յեղափոխական կուսակցութեան կազմութեան» :

Արմենական կուսակցութեան Հիմնադիրները ժամանակի ուսյալ և առաջադեմ անհատներն էին, որոնք քաջ պատկերացնում էին իրենց ժողովրդի առջև ծառայած մեծ ու փոքր Հիմնահարցերը: Պատմագիտութեան մեջ Արմենական կուսակցութեան կազմավորումը երբեմն շփոթմամբ կապվում է «Հայոց Հայրենասիրական Միութեան» գործունեութեան հետ, մինչև իսկ այս երկու կազմակերպութիւնները նույնացվում են: Այսպես է վարվել Հայկական հարցին և ազատագրական մաքառումներին քաջատեղյակ Մ. Սերոբյանը<sup>1</sup>: Սա, իհարկե, անճշտութուն է, քանի որ արմենականների կազմավորումը տեղի է ունեցել «Հայոց Հայրենասիրականի» գործունեութիւնից անկախ: Այլ բան է, որ արմենականները եղել են վերոհիշյալ «Միութեան» ակտիվ գործիչներ: Բացառված չէ, որ սկզբնական շրջանում արմենականներն օգտվեին «Հայրենասիրական միութեան» անունից: Մանավանդ այդպիսի հաստատում կա արմենական նշանավոր գործիչ Արմենակ Եկարյանի հուշագրութեան մեջ, հետևյալ փաստարկումով. «... Գալով մեր կազմակերպութեան, թէ Վանի և թէ Ատրպատականի մէջ, մենք կը գործէինք Միութեան /Հայոց Հայրենասիրական-ծանոթ. Ա. Կ./ անունովը, բայց ժողովուրդը մեզ կը կոչէր Արմենական, որովհետև մենք կը հետևէինք «Արմէնիայի» ուղղութեան»<sup>2</sup>: Այս վկայակոչումը կարող է վերաբերվել արմենականների գործունեութեան միայն առաջին տարիներին, քանի որ 1890-ական թթ. արմենականները արդեն ճանաչված էին Վանում ու մերձակա գավառներում և իրենցից ներկայացնում էին կազմակերպված ու զորեղ ուժ:

«Արմենիա» թերթի հրատարակութիւնը նույնպես էական չափով նպաստեց Արմենական կուսակցութեան ձևավորմանը, քանի որ նրա միջոցով արտահայտված գաղափարները ներշնչեցին փորթուզայաններին «... որոշ գոյն մը, ձև մը, ուղղութիւն և մարմին մը տալով իրենց գաղափարական միութեան, սկիզբը դարձնել զայն նաեւ Հայ անդրանիկ յեղափոխական կուսակցութեան»<sup>3</sup>:

Արմենական կուսակցութիւնը իր գործունեութիւնը սկսեց Վանում, սակայն, ինչպես նշում է հետազոտող Վաչե Զաքարյանը, արմենականների «ծալալման քարտէզը մեզ Արևմտահայաստանի դաւառներէն կը տանի մինչև Ամերիկայի Միացյալ Նահագները»<sup>4</sup>: Արմենականները հատկապես փորձեցին արմատավորվել Պարսկահայքում, ուստի ուժեղ կազմակերպված մասնաճյուղեր ստեղծեցին Սալ-

<sup>1</sup> Դարբինեան Արտ., Հայ ազատագրական շարժման օրէնք, Փարիզ, 1954թ., էջ 114:

<sup>2</sup> Արտոբեան Ս., Սեր պալաքարը հայ ազատագրութեան ու յղով, Գահիրէ, 1948, էջ 98-99:

<sup>3</sup> Եկարեան Արմ., Նշվ. աշխ. էջ 40:

<sup>4</sup> Դարբինեան Արտ., Նշվ. աշխ., էջ 24:

<sup>5</sup> Ղազարեան Վ., Արմենական կուսակցութիւնը, Բեյրութ, 1981թ., էջ 36:

մաստոււմ, Խոյոււմ, Հաֆթիւանոււմ, Ուրմիայոււմ, Փայաջուկոււմ, Թաւրի-  
զոււմ, Հետադայոււմ տարածվելով դեպի Մուշ ու Տարոն, Բիթլիս ու  
Տրապիզոն:

Որոշ հետապոտոզներ դտնոււմ են, որ «Մուշի և Բիթլիսի մէջ  
նախապատրաստական աշխատանքներ կատարուած էին, որոնք տարա-  
ծուած էին մինչև Տրապիզոն ու Կոստանդնուպոլիս»<sup>1</sup>:

Իրողությունն այն է, որ վերոհիշյալ շրջաններու արմենա-  
կանները որոշակի աշխատանքներ ծավալեցին, սակայն այնպիսի կա-  
յուն ու մշտապես գործող օրգաններ, ինչպիսիք Վանոււմ, չհաջողվեց  
ստեղծել: Մասնավորապես Արմենական գործիչ, բժիշկ Գալուստ Աս-  
լանյանը եղավ Սալոնիկի մասնաճյուղի հիմնադիրը, Հայրապետ Ճա-  
նիկյանը արմենական կազմակերպություն հիմնադրեց Մուշ-Բիթլիս  
շրջանում, վիպասան Արմեն Շիտանյանը դարձավ Բուլղարիայի Պլով-  
դիվ քաղաքի մասնաճյուղի կազմակերպիչը:

Ըստ որոշ տեղեկությունների, արմենական խմբեր գործել են  
նաև Թիֆլիսում, Բաքուում, Ռոստովում և ռուսական կայսրութեան  
այլ վայրերում: Արմենական խմբեր կազմավորվել և գործել են էջ-  
միածնի Գևորգյան ճեմարանում, որտեղ ռուսանյութ կլած վանեցի ա-  
շակերտների մեծամասնությունը արմենական էր:

Արմենական կուսակցութեան օժանդակ մասնաճյուղեր կազմա-  
վորվեցին ԱՄՆ-ում և Եգիպտոսում:

Բավական ուժեղ մասնաճյուղ արմենականները ստեղծեցին  
Շատախի շրջանում՝ Շահեն Կուժիկյանի նախաձեռնութեամբ: Միայն  
Վանում և Շատախում ձևավորվեցին 90-ից ավելի խմբեր: Հարկ է  
նշել, որ Արմենական կուսակցութեանը ղգալի հետևորդներ և համա-  
կիրներ ունեցաւ կանանց շրջանում: Օրեցօր ծավալվող շարժումը հա-  
մակել էր հատկապես Սանդուխտյան վարժարանի սանուհիներին:  
1890-ական թթ. կեսերին արմենականներից բաժանվեց Ջարուհի Տերո-  
յանը՝ /ղաշնակցական Վազգեն Տերոյանի քույրը/, և անդամագրվեց  
ՀՅ Դաշնակցութեանը:

Իսկ Կոնդաքչյան քույրերը պահեցին «... 6-7 հոգուց բաղկա-  
ցած արմենական կանանց խումբը»<sup>2</sup>:

Կոնդաքչյան քույրերից հատկապես հիշարժան է Եղիսարեթ  
Կոնդաքչյանի մեծ ավանդը, որպէս դաստիարակ:

Արմենականների շարքում առաքինի գործունեութեամբ և հոս-  
տորական բողաշուէնչ ելույթներով հանրութեանը հայտնի դարձաւ  
Մարինա Ջարուխչյանը, որը մշտապես շեշտում էր հայրենիքի ազա-  
տագրութեան համար մղվող պայքարին հայ կանանց մասնակցութեան  
անհրաժեշտութեանը: Նրա անձնվեր գործունեութեան շնորհիւ 1896թ.

<sup>1</sup> Յախո Յեան Աւ Ետիս, Հանատոտ պատմութիւն Ուսմանկալար Ազատական կուսակցութեան  
կազմութեան, Կահիրե, 1977, էջ 23-24:

<sup>2</sup> Տե՛ս Ուսմանկալար-Ազատական կուսակցութեան թիւ 6, է. 1991թ., էջ 58:

<sup>3</sup> ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 427, ց. 1, գ. 64:

ինքնապաշտպանական մարտերում բազմաթիվ հայ վիրավորներ կարողացան ժամանակին բժշկական օգնություն ստանալ:

Արմենական կուսակցության հիմնադիրների մեջ իր խիզախությամբ ու համարձակությամբ, ազնիվ, խոհուն նկարագրով, դաշտափարական նվիրվածությամբ առանձնանում էր տաղանդավոր առաջնորդ Մկրտիչ Ավետիսյանը: Ժամանակակիցները, հետագա շրջանի գործիչներն ու պատմաբանները շատ բարձր են գնահատել նրա մարդկային առաքինությունները, հայրենասիրությունը, դաստիարակի կարողությունները: Արմենականների հիմնադիրների շարքում նշանավորներից է աննկուն գաղափարական գործիչ Գրիգոր Պետղիկյանը /Շիկահեր/: Նա մեկն է հայոց Ազատամարտի այն նվիրյալներից, որոնք մի ձեռքում սուր են պահել, մյուսում գրիչ:

Գր. Պետղիկյանը եղել է Մ. Ավետիսյանի կուսակցական օգնականը և ամենահավատարիմ, վստահելի բարեկամը: Ավետիսյանի հրահանգով մի շարք անգամ զինատար լսմբով Պարսկաստանից Վան գետն է փոխադրել: Գրել է բազմաթիվ հոդվածներ և ուսումնասիրություններ:

Արմենական կուսակցության ռազմական ականավոր գործիչը, անտարակույս, Արմենակ Եկարյանն է /1870-1925թթ./: Ծնվել է Վանի Հայնկուլյանների թաղում: 1887թ. վարժարանն ավարտելուց հետո որոշ ժամանակ զբաղվել է դերձակությամբ: Այնուհետև թաղի պատանիներից կազմված լսմբով համալրված է արմենականների շարքերը: 1889թ-ից կուսակցության առաջարկով Արմ. Եկարյանը նվիրվում է զինատարական գործին, այդ ընթացքում բազմիցս մասնակցելով քրդերի հետ ունեցած ընդհարումներին: Եկարյանը 1915թ. ապրիլյան տափնապալից օրերին դառնում է Վանի հերոսական ինքնապաշտպանության մարտական ղեկավարներից մեկը:

Արմենական կուսակցությանը մեծ ծառայություններ են մատուցել և նրա սյուներն են եղել տաղանդավոր գաղափարախոս և վաստակաշատ կրթական գործիչ Արտակ Դարբինյանը /1878-1950թթ./, ազգային-հեղափոխական գործիչ, նկարիչ Փանոս Թերլեմեզյանը /1865-1941թթ./, կեդրոնական վարժարանի շրջանավարտ, դաստիարակ ու հրապարակախոս Հովհաննես Կուլոդյանը /1860-1915թթ./<sup>2</sup>:

Արմենականները իրենց ուժերը կենտրոնացրին առավելապես կրթական շարժման, զինակուսակման և ժողովրդի ինքնապաշտպանական գործը կազմակերպելու վրա: Արմենական գործիչներից շատերն ակտիվորեն վարում էին տեղական դպրոցական գործը և իրենց մաքուր, ազնիվ վարքագծով արժանանում շրջապատի համակրանքին: ՀՅԴ ղեկավարներից Արամ Մանուկյանը նշում է, որ երբ մի անգամ

<sup>1</sup> Տե՛ս Տեր-Մկրտչեան, նշվ աշխ., էջ 494:

<sup>2</sup> Տե՛ս Զարի րամեակ Արմենական կու սակցու թեան, փարիզ, 1985թ.

ժողով էր գումարվում Վանում գործող կուսակցությունների միջև համերաշխ գործակցություն ստեղծելու նպատակով, «... Հենց նոյն ժողովի մէջ պարզուեց ինձ համար, որ Վանի մէջ երեւի եւ գաւառի կեդրոնական վայրերում դպրոցական գործի ամբողջ ղեկավարութիւնը գտնուում էր արմենականների ձեռքում» : Արմենականները ամենուրեք գործում էին մեծ զգուշութեամբ և պատասխանատուութեամբ՝ խուսափելով թուրքական ոստիկանութեան հետապնդումներից: Ականատեսը վկայում է, որ «... դառնով դաստիարակչական գործին, գիշերն էր միակ տրամադրելի ժամանակը: Գիշերուան մէջ ամէն խումբ իր տասնապետով մեկտէղ, որոշ ուժ տան մէջ կը հաւաքուէր»<sup>1</sup> :

Արմենականների ծավալած կրթա-դաստիարակչական վիթխարի շարժման շնորհիվ Վանի երիտասարդությունը ամբողջովին տոգորվում է հայրենիքի ազատագրութեան վսեմ գաղափարներով: Ամենուր տիրում է բարոյական առողջ մթնոլորտ: Արմենականները կրկին վերաբացում են Կիրակնօրյա վարժարանը, ուր «... ամէն կիրակի, կեսօրէն ետք, ճրիաբար հայերէնի, պատմութեան, թուրքաբանութեան եւ գրաւարժութեան դասեր կը տրուէին անոնցմէ փափագողներուն»<sup>2</sup> : Կիրակնօրյա վարժարանի ողին Մ. Ավետիսյանն էր, որն իր սիրելի ուսուցչի՝ Մ. Փորթուզալյանի քստորվելուց հետո ստանձնեց նրա դերը:

Արմենականները խիստ զազտնի էին իրականացնում կուսակցական գործունեությունը, միշտ հավատարիմ մնալով խոհեմութեան և դադտնապահութեան սկզբունքներին: Նրանց գործընկերալը բխում էր արևմտահայ իրականութեան մեջ տիրող ծանր պայմաններից:

Արմենականները համոզված էին, որ թուրքական կառավարութեան հայաջինջ սլաններին դիմակայելու համար հարկավոր է զինվել և զինել ժողովրդին: Սակայն այս ամենը պետք է կատարվեր ծածուկ, առանց աղմուկի և ցուցամուտութեան:

19-րդ դարի 90-ական թթ. հայ հեղափոխականների գերագույն հիմնահարցը զենքի և զինամթերքի հայթայթումն էր, որը կապված էր ահալոր դժվարութեանների հետ:

Հարկավոր էր ապագա ձեռնարկների համար զենք ունենալ և «... բոլորի մտածածը մէկ էր. զինուել ... բայց ինչպէս, ուրկէ ճարել զենքը: Եւ բնագոյաբար ամենուրն աչքը կուղղուէր դէպի արտասահման-դէպի Պարսկաստան ու Կովկասը մանաւանդ» : Արմենականները կազմեցին զինատար խմբեր և սկսեցին դէպի «էրզր» զենքի ու զինամթերքի փոխադրութեանը: Այդ նպատակով ընտրվում է Սալմաստ-Դերիկ-Վան զինատար ուղեգիծը: Դերիկ-Վան ճանապարհը կիսով չափ կրճատում էր կապը երկրի հետ: Հատկապես Դերիկի հինավուրց

<sup>1</sup> «Արան», Թեհրան, 1982թ., Բ. հրատ., էջ 227:

<sup>2</sup> ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 427, ց. 1, գ. 21, էջ 7-8:

<sup>3</sup> Նաբանեան Սիք., Արմենական կուսակցութեան Գահիրե, 1980թ., էջ 17:

<sup>4</sup> Եկարեան Արմ., Եշվ. աշխ., էջ 10:

վանքը դառնում է մի հուսալի ապաստան ու մշտական կայան արմենական, նաև դաշնակցական զինատար խմբերի համար<sup>1</sup> :

Արմենականները դեպի «էրզիր» զենք տեղափոխելու ճանապարհին ունեցան իրենց արյան մկրտությունը: Ընդհարումը թուրքական զինյալ ուժերի հետ տեղի ունեցավ 1889թ. մայիսի 26-ին, որը նշանակալի էր Արմենական կուսակցության համար: Այն կապված է երեք զինակիցների՝ Վարդան Գոլոշյանի, Հովհաննես Ագրիպասյանի և Կարապետ Կուլաքսոյանի անվան հետ, որոնք ուխտել էին զինված խուճապ կազմել, կռվել և զարթնեցնել թմրած հայությանը: Նախապես մտահղացված պլանի համաձայն, 1889թ. մայիսի 25-ին երեքով նրանք դուրս են գալիս Հաֆթվանից և ուղղություն վերցնում դեպի Վան: Մեկ օր անց Չուխ-Կետուկ հայտնի կիրճում հանդիպում են թուրք ժանդարմներին: Սկսվում է անհավասար մարտը: Հերոսաբար զոհվում են Վ. Գոլոշյանն ու Հ. Ագրիպասյանը: Այս դեպքը ժամանակին մեծ աղմուկ հանեց լրագրերի էջերում, իսկ Վանի կուսակալ Սալիլ-բեյը սուլթանին հեռագրով տեղեկացրեց Չուխ-Կետուկի ընդհարման մասին: Այս դեպքը ցնցող տպավորություն թողեց արմենական երիտասարդություն վրա, որը «... մինչ այն յեղափոխութիւնը ուսած տեսականորեն, Բաֆֆիի և Մերենցի վեպերէն... թերևս հազիւ թէ խորհած էր անոր վտանգաւորը կողմերուն եւ արեան զոհաբերութեան անհրաժեշտութեան վրայ»<sup>2</sup> : Այս դեպքից հետո արմենական պատասխանատուները նպատակադրվեցին կարելիության սահմաններում կուսակցության տրամադրության ներքո ունենալ զինական զգալի ուժ նոր վտանգներին դիմադրավելու համար: Կուսակցության գործունեության մեջ նկատվեց մասնակի թեքում դեպի հայրուկային գործունեությունը:

Դրսից զենք փոխադրելուն զուգահեռ արմենականները փորձեցին նաև տեղում կազմակերպել զենք ու զինամթերքի արտադրությունը: Որոշ դեպքերում արմենականները դիմեցին ահաբեկչական գործողությունների: Սպանվեցին թուրքական գաղտնի ոստիկանությանը պարբերաբար տեղեկություններ հաղորդող մի քանի լրտեսներ:

Արմենականները ահաբեկման գործողություն իրականացրին նաև Շատախի գավառի հայտնի ավազակապետ Շաքիրի նկատմամբ, որի արդյունքում Շաքիրի մի շարք զինակիցներ սպանվեցին, իսկ ինքը հազիվ փրկվեց<sup>3</sup> :

Այսպիսով, զենք բարձրացնելով թուրքական բռնապետության ներկայացուցիչների դեմ և զենքի միջոցով վրեժ լուծելով նրանցից, արմենականները ձգտում էին արթնացնել հայ գյուղացիության նիրհող ուժերը:

<sup>1</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 23:

<sup>2</sup> Նաթանեան Միք., ԳՎ. աշխ., էջ 22:

<sup>3</sup> Տե՛ս Դայաաունի ազգային պարկերարտ, Գուշաճեուազդային բաժին, Փ. Թերլեմեզյան, «Կյանքիս հուշերը/Մեքենափոխ», ֆ. 60, տ. 11, թղ. 27, 28, էջ 123:

Որոշակի տեղեկություններ կան, որ Վանի արմենականները ոչ միայն քաջածանոթ ու տեղյակ էին Մուշ-Տարոնում հայդուկային գործունեություն ծավալած հոչակափոր Արաբոյի և մյուս Քիղայինների մասին, այլև որոշել էին կապ ստեղծել նրանց հետ, միասնական ուժերով պայքարել քրդական ավաղակախմբերի դեմ: Այդ նպատակով, արմենական հայանի գործիչ Փ. Թերլեմեղյանը 1890-91թթ. ընթացքում շրջելով Մշո դաշտում, ձգտում էր որոշակի կապ ստեղծել իրարից անջատ գործիչներին միջև:

Արմենականների որդեգրած դիրքորոշումը՝ նախ գաղափարի տարածում, հետո զենքի կուտակում և համերաշխորեն ներքին ուժերի նախապատրաստում, դիմացավ համիդյան դժնդակ ժամանակի փորձություններին և կյանքով ապացուցեց իր ճշմարտացիությունը: Արմենականների ցանած ազատության սերմերն էին, որ շատ շուտով արմատակալեցին մի ողջ սերնդի հոգում: Այդ սերունդն արդեն խորապես դիտակցում էր, թե ինչու է զենք բարձրացնում, և 1896թ. դիմադրական ծանր մարտերում իր կյանքը գիտակցաբար դրեց հայրենիքի գոհասեղանին:

\*  
\*  
\*

Խորհրդահայ պատմագիտության մեջ որոշ ժամանակ գերիշխող է եղել այն կարծիքը, ըստ որի որպես Արմենական կուսակցության ծրագիր ծառայել է 1889թ. Մարսելում լույս տեսած Խ. Պատկանյանի «Վարդապետարան հայաստանի ազատագրության» գրքուկը:

«Վարդապետարանը» թեև իր մեջ ներառում էր վսեմաշունչ ուղի և ազատասիրական բարձր գաղափարներ, սակայն այն դոգմատիկ ձևակերպումներով անընդունելի կլիներ գործող կուսակցության համար: Բացի այդ, էական տարբերություն կա արմենականների ծրագրի և «Վարդապետարանի» միջև: Ծրագրում պարզ ու հստակ նշված է հեղափոխությամբ արևմտահայությանը ազատագրելու խնդիրը, մինչդեռ «Վարդապետարանը» «... անորոշ ձևով կը խօսէր զէնքի դիմելու մասին»:

Բնորոշ է նաև այն խոսույն փաստը, որ արմենական գործիչներից ոչ մեկը չի նշում, թե «Վարդապետարանը» երբևիցե ծառայել է որպես ծրագրային փաստաթուղթ կուսակցության գործունեության համար: «Վարդապետարանը» «Հայոց հայրենասիրական Միության» քարոզչական հիմնական փաստաթղթերից մեկն է և իր հայրենաշունչ պայթոսով ոգեշնչել է «Միության» անդամներին: Այն ոգևորել է Վանի ազատամիտ գործիչներին, այդ թվում նաև արմենական երի-

<sup>1</sup> Լույս տեղում, էջ 96:

<sup>2</sup> Տե՛ս Ղազարեան Վ., նշվ. աշխ., էջ 19:

<sup>3</sup> Լույս տեղում:

տասարդությանը, բայց ճիշտ չէ այն պնդումը, թե «Արմենականները սկզբում առաջնորդվել են մի ծրագրով, որը կոչվել է «Վարդապետարան Հայաստանի ազատագրության»<sup>1</sup> :

Արմենական կուսակցության ծրագիրը ծնվել է տվյալ պահի և ժամանակի պահանջներից և ամբողջովին բխել Արևմտահայաստանում տիրող ընդհանուր իրավիճակից: Կուսակցության ծրագրի մեզ հասած օրինակը վերաբերում է 1894թ.: Սակայն անտարակույս է, որ դրանից առաջ արմենականները ունեցել են վերոհիշյալ փաստաթղթի նախատիպը: Արմենականների ծրագրի ստեղծման աշխատանքներին մասնակցել են կուսակցության լավագույն մտավորական ուժերը՝ Մ. Ավետիսյանի գլխավորությամբ: Այն հետագայում ենթարկվել է լոկ մասնակի փոփոխությունների: Ըստ որոշ տեղեկությունների, այդ ծրագիրը 1895-1896թթ. ընթացքում ենթարկվել է որոշ բարեփոխումների նրա բնագիրը չի գտնվել և մեզ հայտնի չէ<sup>2</sup>: Կուսակցության ծրագիրը և կանոնադիրը ձևագիր վիճակում, սահմանափակ ընդամենը 7-8 օրինակներով պահվում էր Կենտրոնի և Մասնաժողովների տրամադրության ներքո՝ թելադրված խստագույն գաղտնապահություն սկզբունքներով:

Արմենականների ծրագիրը առաջին անգամ հրատարակվեց 1907թ., «Երկրի ձայն» պարբերականում, իսկ հետագայում տարբեր աշխատություններում և հուշագրություններում<sup>3</sup>:

Ծրագրից զատ արմենականներն ունեին նաև կանոնագիր, որն իր մեջ բովանդակում էր կազմակերպական հարցեր, որոնք «...կը շահագրգռէին կուսակցութեան անդամները»<sup>4</sup>: Կուսակցության ծրագիրը մշակողները հետևողականորեն հաշվի էին նստել երկրում գոյութուն ունեցող ուսուցիչ իրավիճակի հետ, և որպես վերջնական նպատակ մատնանշել էին այդ դժոխային կացությունը վերափոխելու ուղին: Այդ ուղին հեղափոխությունն էր: Ծրագիրը հռչակում էր, որ «Արմենական կազմակերպութեան նպատակն է յեղափոխութեամբ թիւրքիայի հայ ժողովրդեան համար իրաւունք ձեռք բերել ինքզինք ազատօրէն կառավարելու»<sup>5</sup>: Նշվում էր, որ կուսակցությունը իր ներքին ուժը գոյացնելու է ժողովրդի բոլոր խավերից՝ առանց դասակարգային իմաստով խտրականություն դնելու: Կուսակցությունը գտնում էր, որ չպետք է ուժերը ցրել այլ ազգերի շրջանում հեղափոխական շարժումներ առաջ բերելու նպատակով, քանզի, ինչպես արձանագրված է ծրագրում, հայ ազգի և «մյուս ցեղերի միջև զգացման, աշխարհայնացողության, պահանջների ու զարգացման մեծ տարբերություններ

<sup>1</sup> Պողոսյան Գ. Մ., Վասպուրականի պատմու թյու Ուից, Երևան, 19, էջ 221:

<sup>2</sup> Նաբանեան Միք., Ուշվ. աշխ., էջ 42:

<sup>3</sup> Զամբարյան Ա., Հայ հասարակական-քաղաքական միտքը արևմտահայոյ թյան պաւտագրու թյան ու յիճերի մային, Ե., 1900թ., էջ 158:

<sup>4</sup> Ղարբիճեան Ա., Ուշվ. աշխ., էջ 124:

<sup>5</sup> Եկարեան Արմ., Ուշվ. աշխ., էջ 81-82:

կան, որով հայ ազգի հեղափոխական շարժումը կարող էր դանդաղել ու կճռտովել<sup>1</sup> : Իսկ ինչպե՞ս և ի՞նչ միջոցներով էր Արմենական կուսակցությունը արևմտահայությանը նախապատրաստելու ազատագրական պայքարին: Այդ մասին կուսակցության ծրագրում ասվում է հետևյալը. « Արմենական կազմակերպութիւնս իր նպատակին հասնելու համար կաշխատի ներքին ոյժ գոյացնել, միացնելով իրարու հետ միեւնոյն գաղափարի ծառայող հայ հայրենասէրները եւ կեդրոնական ուղղութեան ենթարկելով ժողովուրդը արթնցնել, կազմակերպութեան մղել եւ նպաստել տալ առանց բռնի միջոցներու, յեղափոխական գրականութեամբ, ընտիր դաստիարակութեամբ, գործիչի ազնիւի կենցաղով եւ քարոզով գաղափար տարածել, կանոնաւոր եւ յարատեւ յարաբերութիւն մշակել, զինակրթութեան եւ կարգապահութեան վարժեցնել, ինքնապաշտպանութեան զգացում արծարծել, գէնք եւ զրամ հայթհայթել, զինուճարական շարժուն խմբեր կազմակերպել եւ ի հարկին գործածել եւ ընդհանուր շարժման պատրաստել, երբ մասնաւանդ արտաքին հանգամանքներն ալ /օտար պետութիւնների եւ շրջակայ ցեղերի տրամադրութիւնները/ մեզ նպաստաւոր համարուին»<sup>2</sup> :

Արմենականները ընտրել էին շատ զոռւշ մարտավարություն, ձգտելով հայ ժողովրդի լայն խավերի մեջ արթնացնել ինքնապաշտպանության գիտակցությունը և «... դնել զայն ամէն տեղ ինքզինքը պաշտպանելու վիճակին մէջ»<sup>3</sup> :

Կազմակերպական ինչ հիմունքներով էին զործում արմենականները: Կուսակցությունը բաղկացած էր զործող և քաջալերող անդամներից, ընդ որում «զործող անդամները անոնք են որ կազմակերպութեանս կանոններին կենթարկուին, նորա հրահանգները կը գործադրեն եւ պարբերական տուրք մը կ'վճարեն: Քաջալերողները անոնք են, որոնք կազմակերպութեանս ծրագրին կը համակրին եւ նիւթապէս ու բարոյապէս կ'օժանդակեն կազմակերպութեանս, առանց ենթարկուելու նորա կանոններին եւ հրահանգներին»<sup>4</sup> :

Կուսակցության կազմակերպական հիմնական միավորը խումբն է: Գործող յուրաքանչյուր 10-15 անդամներ կազմում էին խումբը, որը պարտավոր էր պարբերաբար, 15 օրը մեկ անգամ ժողով գումարել: Խումբն ուներ խմբապետ, որն ընտրվում էր երկու տարի տևողությամբ, գանձապահ ու մթերապահ: Վերջինները իրավասու էին գործելու միայն խմբի հավաքական կամքով և ընդհանուր որոշումով: Խումբը կազմավորւածվելու դեպքում եղած գուշքն ու զրամը մնում էին Մասնաժողովի տրամադրության ներքո: Խումբը սովորաբար չէր ունենում քարտուղար կամ ատենադպիր, որը պայմանավորված էր գաղտնապահ գործելակերպով: Խմբերի կողմից մերմվում էին այն ան-

<sup>1</sup> Ե կարեան Արմ., Եզվ. աշխ., էջ 81-82:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 82:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 73:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 82-83:

դամները, որոնք որևէ կերպով «... վնասակար կը համարուին, ինչպէս եւ անոնք, որոնք յեղափոխական դրամ կամ գոյք իրենց անձնական շահուէն կը ծառայեցնեն, փառասիրական դիտումներ ունին, մտքերի մէջ երկպառակուելիւն կը սերմանն»<sup>1</sup> : Պատժի ձևն ու կարգը որոշում էր ոչ թե խումբը, այլ խմբապետական ժողովները և Մասնաժողովը՝ ձայների մեծամասնութիւմբ:

Խումբն իր լիազորութիւններով մեծապես կախված էր Մասնաժողովից և ղեկավարվում էր նրանից ստացած հրահանգներով: Խմբերի միջև համերաշխ գոյակցութիւն հաստատելու նպատակով «... 5-12 խումբեր կրնային միանալ իրարու եւ կազմել համայնք մը: Համայնքին գործերու ղեկավարումը կը վստահուէր միացող խումբերու խմբապետներէն բաղկացած խմբապետական ժողովին, որ առնուազն երեք շաբաթ անդամ մը կը պումարէր հերթական նիստ»<sup>2</sup> : Իրար միացող խմբերի խմբապետները կազմում էին խմբապետական ժողովը, որը համերաշխութիւն մը վարում էր համայնքի գործերը, և պարտավոր էր երեք շաբաթը մեկ հրավիրել հերթական նիստ:

Իսկ խմբապետական ժողովները, իրենց կողմից երկու տարի ժամկետով մեկական ներկայացուցիչ ընտրելով, կազմում էին Մասնաժողովը: Վերջինս խմբապետական ժողովին հրահանգում էր նոր ընտրութիւն կատարել, եթե իր որևէ մի անդամի ներկայութիւնը աննպատակահարմար էր գտնում: Ընտրվում էր քարտուղար, որը խմբագրում էր Մասնաժողովի որոշումները, կատարում պաշտոնական գրագրութիւնը: Մասնաժողովն ուներ իր ընտրած գանձապահը, որը «... Մասնաժողովի հասույթները եւ Կեդրոնին յղուելիք 100-ին 15-ի բաժինը կը գանձէ եւ ծախսերը կը կատարէ ժողովին որոշման համեմատ»<sup>3</sup> : Իսկ մթերապահը զբաղվում էր Մասնաժողովի գույքերի պահպանման հոգսերով: Գոյութիւն ուներ խմբերի գույքի վիճակագրական ցուցակները պահող ու ստուգող ընդհանուր քննիչ, ինչպէս նաև հրատարակութիւնների ու հանձնարարութիւնների բաշխմանը և կատարմանը հետևող տեսուչ: Այս պաշտոնյաները պարտավոր էին վեց ամիսը մեկ հաշվետու լինել Մասնաժողովի առջև: Մասնաժողովն իր նիստերը գումարում էր երեք շաբաթը մեկ անգամ, բացի արտակարգ նիստերից: Մասնաժողովը, անդամատուրքերից բացի, ձգտում էր գտնել հասույթի նոր աղբյուրներ:

Եթե Մասնաժողովի անդամների մեծամասնութիւնը «... ինքնին հրաժարի կամ պայմանաժամը լրացած լինելով դադրի», ապա այն ամբողջապես դադարեցնելու էր իր գործունեութիւնը և կատարվելու էր նոր ընտրութիւն :

<sup>1</sup> Եկարեան Արմ., Եզվ. աշխ., էջ 87:

<sup>2</sup> Ղազարեան Վ., Եզվ. աշխ., էջ 29:

<sup>3</sup> Եկարեան Արմ., Եզվ. աշխ., էջ 85:

<sup>4</sup> Եկարեան Արմ., Եզվ. աշխ., էջ 86:

Հետաքրքիր է այն փաստը, որ Մասնաժողովն իրավունք ուներ քվեների Յ/4-ով խմբերից կամ մինչև իսկ «... դուրսէն իրեն նոր անդամներ առնել, երբ վստահ է, որ դժբա համակիր են «Արմենական» կաղմակերպութեան և և նորա ծրագրին» և պայմանով, որ այդպես ընտրված անդամները չգերազանցեն Մասնաժողովի խմբերից ընտրվածների կեսից ավելին :

Մանր ու տաղնապալից պահերին կուսակցութեան գործունեութիւնը անխափան շարունակելու համար Մասնաժողովն իրավունք ուներ ընտրել 3-5 մարդուց բաղկացած հանձնախումբ, որի լիազորութիւնները սահմանափակվում էին գործադիր իշխանութեան շրջանակներում: Այն իրավունք չուներ օրենսդրական փոփոխութիւններ կատարելու:

Կուսակցութեան գերատւէն մարմնի՝ Կեդրոնի ներկայացուցիչները ընտրվում էին յուրաքանչյուր Շրջանակի Մասնաժողովի ներկայացուցիչներից քվեների Յ/4-ով: Առանց Կեդրոնի թույլտվութեան, Մասնաժողովները չէին կարող հարաբերութիւնների մեջ մտնել այլ քաղաքական կաղմակերպութիւնների հետ: Լինելով կուսակցութեան գերագույն մարմինը, Կեդրոնը վարում էր «... Հեղափոխական գործի վերին տեսչութիւնը», կանոնավոր հարաբերութիւններ մշակելով այլ քաղաքական կաղմակերպութիւնների և գործիչների միջև, ինչպես նաև կարգավորելով կուսակցութեան ստորադաս մարմինների միջև ծավալվող փոխհարաբերութիւնները<sup>2</sup>: Մինչև այժմ հավաստի տեղեկութիւններ կան Արմենական կուսակցութեան հինգ շրջանակների գոյութեան մասին: Կաղմակերպական տեսակետից Վանը, որը կուսակցութեան Ա շրջանակն էր, բաղկացած էր չորս համայնքից՝ «Հայնկոյս, Նորաչէն, Արարք, Բաղաքամէջ» : Յուրաքանչյուր շրջանակ ուներ իրեն հատուկ կանոնադրութիւնը, որով տեղի պահանջներին համաձայն, որոշվում էր նրա գանդան հատվածների պարտականութիւնները և իրավունքների սահմանը, ինչպես նաև Մասնաժողովների ընտրութեան կարգը: Ընդ որում, ներքին կանոնադրը չպիտի հակասեր կուսակցութեան ծրագրի որևէ կետին: Կուսակցական կառուցում այս գործադիր մարմիններին գուրահեռ գործում էր նաև Ջինվորական Ատյանը: Արմենականների զինվորական գործերի ընդհանուր պատասխանատուներն էին Հմ. Թանգարաճյանը, Գար. Բաղեչյանը, Արմ. Նկարյանը: Ջինվորական Ատյանի խորհրդակցութիւններին մասնակցում էին Կեդրոնի երկու ներկայացուցիչներ, սովորաբար Մ. Ալևտիսյանն ու Գր. Պեղոյիկյանը: Ատյանը իր տրամադրութեան ներքո ուներ մի քանի տասնյակ հատուկ ընտրված մարտիկներից բաղկացած խմբեր, որոնք միշտ պատրաստ էին գործադրել ստացված հրահանգնե-

<sup>1</sup> Եկարեան Արմ., Ոչվ. աշխ., էջ 86:

<sup>2</sup> Գր. Պեղոյիկյան, Գ. 427, ց. 1, գ. 66:

<sup>3</sup> Ղազարեան Վ., Ոչվ. աշխ., էջ 32:

88346


րը: Արմենական կուսակցութեան Ա շրջանակի 1895թ. նոյեմբերի 1-ի թվագրուած «Խուճմանի ներքին կանոնագիր» փաստաթղթում հետաքրքիր տեղեկութիւններ կան կուսակցութեան մեջ ընդունվելու, անդամավճարների սահմանման կարգի, խմբերի կազմալուծման դեպքում գույքի և դրամի պատկանելութեան հիմնահարցերի վերաբերյալ: Նշվում էր, որ վեց ամսվա տուրքը առանց հիմնավոր պատճառի չվճարած անդամները մեխանիկորեն դուրս էին մնում խմբից և իրավունք չուներին իրենց նախկին վճարումներից որևէ բան ետ պահանջել: Դրամ վճարելու անկարող, բայց ուրիշ ծառայութիւնների ընդունակ անդամների համար խումբը որոշ ժամանակամիջոց էր սահմանում, իսկ երբ «այն չվճարեն, եթէ խումբը հարկ տեսանէ մեծամասնութեան ձայնով կը հրաժարեցնէ»:

Նյութապես տկար ընկերների համար խումբը սահմանում էր կես տուրքի վճար: Կուսակցութիւնից հրաժարվածները, ինչպես և նրանք, ովքեր ուզում էին անցնել այլ կուսակցութեան շարքերը, բնավ իրավունք չուներին խմբի գույքի մի որևէ մասին տեր դառնալ: Գույքը կամ դրամը մշտապես մնում էր գործող խմբի անդամների տրամադրութեան ներքո: Իսկ երբ խումբը լրիվ կազմալուծվում էր, եղած գույքն ու դրամը անցնում էր մասնաժողովին: Խմբերն իրենց հավաքած տուրքի և ուրիշ վայել միջոցներով ձեռք բերած հասույթի «հարիւրին 15-ը, վեց ամիս մի անգամ պարբերաբար կը դրկեն Կեդրոնին Մասնաժողովին միջոցով»: Մնացած գումարը գործածվում էր նոր խմբեր կազմելու, կուսակցութեան գաղափարները տարածող թերթին նպաստելու, գործիչների օգնութեան և շրջագայութիւնների, ինքնապաշտպանութեան միջոցների համարման, ինքնակրթութեանը նպաստող շրջիկ դրադարանների կազմակերպման համար:

Կուսակցութեան ղեկավար մարմինը՝ Կենտրոնը /կեդրոն/ պետք է ունենար իր հատուկ օրգանը, որը տարածելու էր արմենականների գաղափարները: Ծրագրում նշված էր, որ «Արմենական կազմակերպութիւնն հիմնուած ըլլալով «Արմէնիա»-ի ցարդ քարոզած սկզբունքներուն վրայ կաշխատի այդ թերթի գաղափարի տարածման»: Սակայն ծրագրի այս կետը պետք է ընդունել մի շարք վերապահութիւններով: «Արմէնիա» պարբերականը ոչ մի էտապում այդպես էլ չհղավ կուսակցութեան կենտրոնական օրգանը:

Արմենական նշանավոր գործիչ Մ. Նաթանյանը համոզված նշել է, որ «Արմենական կուսակցութիւնը եղաւ եւ մնաց «Արմէնիա»-էն անկախ կազմակերպութիւն մը իր հիմնադիր վարիչներու պա-

<sup>1</sup> Նաթանյան Միք., նշվ. աշխ., էջ 47:  
<sup>2</sup> Նույն տեղում:  
<sup>3</sup> Նույն տեղում:  
<sup>4</sup> ՀՀ ԳՊԿ Ա., ֆ. 427, ց. 1, գ. 66:  
<sup>5</sup> Տես Ե. Կախուճեան Ա., նշվ. աշխ., էջ 19-20:



տասխանատուութեան տակ»<sup>1</sup> : Ինչպես իր աշխատութեան մեջ նշում է արմենականների պատմութեան խորագրիտակ Վ. Ղազարյանը, թերթը միայն մի որոշ սկզբնական շրջանի համար կարող էր լինել կուսակցութեան գաղափարատարածիչը : Առհասարակ, և՛ արմենական, և՛ այլ հուշագրողներ բազմիցս նշել են, որ Մ. Փորթուղայանը և իր թերթը Արմենական կուսակցութեան հետ «... բարոյականէն զատ ուրիշ կապակցութիւն չունին» :

Արմենական կուսակցութեան ծրագիրը կոնկրետ ժամանակի և հանգամանքների ծնունդ էր : Այն հետադայում ենթարկւելով մասնակի փոփոխութիւնների, ըստ էութեան պահպանեց իր գլխավոր բովանդակութիւնը : Արմենականների ծրագիրը չէր դնում ընկերավարական-միջազգայնական նպատակներ, քանի որ ճիշտ գնահատելով գաւառում տառապող հայ ժողովրդի ծանր պայմանները, այն սոցիալական հեղափոխութեան և հնարավոր վարչաձևի հարցը թողնում էր ապագային՝ առաջնահերթը հռչակելով ողջ արևմտահայութեան ազատագրումը թուրքական լծից : Հետագայում, ռուսական առաջին բուրժուա-դեմոկրատական հեղափոխութեան տարիներին, արմենական նշանավոր գործիչ Երվանդ Քոստյանը /Սեպուհ/ Կեդրոնի անունից գրեց մի թուռցիկ շրջաբերական, որը կցվեց ծրագրին որպես հավելված : Այն արմենականների յուրօրինակ արձագանքն էր 20-րդ դարասկզբի հեղափոխական շարժման ու սոցիալիստական գաղափարախոսութեան առաջ բերած հարցադրումներին : Հավելվածը հռչակում էր, որ «ընկերային, սոցիալիստական յեղափոխութիւնը մեր իրականութեան հետ կապ ունեցող հեռուոր դադափարն է, որին պետք է ձգտինք ապագային, երբ որ քաղաքական կարգերի եւ տնտեսական պայմանների շնորհիւ մեր մէջ առաջ կգա նոր հասարակութիւն» : Այս գրույթը նորութիւն էր համեմատած արմենականների նախորդ ծրագրի հետ : Հավելվածը ճշմարտացի կերպով փաստարկում է, որ Օսմանյան կայսրութեան մեջ քրիստոնյա ազգերը միշտ էլ կեղեքված են որպես ռայա, ինչն էլ նրանց աղատագրական դեգերումների գլխավոր շարժառիթն է : Դժոխային պայմաններում ապրող հայ ժողովուրդը պարտավոր է բոլոր միջոցներով փարել ինքնապաշտպանութեան գաղափարին, իր մարդկային իրավունքների դատին՝ տանելի մի վիճակ ձեռք բերելու համար :

Այսպիսով, արմենականների ծրագիրը բխում էր արևմտահայ իրականութեան պահանջներից, և երիցս իրավացի է արմենական գործիչ Ա. Դարբինյանը, երբ ընդդժում է. «Չէք գտներ այնտեղ տող մը, նախադասութիւն, որ փոխ առնուած ըլլայ տարբեր մթնոլորտներու,

<sup>1</sup> Նաթանեան Սիք, Եջվ. աշխ., էջ 41:

<sup>2</sup> Տես Ղազարեան Վ., Եջվ. աշխ. էջ 15:

<sup>3</sup> Երամեան Գ., Յու շարժման Վան-Վասպուրականի, Ալեքսանդրիա, 1950թ., հատ Ա, էջ 355:

<sup>4</sup> Ղարբինյան Ա., Եջվ. աշխ., էջ 170:

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 171-172:

տարբեր ժողովուրդներու հեղափոխական կազմակերպութիւններու «աշխարհայեցքներէն կամ «լոզունգ» -ներէն»:

\*  
\* \* \*

Հանգամանքների բերումով Վանը ազատ մնաց 1895թ. ընդհանուր ջարդերից: Սակայն սուլթան Համիդը չէր կարող հաշտվել այդ իրողության հետ և շուտով պաշտոնանկ է անում Նազրմ փաշային՝ որպես կոտորած կազմակերպելու անընդունակ անձնավորություն և Վան է ուղարկում իր թիկնապահներից՝ արյունարբու Յերիք Սաադէղլին փաշային:

Այդ տազնապալից օրերին արմենականներն իրենց ողջ ուժերը կենտրոնացրել էին Վասպուրականի սահմաններում և ոչ մի հավատ չէին տածում եվրոպական միջամտություն վրա:

Նրանք Վանում ունեին 105 խումբ մոտ 350 հրացաններով<sup>1</sup>:

1896թ. մայիսին, երբ մթնոլորտը ծայրաստիճան շիկացած էր, արմենականների Զինվորական խորհուրդը որոշեց նոր խումբ ուղարկել Պարսկաստան՝ զինական ուժ և զինամթերքի պաշարներ Վան հասցնելու նպատակով: Տաս հոգանոց այդ խմբում էին փորձառու արմենականներ Գր. Պեղիկյանը, Արմ. Եկարյանը և ուրիշներ: Սակայն ճանապարհին խմբի բոլոր անդամները ձերբակալվում են և տարվում Սոչի կենտրոնական բանտը: Սա, անշուշտ, մեծ կորուստ էր, քանի որ այդ փորձառու մարտիկների ներկայությունը Վանում կրկնապատկելու էր կոմիտեի ուժն ու եռանդը:

1896թ. հունիսի 2-ի լույս 3-ի գիշերը Այգեստանի արևելակողմում գտնվող Ուրբաթ Առու վայրում բախում է տեղի ունենում թուրք զինվորների և աղի առևտրով զբաղվող քուրդ մաքսանենգ խմբի միջև: Իշխանությունները կատարվածը վերագրում են Հայերին և ձերբակալում անվանի մարդկանց՝ Հ. Պարթևյանին, Պ. Սուլախյանին և Մ. Ավետիսյանի ավագ եղբորը՝ Կ. Թերլեմեզյանին: Գիշերը քաղաքից հանելով հայ բանտարկյալներին, գաղանաբար սպանում են:

Առիթն արդեն կար և հունիսի 3-ից Սաադէղլինը գործի դրեց ջարդի ծրագիրը: Զարդի նախօրյակին Մ. Ավետիսյանը հրավիրում է կուսակցական պետերի խորհրդակցական ժողով: Իր բնույթով նման ժողով առաջին անգամ էր գումարվում Վանում: Ժողովի օրակարգի առանցքը կազմում էր մոտեցող արհավիրքին դիմագրավելու հարցը: Արմենականների առաջնորդը հիմնավորում է փոխադարձ համագործակցություն և համերաշխություն անհրաժեշտությունը: Բարեբախտաբար, այդ տազնապալից օրերին հայ կուսակցությունների տեղական առաջնորդները գործեցին միակամ ու համերաշխ:

<sup>1</sup> Տե՛ս ՊՊԿԱ, ք. 427, ց. 1, գ. 28:

Պաշտպանողական մարտավարութեան ծրագիրը, որը նախապիս պատրաստել էր Մ. Ավետիսյանը՝ դաշնակցական Պետոյի /Ալ. Պետրոսյան/ և Հնչակյան Մարտիկի /Մ. Սարուխանյան/ Հետ Համախորհուրդ, հունիսի 4-ից զրկում է դործադրութեան մեջ: Նախապես ցուցակադրված 500-ից ավելի ռազմիկների տեղավորում են «պատնեշներու կամ «դիրք»-երու վերածուած երկյարկանի տուներու վերին յարկերուն մէջ, որոնք շինուած էին հայ եւ թրքարնակ թաղերու սահմանակից»<sup>1</sup>: Քաղաքում կառուցվել էին այդպիսի 33 դիրք-պատնեշներ:

Կռվի առաջին օրվա խառնակ թոհուբոհում իր հանդուգն գործողութիւններով աչքի բնկավ արմենական Արշակ Չիչյանը, որն իր եղբոր Տիգրանի հետ դիմադրութեան անառիկ օջախի է վերածուած հայրական տունը:

Հայկական թաղամասերը վերածվել էին ինքսպաշտպանական ճամբարի: Պաշտպանվելու համար օգտագործվում էր ամեն ինչ, բնական յուրաքանչյուր ամրութիւն: Խուժանի և քրդական հեծելազորի առաջխաղացումը կասեցնելու նպատակով որոշ տեղերում կտրել էին հսկա ուռնիները՝ փողոցներում ստեղծելով բարիկադանման ամրութիւններ:

Վանի ինքնապաշտպանութիւնը տեւեց 1896թ. հունիսի 3-ից 10-ը: Դիմադրութիւնը կազմակերպված էր լավագույն մարտավարական սկզբունքներով: Այն կարող էր երկար շարունակվել, որը խիստ անհանգստացնում էր թուրքական կառավարութեանը և Վանի անգլիական հյուպատոս Ուիլյամսին: Վերջինս մտավախութիւն ուներ, թե դա առիթ կտա սահմանակից Ռուսաստանի ռազմական միջամտութեանը:

Սաադէդդին փաշան զգալով, որ ռազմական միջոցներով անհնար է ընկճել հայերի դիմադրութիւնը, անգլիական հյուպատոսի միջոցով սկսում է դիվանագիտական խարդավանքները: Հյուպատոսների անունից ինքնապաշտպանութեան դեկավար Մ. Ավետիսյանին առաջարկվում է հանձնել՝ այն պայմանով, որպեսզի կռվողների զենքը հանձնվի թուրքական կառավարութեանը, իսկ սպասամբների ղեկավարները տարվեն եվրոպական որևէ նավահանգիստ:

Խմբապետական խորհրդակցութիւնից հետո Ջինվորական մարմինը մերժում է այս առաջարկները:

Միաժամանակ կռիվը նորից է սաստկանում:

1896թ. հունիսի 8-ին Ուիլյամսը կռիվը վերջացնելու պատրվակի ներքո նոր ժողով է գումարում, որին մասնակցում են եվրոպական մի շարք հյուպատոսներ, ինքնապաշտպանական ուժերի ղեկավար Մ.

<sup>1</sup> Ղարիբյան Արտ., նշվ. աշխ., էջ 71:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 70:

<sup>3</sup> Տե՛ս Ղազարեան Վ., նշվ. աշխ., էջ 45:

Ավետիսյանը՝ քառասուն փորձված հայրուկների հետ: Ժողովում արմենականների ղեկավարը հնչած մեղադրանքներին ի պատասխան մեկ անգամ ևս հիմնավորում է, որ իրենց մղած կռիվն ինքնապաշտպանութան կռիվ է: Վերջապես համաձայնութուն է ձևաք բերվում, որ հայ մարտիկները թողնեն Վանը՝ այն պայմանով, որ ճանապարհին չհետապնդվեն թուրքական և քրդական ուժերի կողմից: Նույն օրվա երեկոյան Զինվորական Մարմնի հրամանի համաձայն, խմբերը թողնելով իրենց դիրքերը, շարժվում են դեպի Վարազա վանքը: Վարագում միջկուսակցական ժողովից հետո որոշվում է, որ բոլորը միասին առաջ են շարժվելու մի ուղղությամբ: Հնչակյան զինվորները Մարտիկի գլխավորությամբ առաջապահներ են ընտրվում, դաշնակցականները Պետոյի առաջնորդությամբ բոլորի թիկունքից են գնալու, իսկ «արմենական զինվածները Ավետիսյանի և Մուշեղի գլխավորությամբ անգեններին երկու կողմից պաշտպանելու»<sup>1</sup>:

Հաջորդ օրը այդ պլանը փոխվում է: Արմենականների խումբը, որն ամենաստվարաթիվն էր, պաշտպանական անհրաժեշտ մարտակարգ ընդունելով, առանձին բռնեց նահանջի ճամփան: Սակայն խումբը հենց սկզբից սկսեց հետապնդվել թուրքական և քրդական մեծաթիվ ուժերից: Լմբի ցանկացած տեղաշարժ աչալուրջ հսկվում էր թուրքական իշխանութունների կողմից:

Անվերջ ընդհարումներից հետո Մ. Ավետիսյանի առաջնորդած արմենականների խումբը վերջապես մտնում է Խանասորի դաշտ, որտեղ գտնվում էր սրբ. Բարդուղիմեոսի Հինավուրց վանքը: Այստեղ դարանակալել էին զգալի թվով թուրք զինվորներ: Շուտով արմենականները շրջապատվում են Խանասորի դաշտ խուժող քրդական հրոսակներով, որոնց գլխավորում էր հայտնի արազակապետ Շարաֆ բեկը: Մարտի դաշտում զոհվում են արմենականների մեծագույն մասը, այդ թվում, խիզախ առաջնորդ Մ. Ավետիսյանը, որի պայծառ կերպարը հավերժ կմնա հայոց ազատագրական շարժման պատմության մեջ: Ըստ Տեր-Մկրտչյանի, մարտի ընթացքում հայերն ունեցան 384 զոհ, որոնց ճնշող մեծամասնությունը արմենականներն էին: Վանի ինքնապաշտպանությունը կարող էր հաղթանակով ավարտվել, եթե այն միաժամանակ ուղեկցվեր Արևմտահայաստանի այլ վայրերի դիմադրական հուժկու օջախների առաջացումով:

Ժամանակի կուսակցական և հանրային գործիչները նշում են այն կարևոր դերը, որ կատարեց Արմենական կուսակցությունը 1895-1896թթ. խիզախ մաքառումները կազմակերպելու գործում: Միաժամանակ, ինքնապաշտպանական մարտերում առավելագույնս միմյանց օժանդակեցին և կողք-կողքի կռվեցին հնչակյաններն ու դաշնակցականները: 1896թ. Վանի ինքնապաշտպանական մարտերում ամենա-

<sup>1</sup> Եղ. Չարեցցի անվ. գրավածու քյան և արվեստի թանգարան /ԳԱԹ, Ե. Կու ժիլյանի ֆ., 580թ., 3թ, N 31, էջ 444:

ծանր կորուստը կրեցին արմենականները: Այդ մարտերում գոհվեցին կուսակցութեան անդամների մեծ մասը: Նահատակվեց արմենականների զեկավար կորիզը:

Ժողովրդական ինքնապաշտպանութունը կարող էր առավել հաջող և արդյունավետ լինել, եթե Վանում մեծ հեղինականութուն վայելող ու ազդեցիկ դիրքեր ունեցող Արմենական կուսակցութունը կարողանար ժամանակին իր մարտական խմբերը ստեղծել Վասպուրականի մոտիկ ու հեռավոր բոլոր գավառներում և զենքի վարժեցրած լինել ժողովրդի լայն խավերին:

\* \* \*

1896թ. ջարդերից հետո Արմենական կուսակցութունը թեև ծանր հարվածներ ստացավ, բայց չլքեց ասպարեզը, այլ խոհեմ, համառ ու համբերատար կերպով շարունակեց իր գործունեութունը: Իրականութեանը էի համապատասխանում դաշնակցական հայտնի գործիչ Ռուբենի այն կարծիքը, թե Մ. Ավետիսյանի մահվամբ «մահամերձ կը դառնար նաև Արմենականութիւնը»<sup>1</sup>:

Ճշմարիտ է, որ Մ. Ավետիսյանի կորուստը շատ ծանր տպավորութուն թողեց արմենական շարքերի վրա, բայց գոնևիցին կարող ուժեր, որոնք փոխարինեցին արմենականների ճանաչված ու հեղինակավոր առաջնորդին:

1896թ. ծանր զեպքերից հետո արմենականները հաջորդ 3-4 տարվա մեջ անվհատ փորձում էին վերակառուցել իրենց շարքերը: Սուլթանի կազմակերպած կոտորածները ողջ Արևմտահայաստանը դարձրել էին կիսավեր մի երկիր: Հայկական գավառներում ջարդերից հետո տիրում էր մահաշունչ մի լուռութուն. «Լուռ էր ամէն ինչ, կարծես մեռյալների հովիտ լինէր երկիրը»<sup>2</sup>:

Մտածելիկ տեսարան էր ներկայացնում Վանը կոտորածից հետո: Առևտուրը բոլորովին դադարեցված էր, խանութները կողոպտված, իսկ հաղորդակցութունը գավառների միջև գրեթե իսպառ ընդհատված: Մահաբեր իրադարձութուններից հետո արևմտահայերի շրջանում առաջացավ խոր հիասթափութուն հայ քաղաքական կուսակցութունների գործունեութունից: Հարկավոր էր ժողովրդի լայն խավերի շրջանում լուրի-մնջիկ տքնաջան, համբերատար աշխատանք կատարել կորցրած հեղինակութունն ու ազդեցութունը վերականգնելու համար:

Եվ կենդանի մնացած արմենական գործիչները նվիրումով և պատասխանատվութեան պայտեմով լծվեցին այդ գործին: Նախևառաջ ծանր, անմխիթար վիճակ էր գոյացել Արմենական կուսակցութ-

<sup>1</sup> Ռուբեն, Հայեղակալականի մը յիշատակները, Բ. հատ. Ե., 1990, էջ 106:

<sup>2</sup> Ա՛րո, Վանի, Բիթլիսի և Էրզրու մի վիլայեթները, Ե., 1912թ., էջ 319-320:

յան Վանի կազմակերպական կառուցում, որը կենտրոնական դեր ունշանակութիւն ունի: Վանի արմենականներից շատերը զոհվել էին Հոլոքոստի հայտնի նահանջի ժամանակ:

Ողջ մնացած արմենական գործիչներից Արմ. Եկարյանը, Գր. Պետրիկյանը, Գար. Բաղեջյանը, Հովհ. Քանքան-Փանոսյանը, Գր. Արարքեցյանը Վանի կոլիւնների նախօրյակին գինամթերք փոխադրելու նպատակով մեկնել էին Պարսկաստան և ձերբակալվել պարսից իշխանութիւնների կողմից: Իսկ նահանջող Մ. Ավետիսյանի խմբից անջատվելով Վանում էին ապաստանել Եղ. Գոնտակճյանը, Ղ. Խանջյանը, Ռ. Շատիրոյանը և այլք:

Հինց այս գործիչների ուսերին ծանրացավ մարտերում բոլորված արմենական շարքերը վերակազմավորելու և ինքնապաշտպանութիւն գործը բարձիթողի վիճակում չթողնելու պարտականութիւնը: Մ. Ավետիսյանի նահատակութիւնից հետո, արմենականների պարագլուխը դարձավ Եղիշե Գոնտակճյանը, որին արմենական պատմագիր Արտ. Դարբինյանը անվանում է «... Աւետիսեանի յաջորդը»<sup>1</sup>: Նա ի մի է բերում վերապրող ուժերը, ձեռնարկում կազմակերպական աշխատանքներ, վերամշակում «կուսակցութեան գործելակերպի ծրագիրը»<sup>2</sup>:

1897թ. Եղ. Գոնտակճյանը ընտրվում է կուսակցութիւնի Կեդրոնի ատենապետ, սակայն 1897թ. աշնանը 45 տարեկան հասակում վախճանվում է թոքախտից:

Այդ տարիներին կուսակցութիւնը իր գործունեութիւնը կենտրոնացրեց երկու բնագավառում տնտեսական և կրթական: Արմենականները նորից փորձեցին վերակենդանացնել դպրոցական գործը, ուսուցիչներ պատրաստել քաղաքի և գյուղերի համար: Պետք էր վերաշինել այրված դպրոցները, եկեղեցիները և «դպրոցներուն հասույթ տուող եկեղեցապատկան կալուածները, քիւս կողմէ կազմել ուսուցչախմբեր իւրաքանչիւր դպրոցի համար»<sup>3</sup>:

Վանի հայ հասարակութիւնն իր կարողութիւններով կրկին սատար կանգնեց արմենականների ազգային ձեռնարկներին: Կարճ ժամանակում վերաբացվեցին և պարապմունքները վերսկսեցին բազմաթիւ օջախներ:

1901թ. Վանի արմենական Մասնաժողովում որպէս օրակարգի հրատապ հարց քննարկման էր դրված քաղաքում Կեդրոնական վարժարան ունենալու հարցը: Այս հարցը քննարկվում է քաղաքի թաղային վարժարանների ուսուցչական ժողովներում և միացյալ ուժերով բացվում է Կեդրոնական վարժարանը: 1902թ. թաղային վեցամյա

<sup>1</sup> Դարբինեան Արտ., նշվ. աշխ., էջ 102:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 103:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 129-130:

վարժարանների «ընթացաւարտներէն կազմուեցաւ Կեդրոնականի առաջին դասարանը» :

Ժողովրդական Հանգանակութեամբ կառուցվում է Կեդրոնականի երկհարկանի գեղեցիկ շէնքը: Ուշքի գալով հարվածներից, Վանի արմենականները աստիճանաբար վերակազմավորեցին կուսակցական կառույցները և նորից դարձան քաղաքական ասպարեզում եղած լուրջ ուժերից մեկը:

Արմենական շարժումը դարձյալ ընդգրկեց Վանի Հայ Հասարակութեան բոլոր ոլորտները: Գործի անցան բոլոր մասնաճյուղերի անդամները, որոնց նկատմամբ Կեդրոնի կողմից պահանջ եղավ «կամ գործ, և կամ Կեդրոնի գոյքերու յանձնումը» :

Արմենական շարժումը խանդավառութուն առաջացրեց պատանիների շրջանում: Արարուց թաղի բազմամարդ շրջանակում ոգևորված երիտասարդները Համալրելով կուսակցութեան շարքերը, կազմեցին 12 նոր խմբեր: Համալրվեցին նաև Քաղաքամեջի, Նորաշենի և Հայնկոյսների կուսակցական կառույցները: Այդ ժամանակ արմենական Կեդրոնի կազմում էին փորձառու գործիչներ Ղ. Խանջյանը, Ռ. Շատիրյանը, Ռ. Հովնանյանը, Գր. Աճեմյանը, Արմ. Տեր-Պողոսյանը, որոնք արմենականներին հատուկ խոհեմութեամբ և գաղտնապահութեամբ վարեցին կազմակերպական բոլոր կարգի գործերը, տառ առ տառ գործադրելով արմենական կանոնադիրը:

1896թ. դեպքերից հետո արմենականների դիրքերը զգալիորեն թուլացան Սալմաստի գավառում: Դա բացատրվում է մի կողմից արմենական գործիչների պակասով, մյուս կողմից՝ այն փաստով, որ Սալմաստի ենթաշրջանում հետզհետե տիրական է դառնում Հ. Յ. Դաշնակցութեան ազդեցութիւնը: Արմ. Եկարյանը խոստովանում է, որ Վանի կոիվներից հետո արմենականները Սալմաստի շրջանում դադարած էին «այլևս կարելուր գործօն մը Հանդիսանալէ» :

Վանում Արմենական կուսակցութիւնը վերստին մեծ հեղինակութիւն է ձեռք բերում Սեպուհի գործունեութեան տարիներին: Սեպուհը ծնվել էր Արարկիրում, սովորել էջմիածնի ճեմարանում, այնուհետև պաշտոնավարել Ուրմիայի հայկական դպրոցներում : Ծանոթանալով արմենականների ծրագրին, նա դառնում է Համոզված արմենական: Գնահատելով Սեպուհի մեծ առաքելութիւնները, Սալմաստի արմենական վարիչ մարմինը նրան ուղարկում է Վան: 1906թ. Սեպուհը խոհեմ վարքագծով դառնում է Վանի հարգված ու հեղինակավոր այրերից մեկը: Նա փորձում է իր խելացի, հանդարտաբարո ընթացքով մեղմել արմենականների և դաշնակցականների միջև հետզհետե աճող լարվածութիւնը: Սակայն 1907 թվականից հետո արմենականները

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 131:

<sup>2</sup> ՀՀ ԳՊԿԱ, ֆ. 427, ց. 1, գ. 21, էջ 4-5:

<sup>3</sup> Եկարեան Արմ., Ընվ աշխ., էջ 127:

<sup>4</sup> Տես ՀՀ ԳՊԿԱ, ֆ. 427, ց. 1, գ. 15:

վան քաղաքում նույնպես կորցրեցին իրենց նախկին դիրքն ու ազդեցութիւնը: Ոգեշնչված դաշնակցականների եռանդուն գործունեութեամբ, զգալով վերջիններիս իրական ուժերն ու հնարավորութիւնները, շատ արմենականներ հարեցին Լ. Յ. Դաշնակցութեանը: Արմենականների համար ծանր կորուստ եղավ փորձառու առաջնորդ Սեպուհի եղբերական նահատակութիւնը՝ 1908թ. հունվարի 23-ին:

Սեպուհի մահվամբ, ինչպես ճշմարտացի նշել է Արմ. Եկարյանը, արմենական «անձնուէրներու շարքը գրեթէ կը փակուի», որովհետեւ քիչ անց «... Վերակազմաւորուեալ և Արմենականների միաձուլումով կազմուած էր նոր կուսակցութիւն մը»<sup>1</sup>:

Արմենական Արտ. Դարբինյանը նշում է, որ արևմտահայ ազատագրական շարժման անունով երկրում ծնունդ առած «Արմենական կազմակերպութիւնը 15-ամա շրջանէ ետք՝ այն համոզման յանգեցաւ, թէ հայ ժողովրդին ուժերը ամէն մարզին վրայ անգոհացուցիչ էին եւ ցարդ եղած փորձարկութիւնները աւելի տկարացուցած էին մեզ»<sup>2</sup>:

Այս և այլ դրդապատճառներից առաջնորդվելով, արմենական պատասխանատուները ցուցաբերելով համերաշխութեան ձգտող իրենց ոգին, փորձեցին միավորել միմյանցից խռով ու պառակտված առանձին գաղափարական խմբերն ու քաղաքական կազմակերպութիւնները:

Չետագա իրադարձութիւններն այնպիսի բնույթ ստացան, որ արմենականները ընդհուպ մերձենալով վերակազմյալ Հնչակյաններին և բանակցութիւնների մեջ մտնելով հայ ազատագրական շարժման այլ հոսանքների ներկայացուցիչների հետ, համառ ու լարված ջանքերի գնով ձևավորեցին Հայ Սահմանադիր-Ռամկավար կուսակցութիւնը: Դա ընդգրկեց բավական բարդ ու հակասական մի գործընթաց, որը պայմանավորված էր սովյալ ժամանակի հայ իրականութեան մեջ մի շարք նոր հանգամանքների գուգորդումով:

Արմենականների կազմավորումն ու գործունեութիւնը, գաղափարաբանութիւնն ու քաղաքական ուղեգիծը նշանավորեցին Հայ հասարակական-քաղաքական մտքի զարգացման նոր, վերընթաց աստիճանը:

Լինելով բացառապես ազգային շնչի ու նկարագրի կուսակցութիւն, արմենականները էական հետք և լուսավոր հիշատակ թողեցին հայոց պատմութեան էջերում:

<sup>1</sup> Եկարեան Արմ., Եզվ. աշխ., էջ 149:

<sup>2</sup> Դարբինեան Արտ., Եզվ. աշխ., էջ 181:

## ՍՈՑԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏԱՍԿԱՆ ՀՆՁԱԿՅԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

19-րդ դարի վերջին քառորդում ցարական Ռուսաստանի կազմում գտնվող արևելահայութունն օբյեկտիվորեն կրում էր այն սոցիալ-տնտեսական ու հասարակական-քաղաքական գործընթացների ազդեցությունը, որոնք տեղի էին ունենում ինչպես Ռուսաստանում, այնպես էլ Եվրոպայում: Այդ պատճառով Ռուսաստանի ու Եվրոպայի համալսարաններում սովորող կովկասահայ ուսանողությունը կրում էր ինչպես մարքսիզմի, այնպես էլ ռուս նարոդնիկների ազդեցությունը: Մյուս կողմից, 1877-78թթ. ռուս-թուրքական պատերազմում Ռուսաստանի հաղթանակի և հայկական հարցի միջազգայնացման հետ աղտիվացել էր հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը թուրքական բռնակալության դեմ: Այդ ամենը չէր կարող գաղափարական ազդեցություն չթողնել հեղափոխականորեն տրամադրված հայ երիտասարդության աշխարհայացքի վրա:

Նման իրադրության պայմաններում, ժնկում 1887թ. կովկասահայ մի խումբ ուսանողներ ձեռնամուխ են լինում մի կազմակերպության ստեղծմանը, որը զբաղվելու էր Հայաստանի ազատագրության հարցով: Դրանք էին Ավետիս Նազարբեկյանը /Նազարբեկ/, Մարտ Վարդանյանը /հետագայում՝ Նազարբեկյան/, Ռուբեն Խանազատը /Խանազատյան/, Գաբրիել Կաֆյանը: Ժնևի խմբին միանում են Գևորգ Ղարաջյանը, Մաթևոս Ծահաղիզյանը, Քրիստափոր Օհանյանը և ուրիշներ:

Բոլորին համախմբել էր Հայաստանի ազատագրության խնդիրը: Աստիճանաբար առաջ է քաշվում հայ հեղափոխականների ընդհանուր համագումար հրավիրելու հարցը: Այդ գործը նախաձեռնելու համար Նազարբեկյանը դիմում է ճանաչված հրապարակախոս Մկրտիչ Փորթուգալյանին: Վերջինս «Արմենիայում» հրապարակում է Նազարբեկյանի առաջարկը, սակայն ինքն անձամբ մերժում է այն: Դրանից հետո ժնևյան խմբակը հրաժարվում է համագումարից և ձեռնամուխ լինում թերթի հիմնադրմանը, որն իր շուրջը պիտի համախմբեր հեղափոխական երիտասարդությանը: Խմբի բոլոր անդամներն արևելահայեր էին՝ խանդավառված հեղափոխության գաղափարներով: Նրանք կապեր ունեին նարոդնիկների և հոստկայես ժնևում գործող Գ. Վ. Պելխանովի «Աշխատանքի ազատագրության խմբի» հետ:

Ինքը՝ Ավ. Նազարբեկը որոշակիորեն կրում էր նարոդնիկական գաղափարների ազդեցությունը: Դրա ապացույցը գյուղական հա-

մայնքի միջոցով սոցիալիզմին հասնելու նրա երազանքն էր: «Հին ժամանակներից ժառանգած այդ մեծ հարստութիւնը՝ գյուղական համայնքը կոչված է ապագայում մեծ դեր խաղալու հայ ժողովրդի բարօրութեան գործում», - գրում էր Ավ. Նազարբեկը: Նրանց մի կողմից գրավում էին նարոդնիկների պայքարի եղանակները և մանավանդ, հարեկչութիւնը, որը նրանք ձգտում էին փոխադրել Արևմտյան Հայաստան և կիրառել հայ ժողովրդի կեղեքիչների դեմ, մյուս կողմից գտնվում էին մարքսիստական գաղափարների ազդեցութեան տակ: Ահա այս երկու գործոններն իրենց արտահայտութիւնը գտան ժնեյան խմբի կազմած ծրագրի մեջ, որի նախապատրաստման գործը ստանձնեցին Ավետիս և Մարո Նազարբեկյանները և Գ. Ղարաջյանը: Ծրագիրը կազմվեց 1887թ. և հրատարակվեց 1888թ. «Հնչակ» թերթում: «Հնչակը» ժնեյան խմբի պաշտոնաթերթն էր: Այն իր անունը ստացել է Գեորգենի «Կոլոկոլից»: Հնչակյան ծրագիրը բաղկացած էր «Հեռավոր» և «Մոտակա» նպատակներից: Ծրագրի «Հեռավոր նպատակ» բաժնում հայտարարվում է, որ մարդկութեան ներկա հասարակական կազմակերպութիւնը հիմնված է անարդարութեան և բռնութեան վրա, որ բնակչութեան մեծամասնութիւնը շահագործվում է մեծ հարստութեան դիզած փոքրամասնութեան կողմից: Իրերի նման վիճակը, ըստ «Հնչակի», կարող է բարելավել միայն հասարակութեան կազմակերպումը սոցիալիստական հիմքերի վրա, որը հենվելով արդարութեան միջոցների կոլեկտիվ սեփականութեան վրա, վերջ կդնի մարդու շահագործմանը և կնպաստի հասարակութեան յուրաքանչյուր անդամի լիակատար զարգացմանը, իրապես պահպանելով մարդկային բնական իրավունքները: «Հնչակի» խումբը հասարակութեան սոցիալիստական կազմակերպութիւնը հայտարարում է իր իդեալը և հայ ժողովրդի հեռավոր նպատակը:

Ծրագրի մոտակա նպատակ էր հռչակվում Արևմտյան Հայաստանի ազատագրութիւնը թուրքական բռնապետութիւնից: Հայտարարվում է, որ արևմտահայութիւնը դատապարտված է քաղաքական իրավազրկութեան և ստրկական հնազանդութեան, որ նա չունի կյանքի և գույքի ապահովութեան երաշխիք, որ ենթարկվում է թալանի ու ավարառութեան ինչպես վայրենի ցեղերի, այնպես էլ կառավարութեան կողմից: Ծրագիրը հայտարարում էր, որ այդ թշվառ վիճակից ժողովրդին փրկելու և նրան դեպի հեռավոր նպատակը սոցիալիստական հասարակութիւնը հասցնելու միակ միջոցը Արևմտյան Հայաստանում քաղաքական ազատութեան և ազգային անկախութեան ձեռքբերումն է, որն էլ կուսակցութեան մոտակա նպատակն էր: Ծրագրում նշվում է, որ այդ նպատակի իրագործումից հետո, անմիջապես պետք է գործադրվեն քաղաքական ազատութեան ապահովման հիմնական

<sup>1</sup> Գնչակ, մ Ըն, 1889, թիվ 1:

<sup>2</sup> Ե ու յ ն տեղու մ:

պայմանները՝ ժողովրդական ներկայացուցիչներին՝ ընտրություններ՝ Օրենսդիր ժողով կազմավորելու համար, նահանգային և համայնական ինքնավարություն, ընտրական ցենզի վերացում, մամուլի, ժողովների և այլ ղեմնկրատական ազատություններ, պարտադիր կրթական համակարգ բոլորի համար:

Ծրագրում նշվում էր, որ քաղաքական ազատության նվաճումից հետո իրադրությունը է ժողովրդի տնտեսական դրություն բարեփոխումը: Վերոհիշյալ նպատակներին հասնելու միջոց էր համարվում հեղափոխությունը՝ այսինքն, ժողովրդական ապստամբություն միջոցով Արևմտյան Հայաստանում առկա կարգերի բռնի փոփոխությունը: Դրանով իսկ հնչակյանները հեղափոխական-ապստամբական գործունեության ասպարեզ էին հռչակում Արևմտյան Հայաստանը: Ծրագրում նշված էր նաև, որ հեղափոխական գործունեության միջոցներն են լինելու ազիտացիան, պրոպագանդան և տեռորը: Ծրագրում արժարժվում էին նաև կազմակերպական խնդիրներ: Անհրաժեշտ էր համարվում հեղափոխական ջանքերի կենտրոնացումը բացառապես արևմտահայության ազատագրության խնդրի վրա, քանի որ.

- Հայություն ամենասուվար մեծամասնությունը (2/3) կազմում են արևմտահայերը և նրանց բնակավայրը մեր հայրենի հողի ամենամեծ տարածությունն է:

- Արևմտահայերի հարցը Բեռլինի կոնգրեսի 61-րդ հոդվածի ձևով ճանաչված է մեծ տերությունների կողմից:

Իրենց մոտակա նպատակի իրագործման համար հնչակյանները ամենահարմար պահը համարում էին որևէ պետության կողմից Թուրքիայի դեմ սկսված պատերազմը:

Արևմտյան Հայաստանի ազատագրության խնդիրը լուծելուց հետո ծրագիրը նախատեսում էր ազատագրել նաև պարսկահայերին ու ռուսահայերին և Հայություն այդ երեք հատվածների միավորումից կազմել ղեմնկրատական հանրապետություն, որը «Համայն Հայություն համար ճամփա կբացի դեպի հեռավոր նպատակը՝ սոցիալիստական հասարակական կազմակերպությունը, ուր պիտի դիմեն Համայն մարդկությունը»: Դրանով իսկ հնչակյանների կողմից սեփական ծրագրի հրատարակությունն ազդարարում էր հեղափոխական կուսակցության կազմավորման մասին:

Հնչակյան կուսակցության հիմնադիր ժողովին մասնակցում էին Ավետիս Նազարբեկյանը /Ավո/, Գարրիել Կաֆյանը /Շմավոն/, Իսաբեն Սանազատյանը /Սանազատ/, Մարո Վարդանյանը, Գևորգ Ղարաջյանը, Մկրտիչ Մանուչարյանը, Հովհան Դավթյանը, Սարգիս Աղամիրզյանը, Բրիտտափոր Օհանյանը: Կուսակցության առաջին

<sup>1</sup> «Դնչակ», 1888, թիվ 10:

<sup>2</sup> Նույն տեղում:

կենտրոնական կոմիտեի անդամներ ընտրվեցին Ավետիս Նապարեկը, Ռ. Խանազատը, Գ. Կաֆյանը, Գ. Ղարաջյանը, Մ. Վարդանյանը :

Հետագայում հնչակյաններին միացան Ռուբեն Բերբերյանը, Ալ. Շիրվանզադեն, Ղ. Աղայանը և ուրիշներ: «Հնչակի» տպարանը հաստատվում է Նապարեկի տանը, ուր հավաքվում էին կուսակցութ-  
յան անդամները և բուռն քննարկումներ ծավալում Հայաստանի ա-  
զատագրութան հարցի վերաբերյալ:

1889թ. ամռանը Ռ. Խանազատը Փարիզում մասնակցում է II ինտերնացիոնալի Հիմնադիր համագումարին որպես հայկական առա-  
ջին սոցիալիստական կուսակցութայան ներկայացուցիչ: Ռ. Խանազատը  
համագումարին է ներկայացնում տեղեկություններ Հնչակյան կու-  
սակցութայան մասին: Հնչակյան կուսակցությունը ընդգրկվում է II  
ինտերնացիոնալի կազմում: Այնուհետև Խանազատը մեկնում է Կ. Պո-  
լիս, ուր կապեր է հաստատում նշանավոր հրապարակախոս, գրող Ար-  
փիար Արփիարյանի հետ: Արփիարյանը, որն այդ ժամանակ մեծ ժո-  
ղովրդականութուն ուներ արևմտահայութայան շրջանում, խանդա-  
վառվում է հնչակյաններով: Երբ Ռ. Խանազատն Արփիարյանին  
հայտնում է կուսակցութայան ծրագրերի մասին, սոցիալիզմի հարցի  
կապակցութայամբ նրանց միջև անհամաձայնություն է առաջանում,  
քանզի Արփիարյանը արևմտահայ իրականութայան պայմաններում սո-  
ցիալիզմի քարոզչութունը համարում էր վաղաժամ և անիրագործելի:  
Իր հուշերում Ռ. Խանազատը գրում է. «Հայկակը /Ա. Արփիարյանը-  
Հ. Գ./ սոցիալիզմի մասին Հիմնավոր հասկացություն համարյա թե չու-  
ներ, բայց նա բնագործ միայն դատելով այն կարծիքը հայտնեց, թե  
սոցիալիզմը շատ հեռավոր ապագայի խնդիր կարող է լինել»: Ա. Ար-  
փիարյանը զտնում էր, որ Արևմտյան Հայաստանում սոցիալիզմի  
խնդիրներով զբաղվելը դեռ շատ վաղ է: Ըստ նրա, նախ պետք է Հա-  
յաստանն ազատագրել օսմանյան լծից և հետո խորհել սոցիալիզմի  
մասին :

Չնայած այդ շրջանում Ա. Արփիարյանը Կ. Պոլսի հնչակյան  
մարմնի մեջ չմտալ, բայց նա հնչակյաններին ցույց էր տալիս և բա-  
րոյական, և նյութական օգնություն: Մասնավորապես «Մասիս»  
պարբերականի վաճառքից ստացված հասույթի մի մասը նա տրամադ-  
րում էր հնչակյաններին :

Հետագայում Խանազատը գրում էր. «Տրապիզոնում և Պոլսում  
ուռնեցածս գործունեութունն ինձ պարզ կերպով ցույց էր տվել, որ

<sup>1</sup> Գր հասարակական-քաղաքական կազմակերպության ԸՆԹԻՍ փաստաթղթերի կենտրոնական պետական արխիվ, ֆոնդ 4045, ցուցակ 2, գրք 22, ք. 3 Այսու հետև: ԳԳ ԳԲ Կ Ծ Կ Պ Ա /:

<sup>2</sup> Խանազատ Ռ., «Նյայ հեղափոխականի յու շերից», «Յայրենիք», Բոստոն, 1927. թիվ 2, էջ 114:

<sup>3</sup> «Աշակ», Թիֆլիս, 1908, N 35:

<sup>4</sup> «Շիրակ», Կահիրե, 1907, թիվ 9, էջ 534:

մարքսիստական գործունեութեան համար այդ երկրում ոչ մի հող չկար» :

Հնչակյանները Կ. Պոլսից բացի եռանդուն աշխատանքներ ծավալեցին Կարինում էրզրումում հնչակյան կենտրոն ստեղծելու ուղղութեամբ:

Արդեն 1889թ. Խանաղատը մեկնում է Թիֆլիս և հանդիպում Գր. Արծրունու հետ: Թիֆլիսում Խանաղատի և հատկապես Խաչատուր Մալումյանի ջանքերով հրավիրվեց ժողով, որին մասնակցում էին Խ. Մալումյանը, Մարտին Շաթիրյանը, Ստեփան Զորյանը /Ռոստոմ/, Ալեքսանդր Պետրոսյանը /Պետո/ և ուրիշներ: Այստեղ Հնչակյան կուսակցութեան առաջին առաքյալը ներկայացրեց հայկական հարցի, արևմտահայերի դրութեան մասին իր տեսակետները՝ եզրակացնելով, որ անհետաձգելի անհրաժեշտութեան է դարձել հեղափոխական գաղտնի ընկերութեան կազմակերպումը սոցիալիստական սկզբունքների հիման վրա: Կարծիքների փոխանակութեան ժամանակ սոցիալիզմի գաղափարը հիմնականում ընդունվում է, սակայն նրա գործնական կիրառութեան հարցի վերաբերյալ զուտ տակտիկական նկատառումներով, անհամաձայնութեան է առաջանում, նկատի առնելով այն հանգամանքը, որ հայկական հարցի լուծումը կապված է եվրոպական կապիտալիստական երկրների հետ, որոնց վրա կարող է բացասաբար անդրադառնալ հայ իրականութեան մեջ սոցիալիստական կուսակցութեան կազմավորումն ու նրա դիմումները Եվրոպային: Ուստի, որոշվում է գումարել նոր ժողով: Երկրորդ ժողովն ավելի բազմամարդ էր: Մասնակցում էին 22 հոգի: Ժողովականներն ամփոփանք են հայտնում, որ ժողովին չեն մասնակցում երիտասարդութեան շրջանում մեծ հեղինակութեան վայելող Բրիստափոր Միքայելյանն ու Սիմոն Զավարյանը, որոնք այդ ժամանակ Թիֆլիսում չէին:

Հնչակյանները որոշակի դերակատարութեան ունեցան 1890թ. էրզրումի ցույցի կազմակերպման գործում:

Տեղի հեղափոխական ուժերին հակահարված տալու նպատակով թուրքական կառավարութեան տեղական պաշտոնյաները լուրեր են տարածում, թե հայոց եկեղեցում գնեքի պահեստ կա: Նահանգապետի հրամանով հունիսի 18-ին որոշվում է խուզարկել Սանասարյան վարժարանի շենքը և Կարինի մայր եկեղեցին: Այդ լուրը ծանր տպավորութեան է թողնում ողջ հայութեան վրա: Ժողովուրդը փորձում է արգելել խուզարկութունը. տեղի է ունենում բախում ոստիկանութեան հետ: Երկու կողմերն էլ տալիս են գոհեր ու վիրավորներ: Ոստիկանները ներխուժում են եկեղեցի և խուզարկութեան կատարում, բայց զենք չեն հայտնաբերում: Այնուհետև սկսվում են ձերբակա-

<sup>1</sup> Խանաթառ Ռ., Եզվ. աշխ., էջ 117:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 121:

յուլթյունները: Յուլյին մասնակցած ակտիվ գործիչները՝ Կերեկցյանը, Նշկյանը, Իշգալացյանը հեռանում են Կարինից:

Դեռևս էրգորումի դեպքի նախօրյակին այն կարծիքը կար, թե եվրոպական զիվանագիտությունը պիտի միջամտեր և ճշնում գործադրեր Բ. Դուան վրա: Այդ կարծիքը փարատվեց այն բանից հետո, երբ եվրոպական հյուպատոսները բավարարվեցին միայն իրենց կառավարություններին պաշտոնապես տեղյակ պահելով կատարվածի մասին: 1890թ. Տրապիզոնում ստեղծվում է հնչակյան առաջին մասնաճյուղը, որի մեջ մտնում էին Ռ. Խանազատը, Պ. Մարիմյանը, Հմայակ Խուշպուլյանը, Հ. Մեղավորյանը և ուրիշներ: Տրապիզոնի Վարչությունը ստանձնում է ղեկավար դեր: Տրապիզոնի հնչակյանները կապեր են հաստատում 1887թ. Կ. Պոլսում ստեղծված հնչակյան Վարիչ մարմնի հետ, որի անդամներն էին Մեծն Մուրատը /Համբարձում Պոյաճյան/, Հարություն Ճանկուլյանը /Ղարիպ/, Միհրան Տամատյանը, Գրիգոր Գըլճյանը, Մարգար Հացագործյանը, Հակոբ Գազանճյանը: Հնչակյան կենտրոնի ցուցումով Տրապիզոնի վարչությունը որոշում է նոր, ավելի հզոր ցույց կազմակերպել Պոլսում:

1890թ. հուլիսի 12-ին հավաքվում են Համբարձում Պոյաճյանը, Միհրան Տամատյանը, Հարություն Ճանկուլյանը, Արամ Աչըզպաշյանը, Գր. Գըլճյանը, Հ. Գազանճյանը և որոշում ցույցը կազմակերպել խաղաղ միջոցներով: Յուլյի նպատակն էր բողոքել խուզարկությունների և ձերբակալությունների դեմ և եվրոպական դեսպանների ուղղությունը հրավիրել հայկական հարցի վրա: Հուլիսի 15-ին ժողովուրդը հավաքվում է Գում-Գափուլի Մայր եկեղեցում: Երբ պատրիարք Խորեն Աչըզյանը պիտի սկսեր ժամերգությունը, Հ. Ճանկուլյանը եկեղեցու դահլիճի պատից պոկում է սուլթանական զինանշանը և ժողովրդի բացականչությունների ներքո ջարդում է այն: Այնուհետև նա բարձրանում է բեմ և կարդում սուլթանին ներկայացվող պահանջագիրը: Պահանջագիրը նկարագրում էր արևմտահայության ծանր դրությունը և հայկական նահազների համար պահանջում ինքնավարություն: Այնուհետև Հ. Ճանկուլյանն ու Հ. Պոյաճյանը /Մեծն Մուրատ/ պատրիարքից պահանջում են իրենց հետ միասին պահանջագիրը ներկայացնել սուլթանին, սակայն միջամտում են ոստիկանությունն ու զինվորները: Տեղի է ունենում ընդհարում, փոխհրաձգություն, որի ժամանակ լինում են զոհեր ու վիրավորներ: Այնուհետև սկսվեցին զանազան ձերբակալությունները: Հ. Պոյաճյանին հաջողվեց խույս տալ և փախչել Աթենք, բւր ժնեից տեղափոխվել էր հնչակյան կենտրոնը:

Յուցարարների դատը եղավ օգոստոսին: Դատի ժամանակ Ճանկուլյանը դատաւարտեց օսմանյան կառավարության հայահա-

<sup>1</sup> Պատմություն Արցախ-Ղեմուրառ Յնչակյան կուսակցության, Խաղոր Ա, Պեյուրթ, 1962, էջ 52

լած քաղաքականութիւնը: Նա ժխտեց դատարանի կողմից Հայ ժողովրդին վերադրվող անջատողականութիւնը և սահանջեց օսմանյան կայսրութեան բոլոր ժողովուրդների ցեղային խտրականութեան վերացում: Հ. Ճանկուլեյանը դատապարտվում է մահվան, բայց մահապատիժը փոխվում է ցմահ բանտարկութեան Աքէյայի բանտում: Մյուս ձերբակալվածները դատապարտվեցին 5-15տ. բանտարկութեան<sup>1</sup>: Պետրոս Մարիմյանը, Գրիգոր Գրլճյանը և ուրիշներ աքսորվում են աֆրիկյան Տրիպոլի, Բոնիա, Աքիա:

Յուլյը բարձր գնահատականի արժանացավ Հնչակյան կենտրոնի կողմից: «Հնչակը» հորված նվիրեց այդ ցույցի նշանակութեան բացահայտմանը<sup>2</sup>: Գուժ-Գափուի ցույցը մեծ տպավորութիւն թողեց Անդրկովկասի Հայ երիտասարդութեան վրա, ուստի դրանից հետո Ռ. Խանազատի Հայտնվելը Բաթումում մեծ աշխուժութիւն առաջացրեց Թիֆլիսում, ուր այդ օրերին եռանդուն կերպով ընթանում էին նոր Հեղափոխական կազմակերպութիւն ստեղծելու աշխատանքները: Խորհրդակցութիւններ էին տեղի ունենում հասարակական-քաղաքական տարբեր ուղղութիւնների ներկայացուցիչների մասնակցութեամբ, որոնց մասնակցում էին մշակականներ, Հայ նարոդնիկներ, արմենականներ, մարքսիստներ: Բաթումում Ռ. Խանազատի հետ տեսակցում է Արշակ Տեր-Գրիգորյանը, որը եկել էր նրան հրավիրելու Թիֆլիս՝ մասնակցելու այդ խորհրդակցութիւններին որպէս Հնչակյան կուսակցութեան ներկայացուցիչ: Ռ. Խանազատը մասնակցեց սկզբնաժողովներին, սակայն Հանդիպումների ժամանակ նա պնդում էր, որ նոր ձևավորվող կուսակցութեան ծրագրում պետք է դրվեն սոցիալիզմի զաղափարական սկզբունքները, սակայն այդ առաջարկութիւնը ընդունելութիւն չի գտնում: Անգամ սկզբունքով սոցիալիստներ Քր. Միքայելյանն ու Սիմոն Զավարյանը գտնում էին, որ սոցիալիզմի սկզբունքը բացահայտորեն հռչակելով իրենցից կվանեն շատ ու շատ կարող ուժերի, որովհետև Հայ խայտաբղետ հասարակութեան մեծամասնութիւնը սոցիալիզմը մերժում է<sup>3</sup>:

Բանավեճեր էին տեղի ունենում նաև մինչ այդ Թիֆլիսում ձևավորվող Հ. Յ. Դաշնակցութեան հիմնադիր ժողովներում կուսակցութեան կենտրոնական ղեկավար մարմնի նստավայրի ընտրութեան հարցի շուրջ: Իր հուշերում Ռ. Խանազատը գրում է. «Պարզ նկատելի էր, որ բոլորն էլ ցանկանում էին գործի ղեկավարութիւնն անպայման լայն հնչակյաններից ու նրա ղեկավարներից: Ամեն կերպ աշխատում էին կենտրոնը դարձնել Թիֆլիսը»: Ռ. Խանազատն ինքը առաջարկում է Տրապիզոնը: Ի վերջո որոշվում է «Հնչակը» թողնել ժնեում

<sup>1</sup> Կոստանոյան Է., Գուժ Գափուի ցույցը, «Լրագրի հասարակական գիտութիւն», 1990,

թիվ 8: Տե՛ս նաև «Միջակ», 1890, թիվ 4:

<sup>2</sup> «Միջակ», 1890, թիվ 60:

<sup>3</sup> Խանազատ Ռ., նշվ. աշխ., էջ 116:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 122:

որպես կուսակցութեան գիտական օրդան, որը պիտի հրատարակվեր ամիսը 1 անգամ: Ժնև պիտի մեկնէր Նաև Քր. Միքայելյանը, որպեսզի Ա. Նազարբեկի հետ միասին խմբագրեն «Հնչակը»: Մի ուրիշ թերթ էլ պիտի հրատարակվէր Թիֆլիսում, որպես միասնական կուսակցութեան մարտական օրփան: Անունը որոշվեց դնել «Դրոշակ»: «Դրոշակի» խմբագրական մարմինը հետո պիտի ընտրվէր: Նորաստեղծ կուսակցութեանը կրելու էր «Հայ Յեղափոխականների Դաշնակցութուն» անունը: Նորաստեղծ միացյալ կուսակցութեանը հրատարակում է իր Մանիֆեստը, որը կոչ էր անում Հայ ժողովրդի բոլոր խավերին համարմբել արևմտահայութեան ազատագրութեան պայքարի դրոշի ներքո: Այդ ամենի մասին Ռ. Խանազատը ժնևի Կենտրոնին գեկուցագիր է ուղարկում և մեկնում Երևան: Դրանից հետո Նազարբեկը Թիֆլիս է ուղարկում Հակոբ Մեղավորյանին /Արփար/, որն իր հետ բերել էր ժնևի Կենտրոնի հին պայմանները, ըստ որի Թիֆլիսի հեղափոխական կազմակերպութեանը պետք է մտնէր «Հնչակի» մեջ: Փաստորեն Նազարբեկը միութեան խնդրում չէր ելնում կողմերի իրավահավասարութեան սկզբունքից: Քր. Միքայելյանն էլ հրաժարվեց ժնև մեկնել, որպես «Հնչակի» երկրորդ խմբագիր, սակայն թերթը շարունակվում էր հրատարակվել: Թիֆլիսից պահանջում են դադարեցնել «Հնչակի» հրատարակութեանը, մինչև Միքայելյանի ժնև գալը, բայց «Հնչակի» խմբագրութեանը դա թողնում է անհետևանք: Այս կապակցութեամբ Միք. Վարանդյանը գրում է. «Թիֆլիսցիներու մեծամասնութեան մեջ պարզ դիտավորութիւն կար՝ վերցնել գործին ղեկավարութեանը հնչակյան երկու պարագլուխներու ձեռքէն»: Տարածայնութեանը կողմնակից խորացման անհնարին դարձրեց միութեան իրագործումը: Առճակատման խորացմանը նպաստեց հնչակյան լիդերների Ավետիս և Մարո Նազարբեկյանների բռնած կոչոտ ու անզիջում դիրքորոշումը սոցիալիզմի ծրագրային հարցերի վերաբերյալ: Հնչակյան Կենտրոնի պաշտոնական հայտարարութեան մեջ ասված էր, որ հնչակյան կուսակցութեանը կապ չունի և միութեան մեջ չէ Հայ հեղափոխականների դաշնակցութեան հետ հետևյալ պատճառներով Վ. Յ. Դ. մերժել էր սոցիալիզմի սկզբունքը դարձնել ծրագրի «հեռավոր նպատակը» և որոշել է «Հնչակը» հափշտակել հիմնադիրների ձեռքից և նրան տալ ազգայնական-հակասոցիալիստական տարազ:

Թուրքական տիրապետութեանից ազատագրվելու գործում հնչակյանները կարևորում էին հեղափոխական ուրիշ կազմակերպութեանների հետ համագործակցութեանը: Այս կապակցութեամբ հատկանշական էր «Հնչակի» 1891թ. դեկտեմբերի 23-ի հայտարարութեանը:

<sup>1</sup> Տես Վարանդյան Ս., Հայ Յեղափոխական Դաշնակցության պատմություն, Երևան, 1992, էջ 59:

<sup>2</sup> Նույն տեղում:

<sup>3</sup> Տես «Հնչակ», 1891, թիվ 8:

<sup>4</sup> Նույն տեղում, թիվ 7:

նը, որտեղ ասվում էր, որ կուսակցութիւնը պաշտոնապէս միացել է «Արևելյան Դաշնակցութեանը», որը միավորում էր Մակեդոնիայի, Ալբանիայի և Կրետեի հուլյն հեղափոխական կազմակերպութիւններին :

Կովկասում հնչակյանների ամենանշանավոր կենտրոնը դարձավ Բաքուն, որտեղ կենտրոնացված էր Կովկասի բանվորութեան զգալի մասը, որը հնչակյանների սոցիալիստական պրոպագանդայի համար նպաստավոր սլալմաններ էր ստեղծում: 1891թ. հնչակյան գործիչ Երվանդ Պալյանի ջանքերով կազմավորվում է Բալախանի մասնաճյուղը: Բաքվի և Բալախանի հնչակյան մասնաճյուղերը միայն սոցիալիստական քարոզչութիւնն էին տանում: Դասակարգային պայքարի խնդիրներից զատ նրանք աշխատանքներ էին տանում արևմտահայութեան ազատագրութեան գործին օգնելու ուղղութեամբ, մասնավորապէս նյութական օգնութիւնն էին ցույց տալիս Պարսկաստանի հնչակյաններին զինված խմբեր ուղարկելու երկիր :

Հնչակյանները հաստատվում են նաև ԱՄՆ-ում, ուր 1890թ. Գարեգին Չիթչյանի, Հարութիւն Շեքերջյանի, Կարապետ Փափազյանի և այլոց ջանքերով հնչակյան մասնաճյուղեր են ստեղծվում Նյու-Յորքում, Փրովիդենսում, Ուստրում<sup>1</sup>:

Պարսկաստանի առաջին հնչակյան մասնաճյուղը կազմվել է 1891թ. Թավրիզում: Հնչակյան մասնաճյուղ է ստեղծվում նաև Արդաբիլում, որին անդամագրվում է ուսուցիչ Մաթևոս Սարգսյանը /Փարմազ<sup>2</sup> :

1892թ. հնչակյան կենտրոնը ժնեկից տեղափոխվում է Աթենք և ձեռնամուկ լինում մասնաճյուղերի ստեղծման գործն ընդլայնելուն: Հնչակյան մասնաճյուղեր են հիմնվում Երզնկայում, Տիգրանակերտում, Խարբերդում, Արարկիրում, Սեբաստիայում, Ամասիայում, Թոխաթում, Շապին-Գարահիսարում, Կիլիկիայում: Հնչակյան մասնաճյուղերը գործում էին խիստ կենտրոնացված սկզբունքով: Հատկանշական է 1892թ. օգոստոսի 10-ի Ավ. Նաղարբեկի շրջաբերական հրահանգը, որտեղ նա կուսակցութեան մասնաճյուղերին խստորեն պատվիրում էր իրենց գործունեութիւնը համաձայնեցնել Կենտրոնի հետ: Բացի Թուրքիայից հնչակյան մասնաճյուղեր են առաջանում նաև Եդիպտոսում /Կահիրե, Ալեքսանդրիա/: 1893թ. հոկտեմբերի 29-ին հնչակյան գործիչ Ժիրայրի /Ժիրայր Պոյաճյան, Մեծն Մուրատի եղբայրը/ նախաձեռնութեամբ ցույց է կազմակերպվում Յոզղաթում: Ժողովուրդը բողոք է ներկայացնում տեղի թուրք կառավարչին: Հուլիս-օգոստոսի պահանջում էր վերջ տալ ոստիկանների ու հարկահավաքների կամայականութիւններին ու բռնութիւններին: Բաղաքի

<sup>1</sup> «Յնչակ», 1891, թիվ 16:

<sup>2</sup> Տես Պառնոս Թուր. Մ. Գ. Գ. Կ., հատոր Ա, էջ 214:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 222:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 214:

Հայ և թուրք բնակչության միջև կռիվ է սկսվում: Թուրքական զորքը պաշարում է Հայոց թաղը: Սկսվում են ձերբակալություններ: Արյունահեղությունը վերջ տալու նպատակով ժիրայրը Հանձնվում է: 16 օրյա դատավարությունից Հետո, 1894թ. մարտի 24-ին ժիրայրը ենթարկվում է մահապատժի:

1892թ. դեկտեմբերի 25-ին Փոքր Հայքի բոլոր քաղաքներում տարածվում են կոչեր ուղղված թուրք ժողովրդին, որը, ըստ Հեղինակների, պետք է ապստամբի սուլթանական վարչակարգի դեմ և ազատագրվի իսլամի վրա բռնացող սուլթանից: Կոչերն այնպես էին կազմված, որ տպավորություն էր ստեղծվում, թե այն տարածել են իրենք՝ մահմեդականները: Իրականում այդ քայլը նախաձեռնել էր Աթենքի Հնչակյան Կենտրոնը և գործը Հանձնարարել փոքր Հայքի մասնաճյուղերին: Շուտով Կ.Պոլսից ժամանում է քննիչ Հանձնաժողով, այդ թվում և անգլիական Հյուպատոսը: Նրանք Հայտարարում են, որ դա Հայ Հեղափոխականների գործն է: Սկսվում են խուզարկություններն ու ձերբակալությունները, որի Հետևանքով մոտ 500 մարդ է նետվում Կեսարիայի բանտը: Բանտարկյալների մի մասը կաշառքով ազատվում է: Մնացածների դատավարությունը տեղի է ունենում Անկարայում: Դատարանում Հնչակյան գործիչ Անտոն Ռչտունին Համարձակորեն մեղադրում է թուրքական կառավարությունը և դատապարտում նրա Հայկուլը քաղաքականությունը: Դատարանը 17 հոգու դատապարտեց մահվան և տարբեր ժամկետների բանտարկություն: Պոլսի անգլիական դեսպանատան միջնորդությունով ազատվում և Թուրքիայից վտարվում են Կարապետ Թումայանն ու Հովհաննես Գայայանը: Ա. Ռչտունին, որը մահվան էր դատապարտված, կարողանում է փախչել: Սակայն 1893թ. հուլիսի 10-ին 5 հոգի մահապատժի ենթարկվեցին: Աֆրիկա աքսորվեց 9 մարդ:

1890-ական թթ. Փոքր Հայքում գործում էին մի քանի զինված խմբեր, որոնց ղեկավարում էին Հնչակյանները: Դրանցից մեկի ղեկավարը Գալուստ Արխանյանն էր: Նա ձերբակալվեց 1894թ. և 12 տարի ժամկետով բանտարկվեց Երզնկայի բանտում: Մահացավ 1905թ. նոյեմբերին տիֆից:

Շապին-Գարահիսարի Հնչակյան կենտրոնի ղեկավարն էր Արամ Ալըզպաշյանը: Նրա ղեկավարությունում քաղաքներում կազմակերպվում էին ժողովրդի Համար առավել ատելիք պաշտոնյաների ահաբեկումները:

Հնչակյաններն ակտիվ մասնակցություն ունեցան Սասունի 1894թ. օգոստոսյան հերոսամարտին: Նրա կազմակերպիչներից էին Համբարձում Պոյաճյանը /Մուրատ/, Մ. Տամատյանը: Սասունցիները

<sup>1</sup> Տես Պատմություն Ա. Գ. 3 Կ., հատր Ա, էջ 101:

<sup>2</sup> «Չնչակ», 1892, թիվ Գ

<sup>3</sup> Նույն տեղում:

Հերոսական դիմադրությունն ցույց տվեցին թուրքական կանոնավոր զորքին ու քրդական խուժանին: Զեքի Փաշան դիմեց խորամանկութեան: Նա բանագնաց ուղարկեց սասունցիների մոտ և հաշտություն առաջարկեց: Այստամբներին մի մասը մթերքի, զենքի ու դինամիթերքի պահատեղիան պատճառով սրոշեց ընդունել հաշտությունը: Սակայն Մուրատը հասկանալով, որ դա ծուղակ է, գտնում էր, որ չպետք է ընդունել թուրքերի առաջարկը: Հաշտության կողմնակիցները 148 հոգանոց պատվիրակություն են ուղարկում թուրքերի մոտ, սակայն բռնություն էլ դառնում են դավադրության զոհ: Դիմադրությունը շարունակում է Մուրատին իր խմբով, սակայն դրությունը դառնում է օրհասական և սասունցիների դիմադրությունը կտրտվում է: Մուրատը ձերբակալվում է և դատապարտվում մահվան, բայց դատավճիռը փոխվում է ցմաճ բանտարկության Աֆրիկյան Տրիպոլիի բանտում:

Սասունի Հերոսամարտը և նրան Հետևող ջարդերն առաջ են բերում եվրոպական դիվանագիտության միջամտությունը: Դիմումներ են ուղարկվում Բ. Դուանն արագացնելու համար հայկական վիլայեթներում բարենորոգումների գործադրումը: Օսմանյան կառավարությունը քննիչ հանձնաժողով է ուղարկում Սասուն, որտեղ թուրքական ներկայացուցիչներից բացի մտել էին նաև Էրզրումի անգլիական, ֆրանսիական և ռուսական փոխհյուպատոսները: Քննիչ հանձնախումբն աշխատում է 1894թ. նոյեմբերից մինչև 1895թ. մայիս: Կազմվում է տեղեկագիր, որի հիման վրա մեծ պետությունների ներկայացուցիչները 1895թ. մայիսի 11-ին Սուլթանին են ներկայացնում հայկական վիլայեթներում կատարվելիք բարենորոգումների ծրագիրը: Այն պատմության մեջ է մտել որպես «Մայիսյան բարենորոգումների ծրագիր»: Սակայն թուրքական կառավարությունն անընդհատ ձգձգում էր Մայիսյան բարենորոգումների ծրագրի հաստատումը: Դրա համար հնչակյան կուսակցությունն անհրաժեշտ համարեց նոր ցույցով ստիպել կառավարությունը գործադրելու այդ ծրագիրը: Մինչ այդ հնչակյան կուսակցությունը պաշտպանեց Մատթեոս Իգմիրլյանի պատրիարքական թեկնածությունը, որն իր վճռականություն և կորոպի համար ստացավ «Երկաթե պատրիարք» անունը: Նոր պատրիարքի ընտրությունը տեղի ունեցավ 1894թ. դեկտեմբերին:

Հնչակյանների նոր ցույցը նշանակվեց 1895թ. սեպտեմբերի 18-ին: Այն կազմակերպել էին կուսակցությունը Կ. Պոլսի Վարիչ մարմինը, որի մեջ ակտիվ դեր էին խաղում Էևոն Մկրտչյանը, Սուրեն Սուրենյանը, Ալեքսան Արզումանը: Յուրյի վերաբերյալ Հայտարարությունները մի քանի օր առաջ ցրվում են դիվանագիտական շրջաններում հայերեն, թուրքերեն ու ֆրանսերեն լեզուներով: Պատրաստվում է բողոք-պահանջագիր սուլթանին ներկայացնելու համար, որը

<sup>1</sup> Լիվուրո, Մեծն Մուրատ, Կյանքն ու գործու նեու թյու մը, Փրովիդենս, 1955, էջ 38-40:

խմբագրում է Միհրան Տամատյանը<sup>1</sup>: Պահանջագրում հիշատակվում էր Հայ ժողովրդի ծանր դրուժյան մասին, բողոք արտահայտվում Սասունի կոտորածների կապակցությամբ և սուլթանին հիշեցվում Հայկական բարենորոգումների ծրագրի գործադրման անհրաժեշտությունը: Յուլյի օրը ժողովուրդը /մոտ 4000 մարդ/, շարժվում է սուլթանի նստավայրը՝ Բապը-Ալի: Սակայն ոստիկանությունը թույլ չի տալիս բողոքագիրը հանձնել Բ. Դուան ներկայացուցիչներին: Տեղի է ունենում ընդհարում ժողովրդի և ոստիկանության միջև, որին ակտիվորեն մասնակցում է Անտոն Ռշտունին: Թուրքական իշխանությունները ոչ մի կերպ չեն կարողանում համոզել սպարիարք Իզմիրլյանին, որպեսզի նա միջամտի և դադարեցնի ցույցը: Բաբը Ալիից վերադառնալուց հետո ժողովուրդը չի ցրվում, այլ լցվում է Գոլմ-Գափուլի, Ղալաթայի, Բերայի հայոց եկեղեցիները և շարունակում այն: Պատրիարքից հույսը կտրած թուրքերը դիմում են Հայ երեւելիներին՝ /Նորատունկյան, Տաղավարյան/, որ ժողովրդին հայտնեն, թե կառավարությունը երաշխավորում է բարենորոգումների գործադրությունը: Դրանից հետո միայն ժողովուրդը ցրվում է:

Սասունի ապստամբությունից հետո հնչակյան կենտրոնը որոշում է Ձեյթունում ևս ապստամբություն բարձրացնել: Այստեղ, դեռևս 1880-ական թվականների վերջերից ակտիվ գործունեություն էին ծավալել հնչակյանները: Ապստամբության ղեկավար է նշանակվում և Ձեյթուն ուղարկվում Աղասին /Թուրքարքայան/, որը թուրքական կառավարության կողմից դատապարտվել էր մահվան և զտնվում էր հետախուզման մեջ: Բուն Ձեյթունում հնչակյան գործիչներ էին Եղիա Չաղրյանը, Հարություն Չոփուրյանը: Թուրքական կառավարությունը մի շարք փորձեր կատարեց Ձեյթունից հնչակյաններին դուրս մղելու համար, սակայն հաջողություն չունեցավ: Ապստամբությունը նախապատրաստելու համար Ձեյթունում ժողով է գումարվում: Այստեղ ներկա էին Ձեյթունի նշանավոր անձնավորությունները, այդ թվում Նաղարեթ Չավուչը /Նորաշխարհյան/: Հնչակյաններից մասնակցում էին Աղասին, Ապահը /Պետրոսյան/, Հրաչյա Մարալը, Մխո Շահենը /Սեֆերյան/, Ձելլատը և ուրիշներ: Ժողովը որոշում է, որ Ձեյթունի բոլոր աղաներն ու իշխանները իրենց սեփական օրինակով պետք է խրախուսեն մնացածներին: Եկեղեցիներում հայտարարվում է, որ կռվին պարտավոր է մասնակցել 14-70 տարեկան յուրաքանչյուր ոք: Ձեյթունի թուրքական կառավարիչի փորձը դադարեցնելու ապստամբությունը և քաղաքից հեռացնելու հնչակյաններին, արդյունք չի տալիս: Նաղարեթ Չավուչն ու Աղասին իրենց խմբերով պաշարում են քաղաքի կառավարչատունը և կտրում հաղորդակցությունը: Ապստամբները պաշարում են նաև դորանոցը և քաղաքի կա-

<sup>1</sup> Պատմության Ե Ա Պ. Գ. Կ., հատոր Ա, էջ 154:

<sup>2</sup> Պողոսյան Հայկազ, Ձեյթու Սի պատմության Երևան, 1969, էջ 336:

ուսուցիչ Ավինի Բեյից պահանջու՞մ անձնատուր լինել: Կարճատև դիմագրությունից հետո թուրքերն անձնատուր են լինում: Թուրք գինվորները 700 հոգի հանձնում են իրենց զենքերը և անցնում Բարդուղեմիոս վարդապետի թրի տակով: 1895թ. հոկտեմբերի 18-ի Ձեյթունի զորանոցի գրավումը խուճապ է առաջացնում թուրքական կառավարութան շրջանում: Մարաշից թուրքական զորք է շարժվում Ձեյթուն և կռիվը սաստկանում է: Շուտով Ձեյթուն են ուղարկվում նոր ուժեր, մասնավորապես Ալի Բեյի 30 հազարանոց բանակը և Մուստաֆա-Ռեմզի փաշայի արևելյան բանակը: Թշնամուն ուժեղ դիմադրություն են ցույց տալիս Ձեյթունի շրջակայքի հայկական գյուղերը: Սակայն ուժերը խիստ անհավասար էին և զեյթունցիները գիտեին, որ իրենց 5000-ի հասնող զինական ուժը չի կարող երկարատև դիմադրություն ցույց տալ: Թուրքերը մի քանի անգամ առաջարկում են դադարեցնել դիմադրությունը և անձնատուր լինել, սակայն մերժում են ստանում: Ռեմզի փաշան պաշտոնանկ է արվում և նրան փախարինում է էդհեմ փաշան: Կռիվը շարունակվում է է՛լ ավելի կատաղի թափով: Այնուամենայնիվ թուրքերին չհաջողվեց քաղաքը գրավել և նրանք դիմեցին օտարերկրյա ղեսպանների միջամտությանը: 1896թ. հունվարի 11-ին Ձեյթուն ժամանեցին թուրքիայում պաշտոնավարող անգլիական, ֆրանսիական, ռուսական, իտալական և ավստրիական փոխհյուպատոսները: Հնչակյաններից հանդիպմանը մասնակցում էին Աղասին, Ապահը, Հրաչյա Մարալը, զեյթունցիներից Աստվածատուր աղա Անդրեասյանը, Ղազարոս աղա Շուրոյանը, Պետրոս աղա Չաղրյանը և նրանց ղեկավար Նազարեթ Չավուչը: Փոխգիջումների հիման վրա կնքվում է հաշտություն, ըստ որի Ձեյթունի հնչակյան գործիչները պետք է անվնաս հեռանային Թուրքիայից՝ Օսմանյան պետության ծախսով: Ապստամբներին շնորհվում էր ներում: Ձեյթունցիները 6 տարով ազատվում էին հարկերից: Ձեյթունում պետք է նշանակվեր քրիստոնյա կառավարիչ: Ձեյթունցիները պետք է հանձնեին զորանոցի զենքերը, իսկ քաղաքում պետք է մնար մեկ վաշտ զորք, որը չպետք է միջամտեր քաղաքի ներքին գործերին: Եվրոպական հյուպատոսները չպետք է հեռանային մինչև համաձայնագրի պայմանների կատարումը: Սակայն եվրոպական ղեկավարները չպահեցին իրենց խոստումները և հետամուտ չեղան համաձայնագրի կատարմանը: Իրականացվեց, միայն Ձեյթունում քրիստոնյա /հույն/ կառավարչի նշանակումը:

1890-ական թթ. թուրքական կառավարութան վարած հայաջինջ քաղաքականությունը է՛ր կարող շրջանցել Վասպուրականի հալությանը: Վանի հնչակյանների ղեկավարն էր Մարտիրոս Սարու-

<sup>1</sup> Տես Գրստանյակ Ա. Դ. ԳՅ՝ ակյան կուսակցու թյան, Փրովոյեմս, 1938, էջ 136:

<sup>2</sup> Տես Պողոսյան Գ. Աշխ., էջ 346:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 354:

խանյանը, որը հայտնի էր Մարտիկ /Լեոնյան/ անունով: Ինչպես Մարտիկը, այնպես էլ Վանի մնացած հնչակյանները միաժամաբար կարծում էին, որ եթե թուրքերն ու քրդերը քաղաքում կոտորած կազմակերպեն, ապա Եփրոսյանի պետությունները կբարձրացնեն և կլուծեն հայկական հարցը: Վանում հնչակյաններն ու դաշնակցականները փոքրթիվ էին: Այստեղ ուժեղ էին արմենականները, որոնց ղեկավարն էր Մկրտիչ Ավետիսյանը /Թերլեմեզյան<sup>1</sup>:

1896թ. Հունիսին թուրքական կանոնավոր զորքերն ու քրդական աշիրեթները պաշարեցին Վանը: Հայ ազգային կուսակցությունները ձեռնամուխ եղան Վանի ինքնապաշտպանություն կազմակերպմանը: Այն ղեկավարում էին արմենական Մ. Ավետիսյանը, հնչակյան Մարտիկը /Սարուխանյան/ և դաշնակցական Պետոն /Ալ. Պետրոսյան/: Վանեցիներն արժանի հակահարված տվեցին թշնամու զերակշիռ ուժերին: Շուտով անգլիական հյուսիսային միջամտություն սկսվեցին բանակցությունները, որոնց մասնակցեցին նաև Մարտիկը, Պետոն և Մ. Ավետիսյանը: Թուրքերը պահանջում են ֆեդայիների հանձնվելը: Որոշվում է, որ ֆեդայական ջոկատները դուրս պիտի գան քաղաքից, իսկ կառավարությունը պետք է ձեռք չտա բնակչությանը: Հունիսի վերջին կռիվը խմբերը դուրս եկան Վանից: Սակայն ինքնապաշտպանությունը մասնակցող կուսակցությունների ղեկավարների խորհրդակցության ժամանակ համաձայնություն չի կայանում այն հարցի շուրջը, թե քաղաքից հեռացող զինված խմբերի հետ անգլիացի բնակչությունը պետք է հեռանա, թե ոչ: Իրան կողմնակից չէին Մարտիկն ու Պետոն, բայց կողմնակից էր Մ. Ավետիսյանը: Վեջինիս կռիվը ջուրհանք մի քանի հարյուր անգլիացի բնակչության հետ /մոտ 600 հոգի/ շարժվեցին դեպի Պարսկաստան: Բայց ճանապարհին խուճրդ պաշարվում է հազարավոր զինված քրդական բաշիրեթական կողմից: Անհավասար կռիվում գոհվում են բոլորը, այդ թվում նաև Մ. Ավետիսյանը: Հուլիսի 10-ին դեպի Պարսկաստան են շարժվում Մարտիկի ու Պետոյի խմբերը: Գարահիսար լեռան մոտ նրանք նկատվում են քրդերի կողմից և ընդհարումը դառնում է անխուսափելի: Այդ կռիվում նահատակվում են Մարտիկն ու Պետոն: Երկու խմբերից զոհվածների ընդհանուր թիվը հասնում էր 900-ի:

1890-ական թթ. ակտիվ գործունեություն էին ծավալել Պարսկաստանի հնչակյան կազմակերպությունները: Դրանց մեջ հատկապես ուժեղ էր Սալմաստի մասնաճյուղը: 1896-1897թթ. նրա ղեկավարներից էր Փարամազը /Մաթևոս Սարգսյան/, իսկ վերջինիս Վան անցնելուց հետո՝ Յուլակ Սարկավազը: Այստեղ հնչակյաններն ունեին 40 հոգանոց զինված խումբ: Նրանք տարածում էին «Հնչակը», դբաղվում

<sup>1</sup> Տես Պողոսյան Զ., Վասպուրականի պատմություն, 1850-1900, Երևան, 1988, էջ 264:

<sup>2</sup> Պատմություն Ս. Ա. Գ., Գ. Կ., հատոր Ա, էջ 195:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 196:

պլուզերի տղամարդկանց դինավարժություններ ստվորեցնելով: Մարտիկի ու Պետոյի խմբերի նահատակությունից հետո նրանք փորձեցին անցնել Վան, սակայն ընդհարվեցին թուրք-քրդական ուժերի հետ և ստիպված ետ վերադարձան Սալմաստ: 1897թ. ամռանը Սալմաստից Վան է անցնում հնչակյան նշանավոր գործիչ Փարամազը: Նոյեմբերին մատնության միջոցով նա ձերբակալվում է: Փարամազի դատը տեղի է ունենում 1898թ. օգոստոսին: Փարամազը դատապարտվում է մահվան, սակայն որպես ուղեսահպատակ, նրան հանձնում են ուղեսահական իշխանություններին: Վերջիններս Փարամազին մինչև 1900թ. պահում են Իզդիրի բանտում, հետո ազատ արձակում:

1890-ական թթ. ցարիզմը թշնամական դիրք էր բռնել հայկական ազատագրական շարժումների նկատմամբ: Հալածանքների ենթարկվեցին նաև հնչակյանները, որոնց դասակարգային պայքարի քարոզները անհանգստացնում էին ինքնակալությանը: 1895թ. Թիֆլիսում ձերբակալվում ու բանտարկվում են հնչակյան կուսակցության գործիչներ Ռ. Խանազատը, Ռ. Բերբերյանը, Սարգիս Աղամիրզյանը, նշանավոր գրողներ Ղ. Աղայանը, Շիրվանզադեն, Ատրպետը, Ավ. Խասակյանը: Նրանցից Խանազատը, Բերբերյանը, Աղայանն ու Սաքոն որպես հնչակյան կենտրոնի անդամներ ակտիվորեն թղթակցել են կուսակցության օրգաններին՝ «Հնչակին», «Գաղափարին», «Վերածնունդին», «Ապտակին»: Ժամանակի ճանաչված պարբերականներում իր հրապարակախոսական հոդվածներով ու բանաստեղծություններով «Լեռնեց» գրական ծածկանունով հանդես էր գալիս հնչակյան կուսակցության առաջնորդ Ավ. Նազարբեկը:

1890-ական թթ: երկրորդ կեսին Հնչակյան կուսակցությունը ճգնաժամ ապրեց: Մասունի և Զեյթունի ապստամբություններից հետո թուրքական հալածանքների սաստկացման հետևանքով հնչակյանները ստիպված հեռանում էին երկրից: Նրանց մասնաճյուղերից շատերը հայտնաբերվել էին ոստիկանության կողմից և ջախջախվել: Կուսակցության անդամների և հատկապես նրա գործիչների զգալի մասը հուսախաբ եղավ արևմտանվորական երկրների նենգամիտ դիվանագիտությունից: Մյուս կողմից կուսակցության ներսում ստեղծվել էր հոսանք, որը դեմ էր սոցիալիստական ծրագրերին ու գործունեությանը: Այդ շարժումն սկսվել էր արևմտահայ հնչակյան գործիչների շարքերում հակառակ կովկասահայ դեկավարների ջանքերին, որոնք հետամուտ էին ինչպես հայկական հարցին, այնպես էլ հայ աշխատավորության դասակարգային պայքարին: Կուսակցության մեջ առաջացած ճգնաժամային կացությունը քննարկելու և վերջնական եզրակացության հանդելու համար բոլոր մասնաճյուղերից հնչակյան գործիչները հավաքվեցին Լոնդոնում, ուր պետք է տեղի ունենար պատգա-

<sup>1</sup> Պողոսյան Յ., Փարամազ, Երևան, 1992, էջ 12:

<sup>2</sup> Տես Պատմութիւն Ա. Դ. Գ. Կ., հատր Ա, էջ 253:

մասկորական ժողով: Ժողովի նախապատրաստական աշխատանքները տանելու համար նազարբեկը բոլոր գործիչներին հրավիրում է մասնակցելու կուսակցութան Կենտրոնի ժողովներին: Առաջին իսկ նիստերում արդեն ակնհայտ դարձավ, որ հնչակյան գործիչների մեծ մասը հիմնականում արևմտահայեր, կանգնած էին ազգային դիրքերում և դեմ էին Կենտրոնի նախկին գործունեութանը:

Այս պայմաններում 1896թ. հունվարին Լոնդոնում բացվեց հնչակյան կուսակցութան պատգամավորական ժողովը: Ավ. Նազարբեկն ու նրա գաղափարակիցները հրաժարվեցին մասնակցել: Ժողովին մասնակցող 14 պատգամավորները կուսակցութան կենտրոնից պահանջեցին ծրագրից հանել սոցիալիզմի մասին դրույթը և մերժեցին գբադվել սոցիալական ու տնտեսական հարցերով: Գործելակերպի առումով մերժվում էին ցուցարարական մասնակի ելույթներն ու շարժումները՝ նպատակ ունենալով համբերատար կերպով նախապատրաստվել համընդհանուր ապստամբութան, որի ժամանակ մի քանի հայաշատ և ռազմավարական առումով կարևոր կետերը /Վան, Ջեյթոն, Սասուն/ ի վիճակի կլինեն երկարատև դիմադրություն ցույց տալ թշանամուն և դրանով անխուսափելի դարձնել Եվրոպական երկրների միջամտությունը: Պատգամավորական ժողովը Եվրոպայում կուսակցութան ծավալած պրոպագանդիստական գործունեությունը ճանաչեց որպես երկրորդական ու լրացուցիչ գործ, որի իրականացումը վերապահվեց կենտրոնական վարչությունը: Ժողովում տոն էին տալիս Նազարբեկյան կենտրոնին ընդդիմադիր արևմտահայ հնչակյան գործիչներ Միհրան Տամառյանը, Արփիար Արփիարյանը, Լևոն Մկրտչյանը, Ալյահ Պետրոսյանը, Անտոն Ռշտունին, Միհրան Սվազյանը, Ադասին:

Պետք է նշել, որ կուսակցութան ղեկավարությունն ուղղված քննադատությունները կրում էին օբյեկտիվ բնույթ, իսկ պատգամավորական ժողովում ընդունված որոշումներն ավելի իրատեսական էին, քանի որ, մասնավորապես, սոցիալիզմի քարոզչություն համար, որին այնպես կառչել էր Նազարբեկյան կենտրոնը, թուրքիայում նախապայմաններ չկային, իսկ դասակարգային պայքարի արհեստական բորբոքումը ժամանակի և միջոցների գուր վատնումից բացի կարող էր ավելի վատթարացնել հայությունը: Այս հանգամանքը շատ ավելի լավ էին հասկանում արևմտահայ հնչակյանները:

Ավետիս Նազարբեկը, որը չէր մասնակցել պատգամավորական ժողովին, մեկ-երկու օր անց հրավիրում է իր գաղափարակիցների պատգամավորական ժողովը, որին մասնակցում են Պետրոս Մարիմյանը, Պետրոս Գալֆայանը, Հմայակ խուշպուլյանը, Երվանդ Պալյանը, Լազոն և ուրիշներ, մոտ 10 մարդ: Չնայած ժողովը որոշեց հրաժարվել

<sup>1</sup> Տամառյան Ս., Իմ հուշերս, Պեյրուք, 1985, էջ 94:

<sup>2</sup> Երևան տեղում: էջ 95:

մասնակի դիմված ելույթների դործելակերպից, այնուամենայնիվ դատապարտեց «ազգայնականներին» բռնած ընթացքը և որոշեց շարունակել կուսակցութեան սոցիալիստական գործունեութիւնը :

Անշուշտ կուսակցութեան մեծամասնութեան սոսակետների անտեսումը Նազարբեկյանների կողմից պայմանավորված էր ինչպես գաղափարական սկզբունքայնութեամբ, այնպես էլ կուսակցութեան ղեկավարութեանը զիջելու մտավախութեամբ:

Ինչևէ, Հնչակյան երկու պատգամավորական ժողովներն էլ իրենց հռչակեցին կուսակցութեան միակ օրինական ներկայացուցիչը և փոխադարձաբար կուսակցութեանից արտաքսված համարեցին միմյանց:

1896թ. աշնանը Նազարբեկյան կենտրոնին ընդդիմադիրները Արփիարյանի և Սուրենյանի գլխավորութեամբ, փորձում են Նազարբեկից վերցնել «Հնչակը»: Նրանք նույնիսկ հրատարակում են մի քանի համար: Սակայն վեճն ավարտվում է նրանով, որ Ալ. Նազարբեկը Լոնդոնի դատարանի միջոցով կարողանում է պաշտպանել «Հնչակի» նկատմամբ սեփականութեան իր իրավունքը:

Բաժանումից հետո՝ 1896թ. սեպտեմբերի 28-ին Նազարբեկյան թևը հրավիրում է Հնչակյան կուսակցութեան սոցիալիստական սկզբունքներին հավատարիմ մասնաճյուղերի պատգամավորական ժողով: Ներկա էին պատգամավորներ Բաքվի մասնաճյուղից, Բաթումից, Թուրքիայից, Լոնդոնից, Եգիպտոսից և այլ վայրերից: Այստեղ դատապարտվում է Ա. Արփիարյանի և նրա կողմնակիցների հակասոցիալիստական դիրքորոշումը<sup>2</sup>: ժողովը քվեարկութեան միջոցով Կենտրոնի անդամներ է ընտրում Ավետիս և Մարո Նազարբեկյաններին, Ղազարոս Աղայանին, Պետրոս Մարիմյանին, Հմայակ Խուչպուլյանին՝ Երվանդ Պալյանին, Սարգիս Մուսայաճյանին /Ատրպետ/: Հրաժարված Պալյանի փոխարեն ընտրվում է Պետրոս Տոնապետյանը: Նիստերից մեկում Հմ. Խուչպուլյանն առաջարկում է կուսակցութեան մոտավոր նպատակի հիման վրա համաձայնութեան գալ Դաշնակցութեան հետ՝ պահաջելով սակայն կուսակցական ինքնուրույնութիւնը: Նազարբեկյանը դեմ է դուրս գալիս և հարցի լուծումը հետաձգվում է: Դրանից հետո Խուչպուլյանը հրաժարվում է և նրա տեղն ընտրվում է Հրաչյա Մարալը:

Այս քայլերն իրադրութիւնը չեն շտկում և Հնչակյան կուսակցութեան ներքին ճգնաժամը շարունակվում է: Ավետիս Նազարբեկյանը հրաժարական է տալիս կուսակցութեան կենտրոնից: 1901թ. հոկտեմբերի 2-ին Լոնդոնում բացվում է Հնչակյան կուսակցութեան երկրորդ պատգամավորական ժողովը: Պատգամավորներ են ուղղակի մի քիչիսի, Բաքվի, Բաթումի, Փոթիի, Ռոստովի, Օդեսայի, Նովորոսիսյա-

<sup>1</sup> Տանուդան Ս., Եջվ. աշխ., էջ 96:

<sup>2</sup> Նույն տեղում:

կի մասնաճյուղերը: Կ. Պոլսի մասնաճյուղն այդ ժամանակ հարել էր Նազարբեկի ընդդիմադիրների թևին, որոնք 1898թ. Ալեքսանդրիայում տեղի ունեցած համազուամարում ընդունեցին «վերակազմյալ Հնչակյաններ» անունը:

Հնչակյան կուսակցության պառակտումից հետո, երկու թևերն էլ հասկանում էին, որ անջատ գործելով չեն կարող լուրջ հաջողութունների հասնել ազատագրական պայքարում: Թե՛ հին և թե՛ նոր Հնչակյանների կողմից քայլեր կատարվեցին մերձեցման ուղղութամբ: Հարցը լրջորեն քննության է ենթարկվում Հնչակյան կուսակցության երրորդ պատգամավորական ժողովում, որը տեղի ունեցավ 1901թ. սեպտեմբերից 1902թ. մարտը Լոնդոնում: Ի վերջո, փոխդիւղումներով, այդ միությունը կայացավ: Այլ. Նազարբեկը հրաժարվեց «Հնչակի» նկատմամբ ունեցած իր սեփականության իրավունքից: Նորընտիր միացյալ Կնտրոնական վարչության մեջ են մտնում երեք հոգի սոցիալ-դեմոկրատական թևից /Սապահ-Գյուլյան, Հովյան, Սաֆունի/ և երեք հոգի վերակազմյալներից /Արզուլյան, Շահրիման, Գրիգորյան/: Հնչակյան երկու հատվածների վերստին միացումը մեծ խանդավառությամբ է ընդունվում հայ ժողովրդի բոլոր խավերի կողմից: «Հնչակը» այդ առիթով գրում էր. «Անհուն ուրախությամբ կհաղորդենք հայ հասարակության, թե՛ հին և վերակազմյալ Հնչակյան երկու հատվածներուն մեջ միության բոլոր պայմաններուն վերջնական համաձայնություն գոյացած ըլլալով միությունը կատարված է»<sup>1</sup>:

Պատգամավորական ժողովում Հնչակյաններն ընդունում են, որ ստեղծված պայմաններում սոցիալիզմի քարոզչությունն իր առաջնային տեղը զիջելու է ազգային ազատագրության խնդրին<sup>2</sup>:

19-րդ դ. 90-ական թվականներից քաղաքական պայքարի թատերաբեմ էր իջել թուրքական երիտասարդ բուրժուազիայի կուսակցությունը «Իթթիհատ վե թերաքքը» /Միություն և առաջադիմություն/: Իթթիհատականները սկզբից ևեթ աշխատում էին միավորել սուլթանական բռնապետության դեմ պայքարող բոլոր ուժերին, տապալել սուլթանական վարչակարգը, երկրում հաստատել սահմանադրական կարգեր: Սակայն երիտթուրքերի առաջնորդների հետ հանդիպումների ժամանակ Հնչակյանները հասկացան, որ վերջիններս չեն ցանկանում ճանաչել հայկական հարցը: Երիտթուրքերի ներկայացուցիչներն Հնչակյաններին առաջարկեցին հրաժարվել Ռուսաստանի կամ Եվրոպական երկրների հետ գործակցելուց, նրանց միջնորդության ակնկալիքից: Նրանք մայիսյան բարենորոգումների ծրագիրը համարում էին «անջատողական» և անընդունելի: Իթթիհատականների առաջնորդ Ահմեդ Ռեպայի և Սապահ-Գյուլյանի փարիզյան հանդիպումներն ըստ էության արդյունք չստվեցին: Հնչակյանների և Իթթի-

<sup>1</sup> «Յուլյա», 1902, թիվ 4:

<sup>2</sup> ՀՀԵԿԾԿՊԱ, ֆոնդ 4045, ցուցակ 1, գրք 40, ք. 2-3:

Հատականների միջև տարակարծությունները դնալով խորացան ու փոխվեցին պայքարի, երբ երիտթուերքերը պարզորոշ կերպով ցույց տվեցին իրենց հակահայկական տրամադրությունները :

Իրենց հաղափարների տարածման գործում իթթիհատականներն օգտագործում էին ինչպես «Մեզ վերեթ» թերթը, այնպես էլ եվրոպական մամուլի որոշ օրգաններ: Նրանք քննադատում էին ինչպես սուլթանին, այնպես էլ հնչակյաններին և ազգային մյուս կուսակցություններին: Իրենց հերթին հնչակյանները Սապահ-Գյուլյանի և այլոց ակտիվ մասնակցությամբ աշխատանք էին տանում եվրոպական տարբեր երկրների պետական-հասարակական գործիչների հետ նրանց մոտ հայանպաստ տրամադրություններ ստեղծելու ուղղությամբ: Ֆրանսիական նշանավոր գործիչների միջոցով նրանք աշխատում էին այդ երկրի պառլամենտում քննարկման դնել հայկական Հարցը: Ֆրանսիական պառլամենտում Հայ ժողովրդին պաշտպանող ճառերով Հանդես են գալիս պատգամավորներ Դենի Բոչենը, կոմս դը Մեոնը, Ժան Փորեսը:

Հնչակյանները մերժեցին իթթիհատականների հրավերը մասնակցելու վերջիններիս նախաձեռնությամբ 1902թ. փետրվարին Փարիզում տեղի ունեցած Թուրքիայի շնորհիմադիր կուսակցությունների համագումարին<sup>2</sup>:

Հնչակյան կուսակցության միավորումից հետո էլ տարածայնությունները չվերացան: Նորընտիր Կենտրոնական վարչության ձախկողմյան անդամները՝ սոցիալ-դեմոկրատները, բնավ չզաղարեցրին սոցիալիզմի քարոզչությունը: Հնչակյան տեսաբան Սապահ-Գյուլյանը, կենտրոնի մյուս անդամներ Սիմոն Հովյանը /Տաշիր/ և Սաղաթել Գևորգյանը /Սաղաթել/, որոնք համոզված մարքսիստներ էին, «Հնչակի» էջերից շարունակում են սոցիալիստական դադափարների պրոպագանդան դրանով խախտելով միության պայմաններից մեկը և անտեսելով վերակազմյալ թևի դժգոհությունը: Բացի այդ հին հնչակյանները վերստին բարձրացնում են Նազարբեկին «Հնչակի» խմբագիր դարձնելու հարցը, որը նույնպես դժգոհություն է առաջացնում հնչակյան միացյալ Կենտրոնի վերակազմյալ գործիչների մոտ :

1902թ. Հունիսին միացյալ Կենտրոնի ժողովում պաշտոնապես դրվում է Նազարբեկին «Հնչակի» խմբագիր հրավիրելու հարցը, սակայն կենտրոնի վերակազմյալ անդամները մերժում են: Ծայրաստիճան լարվում է մթնոլորտը հնչակյան կենտրոնում: Վերակազմյալ անդամները հրաժարական են տալիս: Դրությունը շտկելու և կուսակցության միասնությունը պահպանելու համար վերակազմյալ գործիչներից Գարեգին Ջիթջյանը Մխո-Շահենը, մեկնում են Եվրոպա, իսկ

<sup>1</sup> Տես Պատմություն Ս. Գ. Գ. Գ. Գ., հատոր Ա, էջ 241:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 267:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 282-283:

այնտեղից՝ Ռուսաստան ու Կովկաս: Ցավոք, նրանց առաքելությունը ողբերգական ավարտ է ունենում: 1903թ. ապրիլին Փոթիում սպանվում է Մխո-Շահենը, իսկ Հունիսին Օղեսայում Գարեգին Չիխչյանը: Այս ողբերգական սպանությունները ծանր տպավորություն են գործում ողջ հայության վրա: Վերակազմյալները դիմում են փոխվրեժխնդրության: 1903թ. հուլիսին Բոստոնում ատրճանակի կրակոցից ծանր վիրավորվում է Սապահ-Գյուլյանը, հոկտեմբերին Շվեյցարիայում մահափորձ է կատարվում Նազարբեկի դեմ, նոյեմբերին Լոնդոնում սպանվում են Սաղաթել Գևորգյանը, Տիգրան Իզմիրլյանը և Արամ Գրիգորյանը: Եղբայրասպան կոիվները ծանր տպավորություն թողեցին ոչ միայն հայ, այլև եվրոպական և ամերիկյան հանրային կարծիքի վրա: Ահա այսպիսի տխուր վախճան ունեցավ մեծ դժվարությունամբ և հույսով ձեռք բերված Հնչակյան միությունը:

1903թ. սեպտեմբերին Լոնդոնում կայացավ Հնչակյան կուսակցության IV պատգամավորական ժողովը: Այստեղ քննարկվում են վերակազմյալների հետ պառակտման դրդապատճառները, և ողջ պատասխանատվությունը դրվում է վերակազմյալների վրա: Պատգամավորական ժողովն իր պաշտոնական հայտարարությամբ Հնչակյան կուսակցության շարքերից վտարված է համարում վերակազմյալ թեև զրեթե բոլոր գործիչներին՝ Ալեքսան Արզուկյանին, Վահրամ Գրիգորյանին, Կարապետ Փափազյանին, Սուրեն Սուրենյանին, Վահան Շահ-Րիմանին և այլոց: Հին Հնչակյան թեևից վտարվում են Հմայակ Խուշպուլյանը, Գր. Ղարիպյանը, Սմբատ Ոստիկյանը՝ ինչպես նշված է հայտարարության մեջ «վերակազմյալներու հետ դավադրության մասնակցած ըլլալու պատճառով»: Կուսակցության IV պատգամավորական ժողովն ընտրում է Կենտրոնի կազմը, որի մեջ մտան Ավ. Նազարբեկը, որպես «Հնչակի» խմբագիր, Խանազատը, Հովյանը, Աչգուշյանը, Կաճառյանը, Ղամբարյանը: 1903թ. Բոստոնում հիմնադրվեց Հնչակյան կուսակցության ԱՄՆ-ի օրգան «Երիտասարդ Հայաստան» թերթը Ստ. Սապահ-Գյուլյանի խմբագրությունով:

1903թ. հունիսի 12-ին Կովկասի փոխարքա Գոլիցինի սաղրանքով ցարը հրամանագրի ստորագրեց հայոց եկեղեցու գույքի բռնագրվման մասին: Հայ քաղաքական մյուս կուսակցությունների, առաջադիմական ուժերի նման Հնչակյանները ևս մասնակցում են պայքարին: Նրանք կազմակերպում են բողոքի ցույցեր, միտինգներ, կառավարությունից պահանջելով ետ վերադարձնել հայոց եկեղեցու կալվածքները: 1903թ. նոյեմբերին Թիֆլիսում Հնչակյանները մահափորձ կազմակերպեցին փոխարքայի դեմ: Գոլիցինը ծանր վիրավորվեց, բայց ողջ մնաց:

<sup>1</sup> Տես Հիսմայակ Ա. Դ. Հնչակյան Կուսակցության, էջ 151:

<sup>2</sup> Տես Պատմություն Ա. Դ. Գ. Գ. 4., հատոր Ա, էջ 287-288:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 419:

Հնչակյան կուսակցութիւնն ակտիւորեն մասնակցում էր միջազգային սոցիալիստական շարժմանը: 1903թ. սեպտեմբերին Հնչակյանները ողջուլենի հեռագիր են ուղարկում Դրեզդենում գումարված գերմանական սոցիալ-դեմոկրատների համագումարին, որին հրավիրված էին մասնակցելու: Որպես ներկայացուցիչ Հնչակյաններն ուղարկում են Ս. Կասյանին: Հնչակյանները հրավիրվում են մասնակցելու նաև 1904թ. օգոստոսին Ամստերդամում գումարվող սոցիալ-դեմոկրատիայի միջազգային կոնգրեսին: Կուսակցութիւն կենտրոնը նամակով ողջունում է կոնգրեսը և հայտնում, որ անկարող է մասնակցելու նրա աշխատանքներին: Հնչակյաններն իրենց պատգամավոր են ընտրում Գ. Վ. Պլեխանովին և հայտնում իրենց համերաշխութիւնը Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցութիւնն պատգամավորների հետ: Հնչակյանների և ՌՍԴԲԿի միջև կար գաղափարական որոշակի նմանութիւն, այդ պատճառով ռուսական առաջին բուրժուադեմոկրատական հեղափոխութիւնն տարիներին լուրջ քայլեր ձեռնարկվեցին երկու կուսակցութիւնների միավորման ուղղութիւնով: Սակայն Հնչակյան կուսակցութիւնն ղեկավարութիւն մեջ այս հարցում կային տարաձայնութիւններ: Օրինակ Գեորգ Ղարաջյանը գտնում էր, որ պետք է ձուլվել ՌՍԴԲԿի հետ: Դրան հակառակ էր Ռ. Խանազատը, ըստ որի կուսակցութիւնը պետք է պահպանի իր ինքնուրույն դեմքը: Այս հարցերի շուրջը Նազարբեկը 1904թ. ժնևում բանակցութիւններ էր վարում ՌՍԴԲԿ կենտկոմի ներկայացուցիչների՝ Պլեխանովի, Մարտովի, Լենինի հետ: Նազարբեկյանները ցանկութիւն էին հայտնել միանալ ՌՍԴԲԿին: Հարցը քննութիւնն առնվեց 1904թ. հունիսի 13-ին ՌՍԴԲԿ խորհրդի նիստում, որին ներկա էր Լենինը: Նիստում ընդունվեց հետևյալ բանաձևը. «Խորհուրդը հանձնարարում է համաձայնութիւն գալ Կուսակցութիւնն Կովկասյան միութիւնն հետ, իր կազմում ընդունելու Հնչակյանների այն կազմակերպութիւններին, որոնք ցանկանում են մտնել կուսակցութիւնն մեջ»: Չնայած դրան, Նազարբեկյանների միավորման ջանքերը ՌՍԴԲԿի հետ ձգձգվում էին: Պատճառը, մի կողմից, Հնչակյան կենտրոնի առարկումն էր, մյուս կողմից՝ ՌՍԴԲԿի պառակտումը բոլշևիկների մենչևեիկների: Ըստ էութիւնն բոլոր կետերում համաձայնութիւն կար, բացառութիւն մեկի: Դա Արեւմտյան Հայաստանի ազատագրութիւնն հարցն էր: ՌՍԴԲԿ ներկայացուցիչները պահանջում էին իրարից անջատել ռուսահայերի և թուրքահայերի պայքարը, արեւմտահայերի ազատագրութիւնն գործը թողնելով արեւմտահայերին, իսկ արեւելահայերին՝ արեւելահայերին: «Հնչակը» մնալու էր որպես զուտ արեւմտահայերի ազատագրական պայքարի օրգան, իսկ նրա կովկասյան մասնաճյուղերը ձուլվելու էին ՌՍԴԲԿ կովկասյան շրջանային կազմակեր-

<sup>1</sup> «Հնչակ», 1904, թիվ 8:

<sup>2</sup> ԳԳ ԳԶ Կ ՓԿ ԴԱ, ֆոնդ 4045, ցուցակ 1, գործ 101, ք. 1:

պուլթյան մեջ, որի ղեկավարներին, էին Ստ. Շահումյանը, Սուրեն Սպանդարյանը, Բողոյան Կուռնյանցը<sup>1</sup>: Կուսակցութիւնը երկու մասի բաժանելու սկզբունքին կողմնակից էին Նազարբեկը, Խանազարը, Վարդանյանը, սակայն դեմ էին Ա. Աչըզպաշյանցը, Սապահ-Գյուլյանը, Ս. Հովյանը և շատ ուրիշներ: Վերջինները գտնուեմ էին, որ նախկինի նման Հնչակյան կուսակցութիւնը պետք է միաժամանակ աշխատի երկու ուղղութիւն՝ կովկասում պետք է ՌՍԴԲԿ կովկասյան կազմակերպութիւնների հետ մղի դասակարգային պայքար, իսկ Արեւմտյան Հայաստանում պայքարի արեւմտահայերի ազատագրութիւն համար, քանզի ՌՍԴԲԿ-ի մեջ ձուլվելով նրանք պետք է հրաժարվեն արեւմտահայերի ազատագրութեան խնդրից և կտրվեն արտասահմանի հնչակյան մասնաճյուղերից<sup>2</sup>: Ներկուսակցական խնդիրները կարգավորելու նպատակով 1905թ. սեպտեմբերին Փարիզում տեղի ունեցավ Հնչակյան կուսակցութեան հիւնդերորդ պատգամավորական ժողովը: Այստեղ քննարկվեց Ա. Նազարբեկի և Ռ. Խանազարի առաջարկը, ըստ որի.

ա/ Կովկասի և Ռուսաստանի հնչակյան կազմակերպութիւնները պետք է բաժանել Թուրքիայի հեղափոխական շարժումներից գործնականորեն և տեսականորեն.

բ/ ընդունել ՌՍԴԲԿ «փոքրամասնութեան» /մենչեիկ/ կոչված մասի տակտիկան և կազմակերպական եղանակը.

գ/ որպէս կազմակերպութիւն ձուլվել մենչեիկների հետ<sup>3</sup>:

Ժողովը ձայների մեծամասնութեամբ մերժեց այդ առաջարկը՝ դրա մեջ տեսնելով կուսակցութեան կազմալուծման հեռանկարը: 5-րդ պատգամավորական ժողովը նկատի ունենալով Կովկասում ծավալված հայ-թաթարական կռիւլները, որոշում ընդունեց բանակցութիւնների մեջ մտնել Հ. Յ. Դաշնակցութեան հետ համաձայնութիւն կայացնելու համար:

Ընտրվեց Կենտրոնական վարչութիւն, որի մեջ մտան Արամ Աչըզպաշյանը, Մեծն Մուրատը /աքսորում գտնվելու պատճառով ընտրվեց հեռակա/, Սապահ-Գյուլյանը /որպէս «Հնչակի» խմբագիր/, Վահան Մամիկոնյանը: Այս որոշումների դեմ բողոքեցին Նազարբեկը, Խանազարը, Վարդանյանը և հայտարարեցին, որ դուրս են գալիս կուսակցութիւնից: Հետեւելով ՌՍԴԲԿ նշանավոր գործիչ, մենչեիկ Մարտովի խորհրդին, նրանք որոշում են չմիանալ ոչ մի կուսակցութեան, ընդունել ՌՍԴԲԿ ծրագիրը և սպասել, մինչև որ կհարթվեն բոլշիկների և մենչեիկների միջև ծագած տարակածութիւնները: Հնչակ-

<sup>1</sup> Պատմութիւն, Ա. Դ. Հ. Կ., հ. Ա., էջ 218:

<sup>2</sup> Երկու տեղում, էջ 292:

<sup>3</sup> ՀՀ ՅԵԿՓԿՊԱ, ֆոնդ 4045, ցուցակ 1, գրք 101, ք. 1:

յաններից շատերը միացան ՌՍԴԲԿ-ին: 1905թ. այդպես վարվեցին հնչակյանների Բաքվի և Երևանի կոմիտեները:

1905թ. ինքնակալության սաղարնքով Կովկասի բաղձաթիվ վայրերում սկսվեցին հայ-թաթարական կոտորածները: Ազգամիջյան կռիվները դադարեցնելու ուղղությամբ զգալի աշխատանք են տանում հնչակյանների Կովկասի և Պարսկաստանի մասնաճյուղերը: Միաժամանակ ստեղծվում է Գործադիր Հանձնախումբ, որի անդամներն էին Ս. Աղամիրզյանը, Ս. Տեր-Սիմոնյանը, Խ. Վարդանյանը, Ս. Կասյանը: Գործադիր Հանձնախումբը կապեր է հաստատում Երևանի և Ալեքսանդրապոլի հնչակյան մասնաճյուղերի հետ: Ալեքսանդրապոլի «Արագած» հնչակյան մասնաճյուղը բավականին ուժեղ կազմակերպութուն էր: Այն ուներ իր զինամթերքի պահեստը, զենքերը: Երևանի հնչակյանների խնդրանքով «Արագածը» 40 հոգիանոց զինված խումբ է ուղարկում օգնության: Հնչակյանների ինքնապաշտպանական խմբերը կռվել են Փարամազի գլխավորությամբ Զանգեզուրում և Երևանում, Բեռոս Սարգիսինը Աղուլիսում, իսկ հնչակյան Վահագնի խումբը մասնակցել է էջմիածնի շրջանի հայկական գյուղերի ինքնապաշտպանությանը:

1906թ. հնչակյան նշանավոր գործիչ Մուրատը, որ Սասունի ապստամբությունից հետո ձերբակալվել և աքսորվել էր աֆրիկյան Տրիպոլի, կարողանում է փախչել և մեկնել Փարիզ: Այստեղ նա հանդես է գալիս հայ ազգային կուսակցությունների միջև համագործակցություն ստեղծելու կոչով: Մուրատի կոչը սակայն, արձապանք չգտավ Հ. Յ. դաշնակցության մոտ, որը «հայ հեղափոխական կոնգրեսի» գումարման Մուրատի նախաձեռնությունը վաղաժամ համարեց: Այն ջերմորեն ողջունեցին վերակազմյալները: Միհրան Տամատյանը շնորհավորական նամակ ուղարկեց Մուրատին: Հնչակյան և Վերսկազմյալ կուսակցությունների միջև համերաշխությունը նորոգելու համար հնչակյան կենտրոնը Մուրատին ուղարկում է Եգիպտոս: Այստեղ Տամատյանի և Մուրատի տեսակցությունից հետո, 1907թ. նոյեմբերին երկու կուսակցությունների միջև կայացվում է համաձայնություն համատեղ գործունեության վերաբերյալ: 1908թ. սկզբին Մուրատը մեկնում է Ամերիկա և զգալի աշխատանք է կատարում Ազգային ճակատի ստեղծման ուղղությամբ: Սակայն, համագործակցությունը հնչակյան և դաշնակցության կուսակցությունների միջև չկայացավ, բացասաբար անդրադառանալով արևմտահայերի ազատագրական պայքարի վրա:

<sup>1</sup> Բանբայան Ա., Ազատագրական շարժումները Արևելյան Հայաստանում /1898-1908/, Երևան, 1999, էջ 133:

<sup>2</sup> Տես Պատմություն Ա. Պ. Հ. Կ., հատոր Ա, էջ 423:

<sup>3</sup> Տես Կիրվազը, նշվ. աշխ., էջ 107:

<sup>4</sup> Երևան տեղում, էջ 108:

<sup>5</sup> Ճիզմեյան Ա., նշվ. աշխ., էջ 131:

Կովկասի Հնչակյանները 1907-1908թթ. Թիֆլիսում հրատարակեցին «Ապագա» օրաթերթը՝ Արզար Տեր-Արրահամյանի և Ասուրպետի խմբագրությամբ: Եթե «Հնչակում» նրանք նյութեր էին հրապարակում գերազանցապես Թուրքիայի և Արևմտյան Հայաստանի մասին, ապա այստեղ տպագրված էին նյութեր Ռուսաստանի, Կովկասի և արևելահայ կյանքի վերաբերյալ: «Ապագան» առաջին իսկ համարում նշում էր, որ ինքը կանգնած է «դասակարգային հողի վրա, ձգտելու սթափեցնել պրոլետարիատին, ճնշված գյուղացուն նրա ինքնաճանաչողությունը»: Պարբերականը դատապարտում էր հայերի արտագաղթը Արևմտյան Հայաստանից և նշում, որ փրկությունը ոչ թե արտագաղթի, այլ «անիրավին դիմադրելու, բռնության դեմ կռվելու մեջ է»:  
«Ապագան» դատապարտում էր երիտթուրքերին այն բանի համար, որ ձգտում էին խեղդել ժողովուրդների բողոքի ձայնը և թուրքացնել նրանք:

Իսկ արտասահմանում գործող Հնչակյանները Սապահ-Գյուլյանի ղեկավարությամբ իրենց գաղափարները շարունակում էին քարոզել «Հնչակի» էջերում: Սապահ-Գյուլյանը Գերագնահատելով իրականությունը գրում էր, որ «Թուրքիան այնքան մի կապիտալիստական երկիր է, որքան Ռուսաստանը, որքան կապիտալիստական մի ուրիշ երկիր»: Նա գյուղացի մարաբաններին համարում է պրոլետարներ: Իրականում, «մարաբանները ոչ թե պրոլետարներ էին, այլ ճնշող մեծամասնության ֆեոդալական կախյալ գյուղացիներ»:

Հնչակյանները գտնում էին, որ արևմտահայ հասարակության մեջ բռնապետության դեմ ապստամբողները կարող են լինել միայն պրոլետարները: Ըստ Սապահ-Գյուլյանի հեղափոխության համար պետք է կազմակերպել այն տարրերին, որոնք պատմականորեն ընդունակ են այդ անել: Այդպիսի ուժը «աշխատավոր պրոլետար դասակարգն է, անհատ բուրժուականները պոչ են, հետևից եկողներ, հաճախ իրենց կամքին հակառակ»: Հնչակյանները արևմտահայերի ազատագրումը կապում էին մեծ տերությունների քաղաքականության հետ: Նրանք նշում էին, որ արևմտահայերը պետք է գինվեն և սպասեն հարմար պահի, երբ Եվրոպական որևէ երկիր պատերազմի մեջ կմտնի Թուրքիայի դեմ, այն ժամանակ իրենք ապստամբություն կբարձրացնեն: Միաժամանակ նրանք գտնում էին, որ եթե Եվրոպան համակերպվի Թուրքիայում հաստատած իր կիսագաղութային վարչակարգի հետ, ապա արևմտահայերը պետք է դիմեն ընդհանուր ապստամբության և դրանով Եվրոպային ստիպեն զբաղվելու Հայկական հարցով: Հնչակյան տեսաբանները գրում էին, որ Եվրոպական պետություններին չի կարելի «Հայաստան քաշել» միայն բողոքներով, միտինգներով ու

<sup>1</sup> Համբարյան Ա., Ազատագրական շարժումները..., էջ 134:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 135:

<sup>3</sup> Նույն տեղում:

պրոպագանդայով: «Եվրոպայի շահագրգռիտ պետություններին Հայաստանի պիտի քաշենք զենքով, հեղափոխություններ», - գրում էին նրանք<sup>1</sup>: 1907թ. դեկտեմբերի 27-ից 29-ը Փարիզում կայացավ Օսմանյան կայսրության ընդդիմադիր ուժերի կոնգրեսը: Հնչակյանները հրաժարվեցին մասնակցել նրա աշխատանքներին հաշվի առնելով այն հանգամանքը, որ կոնգրեսի կազմակերպիչ Երիտթուրքերը սկզբունքորեն դեմ էին հայկական բարենորոգումների ծրագրին:

1908թ. ապրիլին Երիտթուրքերը հեղաշրջում կատարեցին և տապալեցին սուլթան Աբդուլ Համիդին: Թուրքիան հայտարարվեց սահմանադրական, դեմոկրատական երկիր: Տարբեր տեղերից Թուրքիա վերադարձան փախստական հեղափոխականները, այդ թվում նաև Հնչակյան կուսակցության ղեկավարները: Նրանք ակտիվորեն ձեռնամուխ եղան զավառների իրենց մասնաճյուղերի վերակազմության գործին: Հնչակյան լիգերները հայտարարեցին, որ հրաժարվում են Թուրքիայից Հայաստանի անջատման պահանջից, քանի որ տապալվել է բռնապետական վարչակարգը և երկրում հաստատվել են սահմանադրական կարգեր: Այժմ իրենք պայքարելու են բոլոր ազգերի համադրածակցության, ինքնավարության, ինչպես նաև Թուրքիայի դեմոկրատացման համար: 1908թ. օգոստոսի 16-ին հնչակյան պատգամավորությունը /Սապահ-Գյուլյան, Մուրատ /Համբարձում Պոյաճյան/, Հարություն Ծանկյուլյան, Միհրան Տամատյան /Տամատյանը վերակազմյալ էր- Գ. Հ./ պաշտոնական այցելություն կատարեց Կ. Պոլսի իթթիհատական կոմիտեի կենտրոնատեղին, որտեղ հնչակյաններին ընդունեց դոկտոր Բեհաշդիյը և ուրիշներ: Հնչակյանները ողջունեցին երկրում հռչակված սահմանադրությունը և հույս հայտնեցին, որ այն հնարավորություն կընձևնի խորհրդարանական, կուսակցական պայքարով հետզհետե ընդլայնել դեմոկրատական կարգերը: Նրանք իթթիհատականներին հավաստիացնում էին, որ իրենք անջատողական են եղել Թուրքական բռնապետությունից, իսկ Թուրք ժողովրդից, բարեկարգված Թուրքիայից անջատողական նպատակներ չունեն: Հնչակյան պատգամավորներն իրենց գործունե աջակցությունն առաջարկեցին իթթիհատական կոմիտեին հայտարարելով, որ սահմանադրության հռչակումից հետո այլևս անիմպատ է դառնում անկախ Հայաստանի սկզբունքի պաշտպանությունը:

1909թ. ապրիլին Ստամբուլում Երիտթուրքների դեմ բարձրացված խռովության ժամանակ հնչակյաններն աջակցեցին իթթիհատին և իրենց զինված ջոկատներով հանդես եկան նրանց կողմում:

<sup>1</sup> «Ճշակ», 1907, քիվ 8:

<sup>2</sup> «Ազգ» Բ ոստուն, 1908, 26 սեպտեմբեր:

<sup>3</sup> Նույն տեղում:

<sup>4</sup> Ազատարար շարժու և բանակին հաղթական մու սքը ի Կ. Պոլիս, արակ I, Կ. Պոլիս, 1909, էջ

Այնուամենայնիւ, Հնչակյանները, չնայած այս Հայտարարութիւններին, երիտթուրքերի նկատմամբ զգուշաւոր դիրքորոշում ունեին: «Հնչակը» համագործակցում էր ավելի լիբերալ գործչի իշխան Սարահէղղինի հետ: Սարահէղղինը ի տարբերութիւն իթիթիհատական պարագլուխների Նազըմի, Թալեաթի, Բեհհէղղինի և այլոց, Օսմանյան կայսրութեան ազգային փոքրամասնութիւնների իրավունքների ընդլայնման և ապակենտրոնացման կոչ էր անում:

1909թ. Աղանայի կոտորածը լրիվ խարխուլեց վստահութիւնը երիտթուրքերի նկատմամբ: Դրանից հետո Հնչակյաններն այլևս Հափատ չէին ընծայում երիտթուրքերի խոստումներին:

1909թ. Հուլիսի 12-ին Կ. Պոլսում լեզալ պայմաններում բացվեց Հնչակյան կուսակցութեան վեցերորդ պատգամավորական ժողովը: Օրակարգի ղլխավոր հարցը վերաբերում էր հետագա գործելակերպին, այսինքն պայքարի հեղափոխական-մարտական, թե՛ սահմանադրական-պառլամենտական ուղին պետք է ընտրի կուսակցութիւնը: Օսմանյան սահմանադրութեան նկատմամբ Հափատ չէին ընծայում հիմնականում արևելահայ պատգամավորները՝ Սապահ-Կյուլյան, Փարամազ, Ազատ Ոստանիկ և ուրիշներ: Նրանք գտնում էին, որ պետք է անլեզալ գործունեութիւն ծավալել և հարվածել իթիթիհատականներին, որոնք շարունակում են սուլթանի բռնապետական քաղաքականութիւնը: Պատգամավորների մյուս մասը՝ Ա. Աչըզպաշյան, Հմ. Արամյանց, Մուրատ, Ներսես Զաքարյան և այլոք, դեմ էին պայքարի արմատական ձևերին, հաշիւ առնելով արևմտահայերի քայքայված և ուժասպառ վիճակը: Նրանք գտնում էին, որ Սահմանադրութիւնը հասցնելու է Թուրքիայի բոլոր ժողովուրդների ազգամիջյան ատելութեան վերացմանը: Ի վերջո ժողովն ընդունում է բանաձև, ըստ որի կուսակցութիւնը Թուրքիայում պետք է գործի պայքարի լեզալ/պառլամենտական/ միջոցներով: Համագումարում որոշում է ընդունվում, որը մերժում է երիտթուրքերի այն գաղափարը, ըստ որի Թուրքիայի բոլոր ոչ թուրք ժողովուրդները պետք է ձուլվեն թուրք ժողովրդի մեջ «Օսմանցի» ընդհանուր անվան տակ: Պատգամավորական ժողովը նկատի ունենալով կիլիկիահայութեան կոտորածի տխուր փաստը, քննարկում է երիտթուրքերի հակահայկական քայլերի բորբոքման դեպքում ազգային ինքնապաշտպանութեան հարցը և հանձնարարում կուսակցութեան գործադիր մարմիններին «նպատակահարմար հիմունքներով կազմակերպել ինքնապաշտպանութեան գործը»: Վերջում ընտրվում է սոցիալ-դեմոկրատական Հնչակյան կուսակցութեան Տաճկաստանի կենտրոնական վարիչ մարմինը հետևյալ կազմով

<sup>1</sup> Արամյանց Հմ., Պատմութիւն և հնչակյան կուսակցութեան, Կ. Պոլիս, 1918, էջ 40:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 42:

<sup>3</sup> Պատմութիւն և Ա. Դ. Հ. Կ., հատոր Ա, էջ 325:

Արամ Աչըրզյաչյան /ատենապետ/, Հմ. Արամյանց /ատենադիր/, Մեծն Մուրատ /գանձապահ/, Ներսես Ջաքարյան, Հակոբ Արծրունի :

Սապահ-Գյուլյանի և Մուրատի մասնակցութեամբ մշակվում է Հնչակյան կուսակցութեան նոր ծրագիրը: Փոփոխված ծրագիրը հաստատում է թուրքական կառավարութեանը: Համագումարը որոշում է, որ կուսակցութեանը պետք է կրի «սոցիալ-դեմոկրատ» անվանումը: Ծրագրի նախարանում դատապարտվում են կապիտալիստական կարգերը և հռչակվում, որ կուսակցութեան նպատակը բոլոր երկրներում սոցիալիզմին հասնելն է: Ծրագրում նշվում է, որ կուսակցութեանը կողմնակից է պայքարի լեզալ պառլամենտական ձևին: Ազգային հարցում Ս. Դ. Հ. Կ.-ն ժխտում էր մեկ ազգի ստորադասումը մյուսին և ընդգծում, որ պետք է պայմաններ ստեղծել բոլոր ազգերի տնտեսական-քաղաքական դարգացման համար, իսկ ինքնորոշումն ու հավասարութեանը պետք է համարվի անձեռնմխելի իրավունք: Ս. Դ. Հ. Կ.-ն ժխտում էր սահմանադրական թուրքիայի հանդեպ ամեն տեսակի անջատողականութուն, հայտարարելով, որ կուսակցութեանն աշխատելու է «Տաճկաստանի մեջ առաջ բերել Սոցիալ-դեմոկրատական ֆրակցիաներ, որոնք կազմելու են միջազգային սոցիալ-դեմոկրատիայի մի մասը»: Մարքսիզմի, գիտական սոցիալիզմի ուսմունքը հասարակութեան լայն խավերի մեջ տարածելու և կուսակցութեան սոցիալական հենարանը ամրապնդելու նպատակով Հնչակյան կուսակցութեանը ձեռնամուխ եղավ ուսանողական միութեան կազմակերպմանը: Կ. Պոլսի Հնչակյան ուսանողական միութեանը կազմավորվեց 1910թ.: Կարճ ժամանակում նրա շուրջը համախմբվեցին բավական թվով մտավորականներ: Ուսանողական միութեան ղեկավարներն էին Էջմիածնի Գևորգյան ճեմարանի շրջանավարտներ Արսեն Կիտուրն ու Էդվարդ Ամատունին, ինչպես նաև Կ. Պոլսի իրավաբանական դպրոցի մի խումբ ուսանողներ՝ Ժիրայր Միրզախանյան, Սեդրակ Քարյան, Գեղամ Վանիկյան և ուրիշներ: Ուսանողական միութեանը հրատարակում է «Կայծ» անունով ամսաթերթը, որի խմբագիրներն էին Արսեն Կիտուրը, Էդվարդ Ամատունին :

1912թ. սեպտեմբերի 26-ին Պոլսում գումարվում է Ս. Դ. Հ. Կ. Տաճկաստանի II պատգամավորական ժողովը /առաջինը՝ 1910թ./: Օրակարգի հիմնական հարցը կուսակցութեան ղիրքորոշման ճշտումն էր թուրքիայի կառավարող կուսակցութեան իթթիհատի և նրան ընդիմադրի իթիլաֆի հանդեպ: Իթթիհատի սլանթուրքական գաղափարներն ու նրա վարած հակահայկական քաղաքականութեանը չէր կարող չանհանդատացնել Հնչակյաններին, առավել ևս, որ նրանք ենթարկվում էին հետապնդումների: 1912թ. Հնչակյանները մերձեցան և-

<sup>1</sup> Պատմութեան Գ. Գ. Կ., հատրդ, էջ 325:

<sup>2</sup> Օրագիր սոցիալ-դեմոկրատ հնչակյան կուսակցութեան /Տաճկաստանի համար/, Կ. Պոլս, 1910:

<sup>3</sup> Պատմութեան Գ. Գ. Կ., հատրդ, էջ 334:

րիտթուրքերի հակառակորդ «Հյուրիեթ վե իթիլաֆ» կուսակցութեան հետ: Սակայն Հնչակյան-իթիլաֆ համաձայնութիւնը չէր լուծոււմ արեւմտահայութեան ցալոտ խնդիրները առաջին հերթին ազգայինը, որովհետեւ իր բովանդակութեամբ և իր առջև դրված խնդիրներով իթիլաֆը նույնն էր ինչ իթթիհատը, տարբերութիւնը միայն քաղաքական կողմնորոշումների մեջ էր իթթիհատը գերմանական, իթիլաֆը անգլիական:

1912թ. փետրվարի 7-ին կնքված Հնչակ-իթիլաֆ համաձայնութեամբ վերջինիս ստանձնած պարտավորութիւնները օսմանյան ժողովուրդների իրավահավասարութեան, գլուղացիների դրութեան բարեւակաման և այլ հարցերի վերաբերյալ, ունեին դեմագոգիկ բնույթ, որոնք իթիլաֆին պետք էին ոչ թե կենսագործելու, այլ իր դիրքերն ամրապնդելու, իր կողմնակիցների թիվը մեծացնելու համար: Պատահական չէ, որ երբ իթիլաֆականները 1912թ. հուլիսի 9-ին կատարեցին պիտական հեղաշրջում և իշխանութիւնը վերցրին իրենց ձեռքը, շարունակեցին իթթիհատի ինչպես ներքին, այնպես էլ արտաքին քաղաքականութիւնը: Նրանք թշնամական դիրք բռնեցին արեւմտահայերի ազգային ու սոցիալական խնդիրների նկատմամբ:

1912թ. Սալոնիկում կայացած իթթիհատականների համագումարում ընդունված հակահայկական որոշումները և ապա 1913թ. սկսված բալկանյան պատերազմը Հնչակյաններին էլ ավելի համոզեցին, որ իթթիհատը ազգային հարցում շարունակում է Աբդուլ Համիդի քաղաքականութիւնը, որն ի վերջո նպատակամղված է թուրքերի մեջ ձուլել թուրքիայի բոլոր ոչ թուրք ժողովուրդներին: Հնչակյան կուսակցութեան առաջնորդներ և տեսաբաններ Ս. Սապահ-Փյուլյանը, Ա. Նազարբեկը, Վարազդատը և ուրիշներ գտնում էին, որ թուրքիայի բոլոր ժողովուրդներին պետք է տալ ինքնավարութիւն: Նրանք քննադատում էին Օսմանյան սահմանադրութիւնը, որը, Հնչակյանների կարծիքով աշխատավոր մասսաների կազմակերպման ու ազատ պարզացման համար չի ստեղծում նպաստավոր պայմաններ: Սապահ-Փյուլյանը գտնում էր, որ ինքնավար Հայաստանը պետք է գտնվի Ռուսաստանի հովանավորութեան ներքո, քանի որ նրա քաղաքական շահերը համընկնում են Հայ ժողովրդի շահերի հետ: «Հնչակը» նշում էր, որ հայկական հարցն առաջին հերթին պետք է առաջ քաշեն հայ կուսակցութիւնները: Նրանք պետք է բորբոքեն հայկական խնդիրը,

<sup>1</sup> Համբարյան Ա., Հայ հասարակական-քաղաքական միտքը արևմտահայոց քանդակաքարու քան ու դիմերի մասին, Երևան, 1990, էջ 357:

<sup>2</sup> Լույս տեղում:

<sup>3</sup> Չնչակ, 1913, թիվ 2:

<sup>4</sup> Լույս տեղում:

<sup>5</sup> «Չնչակ», 1913, թիվ 3:

ի սպաս դնեն իրենց ուժերը և այդ ժամանակ ելրոպական դիվանագիտությունը լրջորեն կգրադվի Հայկական Հարցով :

Քաղաքական իրադրության մեջ ճիշտ կողմնորոշվելու և կուսակցության հետագա գործունեությունը ծրագրելու հատկեցնելու նպատակով, 1913թ. սեպտեմբերի 7-ին Ռուսիայի Կոստանցա քաղաքում գումարվեց Ս. Դ. Հ. Կ. VII պատգամավորական ժողովը: Ամերիկայի, Թուրքիայի, Կովկասի, Եգիպտոսի, Պարսկաստանի, Ռուսիայի, Բուլղարիայի հնչակյան մասնճյուղերից մասնակցում էին 59 պատգամավորներ: Ժողովը տվեց Թուրքիայում ստեղծված դրության դնաշատականը: Նշվեց, որ ազգերի ու ժողովուրդների իրավահավասարության վերաբերյալ Օսմանյան Սահմանադրությամբ հռչակված խոստումները մնացել են լույ խոսքեր և, որ Հայ ժողովուրդը իթթիհատի վարած քաղաքականության հետևանքով հայտնվել է ծայրահեղ քայքայման վիճակում: Համապատասխան որոշում է, որ կուսակցությունը պետք է անցնի անլեգալ գործունեության, մինչև որ կստեղծվեն ավելի նպաստավոր քաղաքական-տնտեսական պայմաններ:

Պատգամավորական ժողովի երկրորդ կարևոր որոշումը վերաբերում էր բարենորոգումների և Հայաստանի քաղաքական ինքնավարության խնդրին: Նշվում էր, որ Թուրքական կառավարության ընդհանուր և մասնակի բարենորոգումների մասին խոստումները լույ գիվանագիտական միջոց են՝ ժամանակ շահելու և ներքին ըմբոստությունները ճնշելու համար: Ինչ վերաբերում է ելրոպական տերություններին, ապա պատգամավորական ժողովը նշեց, որ նրանց բռնած շահագիտական ընթացքը Արևելյան Հարցում և մասնավորապես Հայկական Հարցում, նրանց միջև եղած ներքին հակասությունները միշտ էլ հմտորեն օգտագործվել են, Թուրքերի կողմից:

Ս. Դ. Հնչակյան կուսակցություն VII պատգամավորական ժողովը դեմ չլինելով Թուրքիայում բարենորոգումների անցկացմանը, որոշում է պաշտպանել ինքնավար Հայաստանի գաղափարը, «քանի որ այլևս անվիճելի է Թուրք տիրող ազգի և անոր ղեկավար դասու պատմական անընդունակությունը և անբարեացակամությունը»:

Պատգամավորական ժողովը երիտթուրքերի գործունեությունը վտանգավոր համարեց բոլոր ազգությունների համար, քանի որ վերջիններս Թուրք ազդեցիվ ազգայնականության կրողն էին հանդիսանում, և խստիվ արգելեց իր բոլոր մասնաճյուղերին հարաբերությունների մեջ մտնել իթթիհատի հետ: Հաշվի առնելով Հայկական Հարցի և արևմտահայության ճգնաժամային իրավիճակը, պատգամավոր ժողովը հնչակյան բոլոր մասնաճյուղերին պարտադրում է իրենց գործունեությունը:

<sup>1</sup> Չնչակ, 1913, թիվ 4-5:

<sup>2</sup> Տես Համբարյան Ա., հայ հասարակական-քաղաքական միտքը..., էջ 361:

<sup>3</sup> Պատմու թյու Ն Ա. Դ. Գ. 4., հատոր Ա, էջ 366:

<sup>4</sup> Պատմու թյու Ն Ա. Դ. Գ. 4., հտ. Ա, էջ 367:

նուության մեջ առաջնահերթ նշանակութիւն տալ արեւմտահայութեան ինքնապաշտպանութեան հարցին:

1912-1913թթ. Բայկանյան պատերազմի ժամանակ, երբ կրկին վերաբացվեց Հայկական հարցը, իթթիհատականները Հնչակյաններին առաջարկեցին բանակցութիւններ սկսել Հայկական վիլայեթներում բարենորոգումներ անցկացնելու վերաբերյալ: Բայց Հնչակյանները մերժեցին իթթիհատի առաջարկը և բանակցութիւններ սկսելու նախապայման համարեցին Արեւմտյան Հայաստանի ինքնավարութեան սկզբունքի ընդունումը:

1914թ. հուլիսի 16-ին Պոլսում սկսվեցին Հնչակյանների ձերբակալութիւնները: Ձերբակալվեց 120 մարդ, այդ թվում Փարամազը, Մուրատը, Արծրունին, Ճանկուլյանը, զոկտոր Պեննեն /Պետրոս Թորոսյան/ և ուրիշներ: Փակվեց Հնչակյանների «Կայծ» թերթը<sup>1</sup>:

1914թ. հուլիսի 24-ին Կ. Պոլսում կայացավ Հնչակյան կուսակցութեան արեւմտահայ մասնաճյուղի երրորդ պատգամավորական ժողովը: Բննարկվեց կուսակցութեան զիրքորոշումը իթթիհատի նկատմամբ, որը Հնչակյաններին հալածելու քաղաքականութիւն էր վարում: Հայ ժողովրդի ինքնապաշտպանութեան կազմակերպումը ընդունվեց որպէս զերագույն նպատակ:

Այսպիսով, առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին Հնչակյան կուսակցութիւնը երկրորդ պլան մղելով սոցիալիստական գործունեութիւնը, դեմ առ դեմ կանգնեց երիտթուրքերի Հայակուլ քաղաքականութեան հանդեպ՝ ի պաշտպանութիւն Հարազատ ժողովրդի:

<sup>1</sup> «Հնչակ», 1913, թիվ 2:

<sup>2</sup> Պողոսյան Հայկազ, Փարամազ, Երևան, 1992, էջ 43:

<sup>3</sup> Պատմութիւն Ս. Պ. Յ. Կ., հատոր Ա, էջ 374:

## ՎԵՐԱԿԱԶՄՅԱԼ ՀԵԶԱԿՅԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Արևմտահայության 1890-ական թթ. կոտորածներից հետո Հնչակյան, կուսակցությունը ճգնաժամի մեջ էր: Արևմտյան Հայաստանում գտնվող Հնչակյան կազմակերպությունների զգալի մասը բացահայտվել ու ջախջախվել էին: Թուրքական ոստիկանության հետապնդումներից խուսափելով այդ կուսակցության շատ գործիչներ հեռացել էին ևրկրից: Ստեղծված կացությունը վերլուծելու նպատակով 1896թ. հունվարին Հնչակյանները Լոնդոնում հավաքվեցին պատգամավորական ժողովի: Այստեղ գտնվող արևմտահայ Հնչակյանները՝ Միհրան Տամատյանը, Ապահ Պետրոսյանը /իսկական անունը Ավետիս Գմբեյան - Գ. Հ./, Լևոն Մկրտչյանը, Արփիար Արփիարյանը, Անտոն Ռշտունին և ուրիշներ ընդհարվում են կուսակցության կենտրոնի հետ: Ընդհարումն ուներ լուրջ պատճառներ: Տամատյանին, Արփիարյանին, Ապահին և մյուսներին մտահոգում էր Արևմտյան Հայաստանում Հնչակյան դեկավարների որդեգրած գործունեության եղանակը: Նրանք մեղադրում էին կուսակցության առաջնորդ Ավետիս Նազարբեկյանին և Հնչակյան կենտրոնի մյուս անդամներին այն բանում, որ չխորհելով ժողովրդի ինքնապաշտպանության մասին, նրանք Արևմտյան Հայաստանի տարբեր վայրերում հապճեպորեն կազմակերպում էին զինված ելույթներ, որոնք առանձնապես օգուտ չտալով, գրգռում էին թուրքերին, իսկ վերջիններս առիթն օգտագործում էին նոր բռնություններ ու ջարդեր կազմակերպելու համար:

Ա. Նազարբեկյանին /Նազարբեկ/, հատկապես քննադատում էին այն բանում, որ կուսակցության պաշտոնաթերթ «Հնչակում» այդ շարժումները նա ներկայացնում էր որպես սխրագործություններ<sup>1</sup>: Նրանք գտնում էին, որ նման հայտարարություններն ապակողմնորոշում են հայրենասիր, թյուր պատկերացում տալիս իրականության մասին: Բացի այդ, Նազարբեկից պահանջում էին կուսակցության գործունեությունը ծավալել խիստ դազտնապահության պայմաններում:

Դժգոհության մյուս պատճառը Նազարբեկ ամուսինների /Ա. Նազարբեկյան և Մարո Վարդանյան/ մենատիրությունն էր կուսակցության մեջ: Այդ մասին պարզորոշ պատկերացում են տալիս Ապահի, Ռշտունու, Տամատյանի, Արփիարյանի նամակները<sup>2</sup>: Հետագայում անդրադառնալով այս հարցին, Արփիարյանը գրում էր. «Յրբ Լոնդոն հավաքվեցինք, տեսանք թե դեպքերը, զոր քննելու հարկին մեջ կգտնվինք, մեծ մասամբ դժբախտ հետևանքներ էին միապետական

<sup>1</sup> Ճիզմեյան Ս., նշվ. աշխ., էջ 33:

<sup>2</sup> ԳԳ ՊԿՊԱ, Ապահ Պետրոսյանի ֆոնդ, 453, ցուցակ1, Գործ 6, ք. 1:

սանճարձակ գրութեան: Անհատ մը կրցած էր ամեն բան ընել սուանց պատասխանատուութեան, սոսնց վերահսկումի: Արկածաբեր այս գրութեան շարունակութեանը ահեղորեն վտանգալից երևեցաւ այսօրային համար»:

Դժգոհութեանը հատկապէս մեծ էր Մարո Նազարբեկից: 1896թ. հուլիսի 18-ին Արփիարյանին ուղղված նամակում Լ. Մկրտչյանը գրում էր. «Եթէ տիկին Նազարբեկը չըլլար, Ափոյին հետ թերևս, կարելի էր լրջորեն ու համերայտութեամբ գործել, բայց մինչև հիմա ամեն կարգի խնդիրներուն մեջ տիկինին անխորհուրդ համառութեանը պատճառ եղած է շատ մը չարիքներու»: Արեւմտահայ Հնչակյանները իրենց անհամաձայնութեանն էին արտահայտում նաև այն հարցում, որ կուսակցութեան ղեկավարները, լինելով արևելահայեր, վատ էին ճանաչում արևմտահայ կյանքը, թուրքական իրակայնութեանը և այդ իրողութեանը իր բացասական կնիքն էր թողնում Արեւմտյան Հայաստանում կուսակցութեան գործունեութեան վրա: Նրանք գտնում էին, որ կուսակցութեանը պետք է ղեկավարեն արևմտահայ գործիչները, որոնք լավ դիտեին այդ կյանքը:

Հատկապէս լուրջ տարածայնութեանն իր տեղիք տվեց կուսակցութեան ծրագրի մեջ ամբողջովն սոցիալիզմի հարցը:

Արեւմտահայ Հնչակյանները գիմ էին այն բանին, որ հեղափոխութեան, այսինքն՝ արևմտահայերի ազատագրութեան անունով հասկացված գրամը ծախսվեր սոցիալիզմի քարոզչութեան համար: Նրանք գտնում էին, որ պետք է հրաժարվել սոցիալիզմի գաղափարից, որը վնասակար է հայ դատի համար<sup>1</sup>: Պետք է հրաժարվել հայ ժողովրդին դասակարգերի բաժանելու գաղափարից, քանի որ այն ճլտուում է ազգի ուժերը, արհեստական անջրպետներ ստեղծում և վնասում ազատագրական պայքարին: Նրանք առաջադրում էին ազգային համերայտութեան խնդիրը: «Մենք մեր մեջն պետք է տարահանինք ինչ-որ բնութանուր ազգային հանգամանք չունի: Կրոնական խնդիր, տնտեսական հարցեր պետք է ջնջել. վասնզի կուսակցական են», - գրում էր Արփիարյանը: Նա այն համոզմունքին էր, որ օտար լծի տակ գտնվող ժողովրդի համար կրոնական, տնտեսական, սոցիալական և մյուս ներքին հարցերը պետք է ստորադասվեն դիտարկում խնդրին՝ ազգային ազատագրութեանը:

Նազարբեկին ու իր կողմնակիցները, որոնք փոքրամասնութեանը և կողմնակիցին, չընդունեցին այս քննադատութեանները և հրաժարվեցին մասնակցել Հոնգոնի համագումարին:

<sup>1</sup> «Ուսարի», Կոնիդն, 1907, թիվ 443:

<sup>2</sup> Ե. Չարեմբի անվան Գրականության և Արվեստի Բաճառումի արխիվ, Այսու հետև ԳԱԹ, Ա. Արփիարյանի ֆոնդ, N 376, ք. 2:

<sup>3</sup> Երզնէյան Ա., Նշվ. աղյւ., էջ 53:

<sup>4</sup> ԳԱԹ, Ա. Արփիարյանի ֆոնդ, N 23, ք. 1:

Նազարբեկը Հակառակորդ խմբավորմանը կոչեց «Ալֆարիսկան»: Մ. Տամատյանը գրում է. «Շատերը կարծում են, թե այդ նշանակում է արփիարական, մինչդեռ իրականությունն այն է, որ գործիչների Հանձնախումբը ինքն իր Հասցեին տվել էր Անտոն Ռշտունու անունի Հունական սկզբնատառերով անվանումը՝ Ալֆարիս-փոխանակ Ալֆառո-ի<sup>1</sup>: 1896թ. մայիսի 21-ին Հնչակյան կուսակցության Կ. Պոլսի վարչությունը պրած նամակում Արփիարյանը շարադրում է կուսակցության նորովի կազմակերպման ու կենտրոնի վերակառուցման իր տեսակետները: Նա ցույց էր տալիս, որ ազատազրական պայքարի ընթացքում Հնչակյանների կրած պարտություն գլխավոր պատճառներից մեկը գործողությունների տարանջատվածությունն էր, հասպտակությունն ու վատ նախապատրաստվածությունը: Արևմտահայերի ազգային-ազատագրական պայքարի Հաջողության կարևոր գրավականներից մեկը Ա. Արփիարյանը համարում էր ազգային կուսակցությունների միջև համաձայնություն կայացումը: Նա իրավացիորեն նշում էր, որ «ազգին դուրս եկած փորձանքներուն մեկ մեծ մասը այդ պառակտումին պատճառով է, որը շատ վնասակար եղած է ազգին դատին համար»: Ա. Արփիարյանն առաջադրում էր նաև կուսակցական քաղաքականություն հույժ կարևոր հարցը, իրավացիորեն նկատելով, որ դա ցանկացած ձևափոխման հաջողության գրավականն է<sup>2</sup>: Նա գտնում էր, որ կուսակցությունը, հատկապես նրա ղեկավարությունը պետք է խուսափի յուրաքանչյուր ձևափոխմանը տալ զուտ կուսակցական բնույթ: Դա հիմնավորում էր հետևյալ կերպ. թուրքական կառավարությունը կարող էր ցանկացած նման հայտարարություն օգտադրծել և ավելի ամրապնդել այն թյուր կարծիքը, թե հայ ժողովուրդն ամբողջության մեջ գտն է թուրքական կառավարությունից և միայն առանձին խռովարար խմբեր ու կազմակերպություններ են, որ դուրս են գալիս կառավարության դեմ հակառակ ժողովրդի կամքի: Իրանով կառավարությունը հող էր նախապատրաստում հայ ազգային կուսակցությունների դեմ տրամադրելու նաև Եվրոպայի հասարակական կարծիքը և հարմար առիթ ստեղծում կուսակցություններին հարվածելու համար: Ընդ որում դա վերաբերում էր նաև ՀՅԴ-ին, որի գործելակերպն այս հարցում նույնանում էր Հնչակյանների հետ:

1896թ. օգոստոսի 20-ին Լոնդոնում Նազարբեկյանին ընդդիմադիր Հնչակյանները գումարում են իրենց առաջին ընդհանուր պատգամավորական ժողովը: Այստեղ դատապարտում են կուսակցության ղեկավարության բռնած ընթացքը, պահանջում են հրաժարվել ղեկավարման կենտրոնացված ձևից, պարբերաբար հաշվետու լինել կուսակցության համապատասխան: Հատկապես մեծ էր դժգոհությունը

<sup>1</sup> Տամատյան Մ, Իմ հուշերս, Պեյրուս, 1985, էջ 97:

<sup>2</sup> ԳԱԹ, Ա. Արփիարյան ֆոնդ, N 71, ք. 2:

<sup>3</sup> Նույն տեղում, N 354, ք. 2-3:

<sup>4</sup> Նույն տեղում, N 71, ք. 1:

յունը կուսակցութեան ղեկավարման կենտրոնացված ձևից, այդ պատճառով առաջ էր քաշվում կուսակցութեան կառուցելի շուտափուլյա ապակենտրոնացման խնդիրը: Նազարբեկյան թեկին ընդդիմադիրները մեկ անգամ ևս ավելորդ ու փնասակար էին համարում սոցիալիզմի քարոզչութունը արևմտահայութեան մեջ և պահանջում էին ծրագրից հանել այդ կետը:

Սակայն նազարբեկյանները չեն ընդունում ոչ մի փոփոխութուն կուսակցութեան ծրագրում: Ընդհակառակը, նրանց ճնշման տակ կուսակցությունից վտարվում են Տամատյանը, Ռչտունին, Սվազյանը, Աղասին և ուրիշներ: Դա էլ ավելի խորացրեց տարածայնութունները և հանգեցրեց կուսակցութեան պառակտմանը: Ընդդիմադիրները, որոնք գերազանցապես արևմտահայեր էին, հայտարարում են նազարբեկյաններից բաժանվելու և նոր հնչակյան կուսակցութուն ստեղծելու մասին: 1896թ. հոկտեմբերի 16-ին Ապահ Պետրոսյանը հայտնում է իր համախոհ Խորայելին, որ բաժանվելով նազարբեկյաններից իրենք ստեղծել են «հինգ անձերն բաղկացած կեդրոնական վարչութուն մը»: Նորընտիր վարչութեան անդամներ են ընտրվում Արփիարյանը, Տամատյանը, Սուրենյանը, Մկրտչյանը, Սվազյանը: Նորընտիր վարչութունը պետք է պարբերաբար հաշվետվութուն ներկայացնեի իր գործունեութեան համար կուսակցութեան համագումարներում:

1896թ. աշնանը հնչակյան երկու թեկերի միջև սուր պայքար է ծափալվում «Հնչակ» թերթի շուրջը: Նազարբեկին ընդդիմադիրները կարողանում են մի քանի համար լույս տեսցնել, սակայն նազարբեկը Լոնդոնի դատարանի միջոցով կարողանում է պահպանել «Հնչակի» նկատմամբ սեփականութեան իր իրավունքը և շարունակում է այն հրատարակել որպես հնչակյան կուսակցութեան օրգան:

Պետք է նշել այն հանգամանքը, որ կուսակցութեան պառակտումից հետո այն բառացիորեն չերկփնդկվեց երկու մասի: Հնչակյաններից շատերը հանդես եկան ինչպես նազարբեկյանների, այնպես էլ նրա ընդդիմադիրների դեմ և դատապարտեցին կուսակցութեան պառակտումը:

Կազմակերպորեն բաժանվելով նազարբեկյաններից և ստեղծելով նոր հնչակյան կուսակցութուն, Արփիարյանը, Տամատյանը և մյուսները սկզբից ևեթ աշխատում էին միավորվել Հայ Հեղափոխական Դաշնակցութեան հետ: Զ. Յ. Դաշնակցութեան հետ միավորվելու ձգտումը նոր հնչակյանների շարքերում գնալով ավելի էր ուժեղանում և օրեցօր մեծանում էր միավորման կոզմնակիցների թիվը: Դեռ

<sup>1</sup> ՉԵԿՊԿՊՍՍ, ֆոնդ 4045, ցուցակ 1, գործ 35, ք 4:

<sup>2</sup> Երևան տեղում:

<sup>3</sup> Գ. Պետրոսյան Կենտրոնական Պատմության արխիվ, ՄԿԿՊՍՍ, Ապահ Պետրոսյանի ֆոնդ, N 453, ցուցակ 1, գործ 7, ք 2:

<sup>4</sup> ՉԵԿՊԿՊՍՍ, ֆոնդ 4045, ցուցակ 1, գործ 33, ք 5:

<sup>5</sup> Երևան տեղում, գործ 32, ք 2:

1896թ. նոյեմբերին Ապահին գրած նամակում Հնչակյան Իսրայելն առաջ էր քաշում Դաշնակցութեան Հետ միութեան խնդիրը<sup>1</sup> :

Ընդդիմադիր Հնչակյանները, որոնք կոչվեցին վերակազմայաներ, 1896թ. օգոստոս-սեպտեմբերին տեղի ունեցած իրենց պատգամավորական ժողովի ընթացքում ընդունված նորընտիր ժամանակավոր վարչութեան սեպտեմբերի 12-ի դիմումով Ն. Յ. Դաշնակցութեանն առաջարկեցին միութեուն Հաստատել երկու կուսակցութեանների միջև : Միութեան առաջարկով Հոկտեմբերի 22-ին ժնե է մեկնում Միհրան Սվազլյանը իմանալու համար Դաշնակցութեան տրամադրութեունը այդ խնդրի վերաբերյալ : Ժնեում Սվազլյանին հասկացնում են, որ միութեան պայմանը Արփիարյանին կուսակցութեունից հեռացնելն է : Հարցը քննարկվում է վերակազմյալ Հնչակյանների ժամանակավոր վարչութեան կողմից և չնայած նրան, որ Ա. Արփիարյանը Հրաժարական է տալիս, այնուամենայնիվ վարչութեունը մերժում է Ն. Յ. Դաշնակցութեան այդ պայմանը :

1896թ. նոյեմբերի 28-ին վերակազմյալ Հնչակյանների կենտրոնը դիմում է «Դրոշակի» խմբագրութեանը միութեան առաջարկով, սակայն դիմումը մնում է անպատասխան :

Չնայած դրան, այնուամենայնիվ 1897թ. մայիսի 6-ին նրանց կենտրոնը առաջարկում է դաշնակցութեան ղեկավարութեանը վերսկսել բանակցութեունները և իր կողմից բանազնաց է նշանակում Հարութեուն Ճանկլուկյանին : Դաշնակցականները հայտնում են, որ կրնողունեն Ճանկլուկյանին և կխոսեն միութեան կամ համերաշխ գործակցութեան խնդրի մասին» : Մի քանի օրվա բանակցութեուններից հետո, 1897թ. Հունիսի 1-ին դաշնակցութեան ներկայացուցիչները Ռոստոմը, Արմեն Գարոն, Վահաբը և բանակցելու համար ժամանած Ն. Ճանկլուկյանը համատեղ ստորագրում են մի հայտարարութեուն, ըստ որի միութեան իրազործման համար, որպես պայման դրվում է Ա. Արփիարյանի հեռացումը Հնչակյան կուսակցութեան շարքերից : Սակայն դաշնակցականները չեն բավարարվում միայն Ա. Արփիարյանին հեռացնելու պահանջով : Նրանք դնում են նաև երկրորդ պայմանը, որն արդեն անհնարին է դարձնում միութեունը և ցույց տալիս, որ չնայած իրենց հավաստումներին, այնուամենայնիվ իրականում Ն. Յ. Դաշնակցութեունը դեմ էր նոր Հնչակյանների Հետ միութեանը : Ըստ այդ պայմանի, բանակցութեունները վարելու համար դաշնակցականները պահանջում են, որպեսզի իրենց նախապես հայտնվեն Հնչակյան պատգամավորների անունները : «Դրոշակի» խմբագրութեունը նկատի էր առնում այն հանգամանքը, որ «վերակազմյալների կողմից բանակցութեուններ տանելու համար կարող են ընտրվել այնպիսի անպայ-

<sup>1</sup> ԳԳ ՊԿ ՊԱ, Ապահ Պետրոսյանի ֆոնդ, 453, ցուցակ 1, գ. 53, ք. 6 :

<sup>2</sup> Հավելված «Դրոշակի», 15 նոյեմբերի, 1899 :

<sup>3</sup> Նույն տեղում :

<sup>4</sup> Նույն տեղում :

ման արատափորված անձնափորութիւններ, ինչպիսին են Սուրեն Սուրենյան, Աղասի կամ Ռչտունի»<sup>1</sup>։ Վերակազմյալների կենտրոնական վարչութեան անդամներին և գործիչներին անվտանգութուն հայտնելու, նրանց արատափորված անձնափորութիւններ հայտարարելու Հ. Յ. Դաշնակցութեան գործելակերպը անհնարին էր դարձնում միութեւնը։ Չնայած դրան, այնուամենայնիվ Հ. Յ. Դաշնակցութեան հետ միափորման անհրաժեշտութեւնն է ընդգծվում նաև 1897թ. մայիսին մի խումբ հնչակյանների հրապարակած թուուցիկում։ Այստեղ միափորումը դիտվում է որպես հետագա հաջող գործունեութեան միակ գրավականը<sup>2</sup>։

Դաշնակցութեան հետ համաձայնութեան կայացման կողմնակից էր նաև Ա. Արփիարյանը, որը քանիցս կարևորել է «գրոշակյաններուն հետ համաձայնութեան կայացումը», ընդգծելով, որ դա նազարբեկյան կենտրոնի հետ պառակտման պատճառներից մեկն էր<sup>3</sup>։

1897թ. սեպտեմբերի 11-ին ԱՄՆ-ի հնչակյան նահանգային վարչութեանն ուղղված նամակում Արփիարյանը գրում էր, որ միութեան խնդրի առթիվ վերակազմյալները տեսակցութեւն են ունեցել դաշնակցականներ Արմեն Գարոյի, Ռուստոյի /Ռոստոմ/, Վահաբի հետ<sup>4</sup>։

Սակայն բանակցութեւններն անարդյունք վերջացան։

Չնայած անհիմն մեղադրանքներին, այնուամենայնիվ, 1897թ. երբ Ճանկուլյանն Ա. Արփիարյանին առաջարկեց հանուն կուսակցութեւնների միութեան հրաժարական տալ, Արփիարյանն առանց հապաղելու տվեց իր հրաժարականը<sup>5</sup>։

1897թ. հունիսի 23-ին հնչակյան կուսակցութեան կենտրոնական վարչութեան անդամներին ուղղված նամակում Ա. Արփիարյանը գրում է. «Պարոն Լ. Մկրտչյան, Մ. Սվազյան, Մ. Տամատյան, Ս. Սուրենյան, այս դրութեամբ կուգամ հայտարարել ձեզի, որ առաջիկա հուլիս 31-ը պիտի կարենամ պաշտոնավարել, այդ թվականն ետքը զիս հրաժարեալ պետք է համարեք կեդրոնական վարչութեանն»<sup>6</sup>։ Վարչութեան անդամները ոչ միայն չեն ընդունում Արփիարյանի հրաժարականը, այլև հանդես են գալիս Դաշնակցութեան այդ որոշման դեմ։ 1898թ. Հոկտեմբերի 9-11-ը Ալեքսանդրիայում գումարվում է նազարբեկյան կամ Հին հնչակյան թեկին ընդդիմադիր հնչակյանների երկրորդ պատգամավորական ժողովը։ Այստեղ որոշվում է կուսակցութեւնը անվանել «վերակազմյալ հնչակյան»։ Համադրումարը որդեգրում է զուտ ազգային ծրագիր և որոշում հետամուտ լինել միայն «տաճկահայ դա-

<sup>1</sup> Հավելված «Դրոշակի», 15 նոյեմբերի, 1899.

<sup>2</sup> ՀՀ ՔԵԿ ՓԿՊԱ, ֆոնդ 4045, ցուցակ 1, գրք 35, ք. 2.

<sup>3</sup> ԳԱԹ, Ա. Արփիարյանի ֆոնդ, N71, ք. 1.

<sup>4</sup> Լույս տեղում, գ. N 67, ք. 17.

<sup>5</sup> Լույս տեղում, գ. N 114, ք. 26.

տին»<sup>1</sup>։ Ծրագրից հանվում են սոցիալիզմի ուսմունքի և քարոզչութ-  
յան մասին դրույթները, որովհետև ըստ վերակազմյալների «ընկերա-  
վարությունը կնկատվի ավելորդ ու վնասակար ճանկահայ դատի հա-  
մար, քանի որ Թուրքիոյ մեջ նվիրողական իմաստով ոչ կապիտալ և ոչ  
ալ պրոլետարիատ գոյություն ունին, այլ կային տաճիկը և հայը զեմ  
առ զեմ, մեկը տիրող, կոտորող ու թալանող, մյուսը ստրուկ, կոտոր-  
վող ու նահատակվող ։

Վերակազմյալներն ընտրում են նոր կենտրոնական վարչութ-  
յուն, ուր անդամների թիվը հինգից հասնում է յոթի։ Վարչության մեջ  
ընտրվում են Մ. Սվազյանը, Կարապետ Փափաղյանը, Ապահը, Լ.  
Մկրտչյանը, Ա. Արփիարյանը, Հովհ. Շահնազարը։ Ատենյապետ է  
ընտրվում Կ. Փափաղյանը, ատենադպիր՝ Ա. Արփիարյանը։ Հովհ.  
Շահնազարը ընտրվել էր հեռակա, սակայն նա հրաժարվում է և Ա.  
Արփիարյանի առաջարկությամբ նրա փոխարեն ընտրվում է Ալեքսան  
Արզույանը /ժածկանունները՝ Վահե և Զավեն/։ Հնչակյանների Կ.  
Պոլսի մասնաճյուղը իր ղեկավար Արզույանի հետ անցնում է վերա-  
կազմյալների կողմը։ Վերակազմյալ Հնչակյանները ստեղծեցին իրենց  
մասնաճյուղերը Միացյալ նահանգներում, Բուլղարիայում, Կիպրոս-  
տում, Կիլիկիայում։ Ամենուրեք նրանք կազմակերպում են դրամի  
հանգանակություն, գնում գնեք ու գինամթերք, ստեղծում գինված  
խմբեր և նախապատրաստվում համընդհանուր ապստամբության, որի  
կենտրոնը պիտի դառնար Կիլիկիան։ Ա. Արփիարյանի ջանքերով Լոն-  
դոնում լույս տեսան վերակազմյալների առաջին պարբերականները՝  
«Մարտ» թերթը 1897 և «Նոր կյանք» ամսագիրը՝ 1898թ.։ Խմբագիրն  
Արփիարյանն էր։ Այս պարբերականներում արտացոլված են արևմտա-  
հայերի ազատագրության վերաբերյալ Վերակազմյալ Հնչակյանների  
հայացքները։ «Մարտը» զրուծ էր, որ հայ ժողովուրդն իր ազատութ-  
յան հարցը կարող է լուծել միայն նախապատրաստված համազգային  
հեղափոխության միջոցով, իսկ առանձին փոքր խմբերով կատարված  
ձեռնարկումները միմիայն կարող են «մեծամեծ չարիքներ սլատառել  
ազգին» ։

Պարբերականը տալիս է գալիք հեղափոխության բնորոշումը,  
չեչ տեղով, որ հայ ազգի հեղափոխությունը ոչ թե սոցիալական այլ  
ազգային բնույթ ունի ։

«Մարտի» կարծիքով կուսակցության ծրագրից պետք է հանել  
այն ամենը, ինչը կարող է վնասել ազգի համախմբմանը։ Քարոզելով  
ազգային բոլոր ուժերի համախմբման գաղափարը, պարբերականը

<sup>1</sup> ՀՀ ՊԿ ՊԱ, Ապահ Պետրոսյանի ֆոնդ 453, ցուցակ 1, գործ 177, ք. 1:

<sup>2</sup> Ծիզմեչյան Մ., Մշվ. աշխ. էջ 67:

<sup>3</sup> ՀՀ ՊԿ ՊԱ, ֆոնդ 453, ցուցակ 1, գործ 70, ք. 31:

<sup>4</sup> Լույս տեղում, ք. 43:

<sup>5</sup> «Մարտ». Լոնդոն, 1897, N 6:

<sup>6</sup> Լույս տեղում, թիվ 19:

նկատի ուներ միայն արևմտահայությանը, իսկ արևելահայերի միջամտությունը համարում էր մնասակար, քանի որ յստ պարբերականի, նրանք մատ են պատկերացնում թուրքական իրականությունը: «Մարտը» դատապարտում էր «Ճնև.ցի կովկասահայերին»<sup>1</sup> /պետք է հասկանալ հնչակյան կենտրոնի անդամներին-Գ. Լ./, որոնք մատ ճանաչելով արևմտահայ կյանքը և Արևմտյան Հայաստանը, ամեն կերպ ձգտում էին պահպանել ազատագրական պայքարի ղեկավարություն իրավունքը:

Պարբերականը մեղադրում էր Ա. Նաղարբեկին և իր համախոհներին թուրքական բարբարոս իրականությունը պայմաններում սոցիալիստական քարոզչության համար, իրավացիորեն շեշտելով, որ անտեսվում էին կյանքի իրական պայմանները: Իսկ դա ի վերջո նպաստում էր ազգի պառակտմանը միայն<sup>2</sup>:

«Մարտը» գտնում էր, որ արևմտահայության ազատագրումը կապված է Եվրոպական երկրների օգնության հետ: Բայց միաժամանակ չպետք է հանդատանալ դրանով և հարկավոր է ծավալել ակտիվ ազգային գործունեություն: Պատմական փաստերով թերթը ցույց էր տալիս, որ Թուրքիայի տիրապետության տակ ընկած ժողովուրդներն իրենք են ձեռնարկել իրենց ազատապայքության գործը, իսկ Եվրոպան միայն վերջում է աջակցել: «Մարտը համոզված էր, որ ի վերջո Եվրոպական տերությունները համաձայնություն են դալու Թուրքիայի բաժանման հարցում»:

«Նոր կյանքում» Արվիարյանը ցույց էր տալիս, որ Օսմանյան կայսրության հպատակ ժողովուրդների այդ թվում և հայերի ճակատագիրը մեծ տերություններին չի մտահոգում, իսկ Հայկական հարցը սոսկ միջոց է, սրը տերություններն օգտագործում են Թուրքիայի վրա ճնշում գործադրելու և նրանցից օգուտներ քաղելու համար<sup>3</sup>: Եվրոպային չափից դուրս մտահանելը ինքնախաբեություն է, սակայն անտեսելը նույնպես անթույլատրելի է,- գրում էր «Նոր կյանքը», - այն պատճառով, որ Եվրոպան ունի տնտեսական, ռազմական և դիվանագիտական զորություն:

«Նոր կյանքը» գտնում էր, որ Հայ ազգի փրկությունը նախ և առաջ կախված է իրենից: Անհրաժեշտ է ազգի բոլոր ուժերի համախմբումը: Հոպեորականները չպետք է քարոզեն հնազանդություն, հարուստները պետք է նյութական աջակցություն ցույց տան ազատություն գործին, չպետք է լինեն դասակարգային տարրերություններ, չեղքներ ու անտարբերներ<sup>4</sup>:

<sup>1</sup> «Մարտ». Լոնդոն, 1899, N 16:

<sup>2</sup> Ե ու յ ն տեղում:

<sup>3</sup> «Նոր կյանք», Լոնդոն, 1898, թիվ 6:

<sup>4</sup> Ե ու յ ն տեղում:

<sup>5</sup> Ե ու յ ն տեղում, 1901, թիվ 48:

«Նոր կյանքի» էջերում Արփիար Արփիարյանը Հանդամանուրեն անդրադարձել է նաև Հայ ժողովրդի նկատմամբ Ռուսաստանի վարած քաղաքականությանը: Վերլուծելով ռուս-թուրքական հարաբերությունները, Արփիարյանը գտնում էր, որ եթե թուրքիայի կործանումը Ռուսաստանի արտաքին քաղաքականության անփոփոխ նպատակն է, ապա այդպես էլ Հայկական հարցի նկատմամբ: Քաղաքական իրադարձություններին համապատասխան այն փոփոխվում է, դառնալով մերթ՝ նպաստավոր, մերթ՝ աննպաստ:

Թե՛ «Մարտը» և թե՛ «Նոր կյանքը» խիստ քննադատում էին Ալեքսանդր III ցարի հետադիմական քաղաքականությունը, հատկապես Հայկական շարժումների նկատմամբ նրա բռնած թշնամական դիրքը:

Կյանքի վերջին տարիներին Ա. Արփիարյանն արտահայտել է այն միտքը, որ Հայոթյան ճակատագիրը սերտորեն կապված է Ռուսաստանի ու նրա վարած քաղաքականության հետ: Ըստ նրա, Հայոթյան շահերը պահանջում էին հզոր Ռուսաստանի գոյությունը, որովհետև նրա կարծիքով արտաքին քաղաքական ասպարեզում Ռուսաստանի ցանկացած պարտությունը ի վերջո ամրապնդում է Հայ ժողովրդի թրքական շղթաները:

Արփիարյանը խիստ թերահավատություն էր ցուցաբերում թուրքական շարժումը: Նա շատ շուտ հասկացավ, որ երիտթուրքերի հռչակած բարենորոգումների և առաջադիմության կարգախոսները Հայ ժողովրդին ոչ մի լավ բան չեն խոստանում: «Մարտում» նա գրում էր. «Երիտասարդ թուրքերը թուրքիայի քրիստոնյաներուն ավելի թշնամի են, քան թե Հին թուրքերը»: Նա Հայ ազգային կուսակցություններին կոչ էր անում իրատես լինել, չոգևորվել երիտթուրքերի կարգախոսներով ու վերացական գաղափարների հետևից ընկնելով ազգի իրական շահերը չվնասել: Սակայն վերակազմյալ Հնչակյանները հասկանում էին, որ իրենց ուժերը խիստ անբավարար են օսմանյան կայսրության դեմ պայքարելու համար, հետևաբար պայքարի միջոցներից և նրա հաջողության գրավականներից մեկը համարում էին դաշինքը օսմանյան կայսրության մյուս Հպատակ ժողովուրդների հետ: Ապահ Պետրոսյանը իր կուսակցական գործընկերներից մեկին գրած նամակում ցույց էր տալիս, որ թուրքերի մտահոգությունը Հայերն էին: Ինչ վերաբերվում է մյուս ժողովուրդներին՝ քրդեր, արաբներ, ասորիներ և այլն, ապա ըստ հեղինակի, նրանցից թուրքերը չունեն այդ անհանդաժմությունը: Բացի այդ, այնպիսի ժողովուրդների, ինչպիսին են քրդերը, չերքեզները, Ապահը յուրատեսակ գործիք էր համարում թուրքերի ձեռքին՝ «պահեստային ուժ», որ թուրքերը հմտորեն օգտագործում էին Հայերի դեմ իրենց համար հարմար պահերին: Ո՞րն է ել-

<sup>1</sup> «Մարտ», 1897, թիվ 7:

<sup>2</sup> «Նոր կյանք», 1900, թիվ 14:

քը: Ապահը գրում էր. «Հետևաբար մեր միակ նպատակը պետք է ըլլա կարելի եղածին չափ չեզոքացնել աստուք, աստուց մեջ ատուլություն առաջ բերել, որը բնական հետևանքն է իրենց վրա տիրած խստությանց: Խնդիրը մինչև այդ աստիճանին մեջ ձգելն է. ատկե վերջը ընդհանուր Տաճկաստանը շարժումներու թատերարեմ մը պիտի լինի. ատկե վերջն է, որ մեր երազած համերաշխության կապը պիտի հաստատովի այն արյունախում ցեղերուն հետ և ձեռք-ձեռքի տված մեր ապագա ճակատագրին աշխատինք որով պիտի փութացնինք նաև ընդհանուր Տաճկաստանի բարեկարգության խնդիրը»: Իհարկե, այս ուղղությամբ հայ ազգային կուսակցությունները զգալի աշխատանք կատարեցին, ցավոք, այն չտվեց սպասված արդյունքը:

Միության կամ համերաշխ գործակցության խնդիրը վերակազմյալ Հնչակյան կուսակցության և Հայ Յեղափոխական Դաշնակցության միջև ժամանակին լուսաբանվել է «Դրոշակ» թերթում: «Դրոշակի» 1899թ. նոյեմբերի 15-ի Հավելվածը բաղմամբիվ «փաստերով» փորձում է ապացուցել, որ վերակազմյալ գործիչների ղեկավարները բարոյական ցածր նկարագրի տեր անձնավորություններ են և բաղմամբիվ խաբուսությունների հեղինակներ: Ինչ փաստերի վրա են հենվում դաշնակցականները: Դա Հնչակյան երկու թևերին հին Հնչակյաններին ու վերակազմյալներին ընդդիմադիր Հնչակյան խմբերի թուլացիկներն են, որոնք կթե չժխտենք, այնուհանդերձ չենք կարող միայն դրանց վրա հենվելով անարդանքի սյունին գամել վերոհիշյալ գործիչներին, որոնք զգալի ավանդ ունեն ազատագրական պայքարում: Եթե «Դրոշակը» թերևս բավական հիմնավոր կերպով մեղադրում է Հնչակյան մամուլին դաշնակցությանը անհիմն քննադատելու և վարկաբեկելու համար, ապա պետք է նշել, որ «Դրոշակն» էլ չէր զլանում իր հերթին նույնը անել Հնչակյանների նկատմամբ: Դրանից հետո «Դրոշակի» խմբագրությունը միության վերաբերյալ վերակազմյալների կենտրոնական վարչության պաշտոնական հայտարարությանը պատասխանում է, որ խմբագրությունը տեղյակ լինելով Դաշնակցության ընդհանուր հայեցակետին, չի պատասխանելու վերակազմյալ կենտրոնի դիմումին, քանի որ այդ կենտրոնի կազմը իրենց հայտնի է և իրենք դեմ են այդ կազմին դեռ 1896 թվականից: Դրանից հետո վերակազմյալներին առաջարկվում էր, որ միության իրագործման համար նրանք պետք է «Հարկավոր ճանապարհը հարթեն», այսինքն կուսակցությունից հեռացվեն վերոհիշյալ գործիչները: Դաշնակցության նման պահանջը փաստորեն անհնարին էր դարձնում միությունը: Ծիշտ է, 1901թ. հունվարին Արփիարյանը դուրս եկավ կուսակցությունից, բայց դա էական ազդեցություն չունեցավ միության գործընթացին:

<sup>1</sup> ՊԿՊԱ, ֆ. 453, ց. 1, գ. 25, ք. 3:

<sup>2</sup> Հավելված «Դրոշակի», 15 նոյեմբերի, 1899:

<sup>3</sup> Նույն տեղում, սալի, 1900:

ցի վրա: 1901թ. օգոստոսին իր բարեկամ Լևոն Բաշալյանին ուղղված նամակում Ա. Արփիարյանը գրում է. «Սիրելի Լևոն ահա 8 ամիս է հրաժարեցա, սակայն միություն եղա՞մ»: Ահա այսպիսի վախճան ունեցան ՀԹ Դ և Վերակազմյալ Հնչակյան կուսակցության միջև սկսված բանակցությունները միության խնդրի շուրջ:

1899 թվականից սկսեց լույս տեսնել Վերակազմյանների «Ձայն հայրենյաց» թերթը: Սկզբում այն լույս էր տեսնում Նյու-Յորքում, այնուհետև Ուստրում, 1900-1908թ.թ. Բոստոնում, 1908-1911թ.թ.՝ Կ. Պոլսում:

Նրա խմբագիր-տնօրեն էր Գարեգին Չիթչյանը, խմբագիրները՝ Սուրեն Պարթևյանը, Լևոն Լարենցը /Բրիգճյան/: «Ձայն հայրենյաց»-ը արևմտահայերի ազատագրութունը կապում էր ապստամբության հետ, գտնելով, որ դրա համար պետք է նախօրոք պատրաստվել:

Թերթը համախմբության կոչով դիմում էր հայ հասարակության բոլոր խավերին և երազում, որ հայ եկեղեցականները ժողովրդի մեջ հեղափոխություն քարոզեն, դաշնակցեն հայ ժողովրդի հետ և «Խրիմյան Հայրիկը կանգներ հայ հեղափոխության գլուխ»:

Պարբերականը գտնում էր, որ արևելահայերը պետք է մասնակցեն արևմտահայ ազատագրական պայքարին և կարող են վճռական դեր կատարել այդ պայքարում: Սակայն անդրադառնալով Կովկասից օգնության հասնող ուժերին, թերթը նշում էր, որ դրանք կարող են օգտակար լինել միայն այն դեպքում, երբ Արևմտյան Հայաստանում սկսվի ընդհանուր ապստամբությունը: «Ձայն հայրենյացը» չէր գնում Արևմտյան Հայաստանի Թուրքիայից անջատվելու խնդիրը և այդ հարցի լուծումը տեսնում էր Եվրոպական պետությունների հսկողության տակ Արևմտյան Հայաստանում ինքնավար իշխանության հաստատման մեջ:

1902թ. փետրվարին Փարիզում իշխան Սաբահէդդինի նախաձեռնությամբ գումարվեց «Օսմանյան ազատականների համաժողով»: Համաժողովին հրավիրված հայ պատվիրակները երեք դաշնակցական և երեք վերակազմյալ, հանդես եկան համերաշխ և միասնական տեսակետով: Նրանք ընդունեցին Թուրքիայում սահմանադրական կարգերի հաստատման անհրաժեշտությունը: Սակայն համաժողովի ընթացքում ակնհայտ դարձավ, որ երիտթուրքերի նպատակը միայն Թուրքիայի ընդլիմադիր ուժերի օգնությամբ 1876թ. Օսմանյան սահմանադրության վերահաստատումն է, իսկ ինչ վերաբերում է հայկական բարենորոգումների խնդրին, ապա նրանք չէին ուզում ընդունել ո՛չ Բեռլինի կոնգրեսի 61-րդ հոդվածը, ո՛չ եվրոպական միջամտությունը: Այդ

<sup>1</sup> ԳԱԹ, Ա. Արփիարյանի ֆոնդ, գ. 51, ք. 7:

<sup>2</sup> «Ձայն հայրենյաց», Բոստոն, 1902, թիվ 119:

<sup>3</sup> Նույն տեղում:

<sup>4</sup> Նույն տեղում, 1905, թիվ 218:

<sup>5</sup> Նույն տեղում, թիվ 369:

պատճառով Հայ պատվիրակները ընդհարվեցին երիտթուրքական դեկավարներին, մասնավորապես Ահմեդ Ռեզայի Հետ և Հեռացան Համաժողովից:

Դարասկզբին Հնչակյան երկու կուսակցությունների միջև շարժում սկսվեց միավորվելու համար: Միության բանակցությունները սկսվեցին Լոնդոնում 1902թ. մարտին: Մայիսի 17-ին Բոստոնում տեղի ունեցավ միության հանդիսությունը: Կուսակցությունների միության պայմանները հաստատվում են Հնչակյան կուսակցության III-րդ պատգամավորական ժողովում /Լոնդոն 1901թ. սեպտեմբեր–1902թ. մարտ/: Այդ պայմաններն էին.

-Հնչակյան կուսակցության գերագույն ղեկավար մարմինը կուսակցության ընդհանուր պատգամավորական ժողովն է, որից միայն կախում ունեն ծրագրային, վարչական և այլ փոփոխությունները:

«Հնչակ»-ը դառնում է կուսակցության պաշտոնական օրգան:

- Եվ իբրև մարտական օրգան, զբաղվելու է զուտ Հայ Հեղափոխական և ապստամբական Հարցերով:

-Կուսակցության ընդհանուր գործերի ղեկավարությունը պիտի կատարեն Միացյալ կեդրոնը բաղկացած 6 հոգուց /3-ական մարդ երկու կողմից/:

«Նոր կյանքը» դադարում է պաշտոնական օրգան լինելուց և իբրև սեփականություն Հնչակյան կուսակցություն, մնում է որպես զուտ գրական հանդես:

-Եթե միևնույն քաղաքում կան Հին և նոր Հնչակյան մասնաճյուղեր, ապա միանալով ընտրում են իրենց միակ վարչությունը, որի տրամադրության տակ է դրվում ողջ գույքը:

«Հնչակը» Հնչակյան կուսակցության օրինական սեփականությունն է:

-Սոցալիզմի գաղափարը, որպես հասարակական նպատակ, հարկադրված է մնալ իդեալական, գաղափարային վիճակի մեջ իր առաջնային տեղը զիջելով ուրիշ խնդրի.«Որովհետև ազգային ազատությունը օտարի լծից ներկայանում է այժմյան Հայկական պայմանների մեջ առաջին և զլխավոր անհրաժեշտությունը, ինչպես ընդհանուր Հայության, նույնպես և բոլոր Հայ բանվորների համար, որոնք նրա բաղկացուցիչ մասն են կազմում, ուստի և Հին Հնչակյան և նրան հետևող Հայ բանվորների բուն սոցալիստական բոլոր ձգտումները հարկադրված են մնալ իդեալական, գաղափարային վիճակի մեջ»:<sup>3</sup>

-Միաժամանակ Հայտարարվեց, որ կուսակցության երկու հատվածները պահպանում են իրենց ինքնուրույն ծրագրերը առանց միմ-

<sup>1</sup> Երզնկյան Ա., Եզվ. աշխ., էջ 135:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 75:

<sup>3</sup> ՀՀ ԳԺԿ ՊԱ, Ֆոնդ 4045, ցուցակ 1, գրք 40, ք. 1-3:

յանց խանգարելու, մինչև առաջիկա պատգամավորական ժողովի գումարումը: Եթե որևէ մասնաճյուղ ցանկանում է գործել այս կամ այն ծրագրին համեմատ, ապա նա ազատ է դրա մեջ: Միուլթյունը իրագործվելուց հետո միացյալ կուսակցուլթյունը կրելու է «Հնչակյան կուսակցուլթյուն» միակ անունը:

1902թ. Հունիսի 4-ին Հայտարարվում է Հնչակյան կուսակցուլթյան երկու հատվածների միավորման մասին. «Ներկա մասի 3-ին երկու-երեք ամիսներից ի վեր սպասված երկու հատվածների կենտրոնական մարմինների ձուլումը կատարվեցավ»,—Հայտնում էր շրջաբերականը:

Հնչակյան միուլթյունը մեծ ոգևորուլթյուն առաջացրեց Հայ Հասարակուլթյան բոլոր խավերի մեջ: Ցավոք, միուլթյունից հետո անգամ կուսակցական ներքին տարաձայնուլթյունները չվերացան, ընդհակառակը, շատ չանցած նոր թափով սրվեցին՝ վերածվելով արյունահեղ բախումների եւ փոխադարձ սպանուլթյունների: Բանը նրանումն է, որ միուլթյունը կայացավ թղթի վրա, իսկ գործնականում այն դեռ շատ հեռու էր իրականուլթյունից: Հին Հնչակյանների խոստովանուլթյամբ միուլթյան հռչակուլթյունից հետո էլ միացյալ կուսակցուլթյան ձախակողմյան տարրերը չէին հրաժարվել սոցիալիզմի քարոզուլթյունից: Միացյալ կենտրոնի հին Հնչակյան երեք ղեկավարները՝ Համբարձում Արզումանյանը /հետո նրան փոխարինեց Սապահ Գյուլյանը/, Սաղաթել Գևորգյանը, Սիմոն Հովյանցը, «որոնք համոզված մարքսիստներ էին, կչարունակին «Հնչակի» սյունակներն սոցիալ-դեմոկրատական փրոփոկանտը՝ ցնցելով հետաքշական, կղերական խավերը և կուսակցուլթյան պահպանողական-ազգային շարքերը վերակազմյալները: Սոցիալիստական թեկն ուժ կուտային ուսասՀայ մտավորականները»: Բացի սրանից կար եւ մի լուրջ հանգամանք. Միուլթյան հռչակումից հետո էլ հին Հնչակյան թեւր ձգտում էր վերականգնել Նազարբեկի ղեկավար դիրքը միացյալ կուսակցուլթյան մեջ՝ դրանով խախտելով իրենց իսկ կողմից ստորագրված միուլթյան հռչակագիրը, որի պայմաններից մեկը հետևյալն էր Ալեոտիս Նազարբեկը որևէ ուղղակի կամ անուղղակի հարաբերուլթյուն, կայ չպետք է ունենա Հնչակյան կուսակցուլթյան հետ եւ պետք է հրաժարվի «Հնչակի» սեփականուլթյունից փոխանցելով այն նորընտիր կենտրոնական վարչուլթյանը: Այս հարցը քննարկվել էր և ընդունվել /հին/ Հնչակյանների պատգամավորական ժողովում 1902թ. Հունվարի 10-ին: Հունվարի 19-ին Նազարբեկը Փարիզից նամակ էր դրել և հրաժարվել «Հնչակի» սեփականուլթյան իր իրավունքից: 1902թ. Հուլիսի 23-ին հին Հնչակյանները որոշում են Նազարբեկին հրավիրել իբրև «Հնչակի» խմբագիր, սակայն

<sup>1</sup> ԳՅ ԳԵԿՓԿՊԱ, Ֆոնդ 4045, ցուցակ 1, գործ 40, ք. 1-3:

<sup>2</sup> Գիզմէյան Մ., Գշվ. աշխ., էջ 283:

<sup>3</sup> Լույն տեղում, էջ 73:

<sup>4</sup> Լույն տեղում, էջ 74:

մերժում են ստանում կենտրոնի վերակազմյալ անդամների կողմից /Արդուլյան, Վահրամ Գրիգորյան, Վահան Շահրիման/: Նազարբեկի շուրջը բարձրացած ազմուկը չէր կարող արձագանք չստանալ հայ հասարակութայն լայն խավերի շրջանում: «Մշակի» խմբագիր Համբարձում Առաքելյանը հանդես եկավ հնչակյան միութայն օգտին և քննադատութայն ենթարկեց Նազարբեկին: Իսկ վերջինիս կողմնակիցները մեծ ազմուկ բարձրացրին Առաքելյանի գրքույկի դեմ և պահանջեցին Նազարբեկի վերադարձը: Կուսակցութայն ձախ թեք պահանջում է, որ Կենտրոնը հոգա Նազարբեկի պատասխան գրքույկի /«Չարախոս թղուկ»/ նյութական ծախսերը, «որը նախ լուսարանած կրլլար հանրային կարծիքը և երկրորդ փոքրիկ հասույթ մըն ալ տապհոմած կրլլար անոր հեղինակին»: Սակայն վերակազմյալները դարձյալ մերժում են: Կուսակցութայն երկու հատմամների միջև հակամարտութայնը գնալով սասականում է: Վերակազմյալների դեկավար Կ. Փափազյանը անհաշտ զիրք է ընդունում բարձրացված հարցերի նկատմամբ: Մյուս կողմից հակառակորդ հատմածը հին հնչակյանները իրենց իսկ բնորոշմամբ «Սաղունիի, Սասյահ Գյուլյանի և ուրիշներու միջոցով հակահարմած կու տար և կջանար կուսակցութայնը դեել իր նախկին զիրքին վրա»:

1903թ. հունվարի 1-ին «Հնչակուս» լույս է տեսնում հետևյալ պաշտոնական հայտարարութայնը. «Ամեն կարգի սերագործութայններին և հեղափոխական գործին դեմ իրենց լարած սոսկալի դավադրութայն պատճառով, կուսակցութայն շարքերից բնդմիշտ արտաքսված են նախկին վերակազմյալ հնչակյան հերձմամին պատկանող Ալեքսան Արդուլյան, վահան Շահրիման, Վահրամ Գրիգորյան, Կարապետ Փափազյան, Պատվելի Գարեգին Չիթճյան, Ղևոնդ Վրդ. Մարդուկեսյան, Սուրեն Սուրենյան /Ղաղարոս Կողոզյան/, Չարեհ Գոչունյան, Մարտիրոս Տեր-Հովհաննիսյան ինչպես նաև իրենց ձևաքին գործիք դարձած խմբակը»: Հայտարարութայն մեջ ասվում է, որ կուսակցութայնից արտաքսվում են նաև հնչակյաններ Հմայակ Խուչպուլյանը, Մմբատ Ոստիկյանը /կուուել/, Հրաչյան /Գրիգոր Ղարիպյանը/ «առաջինների դավադրութայնը մասնակցելու հանցանքով»: Նույն հայտարարութայն մեջ նշված էր նաև, որ հին հնչակյանները դեռ 1902թ. դեկտեմբերի 5-ին ներքին շրջարեբականով հայտարարել էին Արդուլյանի, Վ. Շահրիմանի և Վահրամ Գրիգորյանի կուսակցութայն կենտրոնական վարչութայնից արտաքսման և վերոհիշյալ անձանց կողմից հնչակյան մասնաճյուղերի հետ որևէ հարաբերութայն ունենալու, նաև կուսակցական որևէ պաշտոն վարելու իրավունքից զրկված լինելու մասին: «Հնչակի» նույն համարում բնդարձակ խմբագրականով

<sup>1</sup> «Հնչակ», 1903, թիվ 1:

<sup>2</sup> Նույն տեղում:

<sup>3</sup> Նույն տեղում:

<sup>4</sup> Նույն տեղում:

Հին հնչակյանները /Նաղարբեկյանները/ հայտարարեցին «սոցիալիստական ուղղութիւնը անխաթար պահելու իրենց վճռականութիւնը», դրանով ուժգին հարված հասցնելով միութեանը: ԱՄՆ-ի վերակազմյալները Գարեգին Չիթչյանին որպէս լիազոր-ներկայացուցիչ ուղարկում են Լոնդոն, ամրապնդելու համար միութեան կապը հնչակյան երկու թեւերի միջև և թույլ չտալու հետագա պառակտումը: Լոնդոնում Չիթչյանի նկատմամբ խիստ թշնամական դիրք են դրավում Հին հնչակյանները: Անդլիայից Չիթչյանն անցնում է Բուլղարիա, հետո Ռուսաստան, հնչակյան մասնաճյուղերում կապերն ամրապնդելու համար: Միևնույն առաքելութեամբ վերակազմյալները Կովկաս էին ուղարկել Մխո-Շահենին /Սեֆերյան/, արևմտահայ հայրուկային պայքարի նշանավոր հերոսներից մեկին: Սակայն 1903թ. ապրիլին Հին հնչակյանների կողմից Փոթիում սպանվում է Մխո-Շահենը, իսկ հունիսին Օդեսայում Գ. Չիթչյանը<sup>3</sup>: Վերջինս վերակազմյալների «Ձայն հայրենյաց» պարբերականի խմբագիր-տնօրենն էր, կուսակցական նշանավոր գործիչ, հռետոր: Վերակազմյալ երկու գործիչների սպանութիւնը վերջին հարվածն էր հնչակյան միութեանը: Իրենց հերթին պատասխան վրեժխնդրութեան դիմեցին վերակազմյալները: 1903թ. հոկտեմբերին Շվեցարիայում մահափորձ կատարվեց Նաղարբեկի դեմ: Հոկտեմբերին Բոստոնում ծանր վիրավորվեց Սապահ-Գյուլյանը: Հոկտեմբերին Լոնդոնում սպանվեց Սազունին, նոյեմբերին Արամ Գրիգորյանը /Համր/ ու Տիգրան Իզմիրլյանը /Որսորդ<sup>4</sup>: Եղբայրասպան կռիվները ծանր տալիվորութիւն են գործում ինչպէս ողջ Հայ հասարակութեան, այնպէս էլ եվրոպական Հանրային կարծիքի վրա: Անդլիական մամուլը բողոքի ալիք բարձրացրեց ընդդեմ մայրաքաղաքում կատարված սպանութիւնների: Այս կռիվների ողջ պատասխանատուութիւնը Հին հնչակյանները դնում էին վերակազմյալների վրա, մեղադրելով նրանց այն բանում, որ իրենց գործիչներին՝ Մխո-Շահենին և Գ. Չիթչյանին ուղարկեցին Կովկաս՝ քայքայելու համար հնչակյան ճակատը. «Մխո Շահեն և մանավանդ Չիթճյան, իրենց հախուռն, կրքոտ և մանավանդ մոլեռանդ կեցվածքով զրգուցին կիրքերը և ծայր տվեցին սպանութիւններու այս ցավառիթ շարքին»<sup>5</sup>: Անշուտ, կատարվածի մեջ մեղքի իրենց բաժինն ունենին վերակազմյալները, որոնք չկարողացան ցուցաբերել հարկավոր համբերատարութիւն և շրջահայացութիւն, և զննցին առճակատման հեղելով իրենց երեկվա կուսակիցների արյունը: Սակայն ակնհայտ է, որ հնչակյան միութեան գլխավոր պառակտիչները դարձան Հին հնչակյանները, որոնք նույնիսկ միութեան հռչակումից հետո էլ չհրաժարվեցին սոցիալիզմի քա-

<sup>1</sup> «Հնչակ», 1903, թիվ 1:

<sup>2</sup> Երզնէյան Մ., նշվ. աշխ., էջ 87:

<sup>3</sup> Լույս տեղում, էջ 89-90:

<sup>4</sup> Պատմութիւն Ա. Դ. Գ. Կ., հ. Ա., էջ 288:

<sup>5</sup> Լույս տեղում, էջ 289:

րողչու թյունից, դրանով խախտելով իրենց իսկ համազուգարում բն-  
դունած միութեան պայմանները:

1904թ. Հոկտեմբերին վերակազմյալ Հնչակյան կուսակցութեան Ամերիկայի նահանգային վարչութեանը Բոստոնում հրատարակուած է «Արմենիա» անդլերեն ամսաթերթը: Պարբերականի խմբագրական մարմնի անդամներն էին Սարգիս Մայեմեղյանը, Սուրեն Պարթևյանը, Վահրամ Գրիգորյանը, Կարապետ Փափազյանը, Արշակ Մահտեսյանը: Թերթի նպատակն էր ամերիկյան հասարակութեանը իրազեկ պարձնել հայկական հարցին, բնղայնել հայասերների շրջանակը՝ հատկապէս ազդեցիկ խավերի շրջանում և օգտագործել Ամերիկայի հանրային կարծիքը ի նպաստ հայկական հարցի:

1903-ից 1907թթ. Ալեքսանդրիայում հրատարակուած էր «Ա-  
զատ բեմ» շաբաթաթերթը: Նրա տնօրէնը /Ջարեհ Գոչյան/ և խմբա-  
գիրներէից մեկը /Լեւոն Լարենց/ վերակազմյալ Հնչակյան կուսակցութե-  
ան անդամ էին: Պարբերականը խմբագրել է նաև Նրվանդ Օտյանը:

«Ազատ բեմը» լուսարանում էր Եգիպտոսի Հայ վարդաթի հոգ-  
սերը, խնդիրները, կրթական, մշակութային ու բարեկործական մար-  
մինների գործունեութեանը: «Կացութեանը Հայաստանին մեջ» խորա-  
գիրը կրող հաղորդումներում արծարծուած էր արեւմտահայութեան փի-  
ճակը:

Անդրադառնալով օսմանյան տիրապետութեանից Հայ ժողովր-  
դի ազատագրութեան և դրանում եկրոպական ղիվանագիտութեան դե-  
րի հարցին, պարբերականը թեև այն իրավացիորեն որակում է շահա-  
մուլ, փոփոխական ու խաբուսիկ, սակայն մյուս կողմից չի անտեսում  
նրա դերը, բնղունելով, որ առանց նրա միջամտութեան անհնար կլինի  
հայութեան ազատագրութեանը:

«Ազատ բեմը» գտնում է, որ իր ազատութեանը Հայ ժողովուր-  
դը պետք է կապի լրջորեն նախապատրաստուած համընդհանուր ապս-  
տամբութեան հետ, որը կստիպի Եվրոպային միջամտելու և ավարտե-  
լու համընդհանուր ղեկման վերջնական տապալումը:

Պարբերականը համոզուած է, որ ներկա պայմաններում հա-  
յութեան կրած սարսափելի կորուստներից հետո որևէ մասնակի շար-  
ժում կամ ցուլց ինքնապաշտպանութեան միջոցներից զուրկ Հայ ժո-  
ղովրդի նկատմամբ հափստարկող է «ոճրագործութեան»:

«Ազատ բեմը» բարձրացնում է Հայ ունեւոր խավերի կողմից  
ազատագրական շարժմանն ակտիվորեն աջակցելու խնդիրը, խորապէս  
համոզուած լինելով այն ճշմարտութեան մեջ, որ «ճղնամամային պա-  
հերին ազգին սատարելու փառքն անհամեմատելի է անձնական, սին  
փառ ստիրութեան հետ»:

<sup>1</sup> Երզնէյան, Եշվ աշխ., էջ 116:

<sup>2</sup> «Ազատ բեմ», 1904, 19 հու Միսի:

<sup>3</sup> Նույն տեղում, 16 հու Միսի:

<sup>4</sup> Նույն տեղում, 1 սեպտեմբերի:

Անդրադառնալով այդ ժամանակ ընթացող ուսու-ճապրոնական պատերազմին, պարբերականը Ռուսաստանի պարտությունը յուրատեսակ պատիժ է համարում հայությանը հասցված վնասների դիմաց: «Ազատ բեմը» գտնում էր, որ բռնապետական Ռուսաստանի պարտությունը կարագացնի Ռոմանովների դինաստիայի անկումը և երկրի ազատականացումը:

Պարբերականը համոզված է, որ դեմոկրատական ազատական Ռուսիան այլևս չի աջակցի Թուրքիային, որի արդյունքում «ավելի շոշափելի կգառնա ազատական պետությունների դերը Արևելյան Հարցում»:

Հնչակյան միության ձախողումից հետո երկար չտևեց նաև վերակազմյալների ներքին միասնությունը: Նրանց մի մասը հակված էր դիմելու հայ հարուստներից բռնի ճանապարհով դրամ հավաքելու միջոցին: Այս հարցում հատկապես ակտիվ էր Ալեքսան Արզույանը: Վերակազմյալների մյուս մասը դեմ էր դրան: Վերակազմյալների միջև շարունակվող տարաձայնությունների ժամանակ 1906թ. սկզբին Կ. Պոլսում սպանվեց մեծահարուստ ազգային բարերար Աբիկ Ունճյանը, իսկ 1907թ. հուլիսին Նյու-Յորքում գորգի վաճառական Հովհաննես Թավչանճյանը, որոնք հրաժարվել էին սպանալիքով դրամ տալ կուսակցությանը: Այս սպանությունները բողոքի ալիք են բարձրացնում հայության շրջանում: Կուսակցության ներսում սկսվում են երկպառակությունները: Կուսակցության միասնության պահպանման համար 1906թ. հուլիսին Փիչբուրգ քաղաքում տեղի է ունենում վերակազմյալների ԱՄՆ-ի նահանգային մասնաճյուղերի պատգամավորական ժողովը: Սակայն այն չկարողացավ կանխել կուսակցության մասնատումը: Ֆիչբուրգից հետո վերակազմյալների մասնաճյուղերի մի մասը ինքնալուծարվում է: Մնացած մասնաճյուղերը /թվով մոտ 20-ը/ ուխտում են հավատարիմ մնալ կուսակցությանը և կրկնակի զոհողությամբ ու գործունեությամբ Ամերիկահայության ուժերը դործածել ազգային դատը հետապնդելու համար: Որոշվում է նաև նոր թերթ հրատարակել: 1907թ. ապրիլի 20-ին Բոստոնում լույս է տեսնում վերակազմյալների «Ազգ» շաբաթաթերթը, Ս. Պարթևեյանի խմբագրությամբ:

«Ազգը» դատապարտում է Թավչանճյանին սպանողներին և հայտարարում, որ մարդասպան խմբակը ոչ մի առընչություն չունի վերակազմյալ հնչակյան կուսակցության հետ և ընդամենը «մի քանի գեղծարար ու արտաքսված խաչափողերու դրամաշորթական քլիք մըն է»:

<sup>1</sup> «Ազատ բեմ», Ալեքանդրիա, 1905, 18 մարտի:

<sup>2</sup> «Ազգ», Բոստոն, 1907, 20 ապրիլ:

<sup>3</sup> Նույն տեղում, սեպտեմբերի 7:

Պարբերականը ընդգծում էր, որ վերակազմյալ Հնչակյան կուսակցությունը խիստ դատապարտում է Հայ հեղափոխությունն անուսկիվ բռնի դրամ պահանջելու և դրամի համար մարդ սպանելու սկզբունքը»:

Ինչպես և վերակազմյալների մյուս պարբերականները, «Ազգը» նույնպես «Հայ հեղափոխություն» ասելով հասկանում էր միայն «տաճկահայ դատը և անոր լուծումին համար մղված կռիվը»:

«Տաճկահայ դատի» լուծման ձևը «Ազգը» համարում էր մայրիսյան բարենորոգումների ծրագրի իրականացումը: Սակայն դա չի նշանակում, թե Ամերիկայի վերակազմյալները դեմ էին անկախ Հայաստանի ստեղծմանը, ուղղակի տվյալ պատմական պահին նրանք ավելի իրական էին համարում ինքնավարություն պահանջը:

«Ազգը» մեծ նշանակություն էր տալիս գինված ապստամբությանը և մեծ տերությունների միջամտությանը, առանց որի անհնարին էր համարում հաղթանակը: Նա մերժում էր սոցիալիզմը, չտեսնելով «որևէ կապ Հայ դատի և զայն շրջապատող ներկա իրականության հետ»:<sup>1</sup> Պարբերականն ընդգծում էր այն հանգամանքը, որ սոցիալիզմը խառնելով արևմտահայ դատին նրան մեծ վնաս կհասցնի, քանի որ արևմտահայ իրականության մեջ սոցիալիստական գործունեության համար տակավին հող չկա:

1907թ. Դաշնակցություն կուսակցության կողմից հրավեր ուղարկվեց վերակազմյալ Հնչակյան կուսակցության կենտրոնական վարչությունը խորհրդակցելու և միասնական տեսակետով հանդես գալու Թուրքիայի ընդդիմադիր կուսակցությունների երկրորդ համագումարում, որը տեղի ունեցավ դեկտեմբերին Փարիզում: Սակայն վերակազմյալները հրաժարվեցին մասնակցել համաժողովին՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ հայկական հարցում երիտթուրքերի տեսակետը չէր փոխվել:

1907թ. Հին Հնչակյանների և վերակազմյալների շրջանում շարժում է սկսվում համագործակցելու համար: Այս նպատակով Եգիպտոսում Հին Հնչակյանների հետ բանակցություններ էր վարում Մ. Տամասյանը: Այդ բանակցություններն ավարտվում են հաջողությամբ: 1908թ. հունվարի 18-ի «Ազգի» համարում հրապարակվում է հետևյալ պաշտոնական հայտարարությունը. «Ներկայիս պաշտոնապես կհայտարարենք. Հայ հասարակության, թե Հնչակյան և վերակազմյալ Հնչակյան կուսակցության միջև, 1907 նոյեմբերի 24-են, համերաշխական դաշինք կնքված է կարևոր և էական խնդիրներու

<sup>1</sup> «Ազգ», 1907, սեպտեմբերի 7:

<sup>2</sup> Նույն տեղում, 1907, 7 հուլիսի:

<sup>3</sup> Նույն տեղում, 1908, 25 մայիսի:

<sup>4</sup> Նույն տեղում, 1908, 27 հուլիսի:

<sup>5</sup> Նույն տեղում:

<sup>6</sup> Ծիզմեյան Ս., Ազգ. աշխ., էջ 132

մասին, տաճկահայ ազատագրութեան գործին մեջ միացյալ ուժերով գործելու համար»։ Հայտարարութեան տակ ստորագրել էին Հնչակյան կուսակցութեան կենտրոնական վարչութիւնը և վերակազմյալ Հնչակյան կուսակցութեան կենտրոնական հանձնախումբը։

1908թ. սկզբին «Ազգ» թերթի շուրջը համախմբված վերակազմյալները Եգիպտոսի իրենց մասնաճյուղին լիազորում են բանակցութիւններին մեջ մտնել Արմենական և Միութենական կազմակերպութիւններին հետ Միութիւն կազմելու համար։ Բանակցութիւններին վերակազմյալներից մասնակցում էին Մ. Տամատյանը, Վ. Թեքեյանը, Ս. Պարթեւյանը, Շ. Հովիվյանը, Կ. Գրիգորյանը, արմենականները՝ Ա. Եկարյանը, Գր. Պետրիկյանը, Միք. Նաթանյանը։ Բանակցութիւնների արդուներում կազմավորվում է «Միացյալ Հայ Հեղափոխական կազմակերպութիւնը», որը շուտով կոչվում է «Հայ սահմանադրական Ռամկավար կուսակցութիւն»։ Այն հռչակվում է 1908թ. հոկտեմբերին Վահան Մալեգյանի տանը գումարոված համագումարի ժամանակ։

1908թ. Օսմանյան սահմանադրութեան հռչակումից հետո Հնչակյաններն ի դեմս Սապահ-Գյուլյանի, վերակազմյալներին առաջարկեցին ձուլվել իրենց կուսակցութեան մեջ, սակայն մերժում ստացան։ Վերակազմյալները զգուշութեամբ էին մոտենում երիտթուրքական հեղաշրջմանը և սահմանադրութեան հռչակմանը։ Շարժման եռուղեքնի օրերին «Ազգը» գրում էր. «Այս բոլորից չէ կարելի եզրակացնել, թե լուրջ հեղափոխութիւնն է բռնկվում Թուրքիայում, թե թուրք տարն էլ արդեն որոշել է վերջի օգնութեամբ դիմադրել սուլթանական կամայականութիւններին»։ Վերակազմյալները կոչ էին անում շատ չոգևորվել, միշտ հիշել ապրած ոչ վաղ անցյալը, որը շարունակում է «դեռևս մնալ ներկա»։ Պարբերականը մտախախտութիւն էր հայտնում, որ «սահմանադրական» Թուրքիան արևմտահայ ազատագրական շարժման համար «գարուն» չի դառնա։

Արմենականների հետ միութեանը չմասնակցած վերակազմյալները պահպանեցին իրենց ինքնուրույն գոյութիւնը։ Օսմանյան սահմանադրութեան հռչակումից հետո վերակազմյալների մի մասը վերագարձավ Կ. Պոլսի /Արզուլյան, Քրիզճյան/, որտեղ շարունակեցին հրատարակել «Ձայն Հայրենայցը»։ Ձնայած Կ. Պոլսում վերակազմյալները սակավաթիվ էին, այնուհանդերձ արևմտահայ Հասարակական-քաղաքական կյանքում նրանք ճանաչված էին իրենց ակտիվ գործունեութեամբ։ Նրանք նշում էին, որ հրաժարվում են զինված ապստամբութե-

<sup>1</sup> «Ազգ», 1908, 18 հուլիսի։

<sup>2</sup> «Արև», Կահիրէ, 1926, 27 հոկտեմբերի։

<sup>3</sup> Հանքարյան Ա., Հայ հասարակական-քաղաքական միտքը արևմտահայոյ թյան յազարագրու թյան ու դիճերի մասին, էջ 363։

<sup>4</sup> «Ազգ», 1908, 8 օգոստոսի։

<sup>5</sup> Նույն տեղում, 15 օգոստոսի։

յան իրենց ծրագրից, կողմնակից են Օսմանյան կայսրութեան ամբողջականութեան պահպանմանը և աջակցելու են սահմանադրութեան հռչակած սկզբունքների իրականացմանը :

Անդրադառնալով բարենորոգումների խնդրին, «Ձայն Հայրենյացը» գտնում էր, որ այն անհրաժեշտ է կայսրութեան բոլոր ժողովուրդներին, բայց բոլորից առավել դրա կարիքը զգում են Հայերը, որովհետև նրանց դրությունն ամենից վատթարն է : 1909թ. կիլիկիահայութեան կոտորածների ժամանակ, վերակազմյալները ցույց տվեցին, որ ողջ պատասխանատվութունը ընկնում է երիտթուրքերի վրա : Անդրադառնալով հողային հարցին, վերակազմյալները գտնում էին, որ մինչև 1908թ. Հայերից խլված հողերը պետք է ետ վերադարձվեն : Ինչ վերաբերում է սոցիալիզմին, ապա վերակազմյալները մնացել էին իրենց հին տեսակետին, գտնելով, որ հետամնաց ու բռնապետական թուրքիայում սոցիալիզմի համար ոչ մի պայման չկա :

Երիտթուրքական հեղաշրջումից հետո «Ձայն Հայրենյացը» գրում էր, որ միայն Եվրոպայի օգնութեան վրա հույս դնելով Հայ ազգը չի կարող հասնել իր նպատակին, և պետք է հույսը դնել նաև սեփական ուժերի վրա : Վերակազմյալները գտնում էին, որ Հայ երիտասարդությունը պետք է զբաղվի ռազմական գործով, որպեսզի պատրաստ լինի ինքնապաշտպանութեանը :

1910թ. Բոստոնում սկսեց հրատարակվել վերակազմյալների «Պահակ» թերթը :

Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին կանխազգալով հայութեանը սպասվող աղետը, վերակազմյալները սկսեցին զենք ու զինամթերք փոխադրել Եգիպտոսից և ուժեղացնել իրենց մասնաճյուղերը Սուևտիայում, Զեյթունում, Հալեպում :

Միաժամանակ, նրանք հանդես եկան ազգային բոլոր ուժերի համագործակցութեան կոչով :

<sup>1</sup> «Ձայն հայրենյաց», 1908, 6 նոյեմբերի :

<sup>2</sup> Նույն տեղում, 1909, 19 փետրվարի :

<sup>3</sup> Նույն տեղում, 18 փետրվարի :

<sup>4</sup> Նույն տեղում, 9 հուլիսի :

<sup>5</sup> Նույն տեղում, 5 նոյեմբեր :

<sup>6</sup> ԶԴՊԿՊԱ, Ապահ Պետրոսյանի ֆ. 453, ց. 1, գ. 133, ք 1 :

### ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ

19-րդ դարի ընթացքում Հայ ժողովքի երկու Հիմնական Հատվածների մոտ արձանագրված աննախադեպ տնտեսական վերելքը, կրթա-մշակութային ու գաղափարա-քաղաքական զարթոնքը ժամանակակից Հայ ազգի ձևավորման փաստի վկայութիւնն էր: Դա անխուսափելի էր դարձնում Հայրենիքի ազատագրման և անկախ պետականութեան վերականգման մասին Հայութեան ազդու երազանքների ու ձգտումների տեղափոխումը գործնական պայքարի ազգային-ազատագրական շարժման Հարթութիւն: Ենթադրելով 19-րդ դարի երկրորդ կեսին ծավալված Հայ ազգային-ազատագրական շարժման, ինչպես նաև Հայկական Հարցը միջազգային դիվանադիտութեան խնդիրների շարք մտնելու պատմական իրողութեան, Հայրենիքի ազատագրման և անկախ պետականութեան վերականգման Հայ ժողովրդի դարավոր երազանքը Հստակեցրեց իր քաղաքական նպատակների աշխարհադրական սահմանները՝ Հանդիս դալով որպես Արևմտյան Հայաստանի ազատագրութեան խնդիր: Դրանով իսկ, 19-րդ դարի վերջին քառորդում ստեղծվեցին անհրաժեշտ նախադրյալներ ողջ ազգի քաղաքական ձգտումների նպատակակետը դարձած Արևմտյան Հայաստանի ու արևմտահայութեան ազատագրութեան Համար պայքարող ոչ մեծ կազմակերպութիւնների ու անհատների ջանքերը միավորելու Համար:

Հ. Յ. Դաշնակցութիւնն այդ միաժամանակ և առարկայական և ենթակայական բնույթ ունեցող գործընթացների ծնունդն էր, դրանց ծավալման արդյունքում Հայութեան առջև կանգնած նոր և աննախադեպ մարտահրավերներին. դիմակայելու առողջ ու կենսունակ ձգտումների մարմնացումը: Սակայն, Հ. Յ. Դաշնակցութիւնն արևմտահայերի ազատագրութեան գործը առաջնորդելու և հունավորելու Համար ստեղծված Հերթական կազմակերպութիւնները չէր, այլ մի կողմից սեփական Հայրենիքի ազատագրութեան խնդիրը ողջ ազգի միացյալ ուժերով Հետապնդելու քաղաքական կամքի և մյուս կողմից սկիզբ առած շարժումն ազգային նեղ շրջանակներից դուրս բերելու և ողջ մարդկութեան ազատագրութեան Համար ընթացող ընդհանուր պայքարի մեկ մասնիկը դարձնելու ձգտումների, այսինքն՝ Հայ ժողովրդի ազգային ու Համամարդկային նպատակների Համադրութեան ու սինթեզի եզակի փորձը՝ ողջ 19-րդ դարի Հայոց պատմութեան մեջ: Հենց դրա շնորհիվ, արդեն 20-րդ դարի սկզբին Հ. Յ. Դաշնակցութիւնը դարձավ Հայ ազգային-ազատագրական շարժումը ղեկավարող Հիմնական ուժը, իսկ քիչ անց նաև Հայոց անկախ պետականութեան վերականգման գործի կազմակերպիչն ու առաջնորդը:

\* \* \*

Հ. Յ. Դաշնակցությունը իր քաղաքական ու կազմակերպական հնարավորությունների և գաղափարական ու բարոյական արժեքների զինանոցում ներառեց ողջ 19-րդ դարի ընթացքում հայության տարրերը հատվածներում կուտակված մարդկային-մտավոր, գաղափարաբարոյական ու մարտական-զինյալ ներուժի նշանակալի մասը:

19-րդ դարի հայ քաղաքական մտքի կիզակետում գտնվող առանցքային գաղափարը և հայ հասարակական-քաղաքական շարժումների հիմնական նպատակը ազգի հետագա գոյատևումն ապահովելու ուղիների և միջոցների փնտրտուքն էր: Այդ գործում մեծ էր ն. Աբովյանի, Ստ. Նազարյանցի, Մ. Նալբանդյանի, Կր. Արծրունու, Ղ. Ալիշանի, Մ. Խրիմյանի և Բաֆֆու գաղափարական ներդրումը, ինչպես նաև 1862թ. Զեյթունի ապստամբություն, 1870-80-ական թվականների ազատագրական խմբակների ու կազմակերպությունների ձևնարկած առաջին քայլերի և հայկական հարցի միջազգային դիվանագիտություն խնդիրների շարքն անցնելու պատմական փաստի ազդեցությունը:

Երբ 19-րդ դարի 70-80-ական թվականների հայ քաղաքական միտքը տատանվում էր հայկական հարցի լուծմանը հասնելու երկու հիմնական ուղիների՝ խաղաղ տնտեսա-մշակութային առաջադիմություն և զինված պայքարի երկընտրանքի միջև, սկզբում ազգային-ազատագրական շարժմանը զուգահեռ հանդես եկած, իսկ սույա նրա հետ աստիճանաբար միաձուլված հայ ազգային նարոդնիկությունը ասպարեզ բերեց հեղափոխական երիտասարդների մի ամբողջ սերունդ, որը փորձեց համադրել արևմտահայերի ազատագրություն խնդիրը՝ /հայկական հարցը/, այդ դարաշրջանում առաջադեմ մարդկություն պայքարի նպատակը համարվող սոցիալիզմի գաղափարի հետ: Դրան զուգահեռ, ազգային նարոդնիկության ընդլայնում ձևավորվեց այդ նպատակները հետապնդելու համար անհրաժեշտ կազմակերպական կառույցի և գործելակերպի այն ըմբռնումը, որը հիմք դարձավ Հ. Յ. Դաշնակցության ձևավորման համար:

Անդրկովկասի և Ռուսաստանի հայ ազգային-նարոդնիկական կազմակերպություններն ու խմբակները իրենց քաղաքական փորձի, հարազատ ժողովրդի հետ ունեցած սերտ կապի, ինչպես նաև գաղափարական ու կազմակերպական համեմատաբար մեծ ներուժի առակայությունն առումով զերազանցում էին 1885-ին ստեղծված Արմենական և 1887-ին հիմնված Հնչակյան կուսակցություններին, ուստի վերջիններիս ձևավորումից հետո հասունացավ Անդրկովկասում ու նրա մայրաքաղաք Թիֆլիսում արևմտահայերի ազատագրություն գործը առաջ տանող նոր կուսակցություն ստեղծելու և բոլոր ուժերն ու կազմակերպությունները նրա շուրջը միավորելու խնդիրը:

Երբ Անդրկովկասում ու Ռուսաստանի մայրաքաղաքներում հավաքված հայ ուսանողութեան ներսում իրենց ավարտին էին մոտենում գաղափարա-քաղաքական խմորումները և զգացվում էր խոսքից դործի անցնելու պահանջը, 1889 թվականի ձմռանը Թիֆլիսում ձևավորվեց «Երիտասարդ Հայաստան» կազմակերպութունը, որն իր մեջ էր ներառում ինչպես առաջադեմ ուսանողութեանը, այնպես էլ Անդրկովկասի մասամբ ազգայնական, մասամբ էլ դեռևս նարոդնիկական գաղափարների ազդեցութեան տակ գտնվող հայ երիտասարդութեանը: Այդ կազմակերպութունը չուներ հստակ կառույց ու գործելակերպ և իր ներսում պահպանում էր ավելի արմատական-հեղափոխական /«Յուժնիկ նոմերա», հյուրանոցում հավաքվող խմբակ/ և չափավորազգայնական /«Սեվերնիկ նոմերայի» խմբակ/ թևերի միջև առկա այն տարաձայնութունները, որոնք նկատվում էին նաև Ռուսաստանում սովորող հայ ուսանողութեան շրջանում՝ «կոսմոպոլիտների» և «չոլի-նիստների» բանավեճի տեսքով: Զեռնարկվեցին առաջին քայլերը նախնական ծրագիր ու կանոնագիր մշակելու, զենքի հայթայթման ու զինավարժութեան գործի կազմակերպման, ինչպես նաև «երկիրը» ուսումնասիրելու համար: «Երիտասարդ Հայաստանի» շարքերը ստվարանում էին մանավանդ ամուսն ամսիներին, երբ մայրաքաղաքներից վերադառնում էր ուսանողութեան ակտիվ ու գործունյա մասը: Այդ հոսքը ուժեղացավ 1890թ. փետրվարին Մոսկվայում տեղի ունեցած ուսանողական հուզումների պատճառով, երբ Պետրովսկի գյուղատնտեսական ակադեմիայից արտաքսվեցին և Բուստրյան բանտը նետվեցին, իսկ քիչ անց՝ հայրենիք քստրվեցին մեծ թվով ուսանողներ, որոնց մի կարևոր ու գործունյա մասը հայեր էին՝ Ստեփան Զորյան /Ռոստոմ/, Մարտին /Մարտիրոս/ Եաթիրյան, Ավետիս Սահակյան /Հայր Աբրահամ/ և այլք: Նրանց արտաքսումը Անդրկովկաս համընկավ 1890թ. մայիսին հանդիսավորապես նշված Գրիգոր Արծրունու գրական գործունեության 25-ամյակի տոնակատարություններին, իսկ քիչ անց՝ համալսարանական ու դպրոցական տարեշրջանների ավարտին, որի հետևանքով Թիֆլիսում հավաքվեց հայ երիտասարդութեան ընտրանին՝ Վերին Ազուլիսում իր պարապմունքներն ավարտած Բրիտանիոր Միքայելյանը, կայսերական ռազմաբժշկական ակադեմիայի ուսանող Հովհաննես Լոռու-Մելիքյանը, Մոսկվայի հայ ուսանողութեան առաջնորդներից՝ Արշակ Բարխուդարյանը, Վրաստանի գյուղերում իր մասնագիտական գործունեությունը ծավալած գյուղատնտես Սիմոն Զավարյանը և այլ ուսանողներ ու երիտասարդներ: Անդրկովկասի հայ երիտասարդութեան համախմբման գործընթացի հետագա արագացումը պայմանավորված էր նաև 1890թ. հունիսի 18-20-ին Էրզրումում հայերի և թուրքական զորքի միջև տեղի ունեցած ընդհարման, 1890թ. հունիսի վերջերին ռուս-թուրքական սահմանագծի Կաղզվանի հատվածում Հունոյի /Հարություն Տեր-Մարտիրոսյան/ հայրուկային խմբի սկսած գործողությունների և Էրզրումի դեպքերից

Հետո՝ 1890թ. հունիսի 15-ին, Կ. Պոլսում հնչակյանների կազմակերպած Գուճ-Գափուճի ցույցի ցնցող ազդեցութեամբ: Երիտասարդութեանը, որը մինչ այդ ավելի շատ գաղափարական-տեսական բանավեճերի մեջ էր, սկսեց համախմբվել ու կազմակերպվել կոնկրետ նպատակի ու գործի շուրջ:

\*

\*

1890 թվականի հունիսի երկրորդ կեսին և օգոստոս ամսվա ընթացքում Թիֆլիսում տեղի ունեցան մի շարք ժողովներ, որոնք Հայաստանի են Հ. Յ. Դաշնակցութեան Հիմնադիր կամ Սահմանադիր ժողովներ անունով: Այդ ժողովների արդյունքում ձևավորվեց ոչ թե Հետագայի միաձուլյ կուսակցութեանը՝ Հայ Յեղափոխական Դաշնակցութեանը, այլ Հայ Յեղափոխականների Դաշնակցութեան կազմակերպութեանը, որը արեւմտահայերի ազատագրութեան խնդրի շուրջ բոլոր հեղափոխական ուժերին համախմբելու առաջին փորձն էր:

Տվյալ գործընթացի արագացուցիչը դարձավ Քրիստափոր Միքայելյանի վերադարձը Թիֆլիս և միացումը «Երիտասարդ Հայաստանի» արմատական-ձախակողմյան թևին: Նրա օրինակին հետևեցին նարոդնիկութեան դպրոցն անցած Հովհաննես Լոռու-Մելիքյանը, Աբրահամ Դաստակյանը, Արշակ Տեր-Գրիգորյանը, իսկ քիչ անց նաև՝ Միմոն Զավարյանը: Այդ միաձուլման արդյունքն էր «Դրոշակ» խմբի ապագա կուսակցութեան միջուկի ձևավորումը: Նույն օրերին Շիրակ էր անցել Պետերբուրգից Թիֆլիս ժամանած Մարգիս Կուկուճյանը, որին օժանդակելու և «Դրոշակ» խմբի մասնաճյուղերը ձևավորելու համար Ալեքսանդրապոլ-Կարս մեկնեց Մարտին Շաթիրյանը: Սարգիս Կուկուճյանի տրամադրութեան տակ էր դրվել նաև «Երիտասարդ Հայաստանի» գինանոցը: 1890թ. հունիսի 15-ի Գուճ-Գափուճի ցույցից անմիջապես հետո, Թիֆլիս անցավ նաև Հնչակյան կուսակցութեան ներկայացուցիչ Ռուբեն Խանաղատը, որը սակայն չմասնակցեց այստեղ սկիզբ առած առանձին խմբակների ներկայացուցիչների ժողովներին: Հիմնադիր ժողովների մասնակիցներից Արշակ Տեր-Գրիգորյանը նրան հայտնում էր. «Երիտասարդների խմբից ընտրուած ենք ես, Զաւարեանը և Քրիստափոր Միքայելյանը, Գ. Արծրունու խմբի կողմից՝ Խաչատուր Մալումեանը, Բագուսեցիների կողմից՝ Կոստանդին Խատիսեանը...»: Երիտասարդների խումբը «Երիտասարդ Հայաստանի» թևերից մեկի «Յուժնիկ-նոմերայի» խմբակի և Հայ ազգային նարոդնիկների միաձուլումից առաջ եկած «Դրոշակ» խումբն էր, իսկ «բաքվեցիները» կամ Բաքվի նավթային շրջանի ինժեներները, «Սևեր-

<sup>1</sup> Ռուբեն Խանաղատ Գայ յեղափոխականի յուշերից, գլուխ 18, «Յայրենիք» ամսագիր, Բուսուճ, 1927, թիվ 2 էջ 116:

նրիս Նոմերայի» խմբակի անդամներն էին՝ Կոստանդին Խատիսյանի զլխավորութեամբ

Առաջադեմ երիտասարդութեան ներկայացուցիչները՝ Գրիգոր Արծրունու հոգեզավակները, իրենց ժողովներին մասնակից էին դարձրել «Մշակի» խմբագրի անմիջական շրջապատի մարդկանց, սակայն, ինչպես հետագայում վկայում էր Ալ. Շիրվանզադեն՝ «Դաշնակցութունը կազմակերպվեց Գրիգոր Արծրունու գիտութեամբ և հովանավորութեամբ, բայց ոչ անմիջական մասնակցութեամբ»<sup>1</sup> :

Թե՛ Գրիգոր Արծրունուն ներկայացնող գործիչները /և. Մալումյան, Ալ. Քալանթար և այլք/ և թե՛ «Սևերնիս նոմերայի» խմբակի անդամները սկզբունքորեն մերժում էին սոցիալիստական գաղափարները: Նույն գիրքերի վրա էին կանգնած նաև Մոսկվայի «ներկրականները» խմբակի հետ կապված գործիչները, որոնք համախմբվել էին Լեոն Սարգսյանի շուրջը: Իրավիճակը ավելի էր բարդանում նրանով, որ Թիֆլիս ժամանած հնչակյանների ներկայացուցիչը Ռուբեն Խանազատը պնդում էր, որ ձևավորվելիք կազմակերպությունը պետք է ունենա սոցիալիստական ուղղվածություն, հակառակ դեպքում անհնար է լինելու նրա միավորումը Հնչակյան կուսակցության հետ՝ արևմտահայերի ազատագրության համար՝ պայքարող բոլոր ուժերը մեկտեղելու նպատակով: Այս պայմաններում, հենվելով «Յուսուբիս-նոմերականներին» ներկայացնող արմատական երիտասարդութեան վրա /Հովսեփ Արզուլյան, Ալ. Պետրոսյան, Հովհաննես Յուսուբյան և այլք/, որոնք ոչ թե տեսական բանավեճեր, այլ կոնկրետ գործ էին պահանջում, Քրիստափոր Միքայելյանը և Սիմոն Զավարյանը կարողացան համահարթել առկա տարաձայնությունները:

Ձևավորվող Հայ Յեղափոխականների Դաշնակցությունը խնդիր ուներ միավորել արևմտահայերի ազատագրության համար պայքարող բոլոր ուժերին ու գործիչներին՝ որպես իր նպատակ բանաձևելով «Թիւրքաց Հայաստանի քաղաքական ու տնտեսական ազատության...»<sup>2</sup> պահանջը, որն իր խիստ ընդհանրական բնույթի պատճառով կարող էր բավարարել ինչպես ազատական, այնպես էլ սոցիալիստական համոզմունքներ ունեցող գործիչներին և նրանց ջանքներն ուղղել ազգային ընդհանուր նպատակի իրականացման համար սկսված միասնական պայքարի հունը: Այդ առիթով Քրիստափոր Միքայելյանը և Սիմոն Զավարյանը առանձին հանդիպում են ունենում Հիմնադիր ժողովների ընթացքում Թիֆլիսում գտնվող հնչակյան Ռուբեն Խանազատի հետ և նրան բացատրում, որ տվյալ ձևակերպումը նպատակ ունի կազմակերպության մեջ ներգրավել նաև հնչակյաններին: Միաժամանակ, Քրիստափոր Միքայելյանն ու Սիմոն Զավարյանը գտնում էին, որ կարիք չկա ավելի հստակ բանաձևումներով

<sup>1</sup> Տե՛ս Շիրվանզադե Ալ., Երկնի ժողովածու, հատ. 8, Երևան, 1961, էջ 169

<sup>2</sup> Տես Մանիֆեստ Յ. Ռաշնակցութեան կամ «Դրոշակի» թողոցիկ թերթ, թիվ 1, էջ 1:

խրտնեցնել նաև Հարուստ դասին, քանի որ միևնույն է, իրական գործիչները իրենք՝ սոցիալիստներն են լինելու, իսկ Հարուստները բավարարվելու են միայն զրամ տալով: Հիմնադիր ժողովներում որդանի՝ «Դրոշակի» հրատարակման մասին, իսկ որպես կուսակցության ղեկավար մարմին ընտրվեց 5 հոգուց բաղկացած /Քրիստափոր Միքայելյան, Սիմոն Զավարյան, Հովհ. Լուու-Մելիքյան, Աբրահամ Դաստակյան և Լևոն Սարգսյան/ «Կենտրոնական վարչությունը», կամ «Կենտրոնը»: 1890թ. սեպտեմբերի սկզբներին, երբ արդեն գործում էր «Կենտրոնական վարչությունը», հրատարակվեց «Դրոշակի» թիվ 1 թռուցիկ թերթը, որը հետագայում Հ. Յ. Դաշնակցության հիմնադիրներից Ռոստոմը /Ստեփան Զորյան/, անվանակոչեց որպես Հ. Յ. Դաշնակցության Մանիֆեստ: Այդ փաստաթուղթը սկսվում էր «Հայեր» վերտառով լինելը կրող կոչով և նկարագրելով Հայ ժողովրդի տառապանքները թուրքական բռնակալության լծի տակ, եզրակացնում, որ «Այսպիսի մի պատմական ճգնաժամի միջոցին, առաջին հարցը, որ պետք է զբաղեցնի ամեն մի լուրջ Հայրենասերի, այդ բոլոր յեղափոխական ուժերի միութեան եւ դաշնակցութեան հարցն է»: Ուստի ձեւավորվող Հայ Յեղափոխականների Դաշնակցությունը դիմում էր բոլոր Հայերին՝ հրավիրելով կանգնել մեկ դրոշակի տակ: «Դաշնակցությունը» ձգտելու է միացնել բոլոր ուժերը, կապելով իր հետ բոլոր կենդոնները: Նպատակ զենկով թիրեքաց Հայաստանի քաղաքական և տնտեսական ազատութիւնը, «Դաշնակցութիւնը» մտել է այն կուռի մէջ, որ սկսել է ինքը ժողովուրդը տաճկաց կառավարութեան դէմ, ուխտելով մինչև յարեան վերջին կաթիլը կուռեալ Հայրենիքի ազատութեան համար»:

<sup>1</sup> Մոսկվայի 1890թ. փետրվարյան ուսանողական հուզումներից մասնակցելու համար իր հարազատ Նախիջևանի գաւառի Ցղնա գյուղը աքտրված Ռոստոմը հենց Չիմնադիր ժողովների ընթացքում է ժամանել Թիֆլիս: Երևանի նահանգի ժամդարմական վարչության պետի զեկու ցարի համաձայն, նա օգոստոսի 18-ին Երևանի նահանգից տեղափոխել է Թիֆլիս: Թիֆլիսի նահանգի ժամդարմական վարչության պետը իր հերթին 1890թ. սեպտեմբերի 12-ին զեկու ցու է եր Ուտիկանու քյան դեպարտամենտին, որ Ատեփան Աբրահայանցը /այդպիսին էին Մոսկվա մեկնելիս Ռոստոմի ձեռք բերած անձնագրի միացերը /«... ժամանել է Թիֆլիս և բնակություն հաստատել 7-րդ տեղամասում Մաչաբելովսկի փողոցի վրա Մալու մյանցին պատկանող թիվ 34 տանը» /Государственным архиву Российской Федерации, Департамент полиции, 3-е делопроизводство, ф.102. 1894г., д. 65, л.10, 12/ Սյս պատճառով Հ. Յ. Դաշնակցության Չիմնադիր ժողովների Ռոստոմի չմասնակցելու վերաբերյալ ցայսօր ընդու մված տեսակետին պետք է վերաբերվել մեծ վերապահու քյանը, քանզի հնարավոր է, որ վերջինս գտնվելով ոստիկանության բացահայտ վերահսկողության տակ, սեփական ներկայությանը չէր ցանկանում վտանգել իր ընկերներին, բայց քանի որ հաստատվել էր իսախարուր Մալու մյանի տանը, ապա ամվազմ ոչ ուղղակի կերպով մասնակցում էր տեղի ունեցող բախտորոշ ըրտարածու քյանը:

<sup>2</sup> «Դրոշակի» թռուցիկ թերթ, թիվ 1, էջ 1:

<sup>3</sup> Նույն տեղում:

Նորաստեղծ կազմակերպութեան համար հրատապ էր դարձել արդեն ռուս-թուրքական սահմանագծի վրա գտնվող Սարգիս Կուկուռեյանի խմբի գործողութիւնների կանոնակարգումը: Սակայն նրա ներկայացուցիչների այցելութիւնները Ս. Կուկուռեյանին և փորձերը՝ կասեցնել ընդհանուր ողբերգութեան միջնորդութեամբ տեղի ունեցող այդ չնախապատրաստված ձեռնարկը, որն է արդունք չտվեցին. ո՛չ Կուստանդին Սատիսյանին և ո՛չ էլ Սիմոն Զաւարչյանին չհաջողվեց իր մտադրութիւնից հետ կանդեսեցնել անփորձ երիտասարդին: Տարեբային այդ շարժումը ողբերգական հետեւանք ունեցավ և ռուս սահմանապահների հետ ընդհարման հետեւանքով արշավանքի մասնակիցներին 43-ը ձերբակալվեցին, իսկ ում հաջողվեց խուսափել ձերբակալութիւնից, հետագայում մեծամասամբ համալրեցին Հ. Յ. Դաշնակցութեան շարքերը:

Սարգիս Կուկուռեյանի տարեբային ու անկազմակերպ արշավանքի ձախողումը Հ. Յ. Դաշնակցութեան առաջնորդներին կրկին ցույց էր տալիս թե ինչքան կարևոր է արևմտահայերի ազատագրութեան համար պայքարող բոլոր ուժերի ջանքերի միացումն ու համադրումը: Այդ առումով սկզբունքային նշանակութիւն ունեին բանակցութիւնները Հնչակյան կուսակցութեան հետ: Հիմնադիր ժողովների շրջանում Թիֆլիսում գտնվող Հնչակյանների ներկայացուցիչ Ռուբեն Սանազատը կողմ էր արտահայտվում մեկ համահայկական կազմակերպութեան՝ Հայ Յնդափոխականների Դաշնակցութեան մեջ Հնչակյան կուսակցութեանը ևս ներգրավելու զազափարին: Այդ պատճառով, նա փորձում էր հաղթահարել ժնեւում գտնվող Նազարբեկ ամուսինների, իսկ Բրիստափոր Միքայելյանը և Սիմոն Զաւարչյանը՝ Հ. Յ. Դաշնակցութեան մեջ մտած ազատական գործիչների դիմադրութիւնը: Սակայն շուտով ժնեւյան գույզը Կովկաս է ուղարկում իրենց կողմից լիազորված Հակոբ Մեղավորյանին, իսկ 1890թ. սեպտեմբերի 21-ին Թիֆլիս՝ Ռուբեն Սանազատին ուղղված նամակով վերջինից պահանջում է սպասել մինչև Հ. Մեղավորյանի ժամանումը և գուշանալ տեղացիների հետ ավելորդ խոսակցութիւններից<sup>1</sup>: Հակոբ Մեղավորյանի ժամանումից հետո բանակցութիւնները շարունակվում են, մշակվում են համաձայնութեան նոր պայմաններ ու ստորագրվում Հ. Յ. Դաշնակցութեան և Հնչակյան կուսակցութեան երկուսական ներկայացուցիչների կողմից: Համաձայն այդ պայմանների, Հնչակյան կուսակցութիւնը կազմելու էր Հայ Յնդափոխականների Դաշնակցութեան անբաժան մասը: Նախատեսվում էր «Հնչակը» պահել արտասահմանում՝ որպէս կուսակցութեան տեսական օրգան, նրա խմբագրութիւնն ու թեղացնելով Բրիստափոր Միքայելյանով, իսկ «Դրոշակը» հրատարակել Կովկասում որպէս մարտական օրգան:

<sup>1</sup> Տես Վրաստանի ՊԿՊԱ, ֆ. 153, ց. 1, գ. 135, ք. 153:

1890-ի վերջերին ստորագրված այդ համաձայնությունը նույնպես չիրագործվեց, քանի որ 1890թ. դեկտեմբերի 30-ին Թիֆլիսից մեկնած Ռուբեն Սանազատին Նազարբեկ ամուսինները կանչեցին ժնև և դրանից հետո խզեցին կապերը Հ. Յ. Դաշնակցության հետ՝ բացահայտորեն զրպարտելով Կովկասի գործիչներին, իսկ 1891թ. հունիսի 5-ին լույս տեսած «Հնչակի» 7-րդ համարում հայտարարելով, որ երկու կուսակցությունների միջև չի եղել ոչ միություն, և ոչ էլ կապ:

Հնչակյանների կողմից իրականացվող գործնական քաղաքականության մեջ ազգային ազատագրության խնդրի և սոցիալիզմի դոգմատիկ ընկալման հակադրումը խիստ թուլացրեց, իսկ 1896-ին պառակտման հասցրեց այդ կուսակցությանը, մինչդեռ, փաստորեն այդ նույն արժեքների համադրության և սոցիալ-դեմոկրատիային բնորոշ կաղապարված մտածելակերպը հաղթահարելու ճանապարհով Հ. Յ. Դաշնակցությունը սկսեց ուժեղանալ, ծավալվել ու ամրապնդվել:

Հիմնադիր ժողովներից հետո անցած մի քանի ամիսների ընթացքում, տարերայնորեն սկիզբ առած շարժման ալիքի վրա, Հ. Յ. Դաշնակցությունը արագությամբ տարածվեց Անդրկովկասում, Ռուսաստանի հայաշատ վայրերում, թափանցեց Պարսկաստան, Միջին Ասիա, Տրապիզոն, Կ. Պոլիս: Արևմտահայ եղբայրներին աջակցելու համար սկիզբ առած տարերային շարժման սերուցքը մտավ նորաստեղծ կազմակերպության մեջ: Հ. Յ. Դաշնակցության մեջ մտան նաև տարբեր վայրերում արդեն իսկ ստեղծված մանր կազմակերպություններն ու խմբերը, որոնց անդամները հանդիսանում էին տեղական երիտասարդության ամենաակտիվ զանգվածը: Այդ պատճառով, դեռևս մինչև Հ. Յ. Դաշնակցության առաջին ընդհանուր ժողովը, ձևավորվեցին Ալեքսանդրապոլի, Կարսի, Բաքվի, Ախալցխայի, Գանձակի /Ելիզավետպոլ/, Մոսկվայի, Նոր-Նախիջևանի և Ռուսաստանի այլ վայրերի առաջին խմբերն ու կոմիտեները:

Արդեն 1890-ին Հ. Յ. Դաշնակցությունը մուտք գործեց Պարսկաստան՝ Տիգրան Ստեփանյանի, Գալուստ Այոյանի /Թորոս/, Ալեքսանդր Պետրոսյանի /Պետո/ և այլ գործիչների ջանքերով, իսկ այնտեղից էլ շուտով Ալեքսանդր Պետրոսյան /Պետո/ թափանցեց Վասպուրական: Նույն շրջանում Տարոնում գործում էին Աբաբուն ու Մարգար վարժապետը, Կարինում՝ Տիգրան Օթոնյանն ու Աբամ Աբամյանը, Տրապիզոնում՝ Հարություն Շահրիկյանը և որպես ուսուցիչներ նրան միացած Հովսեփ Արղությանը /Իշխան/, Սիմոն Զավարյանը ու Հովհաննես Յուսուֆյանը:

1890թ. հոկտեմբերից հետո Կ. Պոլսում սկսված ձերբակալությունների ու հալածանքների պայմաններում, Հ. Յ. Դաշնակցությունը այնտեղ է ուղարկում Մարտիրոս Մարգարյանին /Սաֆո/, իսկ Տրապիզոնում՝ Հ. Յ. Դաշնակցության առաքյալների /Սիմոն Զավարյան, Հովսեփ Արղության/ ձերբակալությունից /1890թ. նոյեմբեր/, քիչ անց

4. Պոլիս է անցնում նրանց գործընկերը՝ Հովհաննես Յուսուֆյանը, որը դարձավ Հ. Յ. Դաշնակցության լիազոր-ներկայացուցիչը և պատրաստեց փայլուն գործիչների ու հանդուգն ահաբեկիչների մի ամբողջ սերունդ:

1891 թվականի ապրիլին թուրքական իշխանությունները Սիմոն Զավարյանին և Հովսեփ Արզուլթյանին արտաքսեցին Կովկաս ուստրիականության տրամադրության տակ, իսկ մի փոքր անց՝ նույն թվականի մայիսին, Կովկասի կառավարչապետն անհրաժեշտ գտավ ժամանակավորապես արգելել նրանց բնակությունը նաև այդ երկրամասում: Նույն օրերին 1891 թ. ապրիլի 16-ին, ձերբակալվեց Քրիստափոր Միքայելյանը, որին նույնպես աքսորեցին կովկասյան երկրամասից:

Հ. Յ. Դաշնակցությունը դեռևս էջեր բողբոլել իր գործունեության մեկամյա ժամկետը, սակայն արդեն հասցրել էր իր մեջ ներգրավել Անդրկովկասի ու Ռուսաստանի հայաբնակ կենտրոնների ակտիվ երիտասարդությանը ու թափանցել Արևմտյան Հայաստան: 1890-ի վերջերին և 1891-ի սկզբներին սկսվել էր նաև կամավորների հավաքագրման և զենք ու զինամթերք հայթայթելու գործը: Թվում էր, թե արդեն 1891 թվականին բռնկվելու է ընդհանուր ապստամբություն թուրքական բռնապետության դեմ: Սակայն ողբերգության շրջանն անցավ, իսկ ամենօրյա ծանր ու վտանգավոր աշխատանքի ծավալումը սկսեց տարածայնություններ առաջացնել տարբեր սոցիալական ծագում ու քաղաքական դավանանք ունեցող երիտասարդության շրջանում:

Քրիստափոր Միքայելյանի ու Սիմոն Զավարյանի ձերբակալությունից և աքսորից հետո, փաստորեն 1891 թ. դարնանից մինչև 1892-ի ամռանը տեղի ունեցած առաջին ընդհանուր ժողովը, կուսակցության ղեկն անցավ «Կենտրոնի» ներսում ուժեղացած ազատական գործիչների խմբին Լևոն Սարգսյանի պլյաւորությամբ: «Կենտրոնի» շուրջ հավաքված արմատական երիտասարդությունը դժգոհում էր ստեղծված կացությունից: Հասունացել էր բախումը չավավոր-ազատական և արմատական-հեղափոխական պատկերացումներ ունեցող գործիչների միջև: Ուստի, ստեղծված խառնաշփոթին վերջ դնելու համար անհրաժեշտ էր հստակեցնել կուսակցության գործելակերպը և, իհարկե, սոցիալական հենարանը: Դա առաջին հերթին հայ աշխատավորությունն էր՝ իր տարբեր շերտերով հանդերձ, որի տրամադրությունները արտացոլող արմատական գործիչները աշխատանք էին ծավալել ընդհանուր ժողովի հրավիրման ուղղությամբ:

1892 թ. ապրիլին Հռոման Դավթյանի և Տիգրան Օքոնյանի կազմած կոչը առաջարկում էր ընդհանուր ժողովում քննել հետևյալ խնդիրները՝ հեղափոխության նպատակը, կազմակերպությունը /կառույց/ և միջոց-տակտիկան /մարտավարությունը/: Այդ կոչը, որ ա-

<sup>1</sup> Տե՛ս Գրավոր առաջին ընդհանուր ժողովի հայ յեղափոխականների, «Դիվան Է Յ. Դաշնակցու թեան», հատ. 1, Բոստոն, 1934, էջ 95:

ուջ էր քաշուձ ընդհանուր ժողովի հրավիրման պահանջը, հիմնավորուձ էր նաև կուսակցութլուձնը մեկ կենտրոնից ղեկավարելու սկզբուձնքից հրաժարվելու և ապակենտրոն կառույց ստեղծելու անհրաձեշտութլուձնը:



Հ. Յ. Դաշնակցութլուձյան առաջին ընդհանուր ժողովն սկսվեց 1892թ. հուձնիսի 20-ին Թիֆլիսուձ Հովհաննես Լոռու-Մելիքլուձյանի բնակարանուձմ: Առաջին նիստից հետո, ոստիկանութլուձյան ուչաղրութլուձնը չգրավելու համար Թիֆլիսի ծայրամասուձմ Չուղուրեթուձմ սկսեց աչխատել ժողովի ընտրաձծ լիաղոր հանձնաձծողվր: Ժողովին մասնակցուձմ էին վճռական ձայնով 65 պատգամավորներ Ռուսաստանից, Պարսկաստանից, Թուրքիայից: Բեսարաբիայուձմ անցկացրաձծ իրենց աքսորից նոր էին վերաղարձել Քրիստափոր Միքայելլուձյանը և Սիմոն Զավարլուձյանը: Նախաղահ ընտրվաձծ Լևոն Սարղսլուձյանը որպես ժողովին նախորղաձ տարվա ընթացքուձմ կուսակցութլուձյան ղեկին ամենամոտ անձնավորութլուձյան, հաչվետվութլուձյան ներկայացրեց Հ. Յ. Դաշնակցութլուձյան երկամյա գործուձնեութլուձյան մասին: Ժողովուձմ բուձռն բանավեձնելը ձավարվեցին կուսակցութլուձյան հետաղա գործուձնեութլուձյան նպատակի, մարտավարութլուձյան և զրան համապատասխանղ կաղմակերպական կառույցի ընտրութլուձյան հարցերի շուրջ, որոնք արտացուլուձմ էին արմատական-հեղափոխական և չափավոր-աղատական մոտեցուձմների սուր բախուձմը: Ի տարբերութլուձյուձն Հիմնաղիր ժողովների, ուր հիմնական հարցերի շուրջն առկա տարաձայնութլուձյուձնները ստորաղասվուձմ էին բոլոր հեղափոխական ուձձերին մեկ զրոչի տակ միավորելու խնղրին, 1892-ին առաջին ընդհանուր ժողովուձմ, ստեղծվեց «ոչ այնքան յեղափոխականների զաչնակցութլուձն, այսինքն՝ յեղափոխական մարղկանց միութլուձն, այլ յեղափոխական զաչնակցութլուձն, այսինքն՝ յեղափոխական մի սրոչ ձրաղիր հետապնղղղ կուսակցութլուձն, որն ուձնի յեղափոխական գործելակերպ: Եվ աստիճանաբար Դաշնակցութլուձնը դարձավ ոչ թե առհասարակ յեղափոխականների միութլուձն, այլ զաչնակցական իմաստով յեղափոխականների կաղմակերպութլուձն»:

Անցուձմը 1890-ին նախանչվաձ միասնական նպատակից ղեկի պաղափարակն ու կաղմակերպական սկզբուձնքների միասնութլուձյուձնը հանղեցրեց հստակ ձրաղիր ուձնեցող կուսակցութլուձյան ձևավորմանը: Այղ ձրաղրի հիմնական մասը «բուձռն ձրաղիրը» կամ «ձրաղիր-կանոնաղիրը» ընղուձնվեց հենց առաջին ընդհանուր ժողովուձմ տնղի ուձնե-

<sup>1</sup> Հանղոյց Ն. Ախղլղ Աղղայան, Ստանուձներ Հ. Յ. Դաշնակցուձ բեան մասին, Փարիղ, 1930, էղ 75:

ցած քննարկումների հիման վրա և խմբագրվեց երեք հոգուց բաղկացած ԴԳՐ. Միքայելյան, Սիմոն Զավարյան, Լևոն Սարգսյան, որին շուտով փոխարինեց Ռոստոմը/ Հանձնաժողովի կողմից: Հետագայում 1894 թվականին, «Դրոշակի» օգոստոս-սեպտեմբերյան համարներում այն տպագրվեց «Մեր ծրագիրը» վերտառությամբ և Ռոստոմի զրամ ընդարձակ առաջարանով:

Հ. Յ. Դաշնակցության «բուն ծրագիրը» կամ «ծրագիր կանոնագիրը» բաղկացած էր նպատակ, Միջոցներ, Կազմակերպություն բաժիններից: Կուսակցության նպատակի հստակեցման հարցը ժողովում առաջ բերեց միայն աղգային-քաղաքական պահանջներ առաջադրելու կամ էլ այդ պահանջներին զուգահեռ, նաև սոցիալական ու տնտեսական խնդիրներ հետապնդելու կողմնակիցների բանավեճ, որի արդյունքում որոշվեց «... ընդհանուր ապստամբութեան միջոցով Տաճկահայաստանում ձեռք բերել քաղաքական և տնտեսական ազատություն...»: Ընդ որում, ծրագրի տպագիր օրինակից հետագայում 1894-ին, հանվեց «ընդհանուր ապստամբություն» հասկացությունը, որը տվյալ հանգրվանում համարվում էր դեռևս չհասունացած խնդիր և փոխարինվեց «ապստամբություն» բառով: Բայց զրամ զուգահեռ, ծրագրի մեջ ներառվեցին նաև սոցիալական տարրեր խավերի ու առաջին հերթին գյուղացիության կացությունը բարելավելու համար անհրաժեշտ պահանջներ: Սակայն չնայած այդ հանգամանքին, ժողովում գերակշռություն ունեցող հեղափոխական-սոցիալիստական թևեր նույնպես դեմ էր տվյալ հանգրվանում սոցիալիստական զսղափարների անմիջական քարոզչությունը, փաստ, որը ոչ թե սեփական համոզմունքներից հրաժարվելու, այլ իրավիճակի ուսուցանման հետևանք էր: Դրանով հանդերձ, ծրագրի «նպատակ» բաժնի 11-րդ կետը պահանջում էր «Ոյժ տալ գիւղացու եւ արհեստաւորի համայնական սկզբունքներին, զարգացնելով այն ընկերական հիմնարկութիւնները, ձեւերը, որոնք ծագել են Հայաստանի հողի վրայ տեղական եւ պատմական հանդամանքների ազդեցութեան տակ»:

Այսպիսով, Հ. Յ. Դաշնակցությունը 1892-ին ընդունված իր ծրագրի մեջ, ամրագրելով սեփական սոցիալիստական իդեալները, ժամանակավորապես ձեռնպահ էր մնում սոցիալիստական կուսակցությանը բնորոշ գործնական քաղաքականության որդեգրումից: Դրան զուգահեռ, Հ. Յ. Դաշնակցությունը պահպանում ու փայտաբանում էր նաև Հայաստանի անկախության իդեալը, բայց տվյալ հանգրվանում Տաճկահայաստանի քաղաքական ազատություն ասելով նկատի էր ունենում նրա լայն ինքնավարությունը, թեև ակնհայտ էր նաև, որ ար-

<sup>1</sup> Մեր ժրագիրը, «Դրոշակ», 1894, Ըո. 11, էջ 2:

<sup>2</sup> Նույն տեղում:

դեն 1892-ի ծրագիրը «...Տաճկաստանից զատուժ ու բաժանուժ է միմիայն Տաճկահայաստանը և այն դարձնուժ՝ Հայաստան»<sup>1</sup> :

Անցնելով առաջագրված նպատակների իրականացման համար անհրաժեշտ միջոցների քննութայն հարցին և ընդունելով, որ ընդհանուր ապստամբութայն խնդիրը դուռևս չի հասունացել, առաջին ընդհանուր ժողովը որդեգրեց մարտական խմբերի կազմութայն, քարոզչութայն, ժողովրդին զինելու, կազմակերպական կառույցի ընդլայնման, ահաբեկչական գործողութայնների իրականացման, ժողովրդի ինքնապաշտպանութայնը կազմակերպելու մարտավարական սկզբունքները և այդ ամենն ամրագրեց կուսակցութայն ծրագրուժ:

Առաջին ընդհանուր ժողովուժ տեղի ունեցաժ քննարկումների ու բանավեճերի կարևորագույն արդյունքը, որը ճակատագրական նշանակութայն ունեցաժ Հ. Յ. Դաշնակցութայն հետագա գործունեութայն համար, դա կազմակերպական կառույցը կենտրոնացման սկզբունքից ապակենտրոնացմանը տեղափոխելու մասին որոշումն էր: Այդ որոշման ընդունման համար ժողովուժ բուռն պայքար ծավալեցին Հոնան Դավթյանը և Սիմոն Զավարյանը: Նրանց ձեռք բերաժ հաղթանակը Լևոն Սարգսյանի գլխավորաժ ազատական թեևի նկատմամբ, արտացոլուժ էր կուսակցութայն ներսուժ հեղափոխական տրամադրութայնների վերելքի փաստը:

Ապակենտրոնացմանն անցնելու հասունացաժ պահանջումնքը ուներ նաև առարկայական պատճառներ՝ Հայ ժողովրդի ցրվաժութայնը և աշխարհագրական տարբեր գոտիներուժ ու տարբեր վարչակարգերի տակ ապրելու փաստը, որը դժվարութայններ էր ստեղծուժ կուսակցութայնը մեկ կենտրոնից ղեկավարելու համար: Ելնելով դրանից, «բուռն ծրագրի» «կազմակերպութայն» բաժինը սահմանուժ էր նաև Հ. Յ. Դաշնակցութայն բարոյական հավատամքը «...յեղափոխական գործուժ չի կարող լինել իրաւունքի և պահանջի խնդիր, այլ միմիայն բարոյական պարտավորութեան և բավարարութեան խնդիր», որի հեղինակը Սիմոն Զավարյանն էր: Սակայն, կամավորութայն ու կամավոր նախաձեռնութայն վրա հիմնվաժ գործունեութայնը նույնպես համակարգելու կարիք ուներ, ուստի ժողովը որոշեց ստեղծել երկու տեղեկատու-համակարգիչ մարմիններ, Բյուրոններ՝ Թիֆլիսուժ և Թավրիզուժ:

Այսպիսով, առաջին ընդհանուր ժողովը և նրա ընդունաժ «բուռն ծրագիրը» կամ ծրագիր-կանոնագիրը նշանավորեցին Հայ Յեղափոխականների Դաշնակցութայն փոխակերպումը գաղափարական

<sup>1</sup> Նավասարդեան Վ., Հայ անկախութեան գաղափարը մերձա որ անցեալի մէջ, «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1924, թիվ 4, էջ 30:

<sup>2</sup> Սեր ծրագիրը, «Դրոշակ», 1894, սեպտեմբեր թիվ 11, էջ 3:

ու կազմակերպական առումով միաձուլյ կուսակցութեան, որը շուտով սկսեց կոչվել Հայ Յեղափոխական Դաշնակցութեան՝ :

Առաջին ընդհանուր ժողովին հաջորդած տարիները՝ 1892-1897 թվականները դարձան ազատագրական պայքարի ծավալման ու դրա հիման վրա՝ Հ. Յ. Դաշնակցութեան կազմակերպական կառուցքի ընդլայնման և ամրապնդման շրջանը, որի հետևանքով կուսակցութեանը իր գործունեությունը կենտրոնացրեց միաժամանակ մի քանի ուղղությունների վրա: Բայց ի վերջո, այդ բոլոր աշխատանքները միտված էին Արևմտյան Հայաստանի ազատագրմանը, թեև անմիջականորեն հետապնդում էին զենքի ու զինամթերքի տեղափոխման, դեպի Երկիր ուղիներ հարթելու, ժողովրդին զինելու, դավաճաններին ու մատնիչներին ահարեկելու ու նաև ցուցական բնույթի գործողություններով եվրոպական երկրների ուշադրությունը հայկական հարցի վրա հրավիրելու անմիջական նպատակներ: Այդ խնդիրների իրականացմանը հետամուտ կուսակցութեանը սկսեց միաժամանակ մի քանի ուղղությունների վրա մարդուժ և զենք կուտակել՝ Արևմտյան Հայաստան տեղափոխելու համար: Դրանիցից առաջինը Ատրպատականն էր, ուր Հ. Յ. Դաշնակցութեան գործիչները թափանցել էին դեռևս մինչև առաջին ընդհանուր ժողովը: Թավրիզում Բյուրոյի նստավայրը հաստատելու մասին ընդհանուր ժողովի որոշումը ընդգծում էր այդ ուղղության կարևորությունը: Եվ պատահական չէր, որ ընդհանուր ժողովից հետո ուժեղացվեց տեղի կազմակերպությունը՝ մարտական ու մտավորական գործիչների մի ամբողջ խմբով, որոնք աշխուժացրին Ռոստոմի նախաձեռնությունները և նրա եղբոր Կարոյի /Արիստակես Զորյան/ ջանքերով ստեղծված «Խարխա» զինագործարանի աշխատանքը, ինչպես նաև համախմբվեցին պարսկա-թուրքական սահմանին հենակետ դարձած Դերիկի վանքի շուրջ, ուր որպես վանահայր հաստատվել էր Հայ ազատամարտի և Հ. Յ. Դաշնակցութեան նվիրյալ-հոգևորական Բազրատ վարդապետ Թավաբալյանը: Այստեղ էին անցել Հովսեփ Արղունյանը /Իշխան/, Նիկոլ Դուժմանը /Նիկողայոս Տեր-Հովհաննիսյան/, Փարհատը /Սարգիս Օհանջանյան/, Սևքարեցի Սաքոն /Սարգիս Ծովինյան/, Սաթևնիկ Մատինյանը /Օրիորդ Ծաղիկ/ և ուրիշներ: Դերիկի վանքի համար մղված կռիվներում և զենքի Վասպուրական զենք փոխադրելու համար ձեռնարկված բազմամթիվ վտանգավոր ու արկածալից արշավանքներում իր խիզախությունները առանձնապես աչքի ընկավ Հ. Յ. Դաշնակցութեան մարտական լավագույն ուժերից մեկը՝ Նիկոլ Դուժմանը:

Զենքի և մարտական խմբերի կուտակման ու Երկիր թափանցելու համար օգտագործվում էր նաև Երևանի ուղղությունը Սուրմալու-

<sup>1</sup> Գրն անվանու մը պաշտոնապես դեռ որոշ ժամանակ պահպանվեց, բայց քիչ անց տեղի ունեցավ «Ղրղալի» տիտղոսաբերքին անկա Յեղափոխակ, հասպախու մի «բացու մը» ոչ թե որպես Յեղափոխականների այլ Յեղափոխական Դաշնակցու քյու ու ձևակերպմամբ: Այս նախաձեռնու քյու ըր Հ. Յ. Դաշնակցու քյան տեսաբանները վերադրու մ են Ռոստոմին:

յով գեպի հարավ ընդհուպ մինչև Վան: Երբորդ ուղղությունը անցնում էր Կարսի վրայով և նպատակ ուներ զինել Տարոնի հայությանը:

Դրան զուգահեռ, առաջին ընդհանուր ժողովից հետո խիստ կերպով ուժեղացավ Կ.Պոլսի կազմակերպությունը շնորհիվ Հովհաննես Յուսուֆյանի ծավալած հսկայական կազմակերպական աշխատանքի: Նա անցրեց դաշնակցական գործիչների մի ամբողջ համաստեղություն՝ Օննիկ Դերձակյան /Վռամյան/, Վարդես Սերենկյուլյան /Զարմայր/, Բարկեն Սյունի /Փարյան/ և այլք:

Հ. Յ. Դաշնակցության գործիչներին բաժին հասած աշխատանքներից առավել դժվարն ու վտանգավորը բուն Երկրում Արևմտյան Հայաստանում ծավալված գործունեությունն էր: Վասպուրականում Հ. Յ. Դաշնակցության կազմակերպությունը ամրապնդվում էր Պետոյի /Ալեքսանդր Պետրոսյան/ եռանդուն գործունեության շնորհիվ, իսկ Տարոնում 1893-ին Մարգար վարժապետին ու Արաբոյին կորցնելուց և Սասունի 1894թ. հերոսամարտի պարտությունից հետո, կուսակցությունը ընդարձակվում ու ամրապնդվում էր շնորհիվ Հրայր-Դժոխքի /Արմենակ Ղազարյան/ և նրա շուրջը համախմբված մարտական լավագույն ուժերի, որոնց շարքում աստիճանաբար առանձնանում էր Սերոբ Աղբյուրը /Սերոբ Վարդանյան/:

Սակայն Հ.Յ. Դաշնակցության մեծածավալ կազմակերպական աշխատանքները և մանավանդ գեներալի ու զինամթերքի կուտակման գործընթացը, անկասկած, դեռևս չէին համապատասխանում 1894-1895 թվականներին սկիզբ առած հայկական կոտորածներին դիմադրավելու հրատապ առաջադրանքի մեծությունը: Այդ իրավիճակում ճիշտ կողմնորոշվելու և կուսակցության առջև կանգնած խնդիրները հստակեցնելու համար 1895-1898 թվականների ընթացքում Հ. Յ. Դաշնակցությունը հրավիրեց այսպես կոչված «առաջնական ընդհանուր ժողովներ», որոնք հետագայում կոչվեցին «Կովկասյան ռայոնական ժողովներ» կամ «Շրջանային» /«Շրջանական»/ ժողովներ: Դրանց չտրվեց ընդհանուր ժողովի կարգավիճակ, քանի որ բացակայում էին արտասահմանի և Արևմտյան Հայաստանի մի շարք կազմակերպությունների ներկայացուցիչները: Նշված ժողովներից առաջինը, որը նպատակ ուներ «... պարզել վերջին երեք տարուան ընթացքում առաջ եկած մի քանի անորոշ հարցեր, լուսաբանել ընդհանրապես գործուած սխալները և ճանապարհներ գտնել խոյս տալու համար, ապագայում այդպիսի սխալների կրկնություններից»,<sup>1</sup> տեղի ունեցավ 1895 թվականի սկզբին: Ընդունելով ապակենտրոն գործելակերպի ընձևած առավելությունները, միաժամանակ, այդ ժողովը ուշադրություն դարձրեց նաև տարբեր խմբերի կողմից միմյանց հակասող գործողությունների դիմելու կոնկրետ փաստերի վրա, ուստի անհրաժեշտ գտավ

<sup>1</sup> 1895-ի «Ընդհանուր» ռայոնական ժողովը, «Նիդեթ Է. Յ. Դաշնակցու թեան պատմու թեան համար», խմբ. Յ. Տաճասպետեանի, Բ հատոր, Պեյրու ք, 1985, էջ 18:

ընտրել միջին ճանապարհը՝ «... պահպանելով մի կողմից խմբերի և ռայոնների ազատութիւնը և ինքնուրոյնութիւնը, իսկ միւս կողմից՝ ապահովել գործնական ներդաշնակութիւն և համերաշխութիւն բոլոր խմբերի մէջ» :

1895-ի «ընդհանուր» /ռայոնական/ ժողովը որոշեց, որ «Պարսկաստանի Բիւրօն» այսուհետև կոչովելու է և ստանալու ինքնուրոյն խմբի անուն ու նշանակութիւն»<sup>1</sup> : Միաժամանակ, ամենակարևոր հարցերից մեկը համարվեց զենքի և դրամական միջոցների հայթայթումը: Դա Սասունի 1894թ. հերոսամարտի և սկիզբ առած ջարդերի անմիջական արձագանքն էր: Զենքի և զինամթերքի խոշոր պաշարներ էին անհրաժեշտ ոչ միայն Արևմտյան Հայաստան անցնող զինատար խմբերին, այլև Կ.Պոլսի կենտրոնական կոմիտեին, որը իրար ետևից սկսել էր կազմակերպել տեղի հայութեան մեջ առկա լրտեսների ու մատնիչների ահաբեկումը. 1895թ. հունիսի 2-ին՝ ոստիկան Հաճի Տիգրանի, հունիսի 23-ին՝ Թուլթուլենճիբփի, օգոստոսի 3-ին՝ Մամբրեի, 1896թ. մայիսի 16-ին՝ փոլիս-կոմիտեր Մարգարի, 1896թ. մայիսի 27-ին՝ Մայր տաճարի լուսարար Հովհաննեսի և այլն: Այս քայլերը դավաճանների հանդեպ պարզ հաշիվհարդարներ չէին, այլ քաղաքական - դաստիարակչական ձեռնարկներ, որոնցից յուրաքանչյուրի իրականացմանը հետևում էր Կ.Պոլսի կենտրոնական կոմիտեի կազմած «Խասուպարտութեան տեղեկագրի» հրատարակումը: Դաշնակցական ահաբեկիչները արժանապատիւթյամբ էին տանում նաև պատասխան հարվածները: Երբ 1896թ. հունիսի 3-ին կախաղան բարձրացվեցին դաշնակցական երկու ահաբեկիչներ՝ ռոդոստոցի Կեռզը և չմշկածաղցի Հովսեփը, Հ.Յ. Դաշնակցութեան Կ.Պոլսի ԿԿ-ն իր թուուցիկ թերթում հայտնում էր. «Երկուքն այ հաւատարիմ իրենց նշանաբանին, անվեհեր զիմազրաւեցին մահը,- Գէորգ ծիծաղեցաւ կախաղանին առջեւ, ու Յովսէփ մերժելով քահանան ու դահիճը, ձեռքովը վզին անցուց չուանը «Կեցցէ Հայաստան» աղաղակելով» :

Սկիզբ առած ջարդերի պայմաններում, մի շարք խորհրդակցութիւններից հետո, որոշվեց 1896 թվականին միաժամանակ և Կ.Պոլսում, և Արևմտյան Հայաստանում իրականացնել հեղափոխական ձեռնարկներ: Այդ նպատակով, Կարսի զծով 1895-ին Արևմտյան Հայաստան էին անցել Սերոբ Աղբյուրի խումբը, Հրայր-Դժոխքի գլխավորած խմբերը /2 անգամ/ և Արամ Արամյանի խումբը: Իրավիճակն ավելի էր բարդանում 1896-ի Վանի ինքնապաշտպանութիւնից ու հերոսական նահանջից հետո, որի հետևանքով Կարահիսար լեռան լանջին, ի թիվս այլ մարտիկների, զոհվել էր նաև Վասպուրականում Հ. Յ. Դաշնակցութեան ներկայացուցիչ Ալ. Պետրոսյանը /Պետուն/:

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 19:

<sup>2</sup> Նույն տեղում:

<sup>3</sup> Նիխոր Չ.Յ. Դաշնակցու թեան պատմու թեան համար, Ա հատոր, Պէյրուք, 1984, էջ 162:

Վանի իրադարձությունների մասին տեղեկութուն ստանալուց հետո, 1896-ի առաւել Կարսում գումարվում է Ն.Յ. Դաշնակցութեան Զինվորական խորհուրդ՝ Բյուրայի ներկայացուցչի մասնակցութեամբ, սակայն նրա որոշումների գործադրմանը խանգարում է խորհրդի մասնակիցներից երկուսի՝ Արամ Արամյանի և Հրայր-Դժոխքի ձերբակալությունը հուլիսի 2-ին Բասենի Գյուլիբեյոյ գյուղում: Քիչ անց՝ հուլիսի 21-23-ին Կարսում գումարվում է մի նոր Զինվորական խորհուրդ, որը ի նկատի ունենալով միջազգային ստույգ անբարենպաստ կացութիւնը և արշավանք ձեռնարկելու դեպքում կոտորածների հավանականութիւնը, որոշում է ձեռնարկը հետաձգել և խմբերը ցրել: Դրանից հետո, միտոժամանակ, ակտիվ գործողութիւնների կենտրոնը տեղափոխվեց Կ. Պոլիս: Այստեղ անհրաժեշտ էր համարվում ուժեղ ցնցում առաջացնելու և բարենորոգումների գործը տեղից շարժելու համար հարվածել Թուրքիայում եվրոպական երկրների ունեցած շահերին: Այդ նպատակով Կ. Պոլսի ԿԿ-ն որոշում է գրավել Բանկ Օտտոմանը, որը փաստորեն գտնվում էր Ֆրանսիացիների և անգլիացիների վերահսկողութեան տակ: Դրան գուգահեռ, պանսլավոփած էր ռմբային գործողութիւններ կատարել Իզմիրում և Կ. Պոլսի Սամաթիա թաղամասում:

Կ. Պոլսի ԿԿ-ն բանկը գրավողների անունից առաջադրելու էր բարենորոգումների իրականացման մի ամբողջ ծրագիր, սակայն 1896թ. օգոստոսի 14-ի ձեռնարկը հնարավոր չեղավ հասցնել մինչև վերջ, քանի որ Բանկ Օտտոման մտած 26 դաշնակցականներից չորսը սպանվել էին, հինգը՝ վիրավորվել, իսկ պայթուցիչների մեծ մասը չէին կարողացել տեղափոխել շենքից ներս: Առկա միջոցներով Բանկ Օտտոմանի ներսում գտնվողները այլևս ի վիճակի չէին պայթեցնել շենքը: Ուստի բանակցութիւններն ու ռուսական դեսպանատան թարգման Մաքսիմովի միջնորդութեամբ՝ գործողութեան անմիջական մասնակիցների հեռացումը արտասահման, ըստ էութեան, միակ ելքն էին: Միաժամանակ, մարտի ծավալվեցին Կ. Պոլսի Սամաթիա թաղամասում, ուր 18 ժամ տևած կռիվների հետևանքով երկուստեք եղան մեծածիփ գոհեր: Բայց դա այլևս նախորդ տարվա ջարդերը չէին: Հայերը հավասարը-հավասարի կռիվում էին կանոնավոր զորքերի և թուրք խուժանի դեմ:

Բանկ Օտտոմանի գրավման արձագանքը շատ մեծ էր և թվում էր, թե եվրոպական միջամտութեան հեռանկարը իրական է դառնում: Այդ պայմաններում՝ 1896 թվականի դեկտեմբերի 27-ին սկիզբ առած 1896-1897-ի Ն.Յ. Դաշնակցութեան տարեկան «ընդհանուր» ժողովը որոշեց ուժեղացնել եվրոպայում հայկական հարցի օգտին տարվող քարոզչութիւնը և այդ նպատակով «կադմակերպել մի ուժեղ խմբագրութիւն «Դրօշակի» համար, որպէսզի նրա անդամներից մէկը ժամանակ առ ժամանակ շրջապալի արտասահմանում, կազմակերպի նորանոր խմբեր, բանակցի պանազան գործիչների, հրապարակաստների հետ և

առհասարակ աշխատի վառ պահել հայկական բողոքը եւ աւելի ու աւելի զրգռի Եւրոպայի հետաքրքրութիւնն ու մարդասիրութիւնը: Այդ խմբապրութիւնը միւսնոյն ժամանակ լինելու է ամբողջ «Դաշակցութեան» արտասահմանեան ներկայացուցիչ-բիւրօն»<sup>1</sup>: Այս որոշումը անհրաժեշտ պայմաններ էր ստեղծում Արեւմտյան Բյուրոյի ձեւավորման համար:

1896-1897թթ. տարեկան «ընդհանուր» ժողովը որոշեց Ատրպատականում եւս պատրաստի ուժեր ու գնեք կուտակել, անհրաժեշտութեան դեպքում սահմանն անցնելու եւ արշավանք կազմակերպելու համար՝ միաժամանակ փորձելով զինել Վասպուրականի հայութեանը: Որոշվեց նաև Կարսի ու Բասենի շրջաններում կուտակված ուժերը աստիճանաբար կենտրոնացնել Սասունում, ինչպես նաև ուշադրութեամբ դարձնել Կիլիկիայի եւ Դերսիմի վրա՝ որպես ապագա ակտիվ գործունեութեան կետերի: Այդ որոշումներից ամենակարևորը, անկասկած, Ատրպատականից դեպի Վասպուրական արշավանքի կազմակերպման խնդիրն էր, որին սկզբնական շրջանում դեմ էին արտահայտվում Վասպուրականի գործիչները, ինչպես նաև Ատրպատականում գտնվող ֆիդայիների մի մասը՝ Վարդանը, Իշխանը, Սևքարեցի Սաքոն եւ ուրիշները: Ուստի Սալմաստում 1897թ. հուլիսի 8-ին կայացած ժողովը թեև որոշում է բավարարել Վանի դաշակցականների պահանջը եւ այնտեղ ուղարկել 50 զինված հայուկներ, սակայն, միաժամանակ, Նիկոլ-Գումանի պնդմամբ կարևորվում է նաև «ընդհանուր» /ուայոնական/ ժողովի որոշումը կատարելու անհրաժեշտութեանը: Ուստի, արշավանքի նախապատրաստմանը զուգահեռ՝ Վան է մեկնում Վաղգենի /Տիգրան Տերոյան/ 25 հոգանոց խումբը, որի մեջ էին նաև Տարոն անցնող ապագա հերոսները՝ Անդրանիկը /Օղանյան/ եւ Գուրգենը /Բաղդասար Մալյան/:

Ձեռնարկված արշավանքը նախորդ բոլոր հայդուկային անցումների համեմատ ամենախոշորն էր եւ նրանում կիրառվեցին բանակային կարգապահութեան որոշ տարրեր, /հրամանատար՝ Ս. Մեհրաբյան /Վարդան/, տեղակալ՝ Հ. Արղության /Իշխան/, հիւսնյակներ եւ այլն/, քանզի մոտ 250 հայուկներին այլ կերպ հնարավոր չէր ղեկավարել: Մազրիկների ցեղին հասցված հարվածը Խանասորի դաշտում՝ 1897-ի հուլիսի 25-ին, շշմեցուցիչ էր եւ անկասկած. նպաստեց քրդական տարրի սանձմանն ու զսպմանը:

Խանասորի արշավանքից հետո հրավիրվեց Հ.Յ. Դաշակցութեան կովկասյան մարմինների 1897-1898թթ. տարեկան շրջանական /շրջանային/ ժողովը, որը ամփոփելով ստացված զեկուլյցները եւ հաշվի առնելով այն հանգամանքը, որ թե՛ տեղի կոմիտեները եւ թե՛ արտասահմանի կուսակցականները պահանջում են ընդհանուր ժողովի շուտավույժ հրավիրումը, որոշեց այդ ժողովը գումարել Թուսաստանում

<sup>1</sup> Նիկիթեր Դ. Յ. Դաշակցութեան պատմութեան համար, հատ. ք, էջ 32:

և կազմել նրանում տարրեր շրջանների ներկայացուցչության չափը, քննարկվելիք հարցերի ցանկը:

\*

\*

\*

Հ. Յ. Դաշնակցության երկրորդ ընդհանուր ժողովը զուգարգում էր 1890-ական թվականների Ջարդերին հաջորդած տեղատվութան ու հուսախաբույթյան պայմաններում: Սակայն 1896-1897 թվականներին կուսակցության իրականացրած գործողությունները /Բանկ Օտտոման, Խանասոր/ տեղաշարժեր էին առաջ բերել նաև թուրքական կառավարության քաղաքականության մեջ, որը թեև շարունակում էր հավատարիմ մնալ Հայությանը բնաջնջելու իր ծրագրերին, բայց խուսափում էր նոր կոտորածների կազմակերպումից և անգամ Արթին փաշա Տատյանի միջոցով ժամանակ շահելու համար, բանակցություններ էր սկսում Հ. Յ. Դաշնակցության հետ: Բանակցությունների այդ գործընթացը տեևց 1896-ից մինչև 1899 թվականը, երբ սուլթանին պարզ դարձավ, որ Լազիի խողաղություն համաժողովում Հայկական բարենորոգումների խնդիրը չի բարձրացվելու: Հ. Յ. Դաշնակցությունն իր հերթին եզրուպական մամուլում տպագրված համապատասխան հրապարակումներով բացահայտեց սուլթանի կեղծ խաղը և հավաստեց պայքարը շարունակելու իր վճռականությունը:

Հ. Յ. Դաշնակցության երկրորդ ընդհանուր ժողովի նախօրեին ակնհայտ էր դարձել Հայության և՛ մարտական ուժի և՛ նյութական հնարավորությունների սահմանափակ լինելը, որի հետևանքով առաջարկություններ էին հնչում կուսակցության մարտավարությունը փոխելու մասին: Այդ առումով ուշադրավ էր Վասպուրականի կենտրոնական կոմիտեի կարծիքը, որը 1897թ. դեկտեմբերի 1-ի/19-ի/ ծածկագիր նամակով ուղարկել էր Վազգենը /Տիգրան Տերոյան/: Նամակում խորհուրդ էր արվում խուսափել մասնակի բնույթ ունեցող գործողություններից և Արևմտյան Հայաստանի մի շարք վայրերում կատարել ուժերի կենտրոնացում: Մասնավորապես, առաջարկվում էր Դերսիմում, Սասունում և Վանում կենտրոնացնել յուրաքանչյուրում 500-700 հրացանով մարտական ուժեր, ինչպես նաև գործիչներ ուղարկել ասորիների մոտ՝ մելիքների հետ բանակցելու և նրանց նույնպես ոտքի հանելու համար:

Հ. Յ. Դաշնակցության երկրորդ ընդհանուր ժողովը նշանակված էր 1898թ. մարտի 29-ին, բայց սկսվեց միայն ապրիլի 5-ին ու տևեց երեք ամիս: Մասնակցում էին 19 պատգամավորներ և 13 գործիչներ: Օրակարգում էր 7 հարց ա/ տակտիկա կամ գործունեության եղանակ, բ/ կազմակերպություն, գ/ կարգապահություն, դ/ գրամական խնդիր, ե/ միության խնդիր /այլ կուսակցությունների հետ/, զ/ բա-

<sup>1</sup> Տե ս էիիթեր Գ Դաշնակցու քեսն պատմու քեսն հանար, Բ. Հատր, էջ 48:

նակցութեան խնդիր /սուլթանի հետ/ և է/ ընտրութիւններ: Առաջնահերթն, իհարկեւ, նոր մարտավարութեան /տակտիկայի/ հարցն էր, որի քննարկումից առաջ ժողովը «... սկզբունքով միաձայն ընդունեց, թէ առանց եւրոպական միջամտութեան անկարող ենք մեր ժողովուրդի ազատութեան գործը զուլս բերել, հետեւաբար, գործունեութեան եղանակը որոշելու ատեն ի նկատի պիտի ունենայ այդ միջամտութիւնը յառաջ բերելու բոլոր հնարաւորութիւնները»: Այդ պատճառով, երկար վեճեր ծավալվեցին երկու հարցերի շուրջը. «1. Միայն ցուցական գործունեութիւն բուն երկրէն /Օսմանեան Հայաստանէն դուրս/: 2. Ուժերու կենդրոնացում երկրին մէջ, /ապստամբական պատրաստութիւններ/ ցոյցերու հետ ընկերացած»: Առաջին տեսակետի կողմնակիցները գտնում էին, որ ստեղծված իրավիճակում հնարավոր էէ շարունակել կռիվը կամ նախապատրաստութիւնները՝ մինչև որ չփոխվեն պայմանները Արեւմտյան Հայաստանում /այսինքն չգործադրվեն բարենորոգումները/: Երկրորդ տեսակետի կողմնակիցները պնդում էին, որ իրավիճակի բարդութիւնը պետք է նկատի ունենայ ոչ թե սեփական նպատակը, այլ նրան հասնելու միջոցները ճշտելու պարագայում: Ի վերջո, ժողովը որոշեց համադրել Արեւմտյան Հայաստանում ուժերի կենտրոնացման խնդիրը Կ.Պոլսում և այլ ծովափնյա քաղաքներում ծավալվելիք ցուցական գործունեութեան հետ: Բանաձևում նշվում էր որ ժողովը «... սկզբունքով ընդունեց ուժերու կենտրոնացումը երկրին մէջ, ցոյցը Պոլիս եւ ծովափննայ քաղաքները, եւ մերժելով Ֆէտայական ասպատակային գործունեութիւնը՝ ընդունեց մարտական-գիւնամարզական խումբեր կազմակերպելու ծրագիրը»: Ուժերի կենտրոնացման վայրեր ընտրվեցին Սասունը, Կիլիկիան, Կ.Պոլիսը, ինչպես նաև Վասպուրականը, ուստի որոշվեց Ատրպատականում կուտակված մոտ 300 հրացանները հավասար կերպով բաշխել Վասպուրականի, Շատախի եւ Մոկսի լեռնային մասերում կազմվելիք խմբերին: Որոշվեց նաև դեպի Արեւմտյան Հայաստան արշավանք կազմակերպել միայն այն դեպքում, եթե այնտեղ սկսված լինեն կռիվները:

Օտար տարրերի հետ համերաշխութիւնը հաստատելու համար անհրաժեշտ համարվեց կապիտ հաստատել մակեդոնացիների, հունյների հետ, պատմորակ ուղարկել ասորիների մոտ, շարունակել սկսված բանակցութիւնները երիտասարդ թուրքերի հետ: Այդ խնդիրների իրականացման համար երկրորդ ընդհանուր ժողովը լուրջ փոփոխութիւններ կատարեց Հ.Յ. Դաշնակցութեան կազմակերպական կառուցի մեջ: Հաստատվեց 1896-1897թթ. Կովկասյան ռայոնական ժողովի որոշումը երկու Բյուրոներ Արեւելյան /Թիֆլիս/ եւ Արեւմտյան /Ժնև/ ունենալու մասին, տարանջատվեցին նրանց գործունեութեան աշխար-

<sup>1</sup> Տե՛ս Լիլիթեր Գ. Յ. Դաշնակցու թեան պատմու թեան համար, Բ. Գառոր, էջ 56:

<sup>2</sup> Լույն տեղում:

<sup>3</sup> Լույն տեղում, էջ 58-59:

<sup>4</sup> Լույն տեղում, էջ 59:

Հագրակաճ սահմանները: Արեւմտյան Հայաստանը՝ Կիրասոն-Խարբերդ-Տիգրանակերտ գծից դեպի արեւելք, Պարսկաստանը և Ռուսաստանը /Կովկասով Հանդերձ՝ դարձան Արեւելյան Բյուրոյի, իսկ վերը նշված սահմանագծից արեւմուտք ընկած տարածքները՝ Կիլիկիան, Կ. Պոլիսը, Բալկանները և արեւմտյան երկրներում եղած կառույցները՝ Արեւմտյան Բյուրոյի գործունեութեան տիրույթները: Ուժերի կենտրոնացման վայրերում որոշվեց ստեղծել Պատասխանատու կենտրոնական կոմիտեներ, այսինքն այնպիսի մարմիններ, որոնք իրենք էին պատասխանատու տվյալ վայրերում ձեռնարկվելիք քայլերի համար: Վերջիններիս յիշգորութունները սահմանափակվում էին միայն ընդհանուր ժողովի որոշումների շրջագծով և իրենց տարածքներում նրանց ունեցած իրավասութունները փաստորեն ափսի բարձր էին, քան Բյուրոներին տրվող յիշգորութունները: Ժողովն ինքն ընտրեց Պատասխանատու մարմիններից առաջին երեքը՝ Սասունի, Կիլիկիայի և Կ. Պոլսի կազմերը՝ Արեւելյան Բյուրոյին վստահելով Վասպուրականի Պատասխանատու մարմնի ձեւափորումը:

Օտարների առջև Զ. Յ. Դաշնակցութունը ներկայացնելու, հարկ եղած դեպքում՝ ողջ կուսակցութեան անունից շտապ վճիռներ կայացնելու համար որոշվեց ընդհանուր ժողովների միջև ընկած ժամանակամիջոցում նման իրավասութուններ տրամադրել երկու Բյուրոներին ու Պատասխանատու կենտրոնական կոմիտեներին՝ միասնաբար, որոնք այդ պարագայում դառնում էին «Դաշնակցութեան կամքը ներկայացնող մարմին» և իրավունք ունեին անգամ փոխել ընդհանուր ժողովի որոշումները կամ հետաձգել դրանց իրագործումը:

Երկրորդ ընդհանուր ժողովի նախանշած կարևոր խնդիրներից մեկը արտասահմանում հայկական հարցի օգտին տարվող քարոզչութեան ուժեղացման, Արեւմուտքում հայասիրական շարժում սկսելու մասին որոշումն էր, որի իրականացման համար ժողովից հետո Ժնև մեկնեց Քրիստափոր Միքայելյանը: Նա նկատելիորեն ուժեղացրեց «Դրոշակի» աշխատակիցների կազմը՝ ներգրավելով Խաչատուր Մայումյանին /Ակնունի/, Ավետիս Ահարոնյանին /Ղարիբ/, Միքայել Վարանդյանին /Հովհաննիսյան/: Այնուհետև մեկնելով Փարիզ, Քր. Միքայելյանը 1900 զթվականին այնտեղ հիմնեց «Պրո Արմենիա» ֆրանսերեն լեռնիք՝ Պիեռ Բիշոսի խմբագրութեամբ: Խմբագրակազմի մեջ էին նաև Ժան Ժորեսը, Անատոլ Ֆրանսը, Ֆրանսիս դե Պրեսանսեն, Ժ. Կլեմանսոն և այլ նշանավոր գործիչներ: Աշխատանքների մի կարևոր բաժինը իրականացնում էր Միքայել Վարանդյանը, իսկ եփրոպայում հայասիրական շարժումը աշխուժացնելու գործում սկսել էր կարևոր դեր խաղալ Պետրրուզից Քր. Միքայելյանի հրավիրած, Զ. Յ. Դաշնակցութեան հիմնադիրներից՝ Հովհաննես Լոռու-Մելիքյանը:

Երկրորդ ընդհանուր ժողովի որոշմամբ ուժերի կենտրոնացման վայրեր ընտրված շրջաններից առաջին կարևոր նշանակություն ունեւր Սասունը: Թեև արգեն Հիմնադիր ժողովների շրջանում ճարտնում գոր-

ծում էին առաջին դաշնակցականները, բայց որպես կուսակցություն՝ Ն. Յ. Դաշնակցությունը Սասուն մուտք գործեց 1894թ. կռիվներից հետո: Բազմաթիվ նվիրյալների շարքում Սասունում կուսակցությունն ուներ կազմակերպական ձիրք և քաղաքական փայլուն գիտելիքներ ունեցող այնպիսի առաջնորդ ինչպիսին էր Հրայրը /Արմենակ Ղազարյան/: Խորապես գիտակցելով առաջին տարիներին թույլ տրված սխալները և հայդուկային մարտավարության անհեռանկարայնությունը, նա կարևորում էր զենքի տեղափոխման, ժողովրդի գինման, Ն. Յ. Դաշնակցության կազմակերպական կառույցի ուժեղացման խնդիրները: Հրայրի տեսակետները կիսում էին Գուրգենը /Բաղդասար Մալյան/, Վաղգենը /Տիգրան Տերոյան/ և Տարոնի ու Վասպուրականի այլ գործիչներ: Հրայրի որդեգրած գործելակերպը նպատակ ուներ գինել ժողովրդին, նրան դարձնել ժողովուրդ-բանակ և Տարոնում ու Վասպուրականում նախապատրաստվել ընդհանուր ապստամբություն: Սակայն Վաղգենի նահատակությունը Վանի մոտ, Կուռուբաշ գյուղում 1898-ի հունվարին, Գուրգենի նահատակությունը Մշո Ցրոնք գյուղում 1899-ի ապրիլի 24-ին և Հրայրի ձերբակալությունը 1899-ի հունվարին, խիստ դժվարացրին սկսված գործի շարունակումը: Դրան հաջորդեց Սերոբ Աղբյուրի թունավորումն ու սպանությունը, որին ի պատասխան Անդրանիկն ու Գևորգ Չավոչը վրեժ լուծեցին մատնիչ Ավելից և Սերոբ Աղբյուրի դահլիճ նախիրից:

Ստեղծված հուսալքություն մթնոլորտում ժողովրդին ուղևորելու և բարենորոգումների խնդիրը կրկին օրակարգի մեջ մտցնելու համար Անդրանիկը, Գևորգ Չավոչը, Հակոբ Կոտոյանը և այլ նշանավոր հայդուկներ ձեռնարկում են Առաքելոց վանքի կռիվը՝ 1901 թվականի նոյեմբերին՝ 21 օր դիմադրելով վանքը պաշարած թուրքական զորքերին: Այդ քայլը, անկասկած, բարձրացրեց Տարոնի հայության դիմադրական ոգին, սակայն հիմնական խնդիրը ընդհանուր ապստամբության նախապատրաստումը, դեռևս ժամանակ ու հսկայական միջոցներ էր պահանջում, միջոցներ, որոնք այդ պահին կուսակցությունը չուներ:

Ստեղծված ծանրագույն կացությունը թեևադրում էր իրականացնել արտակարգ միջոցառումներ, որոնք անհրաժեշտ էին զենքի և զինամթերքի խոշոր խմբաքանակներ ձեռք բերելու համար: Սասունում ուժերի կենտրոնացման նպատակով Արևելյան Բյուրոյի շրջանային ժողովը /1899-ի հունվար/ անհրաժեշտ էր համարել առնվազն 1500 հրացանի ներմուծումը, իսկ մյուս ծախսերի հետ միասին՝ դրանք ձեռքբերելու ու տեղափոխելու ընդհանուր գումարը հասնում էր 305 հազար ռուբլու:

Ուստի 1901 թվականի մարտի 25-ին /ապրիլի 7-ին/ երկրորդ ընդհանուր ժողովի որոշումների հիման վրա և Արևմտյան ու Արևելյան Բյուրոների համաձայնությունով, Բուլղարիայի Ֆիլիպս քաղաքում հրավիրված «Ն. Յ. Դաշնակցության կամքը ներկայացնող մարմնի»

ժողովը դիմեց ծայրահեղ քայլի՝ որոշելով դրամական միջոցների «...ժողովարարութեան դիմումը եւ տեւորի կիրառութիւնը կատարել Վիշապի /Կ.Պոլսի Գ. 10./ Պատասխանատու Կեդրոնական Կոմիտեի անունով, եւ ատոր համար կազմել մի առանձին կազմակերպիչ-վարիչ մարմին, Դաշնակցութեան կամքը ներկայացնող մարմինէն որոշուած անձնաւորութիւններէ»<sup>1</sup> : Այս ձեռնարկի «Փոթորիկի» գործի ղեկավարությունը ստանձնած Քր. Միքայելյանը մեկնեց Կովկաս և իր շուրջը համախմբելով երիտասարդ ու անձնուրաց ուժերին, սկսեց միջոցների հանդանակությունը: Հայ բուրժուազիայի մեծ մասը բմբռնումով մոտեցավ Հ.Յ. Դաշնակցութեան այս քայլին, սակայն եղանակաւ դիմադրողներ ու դաշնակցականներին ցարական ոստիկանութեանը մատնողներ: Նրանցից մի քանիսը /Խաչակ Ժամհարյան, Հարություն Աղամյան և այլք/ ահաբեկման ենթարկվեցին: Սակայն, զրանով հնարավոր եղավ որոշ չափով մեղմել զենք ու դինամիթը ձեռք բերելու համար անհրաժեշտ միջոցների պակասը:

Ուստի, արդեն 1904թ. փետրվար-մարտ ամիսներին Սոֆիայում տեղի ունեցած Հ. Յ. Դաշնակցութեան երրորդ ընդհանուր ժողովը արձանագրեց, որ բունի հանգանակութեան մասին որոշումը «... ընդհանուր ժողովը կընդունի որոշ, տազնապի վայրկեաններուն մէջ իբր անխուսափելի միջոց մը, որը սակայն իբր բացարձակ չարիք՝ պետք է իր կիրարկութեանը մէջ սահմանափակուի...»<sup>2</sup> : Այդ պատճառով ժողովը որոշեց «Փոթորիկի» գործը շարունակելու իրավունք տալ միայն «Յուցական մարմնին», այսինքն՝ Կ.Պոլսի և Իզմիրի Պատասխանատու կենտրոնական կոմիտեին:

Երրորդ ընդհանուր ժողովը տեղի էր ունենում ծանրագույն պայմաններում՝ թուրքական զորքերը պաշարել էին Սասունը: Սկիզբ էր առել օրհասական կռիվը: Մինչ այդ Հ. Յ. Դաշնակցութեան կողմից ուղարկված բազմաթիվ հայդուկային խմբերից միայն Թորգոմի /Թուման Թումայան/՝ 23 հոգանոց «Մրրիկ» հեծելախմբին էր հաջողվել անցնել Սասուն, - մյուսները սահմանային ընդհանուրմների հետևանքով ձախողութեան էին մատնվել:

Սասունում սկիզբ առած ռազմական գործողութիւնների պայմաններում ընդհանուր ժողովը Բարձրավանդակի /Սասունի/ Պատասխանատու մարմնին տվեց «...լիազորութիւն ընտրելու այն ուղղութիւնը, որ ինք յարմար կը տեսնէ առաջիկայ զարման համար, զնելով անոր տրամադրութեան տակ պէտք եղած միջոցները եւ կռուի տեխնիկական մասի պատասխանատուութիւնը ձգեց այս մարմնի վրա»<sup>3</sup> : Միաժամանակ, հանձնարարվեց Զրաբերդի /Կարս/ և Մրգաստանի /Երևան/ կենտրոնական կոմիտեներին մինչև մայիսի կեսը զենք ու զի-

<sup>1</sup> Նիխորի Դ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար, Բ հատր, էջ 362

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 129:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 111:

նամթերք հասցնել Սասուն: Վասպուրականի կենտրոնական կոմիտեին հանձնարարվեց իր ձեռքի տակ եղած 121 հրացաններից 60-ը տեղափոխել «... Ախլաթ մինչև զարուն Սասնոյ համար»<sup>1</sup>: Ատրպատականի կենտրոնական Կոմիտեին տրամադրվեցին միջոցներ այստեղ եղած 90 հրացանի փոխադրության համար: Այս որոշումների գործադրումը սկսվեց անմիջապես՝ հենց ժողովի օրերին: Ժողովը որոշեց Թուրքիայում ունենալ երեք Պատասխանատու կենտրոնական կոմիտեներ՝ Կլիկիայում, Սասունում և Կ.Պոլիս-Իզմիրում /Յուլյական մարմին/: Իսկ եկեղեցական կալվածքների բռնադրավման դեմ Անդրկովկասում սկիզբ առած շարժումը ղեկավարող «Ինքնապաշտպանության կենտրոնական կոմիտեն» ընդհանուր ժողովի որոշմամբ վերածվեց «Կովկասի պատասխանատու մարմին»:

Երրորդ ընդհանուր ժողովը առաջինն էր Հ.Յ. Դաշնակցության պատմության մեջ, որը ոչ միայն հստակացրեց կուսակցության կազմակերպական կանոնները, այլև մանրամասնեց դրանք՝ որոշելով յուրաքանչյուր կազմակերպական միավորի անդամների նվազագույն թվաքանակը՝ Թուրքիայում և նրանից դուրս: Միաժամանակ, հենց այս ժողովի որոշումով, դեռևս երկրորդ ընդհանուր ժողովի վճռահարման հիման վրա ստեղծված «Դաշնակցության կամքը ներկայացնող մարմին» փոխարինեց «Դաշնակցության խորհուրդը», որը բաղկացած էր լինելու Պատասխանատու կենտրոնական կոմիտեների և զույգ Բյուրոների ներկայացուցիչներից: Մեկ տարի անց հենց այս նոր մարմին՝ «Դաշնակցության խորհուրդի» որոշումների հիման վրա սկսվեց Հ.Յ. Դաշնակցության հեղափոխական գործունեությանը Անդրկովկասում:

Երրորդ ընդհանուր ժողովի կողմից ընդունվեց նաև որոշում՝ սուլթան Աբդուլ Համիդին ահաբեկելու մասին, որի իրականացումը դրվեց «Յուլյական մարմին» վրա: Այդ գործը անձամբ իր ձեռքը վերցրեց Քրիստափոր Միքայելյանը: Սակայն 1905թ. մարտի 5-17-ին Բուլղարիայում, Վիտոշ լեռան լանջին, ձեռնառումների փորձարկման ժամանակ զոհվեցին Քրիստափոր Միքայելյանը և նրա երիտասարդ գործընկեր Վառաժ Բենտրիյանը: Դրանից հետո այս որոշման իրականացման գործի գլուխ կանգնեց Մկրտիչ Մարգարյանը /Սաֆո/, որը փոքր ինչ վերափոխեց նախնական ծրագիրը՝ ձեռնառումներ նետելու մասը: Մահափորձը կատարվեց միայն կառքի մեջ տեղադրված «ղժոխային մեքենայի» միջոցով՝ 1905թ. հուլիսի 21-ին, սակայն սուլթանը այդ պահին խոսակցության մեջ լինելով շեյխ-ուլ-իսլամի հետ, փոքրինչ ուշացավ ու դրանով փրկվեց մահից: Հետագայում, 4-րդ ընդհանուր ժողովը /1907թ./ պատասխանատվության ենթարկեց գործողությանը ձևափոխումներին:

<sup>1</sup> Սուլյն տեղում:

Մինչև 20-րդ դարի սկիզբը Հ. Յ. Դաշնակցության գործունեությունը նպատակը Արևմտյան Հայաստանն էր եւ Անդրկովկասում, Պարսկաստանում կամ այլ վայրերում ձեռնարկված նրա կազմակերպական կառուցյալ իր ուժերն ու միջոցները կենտրոնացնում էր միայն մեկ ուղղությամբ: Սակայն ցարիզմի հայահալած քաղաքականությունը Անդրկովկասում վտանգում էր կովկասահայության գոյությունը սկզբում հոգևոր-մշակութային /եկեղեցական գույքի բռնագրավում և որպես զրա հետևանք զարոցների փակում/, իսկ հետագայում նաև ֆիզիկական իմաստով /հայ-թաթարական կռիվների սանձազերծում/:

Կովկասի կառավարչապետ իշխան Գոլիցինի նախաձեռնությամբ 1903թ. հունիսի 12-ին ընդունված օրենքով սկիզբ առած հալածանքները Հայ առաքելական եկեղեցու հանդեպ, միահամուռ դժգոհություն առաջացրին հայ հասարակության բոլոր շերտերի և բոլոր քաղաքական հոսանքների մոտ: Հ. Յ. Դաշնակցության նախաձեռնությամբ ստեղծվեց միջկուսակցական մարմին՝ «Հայկական ինքնապաշտպանություն» կենտրոնական կոմիտե», որի անունից էջմիածին այցելեց Ռոստոմը հորդորելով կաթողիկոս Մկրտիչ Նրիմյանին ի պատասխան ցարի հրամանագրի հրապարակել մերժման կոնդակ: «Հայկական ինքնապաշտպանություն» կենտրոնական կոմիտեն» հատուկ կոչով դիմեց Անդրկովկասի հայությանը, որտեղ նշվում էր հրամանագրին չենթարկվելու, իրենց հսկողության տակ եղած կալվածքները չհանձնելու անհրաժեշտությունը հսկառակ պահվածքը զնահատելով որպես դավաճանություն: 1903թ. հունիսի 29-ից սկիզբ առան ցույցեր /Ալեքսանդրապոլի հայության տված առաջին ազդանշանից հետո/: Ալեքսանդրապոլից ցույցերի ալիքն անցավ Երևան, Ախալքալաք, Գանձակ, Բաքու, Շուշի և այլ հայաշատ բնակավայրեր:

Ստեղծված կացությունը ստիպում էր Հ. Յ. Դաշնակցությանը վերանայել իր մոտեցումները: Սոֆիայում 1904թ. փետրվար-մարտ ամիսներին գումարված երրորդ ընդհանուր ժողովը արձանագրել էր, որ Հ. Յ. Դաշնակցությունը «...ընդունելով հանդերձ թէ իր հիմնարկությունն նպատակը եղած է եւ այսօր ալ է Օսմանեան Հայաստանի պատմական դատը, ճանաչելու եւ վաւերացուած միջազգային դաշնագրերով, չի կրնար սակայն անտես ընել հայ ժողովրդի մարդկային իրավունքներու բռնաբարումի ծանր դեպքերը, որոնք վերջերս տեղի ունեցած և սկսած են յաճախակի ըլլալ Թուրքիայէն դուրս եւս, սկզբունքով ընդունեց պաշտպանել այդ կարգի իրաւունքները, տակտիկի վերապահելով որոշել ինչ չափերով կատարել ինքնապաշտպանությունն այդ գործը» :

<sup>1</sup> Նիիթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար, Բ հատոր, էջ 119:

Այսպիսով, թեև Հ. Յ. Դաշնակցության ծրագրային առաջադրանքները դեռևս որևէ փոփոխություն չէին ենթարկվել, սակայն կուսակցությունը հարկադրված էր ընդունել Անդրկովկասի հայությանը նետված մարտահրավերները և այնտեղ գործել զբալոր ու բանավոր քարոզչություն, ահաբեկչություն, ժողովրդական ցույցերի ու գիւնված դիմադրության կազմակերպման միջոցով, բայց «... մնալով սլաշտպանողական հողի վրայ»<sup>1</sup> : Այդ գործի կազմակերպումն ու ղեկավարումը Հանձնվեց Կովկասի սլաշտպանատու մարմին, որը Հանդես էր գալիս «Ինքնապաշտպանություն կենտրոնական կոմիտեի» անվան տակ: Միաժամանակ, սկսած 1904 թվականից, Հ. Յ. Դաշնակցությունը սերտ կապեր հաստատեց և համագործակցության եզրեր գտավ Ռուսաստանյան կայսրության տարածքում գործող այլ ընդդիմադիր ու հեղափոխական կուսակցությունների հետ: Այդ նպատակով կուսակցությունը մասնակցեց 1904-ի վերջերին՝ Փարիզում և 1905թ. ապրիլին ժնևում տեղի ունեցած միջկուսակցական երկու խորհրդաժողովների: Դրանցից վերջինին մասնակցում էին միայն հեղափոխական կուսակցությունները:

Սակայն ստեղծված կացությունը կարիք էր զգում ավելի ամբողջական ու մանրամասն քննարկման հենց կուսակցության ներսում: Եվ քանի որ երրորդ ընդհանուր ժողովի որոշման համաձայն «Հ. Յ. Դաշնակցության կամքը ներկայացնող մարմին» արդեն փոխարինել էր բացառիկ իրավասություններ ու լիազորություններ ունեցող «Հ. Յ. Դաշնակցության խորհուրդը»՝ բաղկացած Բյուրոների և Պատասխանատու կենտրոնական կոմիտեիների ներկայացուցիչներից, ապա նա իր մի քանի նիստերում՝ 1905թ. փետրվարին և ապրիլին, քննելով այսպես կոչված «Կովկասյան նախագիծը» որոշեց. «Կովկասեան շարժման հարցում ինքնապաշտպանութեան շրջանից անցնել բուն յեղափոխական գործունեութեան, մշակել ծրագիր՝ համաձայն Կովկասեան Ռայոնական ժողովում արտայայտուած տրամադրութեան, ուղարկել դաշնակցական կովկասեան մարմիններին՝ ժամանակավորապես ղեկավարուելու այդ ծրագրով, թողնելով նրա վերջնական հաստատումը առաջիկայ ընդհանուր ժողովին»: Փաստորեն Հ. Յ. Դաշնակցության ծրագիրը վերանայող այս որոշման հիմնավորումը կատարվում էր ելնելով այն փաստից, որ ստեղծված իրավիճակում հնարավոր է սպասել ընդհանուր ժողովին: «Կովկասյան նախագիծը» հենց այդ փաստաթուղթն էր, ուր նշվում էր, որ կուսակցությունը «Յեղափոխական կուսի միջոցով ... ձգտում է դաշնակցական /Ֆեդերատիվ/ ռամկավարական մի կազմակերպութեան-ամբողջ Անդրկովկասի համար- ա-

<sup>1</sup> Նիիթեր Է. Յ. Դաշնակցու թեան պատմու թեան համար, Բ հատր, էջ 119:

<sup>2</sup> Տե ս Միջկու սակցային խորհրդաժողովների որոշու մները, Ժ Յեկ, «Դրոպակի» տպարան, 1905, էջ 4:

<sup>3</sup> Նիիթեր Է. Յ. Դաշնակցու թեան պատմու թեան համար, հատր Բ, էջ 230:

մենալայն տեղական ինքնավարութեամբ»<sup>1</sup> : Միաժամանակ, ուշադրութեամբ դարձնելով այսպես կոչված «տնտեսական անհավասարութեան ուժի» վրա, Ն.Յ. Դաշնակցութիւնը սահմանում էր, որ ինքը որպէս կուսակցութիւն պաշտպանում է աշխատավոր ընդհանրութեան շահերը, դաստիարակում է նրան սոցիալիստական իդէալներով և պատրաստում քաղաքական ու սոցիալական պայքարի համար: Ելնելով դրանից, «Կովկասյան նախագծում» սահմանվում էին կուսակցութեան քաղաքական պահանջները՝ Ֆեդերատիվ, դեմոկրատական հանրապետութեան ձևավորում Անդրկովկասում՝ ընդհանուր, հավասար, ուղղակի և գաղտնի ընտրական իրավունքի և ազգերի և կրօնական համայնքների իրավահավասարութեան հիման վրա: Անդրկովկասը մնալու էր ազատ Ռուսաստանի, Ֆեդերատիվ միավորը, սակայն միաժամանակ, առաջարկվում էր նաև երկրամասը գավառների բաժանելիս հաշվի առնել նրանց ազգային կազմը՝ հնարավորին չափ միատարր համախմբումներ առաջ բերելու համար: Կարևոր տեղ էր տրված նաև տնտեսական պահանջներին՝ Հողերի աստիճանական համայնացում, ուղղակի հարկերի վերացում և պրոգրեսիվ տուրք եկամուտից ու ժառանգութեանից, ութժամյա աշխատանքային օր, նվազագույն օրավարձի սահմանում և այլն:

1905-1907 թվականների ուսական առաջին հեղափոխութիւնը Ն. Յ. Դաշնակցութեան առջև դնում էր ինչպէս իր ազգային-քաղաքական, այնպէս էլ սոցիալ-տնտեսական առաջադրանքների ամբողջական վերաթարմացման խնդիրը և միաժամանակ, նոր դործելադաստում՝ արեւելահայ իրականութեան մեջ, պայքարի եղանակների ճշգրտման անհրաժեշտութիւնը: Այդ պայմաններում կուսակցութիւնն այլևս չէր կարող սոցիալիզմը դիտել որպէս հեռավոր իդէալ և սոսկ գաղափարախոսութիւն, քանզի այդ ուսմունքը հետևողականորեն կյանքի կոչելու խնդիրը Անդրկովկասում դրված էր գործնական քաղաքականութեան գետնի վրա: Սակայն արեւմտահայերի ազատագրութեան խնդրի չլուծված լինելը՝ մի կողմից և Անդրկովկասում առկա ազգամիջյան հակասութիւնների խորացումը՝ մյուս կողմից, հարկադրում էին Ն. Յ. Դաշնակցութեանը առավել չափավոր կեցվածք որդեգրել արդեն իսկ սկիզբ առած, իր բնույթով սոցիալ-դասակարգային շարժման հանդեպ: Մերժելով բոլշևիկյան ինտերնացիոնալիզմը, Ն. Յ. Դաշնակցութիւնը Անդրկովկասում միաժամանակ սահմանադատվում էր նաև ազգայնականութեան ծայրահեղ դրսևորումներից, սկզբունքներ, որոնք իրենց արտահայտութիւնը գտան քիչ անց ընդունված կուսակցութեան նոր ծրագրում: Նման մոտեցման արմատները թաքնված էին նաև 1905-ի փետրվարին սկիզբ առած Հայ-թաթարական կռիւների մեջ, որոնք կլանեցին կուսակցութեան մարտական ներուժն

<sup>1</sup> Սպիտակի կովկասեան գործու ճեռու թեան, ԺՅԵԿ, տպարան Դ. Յ. Դաշնակցու թեան, 1906, էջ 5:

ու նյութական միջոցները: Բանզի քանակապես և մանավանդ՝ զինվածությամբ կոլիասյան թաթարներին նկատելիորեն զիջող արևելահայությունը բնաջնջումից փրկվելու համար ուներ միայն մեկ «հաղթաթուղթ», մեկ զենք՝ դա արդեն ավելի քան 15 տարի տևած հայ ազատամարտի բովում թրծված Հ. Յ. Դաշնակցութունն էր՝ իր արևելահայ ու արևմտահայ ֆիդայիներով:

Հայ-թաթարական ընդհարումներն սկսվեցին 1905թ. փետրվարի 6-ին՝ Բաքվում, քիչ անց մայիսի 12-15-ին տեղի ունեցավ Նախիջևանի հայության կոտորածը, որից հետո ընդհանրումների ալիքը տարածվեց դեպի Շարուր-Դարալագյազ, Զանգեզուր ու Ղարաբաղ: Մայիսի 23-ին առաջին ընդհարումը տեղի ունեցավ Երևանում, օգոստոսին կռիվը գրեթե համընդհանուր բնույթ էր ստացել՝ Բաքու, Ղարաբաղ և այլուր: Նոյեմբերին արյունալի կռիվներ սկսվեցին Գանձակում և Թիֆլիսում: Բաքվի և մանավանդ Նախիջևանի հայությունը լիովին անպատրաստ էր այդ ընդհարումներին, ուստի թաթարական խռժանի հարձակումները ծանր կորուստներ պատճառեցին նրան: Բաքվում շնորհիվ Նիկոլ Դումանի ձեռնարկած արագ ու վճռական քայլերի, հաջողվեց փոքրաթիվ ուժերով կանգնեցնել ու հետ շարտել հակառակորդին: Իսկ քիչ անց մայիսի 11-ին տակավին երիտասարդ Դրաստամատ Կանայանի /Դրո/ կողմից ռմբային հարվածով ահաբեկվեց այդ ընդհարումների զլխավոր սաղրիչը՝ Բաքվի զենեքալ-նահանգապետ Նակաշիձեն: Ահաբեկման ենթարկվեցին նաև բազմաթիվ այլ պաշտոնյաներ:

Հ. Յ. Դաշնակցութունը կարճ ժամանակամիջոցում կարողացավ կազմակերպել Անդրկովկասի հայության ինքնապաշտպանությունը՝ դորժը՝ մարտի նետելով իր լավագույն ուժերին: Բաքվում մղած անհավասար կռիվներից հետո Նիկոլ-Դումանը ստանձնեց Երևանի նահանգի, Վարդանը /Սարգիս Մեհրաբյան/՝ Ղարաբաղի, Արմեն Գարոն /Փաստրմաճյան/ և Տուրբախը /Հարություն Կիրակոսյան/՝ Թիֆլիսի հայության ինքնապաշտպանությունը ղեկավարելու գործը: Մարտի նետվեցին հին ֆիդայիները՝ և արևելահայ և մանավանդ արևմտահայ հաստիքներից Սեքարեցի Սաքոն, Սեբաստացի Մուրատը /Սիրիսյան/, Բևեռն /Արշակ Գալաֆյան/, Համադասպը /Սրվանձատյան/, Սեպուհը /Արշակ Ներսիսյան/ և ուրիշներ: Կարճ ժամանակում թաթարները ծանր կորուստներ կրեցին, սակայն Հ. Յ. Դաշնակցութունը դրանով չբավարարվեց: Մոտավորապես 1906-ի փետրվարին Թիֆլիսում կայացած «Ձինվորական խորհրդակցության» ժամանակ որոշում կայացվեց նաև «... նախաարձակ լինել և ջնջել այն բոլոր որջերը, լինեն դրանք մեծ կամ փոքր, որոնք ավազակային կենտրոններ էին: Բացի այդ, անհրաժեշտ համարուեց վերացնել խոչընդոտ հանդիսացող այն թաթարական գիւղերը, որոնք խանգարում էին Գանձակից Շուշի, Շուշուց՝ Գորիս և Նոր Բայազետից՝ Գորիս հաղորդակցու-

թեան»<sup>1</sup>։ Մի շարք նման ավագակային որջերի հիմնահատակ ավերումը թույլ տվեց բացել ճանապարհների այն հանգույցները, որոնց վրա հենվելով, հետագայում 1918-20 թվականներին հնարավոր եղավ կապ պահպանել Անդրկովկասի հայաբնակ շրջանների միջև ու դրանով իսկ ձևավորել առաջին հանրապետության հայկական դիմագիծը։ Հայ-թաթարական կռիվներն ավարտվեցին Անդրկովկասի հայութայն հաղթանակով։ Ցարական պաշտոնյաների քողարկված աջակցությունն անգամ չօգնեց թաթարներին։ Այդ կռիվների ընթացքում գինվեց Անդրկովկասի հայութայն նշանակալի մասը, իսկ Հ. Յ. Դաշնակցութայն հեղինակությունը խիստ բարձրացավ՝ ոչ միայն հայութայն, այլև օտարների աչքում։

\*

\*

\*

Հայ-թաթարական կռիվների առաջ բերած թոհուբոհը էջեր կարող շեղել ուղևորական առաջին հեղափոխությունը՝ իր առջև դրված նպատակներից, էջ կարող շեղել նաև Հ. Յ. Դաշնակցությանը՝ այդ հեղափոխության մեջ իր մասնակցությունն ունենալու խնդրից։

Հ. Յ. Դաշնակցությունն ակտիվ մասնակցություն ունեցավ սկիզբ առած դումայական ընտրապայքարներին։ Երկրորդ Դումայում Անդրկովկասի պատգամավորներից երեքը Հ. Սաղաթելյան, Սիր. Տիգրանյան, Ստ. Տեր-Ավետիքյան, Հ. Յ. Դաշնակցության ընտրյալներն էին, որոնք գործում էին ուղևորական-հեղափոխականների /էսեռների/ հետ համախորհուրդ։ Օգտվելով ուղևորական հեղափոխության ընձեռած հնարավորությունից, 1906թ. օգոստոսի 15-ին էլ միաժամ գումարավեց այսպես կոչված «կեդրոնական ժողովը», որին վերապահված էր Մասնադիր ժողովի դեր՝ ողջ արևելահայաստանի համար։ Ժողովը գրեթե ամբողջովին բաղկացած էր դաշնակցականներից և միայն 6 հոգի էին ներկայացնում մնացած կուսակցությունները։ Նախագահ ընտրվեց կուսակցության հիմնադիրներից մեկը՝ Սիմոն Զավարյանը։ Սակայն օգոստոսի 29-ին Կովկասի փոխարքայի հրամանով ոստիկանությունը խուժեց էլ միաժամ և փակեց ժողովը։ Բայց չնայած դրան, Հ. Յ. Դաշնակցության կշիռն ու ազդեցությունը Անդրկովկասի հայութայն շրջանում ամենեւին էլ չսասանվեց։ Երկրամասում լույս տեսնող դաշնակցական մամուլը, որի դրոշակակիրը դարձավ «Յառաջ» թերթը, իսկ հետո նրան փոխարինած «Ալիքը», «Զանգը», «Երկիրը», «Խարխալը», «Վտակը» գերիշխող դիրքեր գրավեց հայ մամուլի ասպարեզում։ Հ. Յ. Դաշնակցությունը դարձավ գանգալածային ու հզոր մի կազմակերպություն, որն իր մեջ էր ներառում ողջ ազգի գրեթե բոլոր խավերի և շերտերի ներկայացուցիչներին։ Այդ հանգաման-

<sup>1</sup> Նիիթեր Գ. Յ. Դաշնակցութայն պատմութայն համար, Բ. հատոր, էջ 251:

քը ուներ առավելութուններ՝ Հ. Յ. Դաշնակցության խոսքը վերածվել էր չգրված օրենքի: Սակայն այն իր հետ բերում էր նաև ներքին տարածայնություններ, որոնց ձևավորման հիմքը կուսակցության գործունեության նախորդ շրջանում առաջադրված և 1892-ի ծրագրով ամրագրված նպատակի՝ Արևմտյան Հայաստանի ազատագրության խնդրի և 1904թ. երրորդ ընդհանուր ժողովում որպես ինքնապաշտպանության, իսկ 1905-ին ընդունված «Կովկասյան նախագծում» որպես հեղափոխական գործունեության նպատակ հռչակված այսպես կոչված «ռուսահայ դատի» միջև արհեստականորեն ստեղծված հակաթեզն էր:

«Կովկասյան նախագիծը» փաստորեն ծրագրային փոփոխություններ նախատեսող փաստաթուղթ էր և այդ պատճառով ենթակա էր առաջիկա ընդհանուր ժողովի վավերացմանը: Բնական էր, որ հեղափոխական պայքարի անհետաձգելի պահանջմունքների ծնունդը Հանդիսացող նման փաստաթուղթը պետք է բուռն քննարկումների արժանանար կուսակցության ներսում: Ի վերջո, այդ քննարկումների ընթացքում Հ. Յ. Դաշնակցության ներսում և նրա շուրջ սկսեցին բյուրեղանալ ոչ թե երկու /ինչպես կարծում են որոշ ուսումնասիրողներ/, այլ միանգամից հինգ տարբեր տեսակետներ: Ծայրահեղ ազգայնական-աջակողմյանները խմբապետ Միհրանի /Էքմեքչյան/ գլխավորությամբ /ա հետագայում արտաքսվեց Հ. Յ. Դաշնակցությունից և ահաբեկման ենթարկվեց/, գտնում էին, որ Հ. Յ. Դաշնակցությունը եղել է ու պետք է մնա միայն ու միայն արևմտահայերի ազատագրության համար պայքարող կազմակերպություն, սկզբունքորեն մերժում էին սոցիալիստական աշխարհայեցողությունն ու քաղաքականությունը և պահանջում էին զաղարեցնել հեղափոխական պայքարը Անդրկովկասում ընդդեմ ցարիզի: Միհրանականությունը, որն ընկալվ օտար տարրերի ազդեցության տակ /չամբարձում Առաքելյան և այլք/, դուրս զրվեց Հ. Յ. Դաշնակցությունից: Սակայն միհրանականներից գատ, հակասոցիալիստական աշխարհայեցողության կրողներ և «ռուսահայ դատի» մերժման կողմնակիցներ կային նաև կուսակցության ներսում /խմբապետներ Մուրատ, Անդրանիկ և այլք/ և մտավորականներ /Ռ. Զարդարյան, Ա. Վռամյան և այլք/, որոնց աջակցում էին ԱՄՆ-ի և Բալկանների կենտրոնական կոմիտեությունները: Այս երկրորդ հոսանքը դարձավ 1907-ին՝ չորրորդ ընդհանուր ժողովում «Կովկասյան նախագիծ» դեմ ծավալված պայքարի գրոշակակիրը: Երրորդ «հոսանքը» դա հենց բուն Հ. Յ. Դաշնակցությանն էր, կուսակցության միջուկը՝ Ս. Զավարյան, Ռոստոմ, Մ. Վարանդյան, Ն. Մալումյան, Ե. Թոփչյան և այլք, որոնց հարում էր խմբապետների մեծ մասը՝ Սաբո, Դուժման, Սեպուհ և այլք: Նրանք գտնում էին, որ մեկ կուսակցության շրջանակներում պետք է միավորել և՛ արևմտահայերի և՛ արևելահայերի պայքարի գործը: Կար նաև չորրորդ հոսանք, որը ներկայացնող երիտասարդները Արշակ Խահակյան /Զամալյան/, Ա. Շահխաթունի և

այլք, մնալով Ն.Յ. Դաշնակցութեան ներսում, փորձում էին Անդրկովկասում ձևափոխել միայն սոցիալիստական քաղաքականութիւնը վարող կուսակցութիւնը: Նրանք մոտեցումը ամփոփված էր. 4-րդ ընդհանուր ժողովին ներկայացված, բայց ժողովի կողմից չընդունված Արշակ Խասակյանի /Ջամալյանի/ բանաձևում «Յառաջիկայում Դաշնակցութեան գործունեութիւնը կովկասում պէտք է լինի զուտ դասակարգային եւ յեղափոխական-սոցիալիստական. ըստ որում նրա Մրագիրը եւ աշխարհայեցքը միանգամայն պարզ եւ որոշ պէտք է լինին... որ ամենակարճ ժամանակամիջոցի մէջ, բոլոր ոչ-սոցիալիստ-յեղափոխական տարրերը իրենց ստիպուած զգան թողնելու կուսակցութեան շարքերը»: Այս հոսանքը դարձավ երկրորդ չափավոր-ազգայնական հոսանքի հիմնական հակառակորդ ուժը 4-րդ ընդհանուր ժողովում: Կային նաև ծայրահեղ սոցիալիստ-ձախակողմյաններ, որոնք բաժանվեցին Ն.Յ. Դաշնակցութեանից: Նրանք կոչվում էին «անջատականներ», քանի որ պահանջում էին անջատել միմյանցից երկու ռուսահայ և տաճկահայ «դատերը»: Վերջիններիս զաղափարախոսն էր «երիտասարդ դաշնակցական» Արսեն Մրավյանը, որը 1906 թվականին հրատարակված իր «Ժամանակ է սթափուելու» գրքուկում գտնում էր, որ Ն.Յ. Դաշնակցութեանը պետք է լինի միայն աշխատավորների դասակարգային կուսակցութիւնը, իսկ արևմտահայերի ազատագրութեան խնդիրը պետք է հետապնդեն միայն իրենք՝ արևմտահայերը: «Անջատականները» /Լ. Աթաբեկյան, Ա. Մրավյան և այլք/ ի վերջո բաժանվեցին Ն.Յ. Դաշնակցութեանից և հարեցին ռուսական սոցիալիստ-հեղափոխականներին /հսեռներ/:

Ինչպես հետագայում իրավացիորեն նկատում էր Ա. Աստվածատրյանը, կուսակցութեան ներսում պայքարը կենտրոնանում էր ազգային և սոցիալիստական հարցերի /դատերի/ բաժանման շուրջ, բայց քանի որ դրանք հետապնդելու վայրերը /գործելադաշտերը/ տարբեր էին, ապա ժողովրդի լայն դանդաճը «դատերի բաժանում» ասելով հասկանում էր արևմտահայ և արևելահայ հատվածների առջև կանգնած նպատակների բաժանումը: 1906թ. աշնանը Արևելյան Բյուրոն հատուկ շրջաբերականով կուսակցութեան շարքերին տեղեկացրեց միհրանական շարժման անմաքուր նպատակների մասին, քանի որ ակնհայտ էր դառնում ցարական Օսթրանկայի շահագրգռվածութիւնը այս շարժման ծավալման մեջ: Վերջիններս ստեղծել էին այսպես կոչված «Ժամանակավոր զինվորական խորհուրդ» և ջլատել կուսակցութեան ուժերը: Այդ պատճառով, 4-րդ ընդհանուր ժողովը պետք է ճակատագրական դեր խաղար կուսակցութեան համար: Ուստի այդ ժողովին

<sup>1</sup> Լիլիթեր Դ. Յ. Դաշնակցու թեան պատմութեան համար, Գ հատոր, էջ 180:

<sup>2</sup> Տե՛ս Աստվածատրու ռեան, Աճառական շարժում մեր Դ. Յ. Դաշնակցու թեան մեջ, Բ մաս, «Յայրենիք» ամսագիր, Բոստոն, 1963, թիւ 8, էջ 57:

ներկայացան Հ. Յ. Դաշնակցութեան լավագուշտ ուսմանը՝ թե՛ մտավորական և թե՛ մարտական:

4-րդ ընդհանուր ժողովը բացվեց Վիեննայում 1907թ. փետրվարի 22-ին և տևեց մինչև մայիսի 4-ը, ունենալով 121 նիստեր: Ժողովի օրակարգի բաղաձայնի հարցերի շարքում առանձնահատուկ նշանակություն ունեին «Կովկասյան նախագծի» ընդունման կարգի և նրա բովանդակությունը, «անջատման» ծրագրի և սոցիալիզմի դաշնակցական ըմբռնման հստակեցումը, հետագա գործելակերպի, ծրագրի ու կանոնադրի մշակումը: «Կովկասյան նախագծի» հակառակորդները պնդում էին, որ «Հ. Յ. Դաշնակցության Խորհուրդը» իրավասու է չէր նման փաստաթուղթ ընդունել և հրապարակել: Խաչատուր Մալումյանը հիմնավորում էր այդ իրավասությունը՝ հենվելով 1904 թվականին կայացած երրորդ ընդհանուր ժողովի որոշումների, 1892թ. ծրագրի սոցիալիստական ոգու և 1905 թվականին ստեղծված նոր կացությունից բխող պահանջների հաշվառման անհրաժեշտություն վրա: Սեբաստացի Մուրատը /Խրիմյան/ առարկում էր այդ փաստարկներին՝ հիմք ընդունելով երրորդ ընդհանուր ժողովի որոշումը, որը Հ. Յ. Դաշնակցության կովկասյան գործունեությունը սահմանափակում էր ինքնապաշտպանությունում, բայց ոչ հարձակողական գործողություններով: Նրան պաշտպանում էր Ռուբեն Զարդարյանը պնդելով որ «Հ. Յ. Դաշնակցության Խորհուրդը» շեղվել է ընդհանուր ժողովի որոշումներից: «Նախագծականների» և «Հականախագծականների» բանավեճը երբեմն ընդունում էր նաև սպառնալից տեսք: Սեբաստացի Մուրատը սահմանազատվելով հանդերձ Միհրանից ու նրա անմիջական շրջապատից, միաժամանակ նախազգուշացնում էր ժողովին, որ «...արիւն պիտի թափուի, մի մոռանաք, որ Միհրանի ետեւից 2-3000 հոգի է գնում»<sup>1</sup>: Ու թեև նրա ընդդիմախոսները բերում էին շատ ավելի փոքր թվեր, բայց անգամ միշտ հավասարակշռված ու սառնասիրտ Ռոստոմն էր ընդունում նման տարբերակի Հնարավորությունը:

Ի վերջո, քվեարկությունը դրվեց Ռ. Զարդարյանի կազմած բանաձևը, ուր նշվում էր, որ «Հ. Յ. Դաշնակցության Խորհուրդը», «...պարտաւոր էր հրատարակելու Կովկասեան նախագիծը...», որից հետո ժողովն անցավ փաստաթղթի բուն էությունը քննարկմանը: Այդ ընթացքում պաղատարական տարաձայնությունները սկսեցին մեղմվել և ժողովականները փորձեցին ճշտել երկու՝ արևմտահայ և արևելահայ «դատերի» փոխհարաբերակցությունը ու փոխըացման հանգամանքները: Ի վերջո, ժողովը հավանություն տվեց Եղիշե Թոփչյանի ներկայացրած բանաձևին, ուր զրականորեն էր գնահատվում «Նա-

<sup>1</sup> Տե՛ս և իրիւր Է. Յ. Դաշնակցութեան պատմութեան, համար, հատ. 9, էջ 146:

<sup>2</sup> Լույճ տեղում, էջ 57:

<sup>3</sup> Լույճ տեղում, էջ 151:

խաղժի» սահմանած ուղիով Կովկասում Ղ.Յ. Դաշնակցության կողմից իրակացված քաղաքականությունը և վճռականություն էր հայտնվում շարունակել սոցիալիստական գործունեությունը: Ժողովը քննության առաջ նաև Ա. Շահխաթունու և Արշակ Խաչակյանի /Զամայան/ առաջարկները Ղ.Յ. Դաշնակցությունը կազմակերպական առումով երկու կովկասյան և արևմտահայ հատվածների բաժանելու մասին /Ֆեդերատիվ ընդհանուր կապերով/ և բուռն բանավեճերից հետո ընդունեց բանաձև, ուր նշվում էր, որ կուսակցության գործունեությունը արևմտահայ և կովկասյան իրականությունների մեջ ոչ միայն չի վնասում, այլև նպաստում է երկու երկրների աշխատավորների շահերի հաղթանակին: Ուստի ժողովը որոշում ընդունեց «Յետ մղել անջատման առաջարկը, իբրև մի տեսակէտ, որ չէ հիմնուած մեր աշխարհահայեացքի և գործունեության վրայ...» և «Երկու գործունէութիւնն էլ վարել Ղ. Յ. Դ. դրօշակի եւ ղեկավարութեան ներքոյ»<sup>1</sup>: Այսպիսով, 4-րդ ընդհանուր ժողովը վճռականորեն մերժեց կուսակցությունը ըստ գործելադրատերի և գործունեության առանձնահատկությունների տրոհելու փորձերը և որդեգրեց մեկ նպատակ-մեկ կազմակերպություն կամ ինչպես հայտարարեց նախատուր Մայումյանը «Մի ծրագիր, յեղափոխական մի բանակ...» սկզբունքը:

«Կովկասեան զեղծարարների մասին» օրակարգի տակ ժողովը քննեց խմբապետ Միհրանի և նրա գործակիցների հարցը և որոշեց ճանաչել նրանց արտաքսոված՝ Ղ.Յ. Դաշնակցության շարքերից, ինչպես նաև «... կազմակերպական կանոններով նախատեսուած պատժին ենթարկել Միհրանին եւ իր գործակիցներին»<sup>2</sup>: Միաժամանակ, ժողովը որոշում կայացրեց «խստիվ արգելել բունի միջոցների գործածութիւնը հանգանակութեան գործում», որով վերջ տրվեց «Փոթորիկ» գործողությունը սկզբնավորված հարկադրական, բայց ժամանակավոր բնույթ ունեցող բունի հանգանակություններին:

Ժողովի ընթացքում ինը պատգամավորներից բաղկացած հանձնաժողովը մշակեց Ղ.Յ. Դաշնակցության ծրագիրը համաձայն ընդհանուր ժողովի բանաձևերի ու հանձնեց Արևմտյան Բյուրոյին տպագրելու համար: 1892 թվականին ընդունված առաջին ծրագրի համեմատությամբ սա ավելի հղկված և ամբողջական փաստաթուղթ էր բաղկացած «Ընդհանուր տեսությունից», «Նվազագույն պահանջներից» իր քաղաքական և տնտեսական բաժիններով: Ի հակադրություն Դոստոմի կողմից 1892-ի ծրագրի համար գրված կիսամարքսիստական առաջաբանի, 1907-ին ընդունված «Ընդհանուր տեսությունը» ուներ ավելի հավասարակշռված ու չափավոր բնույթ և գտնվում էր ժամանակի սոցիալիստական շարժման գաղափարական լավագույն նվա-

<sup>1</sup> Տե՛ս Երիթրո Չ. Յ. Դաշնակցու թեան պատմու թեան, համար, հատ. 9, էջ 302:

<sup>2</sup> Եւոյն տեղու մ, էջ 186:

<sup>3</sup> Եւոյն տեղու մ, էջ 243:

<sup>4</sup> Եւոյն տեղու մ, էջ 262:

ճումների մակարդակի վրա: Նրանում սահմանվում էին շահագործող փոքրամասնության դեմ աշխատավոր մեծամասնության պայքարի հանդրմանները և նպատակները: Տրվում էր արդյունաբերության զարգացման ու տեխնիկայի առաջադիմության հետևանքների վերլուծության և արտադրական ոլորտում առաջ էին քաշվում արդյունաբերության, իսկ գյուղատնտեսության մեջ նաև հողի և աշխատանքի համայնացման առաջնահերթ խնդիրները: Դրանց իրականացումը համարելով աշխատավոր դասակարգի սոցիալիզմի համար մղվող պայքարի նպատակներ, Ղ.Յ. Դաշնակցության ծրագիրը այդ խնդրի հետ էր միաձուլում նաև ազգային ճնշումների դեմ մղվող պայքարը որպես ներդաշնակ եւ ամբողջական մարդկային հասարակության ստեղծելու կարևորագույն պայման:

Օրագրի «Նվազագույն պահանջների» քաղաքական ենթաբաժինը սահմանում էր կուսակցության նպատակները: Այնտեղ նշված էր, որ «Ղ. Յ. Դաշնակցությունը իրեն քնդափոխական եւ սոցիալիստական մի կուսակցություն, ձգտում է պաշտպանել հայ աշխատավոր մասսաների բովանդակ շահերը, թէ՛ տնտեսական-դասակարգային, թէ՛ մարդկային-քաղաքական եւ թէ՛ ազգային-կուլտուրական, նպատակ ունենալով ժողովրդի ձեռքը տալ կառավարութեան ղեկը եւ այժմեան միապետական ու կապիտալիստական կարգերը փոխարինել լայն ռամկավարութեամբ ու արդինաբերութեան միջոցների համայնացումով»:

Թեև ընդհանուր ժողովը մերժել էր կուսակցությունը կազմակերպորեն ըստ գործելադաշտերի բաժանելու պահանջը, բայց դա էլ էր նշանակուած, որ ծրագիրը չպետք է սահմաներ դրանցից յուրաքանչյուրում Ղ.Յ. Դաշնակցության հետապնդած առանձնահատուկ նպատակները: Այդ առումով ծրագիրը հիմնվում էր երկու Հայաստանների գաղափարի վրա՝ Արևմտյան Հայաստանը՝ Օսմանյան պետության սահմաններում եւ լայն ինքնավարութեամբ, իսկ Անդրկովկասի դեմոկրատական հանրապետությունը՝ Ռուսաստանի Ֆեդերատիվ հանրապետության կազմում՝ բաժանվելով առանձին կանտոնների, որոնց սահմանները որոշելիս «... պետք է նկատի առնել ազգաբնակչության տեղադրական եւ կուլտուրական առանձնայատկութիւնները, ըստ կարելույն միաձույլ համախմբումներ կազմելու համար»:<sup>1</sup> Դրանով իսկ, քաղաքական գետնի վրա առաջին անգամ հենց Ղ.Յ. Դաշնակցության ծրագիրն էր նախանշում Անդրկովկասում առանձին Հայկական տարածքի և դրա հիման վրա՝ հետագայում նաև պետականության ձևավորման խնդիրը: Երկու Հայաստանների գաղափարը հանդիսանում էր 1892-ի ծրագրի միայն Արևմտյան Հայաստանին վերաբերվող պա-

<sup>1</sup> Օրագիր Հայ Յոդափոխական Դաշնակցութեան /վավերացւած 1907թ. ընդհանուր ժողովի կողմից/, տպ. և. Ադանեան, Թիֆլիս, 1917, էջ 21:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 23:

Հանձնների զարգացումը և նախապատրաստութիւնը Գրդ ընդհանուր ժողովում /1919թ./ նվիրագործված Միացյալ և Անկախ Հայաստան ծրագրային հիմնադրույթի<sup>1</sup>։

Միացյալ Հայրենիքի գաղափարը քաղաքականապես հասունացնելու ցանկութիւնը դրսևորվում էր ինչպես երկու երկրների համար քաղաքական ընդհանուր պահանջների /ղեմոկրատական ազատութիւններ/ առաջադրման, այնպես էլ տնտեսական պահանջների ընդհանրութեան տեսքով։ Դրանց շարքում կարևոր էին հողերի համայնացման, հողը մասնավոր սեփականութիւն և վաճառքի առարկա դարձնելուց հրաժարվելու, ինչպես նաև հողօգտագործման սկզբունքի էսեռա-տրուդտիկական պահանջների առաջադրումն ու պաշտպանութիւնը։ Սահմանելով գյուղատնտեսութեան մեջ առանց աշխատանքի չահագործման հողից օգտվելու սկզբունքը, Հ.Յ. Դաշնակցութեան ծրագիրը նախատեսում էր նաև հանքերը ու բնական այլ հարստութիւնները պետական սեփականութիւն դարձնելու, Յ ժամյա բանվորական օր սահմանելու, նվազագույն աշխատավարձի չափը ճշտելու և այլ կարևոր սոցիալիստական բնույթի պահանջներ։

Այսպիսով, Գրդ ընդհանուր ժողովում ընդունված Հ.Յ. Դասչնակցութեան նոր ծրագիրը հանդիսանում էր հայ ժողովրդի ազգային ազատագրութեան խնդրի համադրումն ու միաձուլումը ողջ մարդկութեան ազատագրութեան համար մղվող պայքարի նպատակների հետ։ Դրա հետևանքով կուսակցութիւնը իր աշխարհայեցողութեան սոցիալիստական սկզբունքները տեղափոխում էր գործնական քաղաքականութեան մեջ այնքանով և այն չափով, որքան անհրաժեշտ էր իր գործունեութեան կոնկրետ միջավայրի համար։ Գործունեութեան նպատակների և առաջնահերթութիւնների նման պրագմատիկ ընկալումը ապահովում էր Հ.Յ. Դաշնակցութեան ներկայութիւնը հայութեան կյանքի բոլոր ասպարեղներում և հայ ժողովրդի ինչպես ազգային-քաղաքական, այնպես էլ սոցիալ-տնտեսական նպատակների ու ձգտումների հարազատ արտացոլումը։

Գրդ ընդհանուր ժողովում ձևակերպված քաղաքական ու գաղափարական սկզբունքները իրենց հիմնական ընդհանուր գծերով, Հ.Յ. Դաշնակցութեան մոտ անխաթար մնացին ընդհուպ մինչև սփյուռքյան 70-ամյա հարկադիր վտարանդիութեան տարիները և անգամ նրանից հետո։

<sup>1</sup> Տե ս Յ 3 Դաշնակցութիւն, Ծրագիր Պատաստում ան ժ. ժողովին կողմէ /, Ժընեի, 1925, է 9 20:

## ՀԱՅ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՌԱՄԿԱՎԱՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Հայ քաղաքական կուսակցությունների շարքում իր ուրույն տեղն ու դերն ունի Հայ Սահմանադրական ռամկավար կուսակցությունը, որի պատմությունը ցայսօր առանձին ուսումնասիրության առարկա չի դարձել: Միայն այս ու այն հարցերին նվիրված պատմագիտական աշխատություններում հրնթացս խոսվել է նաև ՀՍՌԿ-ի մասին, որն էլ առիթ է հանդիսացել բազմաբնույթ եզրակացությունների այդ կուսակցության, նրա ծրագրի ու որդեգրած գործելակերպի մասին: ՀՍՌԿ-ի պատմությունը շարադրելիս մեր համար ելակետային է այն դրույթը, որ այն միջանկյալ, անցումային օղակ է Հայ առաջին Արմենական կուսակցության և վերջինիս գաղափարների ու ավանդույթների ժառանգորդ Ռամկավար ազատական կուսակցության միջև:

1885-ի աշնանը Վանում Մկրտիչ Ավետիսյան-Թերլեմեզյանի ղլխավորությամբ և Գալուստ Ասլանյանի /գոկտոր/, Գարեգին Բաղեցյանի /Մանուկյան/, Եղիշե Գոնդաքեճյանի, Ղևոնդ Խանջյանի, Գաբրիել Նաթանյանի, Արիստակես Ախինյանի, Գրիգոր Պեղեկյանի /Շիկահեր, Ներսես/ և ուրիշների աջակցությամբ հիմնադրված Արմենական կուսակցությունը մեծաթիվ զոհեր տվեց 1895-1896թթ. հայկական կոտորածների ժամանակ:

Արմենական կուսակցության հիմնադիրներից ողջ մնացած Գրիգոր Պեղեկյանը մեծ ջանքեր գործադրելով և պարսկահայերի արմենական մասնաճյուղերը վերակազմակերպելով՝ 1898թ. անցնում է Բուլղարիա, որտեղ գործունեություն է ծավալում Արմեն Շիտանյանի հետ: Ապա, նկատի առնելով Բուլղարիայի կենտրոնից դժգոհ և «Հեղափոխական միություն» անունը որդեգրած հնչակյանների ուղեգծի համընկնումը արմենականների գաղափարներին, նրանց միավորում է տեղի արմենական մասնաճյուղին և հռչակում նոր՝ Գաղափարակցական միությունը: Դա երկարատև ու դժվարին գործընթաց էր և զուրկս եկավ 1907թ. օգոստոսին, մեծ ջանքերի ներդրումով:

Ի դեպ, եթե արմենականների, Սահմանադրական ռամկավարների բաղկացուցիչ մաս հանդիսացող վերակազմյալ հնչակյանների պատմությանն այս կամ այն չափով Հայ պատմագիտությունն անդրադարձել է, ապա «Գաղափարակցական միություն», նրա ծրագրի ու կանոնագրի մասին որևէ պատմագիտական աշխատության մեջ խոսք անգամ չկա, եթե բացառենք Ա. Դարբինյանի հուշերում գրված և նույնությամբ մյուսների կրկնած միևնույն «Բուլղարիայի արմենականների ու միութենականների միավորումից ստեղծվեց այն, որը հետագայում դարձավ Հայ սահմանադրական ռամկավար կուսակցությունը»:

յան գոյացուցիչ մասերից» կատարված փաստի արձանագրութիւնը: Չարմանալի է նաև այն, որ նույնիսկ Ռամկավար ազատական կուսակցութեան /ՌԱԿ/ ծրագրային ու վավերագրական փաստաթղթերի՝ Վ. Ղազարյանի հրատարակած ժողովածուում՝ բացակայում է Գաղափարակցական միութեան ծրագիրը: Վ. Ղազարյանի վկայութեամբ ՌԱԿ-ի արխիվում նա չի հանդիպել նման փաստաթղթի: Մեզ հաջողվեց գտնել Գաղափարակցական միութեան ծրագրի և կանոնագրի մեկ օրինակ, որը հրատարակվել է Լոնդոնում՝ 1907-ին:

Ծրագրի նախաբանում արևմտահայ դատը սահմանելով որպես քաղաքական խնդիր՝ նշվում է. «Հայկական դատը պետք է հասկանալ Տաճկական Հայաստանի ազատութիւնը տաճկական իշխանութեան լուծեն և զայն դնելը ինքնուրույն, անկախ, սեփական հայկական իշխանութեան տակ»: Այսինքն, պարզորոշ դրվում է Հայաստանի անկախութեան հարցը՝ կառավարման ձևը թողնելով որպես ապագայում լուծվելիք խնդիր: Ծրագրի նախաբանում ժամանակավրեպ են համարվում այն քաղաքական կուսակցութիւններն ու խմբավորումները, որոնք հայկական դատին միանգամայն օտար սոցիալիզմ էին քարոզում, ամեն ինչ բացատրում միայն տնտեսական և դասակարգային պատճառներով, որոնք հենց «սկզբն խախտեցին հեղափոխական շարժումն իր տեղեն, զայն շեղեցին ուղիղ գիծեն, որով նա պիտի ընթանար»: Այնուհետև նշվում է, որ սոցիալիզմի վարդապետութեան որդեգրումից հետո մյուս սխալը, որ, ցավոք, համընդհանուր էր, օտարի օգնութեան ակնկալութիւնն էր, «որուն անկառույց՝ հեղափոխութիւնը երբեք լրջորեն խնդիր չարավ իրեն սեփական ուժ գոյացնելու անհրաժեշտութիւնը»: Ապագայում էլ, չբացառելով սխալները, ծրագրի նախաբանում օգտակար է համարվում ուսումնասիրել անցյալում թույլ տվածները՝ դրանք չկրկնելու համար: Մեր ժողով հուսահատութիւնը և եվրոպական օգնութեան վրա հույս դնելը, այն փրկութեան ուղիներ է համարում:

«Ա. ամփոփվիլ, կեդրոնանալ մեր թե՛ գաղափարային և թե՛ բարոյական ու նյութական ուժերու արտահայտութեանց մեջ,

<sup>1</sup> Դարբինյան Ա., Հայ ազատագրական շարժման օրերին, Փարիզ, 1947, էջ 184, Ա. Համբարյան, Երիտթուրքերի ազգային ու հողային քաղաքականությանը և ազատագրական շարժումներին Արևմտյան Հայաստանում, Երևանի Հայ հասարակական-քաղաքական միությունը արևմտահայության ազատագրության ու դիմելի մասին, Երևան, 1979, էջ 126, 364, Վ. Ղազարյան, Համարտու պատմության ՌԱԿ-ի, Բեյրութ, 1978, էջ 27-28 և այլն:

<sup>2</sup> ՌԱԿ-ի հիմնական ծրագրեր և վավերագրեր /Այսուհետև՝ ՌԱԿ, վավերագրեր/ կազմեց դրկտ. Վաչե Ղազարյան, Բեյրութ, 1978:

<sup>3</sup> Ծրագիր կանոնագիր գաղափարակցական միության / Արմեն-միութեանական միացյալ կազմակերպության, Երևան, 1907:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ Ա:

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 9:

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 7:

Բ. չխառնենք ազգային ընդհանուր նպատակին որևէ օտար վարդապետութիւնը:

Գ. Դեննք մեր բոլոր հույսերը մեր սեփական ուժի և միջոցներու վրա»<sup>1</sup>:

Բուն ծրագրում միութեան նպատակ է սահմանվում «զինու զորութեամբ ազատել օսմանյան լուծեն Օսմանյան Հայաստանը և կազմել անկե քաղաքականապես ինքնուրույն, անկախ և ազատ Հայկական իշխանութիւն մը», դրան հասնելու միջոց համարելով, «նախօրոք և երկարորեն պատրաստված գիննալ ապստամբութիւնը»<sup>2</sup>: Այդ նպատակով անհրաժեշտ է ի մի հավաքել բոլոր գործող անհատներին ու խմբակցութիւններին, գործել գաղտնապահ և կարգապահ, ղենք, դրամ հայթայթել, մանրակրկիտ ուսումնասիրել թշնամու ուժերը, դիրքերը, «զգուշանալ վաղաժամ և պրոպագանդան շարժումներին», հնարավորին չափ բարեկամանալ հարեան ժողովուրդների հետ, գաղտնապահութեան հնարավոր սահմաններում զրավոր և բանավոր պրոպագանդով վառ պահել հայրենասիրական ոգին դատապարտելով մատնութիւնն ու դավաճանութիւնը<sup>3</sup>:

Անշուշտ, Գաղափարակցական միութեան այս ծրագիրը իր էութեամբ հեղափոխական-ազատագրական էր և համեմատաբար առաջադիմական երևույթ:

Թեև «արմենականութիւնը կհանդիսանա մեր /Սահմանադիրական-նամկավար-Ս.Ս./ կուսակցութեան մայր երակը, սակայն անոր բուն զանգվածը կհանդիսանան վերակազմյալ հնչակյանները», այսինքն, արմենականներն արյունն էին, իսկ վերակազմյալները ավիւշը, առանց որոնց օրդանիզմը չի գոյատևել, քանզի դրանք գտնվում են անմիջական կապի մեջ, փոխպայմանավորում միմյանց ի վերջո դառնալով անտարբերակելի:

1896թ. արևմտահայ հնչակյան գործիչները ճիշտ չհամարելով Լոնդոնում գտնվող իրենց կուսակցութեան կենտրոնի գործունեութիւնը Ալ. Նազարբեկի ղեկավարութեամբ /հիմնականում ժամանակավրեպ համարելով սոցիալիզմի տեսութեան դավանումը ելնելով ժամանակի հայ իրականութեան անհարիր ու անիրադրածելի լինելուց և զուր տեղը ուժերը ջլատելուց/, առանձնացան և իրենց հոչակցիչ վերակազմյալ հնչակյաններ: Մի շարք անգամներ վերամիավորվելուց և տարանջատվելուց հետո, ի վերջո, վերակազմյալները 1901թ. սկսեցին հանդես գալ Բոստոնում «Արմենիա» /Armenia/ անգլերեն թերթով հայ դատի պաշտպանութեամբ: Սակայն 1906թ. հայ ազգային կյանքի հուզումնառատ շրջանում նրանք էլ տրոհվեցին: Ընդհանրապես,

<sup>1</sup> Ծրագիր կանոնադիր գաղափարակցական միութեան / Արմենո-փոթեմական միացյալ կազմակերպութիւն, Թ, Լոնդոն, 1907, էջ 2 և է:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 1:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 2, 3:

<sup>4</sup> «Չարթընը», 1951, 1 հոկտեմբերի:

Հնչակյան կուսակցութեան մեջ պառակտումներն այնքան խորացած ու բազմաբնույթ էին, որ «այնտեղ մայրը իր զավակը չէր ճանչնար»<sup>1</sup>։ Բանն այն է, որ թեև նրանք էլ արմենականների նման դեմ էին արևմտահայոց ազատագրութեան հարցն ընկերային վարդապետութ- յունների հետ կապելուն և ցուցադրական ու ահաբեկչական գործու- նեութեանը, սակայն, Վահե Արզվյանը սակավաթիվ համախոհներով Սուրեն Սուրենյան, Երվանդ Չափուշյան, Լևոն Լարենց /Քիրիչչյան/, Հրաչ Երվանդ, Արշակ Տեր-Մարկոսյան և այլն, որոնք բաց ահաբեկ- չութեան ուղին։ Սա էլ դժգոհութեանների առիթ ծառայեց։ Լևոն Մկրտչյանը, Վահան Թեքեյանը, Սուրեն Պարթևյանը, Սարգիս Մալե- մեղյանը և ուրիշներ, որոնց միացավ նաև մի որոշ ժամանակ կուսակ- ցական կյանքից մեկուսացած Միհրան Տամատյանը, բաժանվեցին կուսակցութեանից։

Այսպիսով, դրոշմաբեր կերպով հատվածներ. ա/ չափավոր կամ «Ազգյան» 1907թ. ապրիլի 20-ից Ս. Պարթևյանի խմբագրութեամբ լույս տեսած «Ազգ» թերթի անունով, բ/արմատական կամ «Արզվյա- նական»<sup>2</sup>։

1908թ. երիտթուրքական հեղաշրջումից հետո վերջիններս ան- ցան Կ. Պոլիս և իրենց օրգան «Ձայն Հայրենյաց» շաբաթաթերթի էջե- րում հայտարարեցին, որ կալաշտպանեն թուրքիայի խաղաղ զարգա- ցումը, բայց և կկանգնեն այն ընդդիմադիր տարրերի կողմը, որոնք «Փոթորկուտ օրերուն մեջ արդարութեան նախակարապետները եղան և բարեշրջման այս շրջանին խաղաղութեան և փրկութեան աներկյուղ և հավատարիմ դրոշակակիրները պիտի ըլլան»<sup>3</sup>։ Հրաժարվելով գինված ապստամբութեան ծրագրից, «Արզվյանականները» փարվում էին ինք- նապաշտպանութեանը։ Նրանք աղետաբեր էին համարում սոցիալիզմի քարոզները «անգործութուն և սոփեստութուն համարելով այն արևմտահայի համար», քննադատում արևմտահայութեանը դասա- կարգերի բաժանողներին ու իրար հակադրողներին։ Դա համարում էին ոչ միայն սխալ, այլև վնասակար, քանի որ «ընկերվարութեան անունով գործված չարիքները մեզի պես ազգի մը հոգին իսկ կսպանեն, ազգն իր էութեամբ կմեռցնեն»<sup>4</sup> և այլն։ Կարճ ասած, նրանք էլ որդեգ- րեցին չափավոր դադափարներ, իսկ նրանց ամերիկայի հատվածն ար- դեն 1919թ. իրեն հռչակեց Ազատական կուսակցութուն, որը 1921թ. միախառնվեց Հայ սահմանադրական ռամկավար կուսակցութեանը գո- յայնելով ռամկավար Ազատական կուսակցութունը։

Չափավոր կամ «Ազգյան» հատվածի իսկական էութունը հասկանալու բանալի կարող է լինել այն, որ նրանք բացարձակապես

<sup>1</sup> Ղարբիճյան Ա., նշվ. աշխ., էջ 181-182

<sup>2</sup> Ղազարյան Վ., նշվ. աշխ., էջ 25:

<sup>3</sup> ՀՀԿՊՊԱ, ֆ. 408, ց. 1, գ. 162, ք. 1:

<sup>4</sup> «Ձայն հայրենյաց», 11 հու. Շիսի 1909:

<sup>5</sup> Նույն տեղում, 11 Մայիսի 1909:

արևմտահայեր էին և հիմնական հարցերում կիսում էին արմենականների տեսակետները: Նախ, նրանք ամբողջովին հրաժարվեցին սոցիալիզմի գաղափարներից՝ պատճառարանելով, որ Թուրքիայի իրականությունն ընդհանրապես և արևմտահայութունը մասնավորապես դրա համար հասունացած է, և որ դրանք թշնամացնում են եվրոպական կառավարութուններին, որոնք էլ, բնական է, չսլիտի սատարեն հայերին: Նրանք բացառում էին մասնակի կռիվներն ու ցույցերը, քանզի այդպիսիք էջին կարող «օգտակար ըլլալ պատամբական գործին» և կվնասեին ժողովրդին ու կխանգարեին պատրաստվել համընդհանուր պատամբության: Վաղաժամ, վնասակար և ուժեղ ջլատող էին համարում ազգին դասակարգերի բաժանողներին ու այդ դասակարգերին թշնամացնողներին: Հայկական դատը համարում էին զուտ արևմտահայերի խնդիրը:

Իսկ 1907թ. ապրիլի 20-ից Բոստոնում /ԱՄՆ/ լույս տեսնող «Ազգ» թերթը, որի անունով կոչվեց այդ հատվածը, պարզ հայտարարում էր, որ իր դավանանքը հայ հեղափոխական ուժերի համախմբումն է, հայ համերաշխության ստեղծումը «ազգային հեղափոխական որոշ մշակված ծրագրի մը շուրջ ու մեջ համերաշխ գործակցության սուրբ ու անդրժեռի դաշինքով»:

Հայաստանի ազատագրման հարցին նրանք նայում էին այսպես. սկզբում ինքնավարութուն Թուրքիայի կազմում, եվրոպական հսկողությամբ, իսկ եթե ժողովրդը կամենար, ապա դեմ էջին լինի անկախությանն ընդհանրապես»: Նրանք մերժում էին այն հանրահայտ գաղափարը, թե ռուսական հեղափոխութունը կազատագրի նաև արևմտահայությանը, ուստի տարօրինակ էին համարում, որ «ատանկ հեռավոր ու խնդրական հույսերով մեր բախտը կապենք ռուս հեղափոխական արկածին, և մեր այնքան սուղ ուժերուն լավագույն մասը տրամադրենք այդ ուղղությամբ»:

Այսպիսով, վերակազմյալների չափավոր հատվածի ներկայացուցիչները զգուշավոր էին, դնում էին զուսպ պահանջներ ու չնայած իրենց հաճախ անվանում էին հեղափոխականներ, ըստ էության ռեֆորմատորներ էին, աստիճանական պայքարի ու բարենորոգումների քարոզիչներ: Նրանք հաճախ շրջանցում էին այնպիսի կարևոր հարցեր, ինչպիսիք էին ազդարային, արդյունաբերության ու ընդհանրապես տնտեսության զարգացման հիմնահարցերը, հասարակության մեջ գույություն ունեցող անհավասարությունն ու անարդարությունները:

<sup>1</sup> Պատմություն սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցության, 1887-1962, հ. Ա, Բեյրութ, 1962, էջ 268-269:

<sup>2</sup> Ծրագրի վերակազմյալ հնչակյան կուսակցության, 1916, Բոստոն: Աս 1908թ. հոկտեմբերի 23-ի «Զայն Չայրեմյացի» մեջ տպագրված ու բավազոր բարեփոխումն է:

<sup>3</sup> Ազգ, 20 ապրիլի, 1907:

<sup>4</sup> Նույն տեղում, 4 հուլիսի, 1908:

<sup>5</sup> Նույն տեղում, 10 օգոստոսի, 1907:

ըր, շրջակա ցեղերի բացահայտ թշնամանքը և այլն: Այսինքն՝ արմենականների հետ ունեին շատ ընդհանրություններ, ինչն էլ ի վերջո հիմք դարձավ Հայ Սահմանադրական Ռամկավար կուսակցության մեջ դրանց միաձուլմանը:

Այսպիսին էր վիճակը, երբ չափավոր /«Ազգյան»/ վերակազմյալները սկսեցին մտածել արմենականների և միութենականների, ափելի շուտ՝ 1907թ. դրանց միացումից առաջացած Գաղափարակցական միության հետ գաղափարական ընդհանուր եզր մշակելու և միանալու հիմքեր ստեղծելու մասին: Արդեն 1908թ. հունվարի 1-ին նրանք մի պաշտոնագրով Եզիպտոսի իրենց տեղական կազմակերպությունը լիազորություններ էին տվել բանակցություններ վարելու: Վերակազմյալների Եզիպտոսի տեղական այդ մարմինը 1907թ. սեպտեմբերի 4-ի նամակով «փութաց հանուն կուսակցության շնորհավորել այդ միությունը՝ /Գաղափարակցական-Ս.Ս./ ... ջերմ փափագ հայտնելով, որ վերակազմյալների իրենց հատվածի հետ ևս մի միությունն ստեղծելու նպատակով բանակցելու համար ներկայացուցիչներ որոշվեն...», որովհետև, ըստ Եզիպտոսի մարմնի, «... տարբերությունն մը չկար երկու կազմակերպություններուն հայացքներուն միջև»:

Գաղափարակցական միության կենտրոնական վարչությունը 1907թ. նոյեմբերի թիվ 12 և 15 պաշտոնագրերով «պատասխանած էր, թե սիրով կընդունեն եղած միության առաջարկը և թե որոշած էր այդ նպատակով բանակցությունները վարելու համար լիազոր մը զրկել Եզիպտոս»:<sup>1</sup> Բանակցություններին մասնակցում են արմենականներից Գր. Պեոզիկյանը /Շիկահեր/, Միք. Նաթանյանը և Հարուսթյուն Պեյլերյանը, իսկ վերակազմյալներից՝ Մ. Տամատյանը, Շ. Հովհիվյանը, Փոքր Հայքի ներկայացուցիչ Ժիրայր Վաչեն, Դուկտոր Տ. Էնֆիճյանը և Հ. Փափազյանը»:<sup>2</sup> 1908թ. փետրվարի 5-ին սկսված բանակցությունների մասին կազմվեց մանրամասն պաշտոնական արձանագրություն: Բանակցող կողմերն օրինական ճանաչեցին միմյանց լիզորությունները: Գ. Պեոզիկյանը ներկայացրել էր Գաղափարակցական միության կենտրոնական վարչության 1907թ. նոյեմբերի 5-ի թվակիր վկայականը, իսկ վերակազմյալները՝ 1908թ. հունվարի 1-ի թիվ 41 վկայագիրը՝ եր-

<sup>1</sup> ՈԱԿ, վավերագրեր, էջ 187:

<sup>2</sup> Նույն տեղում:

<sup>3</sup> Պ. Տեփոյանի «միիրան Տաճարյան» /Բեյրութ, 1964/ աշխատության մեջ Գաղափարակցական միության կողմից Գ. Պեոզիկյանի և Մ. Նաթանյանի հետ բանակցության մասին մասնակից է հիշատակվում «Նախկին միութենական պատգամալիր Խաչիկ Պուռնաթյանը» Աջ 112, որը, սակայն, չի հիշատակվում արձանագրության բնագրում:

Այս դեպքում էլ արձանագրության բնագրում հիշատակվում է Կ. Գրիգորյանը վերակազմյալների թվում, իսկ Տեփոյանի նշված աշխատությանում ոմն Հ. Փափազյան, որը ճիշտ է:

կուսան էլ բանակցություններ վարելու և միություն կազմելու լիազորություններով :

Բանակցող կողմերը ներկայացուցիչների թվից անկախ ներկայանում էին մեկական հավասար ձայնի իրավունքով: Միևնույն ժամանակ, նրանք «կառաջնորդվեին այն հաստատ համոզումով, թե տաճկահայ ժողովրդի ներկա ճգնաժամային դրության հանդեպ հայ հեղափոխական դորժը կկարոտեր ավելի քան երբեք մեծ ճիգերու և միահամուռ գործակցությանց: Անհրաժեշտ էր ուրեմն, որ տաճկահայ դատի համար կազմված առանձին-առանձին կուսակցությունները ի մի համախմբվեին: Այս պահանջն ավելի հրամայողական կդառնար մանավանդ այդ կազմակերպությանց համար, որոնք դորժելով ազգայնական հողի վրա և չունենալով հայացքների զգալի տարբերություններ, կարող էին բղրորովին ի մի ձուլվել և կազմել միակ հեղափոխական մարմին մը»: Ուստի անպայման պետք էր փոխդիջումներով ստեղծել այդ միությունը, որն ստացավ Միացյալ հայ հեղափոխական կազմակերպություն անունը: Նորաստեղծ կազմակերպության նպատակ հռչակվեց ա/ «ազատել տաճկահայությունը օսմանյան բռնակալութենեն և հիմնել անկախ ինքնավարություն մը», հաստատված սահմանադրական լայն հիմունքներու վրա, որ ապահովեր միանգամայն այնտեղ ապրող մյուս բոլոր ցեղերու բարօրությունը և ազատ ու խաղաղ կուլտուրական զարգացումը համաձայն իրենց առանձնահատուկ ընդունակությանց

բ/ քաղաքական հանգամանքերու համաձայն վարչական բարենորոգումներ ձևաք բերել Տաճկահայաստանի մեջ, հիմնվելով եվրոպական պետություններեն հաստատված միջազգային դաշնագրություններու վրա» :

Ընդ որում, նկատի էր առնվում, որ հայկական դատը «առանձնապես քաղաքական հանդամանք ունի, որ ողջ տաճկահայությունն է ճնշվում բռնակալ ուժի մի կողմից» և, հետևապես, դասակարգային հակամարտություններն ու տարանջատ շահերը մերժվում էին: որպեսզի հայության կենսունակ ուժերը համախմբվեն հեղափոխական շուրջ:

Առաջնակարգ ու անհետաձգելի էր համարվում ժողովրդին պատրաստել ինքնաբերականության հնարավոր հարձակումներին դիմադրալիելու համար: Մերժելով վաղաժամ ցուլցերն ու ելույթները,

<sup>1</sup> ՈԱԿ, վավերագրեր, էջ 187-188, Դարբինյան Ա., հիշյալ աշխ., էջ 185-186:

<sup>2</sup> ՈԱԿ, վավերագրեր, էջ 188:

<sup>3</sup> Այստեղ կա մի սնճչտու թյուճ. սկսած Ա. Դարբինյանի հիշյալ աշխատու թյուճից և՛ 188/ բոլոր ու սու մնալիորոնցը, հետագայում հավանաբար օգտվելով նրա վկայակոչումից, զրուս են. «Ազատել Տաճկահայաստանը... և հիմնել պետեղ անկախ կառավարու թյուճ», ինչը չի համապատասխանում փաստաթղթի բնագրին և հետագայում զբնագրան ոչ ժիշտ մեկնու թյուճների ու դատողու թյուճների տեղիք է տվել:

<sup>4</sup> ՈԱԿ, վավերագրեր, էջ 188:

որոնք կարող էին կասեցնել ապստամբական ուժի կանոնավոր ընթացքը, նպատակ էր դրվում պատրաստվել ընդհանուր զինված ապստամբութեան՝ սպասելով քաղաքական նպատակներ իրագործելու:

Ծրագրում առաջ էր քաշվում օսմանյան լծի տակ տառապող ժողովուրդների համադորձակութեան գաղափարը, նրանց վերապահելով սեփական ճակատագրի լիարժեք տնօրինումը՝ պայմանով, որ այն չխախտարի մյուս ժողովուրդների օրինական իրավունքները: Կազմակերպութեան իր գործելակերպեր հռչակեց Արևմտահայաստանը՝ նկատի ունենալով նրա վեց վիլայեթները /Էրզրումի, Վանի, Բաղեշի, Տիգրանակերտի, Խարբերդի, Սեբաստիայի/ և, որ բոլորովին նորութեան էր, Կիլիկիան, իսկ ապստամբութեան և ինքնապաշտպանութեան հարցերը թողեց կենտրոնական վարչութեան հայեցողութեանը<sup>1</sup>: Նորածին կազմակերպութեան այս ծրագիրը շրջանցում էր հողային հարցը և չէր անդրադառնում ապագա հասարակութեան կառուցվածքին, որոնք կարևոր բացթողումներ էին և վկայում էին այն մասին, որ կազմակերպութեանը դեռևս խարխափում է ազատագրական պայքարի բավիղներում:

Ընդհանուր առմամբ այս ծրագիրը ազգային դեմոկրատական էր, որտեղ միախառնված հանդես էին գալիս ինքնապաշտպանութեան ավանդական ջատագույն անձնակազմի ու զինված ընդհանուր ապստամբութեան քարոզիչ վերակազմյալը, արտահայտելով ժամանակակից մտավորականութեան սահմանադրական, իրավական պետություն ունենալու մղումները: Թերութեաններով ու պակասավորութեամբ հանդերձ, այն իրատեսական ու նաև առաջադիմական ծրագիր էր:

Նոր կազմակերպութեան ստեղծման բանակցություններն ավարտվեցին 1908թ. սեպտեմբերի 15-ին՝ Ալեքսանդրապոլում: Հիմնադրար փաստաթուղթը Գաղափարակցական միութեան կողմից ստորագրեցին Մ. Նաթանյանն ու Գ. Պետրիկյանը, իսկ վերակազմյալներից՝ Մ. Տամատյանն ու Շ. Հովիվյանը<sup>2</sup>:

Սակայն Միացյալ Հայ հեղափոխական կազմակերպութեանը փլուզված չէր երկար գոյատևել: 1908թ. հունիսի 10-ին վերահռչակված միդհատյան սահմանադրությունը գալիս էր վերջ դնելու համիդյան բռնակալությանը և կայսրութեանը ապրող բոլոր ժողովուրդներին, այդ թվում և հայերին, առանց բացառության խոստանում էր սահմանադրական կարգեր, հետևապես, և իրավունք էր տալիս քաղաքական բացահայտ կազմակերպությունների կազմել: Այս պարագաներում է, որ կահիրեական մտավորական Վ. Մալեգյանը «գաղափարը հղացավ, թե կարելի է օգտվել օսմանյան սահմանադրությունն ու հայերու իրավունքները թուրքի մեջ պաշտպանելու և ներկայացնելու

<sup>1</sup> ՈւԿ, վավերագրեր, էջ 189-192:

<sup>2</sup> Սեզ ժամոթ բոլոր աշխարհի թղթերում փաստաթուղթն ստորագրողների բնիմ հիշատակում է վերակազմյալ Կարապետ Գրիգորյանի անունը և, որը սակայն չկա փաստաթղթի բնագրում:

համար պետք էր ունենալ որոշ հայացքներով ու ծրագրերով քաղաքական կուսակցություն մը»<sup>1</sup>: Հասարակական գործչի իր խանդավառությունը, նկատի ունենալով եգիպտոսի պահպանողականների դեմ դեռ 1900-ական թվականներից պայքարող ոչ կուսակցական մտավորականներին, որոնց գլխավոր մտահոգությունն Ազգային սահմանադրության իրագործման հետապնդումն էր, նա առաջարկում էր սահմանադրական նոր կուսակցություն կազմելու նպատակով հավաքվել խորհրդակցության:

Խորհրդակցությունը տեղի ունեցավ 1908թ. հոկտեմբերի 24-ին՝ «Թեաթր Ապպասին» կից լսարան-ընթերցատանը: Չնայած դաշնակցության ներկայացուցիչ Հ. Ասատրյանի պատճառաբանությունը, թե իբր օսմանյան սահմանադրությունից հետո մնում են միայն դասակարգային խնդիրներ, որոնք կոչված է լուծելու իր կուսակցությունը, ուստի նոր կուսակցություն կազմելու հարկ չկա, բանակցությունները շարունակվում են և տալիս ցանկալի արդյունք, քանզի մինչ այդ ստեղծվել էր դրա գաղափարական հիմքը:

Բանն այն է, որ Միացյալ Հայ Հեղափոխական կազմակերպության ստեղծումից անմիջապես հետո Մ. Տամատյանը, Վ. Թեքեյանը և Մուշեղ եպիսկոպոս Սերոբյանը «կմտածեին Միցյալ կազմակերպության վարդապետական խորքին մասին»<sup>2</sup>: Նրանցից հատկապես Մ. Տամատյանը, ամբողջովին կրանվելով այդ աշխատանքով, «կպատրաստե Թամկավար ծրագրի մը նախագիծը», որը Ալեքսանդրիայի մասնաճյուղի անունից ուղարկվում է մյուս մասնաճյուղերին, ինչպես նաև անկուսակցական անհատներին:

Այսպիսով, Մ. Տամատյանի ռամկավարական և Վ. Մալեզյանի սահմանադրական գաղափարակից խմբավորումների միջև տեղի են ունենում բանակցություններ, որոնք ի վերջո, հաջող կլք են ունում Մ. Տամատյանի նախագիծը հիմք ընդունելով՝ «Մալեզյանի ծրագրին կարգ մը կետերուն հավելումովը»<sup>3</sup>: 1908թ. հոկտեմբերի 26-ին<sup>4</sup> Վ. Մալեզյանի տանը դումարված հիմնադիրների համագումարը հռչակում է նոր Հայ սահմանադրական ռամկավար կուսակցության ծնունդը:

Այսպիսով, Հայ սահմանադրական ռամկավար կուսակցության /ՀՍՌԿ/ կորիզը եղավ 1908թ. սեպտեմբերի 15-ին Ալեքսանդրիայում հռչակված Միացյալ Հայ Հեղափոխական կազմակերպությունը, որի կազմակերպական տեղեկագրին իբրև հավելված կա 1908թ. հոկտեմբերի 31-ի հիշատակությունը ստորագրված Միացյալ կազմակերպութ-

<sup>1</sup> «Արև», 29 հոկտեմբերի, 1928:

<sup>2</sup> Ղազարյան Վ., նշվ. աշխ., էջ 30:

<sup>3</sup> «Արև», 29 հոկտեմբերի, 1928:

<sup>4</sup> «Նոր օր», 26 հունիսի. 1965:

<sup>5</sup> ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 427, ց. 1, գ. 8, ք. 7: Իրականում կուսակցությունը պաշտոնապես հռչակվեց մի փոքր ուշ, իսկ այստեղ միայն նախնական համաձայնության մասին է խոսքը:

յան Հիմնադիր ղեկավարների կողմից: Այդտեղ կարդում ենք. «Վերակազմյալ Հնչակյան կուսակցության և Գաղափարակցական միութեան /Արմենո-միութենական/ միութեամբ կազմված «Միացյալ Հայ Հեղափոխական կազմակերպությունը» Օսմանյան սահմանադրության նոր պայմաններու բերմամբ՝ որչափ ատեն մեզմե անկախ հանգամանքները մեզ չպարտավորեցնեն դադրած ըլլալով այլևս հեղափոխական կազմակերպություն մը ըլլալն, իր ամբողջ կազմով կմիախառնվի «Հայ սահմանադրական ռամկավար կուսակցություն» անունով քաղաքական կուսակցության մեջ, որը Հիմնված է միացյալ կուսակցություններու լիազորներուն կողմն հրավիրված լուրջ և գիտակից անձնավորություններն»<sup>1</sup>:

Ի մի բերելով վերը շարադրվածը և փորձելով պատասխանել մեր պատմագիտության մեջ բաց մնացած մի շարք հարցերի, կարող ենք ասել.

ա/ ՀԱՌ կուսակցությունը կազմավորվեց Միացյալ Հայ Հեղափոխական կազմակերպության Հիմքի վրա ներառելով գաղափարակից մտավորականների և նախկին Հեղափոխականների:

բ/ Թեև խնդրո առարկա հարցին անդրադարձող բոլոր աշխատություններում<sup>2</sup> Հիմնադրման վայրեր են նշվում միաժամանակ երկու քաղաքներ՝ Կահիրեն և Ալեքսանդրիան, բայց ոչ ոք չի փորձել բացատրել գործի էությունը: Բանն այն է, որ աշխատանքները սկսվել և տարվում էին միաժամանակ երկու քաղաքներում էլ, բայց իրականում, կուսակցության Հիմնադրման մասին վերջնական փաստաթուղթը և ծրագիրն ընդունվել է Ալեքսանդրիայում, որն էլ կուսակցության Հիմնադրման վայրն է:

գ/ Որոշ տարակարծություն կա կուսակցության Հիմնադրման ժամկետի հարցում: Այսպես, միացյալ Հայ Հեղափոխական կազմակերպության ստեղծման համար դեռևս 1908թ. փետրվարի 5-ից սկսած բանակցությունների արդյունքները թեև ամփոփվեցին սեպտեմբերի 15-ի փաստաթղթում, սակայն, ըստ էության, դրանք շարունակվեցին և, Ա. Անդրեասյանի ասելով, ավարտվեցին հոկտեմբերի 1-ին<sup>3</sup>, իսկ Ա. Դարբինյանի վկայությամբ՝ 4-ին<sup>4</sup>: Իսկ կուսակցության ստեղծման օր Մ. Ծիզմենյանը համարում է 1908թ. հոկտեմբերի 26-ը<sup>5</sup>, որը շփոթի արդ-

<sup>1</sup> ՈԱԿ, վավերագրեր, էջ 196:

<sup>2</sup> Դարբինյան Ա., նշվ. աշխ., 3. Պողոսյան, կուսակցական կյանքի հուշերս, Բեյրութ, 1987թ., Եկարյան Ա., Գուշեր, Բեյրութ, 1985, Տեփոյան Պ., Տամատյան Ա., Բեյրութ, 1964, Մույնի Ատոմ Ասլանյան, Բեյրութ, 1988, Կտքճեան Վ., Գայկական Կիրիկիո ազատագրական պայքարը, Բոստոն, 1979, Ղազարյան Վ., նշվ. աշխ. և Սորադիր ռամկավար ազատականին ուղեցույցը, Բեյրութ, 1981, Գամբարյան Ա., նշվ. աշխ.երը:

<sup>3</sup> Անդրեասյան Ա., Պատմություն ՌԱԿ-ի Ամերիկայի արևմտյան շրջանի, Լոս-Անջելես, 1981, էջ 29:

<sup>4</sup> Դարբինյան Ա., նշվ. աշխ., էջ 193:

<sup>5</sup> Ճիզմենյան Ա., Պատմություն ամերիկահայ քաղաքական կուսակցության, Ֆրեզնո, 1930, էջ 169:

յունք է միայն: Իրականում դա կահիրեաբնակ հիմնադիրների հավաքն էր, որը լիազորություններ չուներ և չի էլ ընդունել որևէ հիմնարար փաստաթղթով<sup>1</sup>; Հայտարարությունը կուսակցության հիմնադրման մասին, ինչպես և ծրագիր-կանոնագիրը ընդունվել է 1908թ. հոկտեմբերի 31-ին Ալեքսանդրիայում Մ. Նաթանյանի, Գ. Պետրիկյանի, Մ. Տամատյանի, Շ. Հովիվյանի ստորագրությամբ, ովքեր ունեին այդ լիազորությունները Միացյալ Հայ հեղափոխական կազմակերպության կողմից:

Հենց հոկտեմբերի 31-ին ընդունված ծրագրում ռամկավարները, ողջունելով սահմանադրության հռչակումը, նշում էին, որ այն Օսմանյան կայսրության տարածքում ապրող բոլոր ժողովուրդների մղած հերոսական պայքարի արդյունք է և որ այլևս հեղափոխական կուսակցությունների գոյության անհրաժեշտությունը չկա, այլ դերադասելի է այսուհետև գործել օրինական /Legal/ սկզբունքով, արտահայտելով ժողովրդի մեծամասնության շահերը, ինչպես դեմոկրատական մյուս երկրներում է: Արդ, Հայ հեղափոխական նախկին կազմակերպությունները «կվերածվեն նույնպիսի օրինական, քաղաքական կուսակցություններու», մասնավորապես այնպիսի կուսակցության, որը հեռու է ծայրահեղ և օտար վարդապետություններից և վերկանգնելով դասակարգային խտրություններից կառաջնորդի ժողովրդին: Ահա այդ մտածողության կրողն ու արգասիքն էլ ՀԱՌ կուսակցությունն է, որի ծրագիրը «Պիտի կրնա նկատվիլ իբր ազգային», պիտի նպաստի օսման և մյուս ժողովուրդների հետ բարեկամության ամրապնդմանը և տևական անդորր բերի:

Ներշնչված XX դարի լուսավոր գաղափարներով, կուսակցությունն իր գործունեության զլխավոր նպատակակետ է ընդունում ժողովրդի դերի խանությունը՝ «կառավարությունը ժողովուրդն է» նշանաբանը որդեգրելով: Անդրադառնալով ազգային խնդրին, ծրագրի հեղինակները գրում են. «Ընդունելով երկրին ամբողջությունը և քաղաքական անբաժանելիությունը, միևնույն ժամանակ այդ ազգերը պետք է պահպանեն և երաշխավորության տակ դնեն իրենց ազգային առանձնահատկությունները», փոքր թե մեծ լինեն իրավահավասար և, որ ամենակարևորն է, սահմանադրական ռամկավարական սկզբունքները «չեն ժխտեր ազգերու ինքնորոշման իրավունքը, այլ ընդհակառակը, այս իրավունքներուն ապահովումն է եղած միակ միջոցը բազմազգ պետություններու անդորրության և առաջադիմության»: Այս տեսությամբ Հայությունը ներկայանում է նախ որպես օսմանյան քաղաքացի և ապա իբրև Հայ ազգություն, որոնք չպիտի հակասեն իրար, այլ ընդհակառակը լրացնեն միմյանց: Բնական է նաև, որ սրանից չի

<sup>1</sup> ՌԱԿ, փափրագեր, էջ 21:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 22:

<sup>3</sup> Նույն տեղում:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 26:

բխում, թե դա պիտի դիտվի որպես անջատողական ձգտում։ Համատեղ ու համերաշխ՝ հավասար իրավունքներ պետք է ունենան բոլոր ազգերը՝ մեծ թե փոքր։ Վերը շարադրվածից ելնելով է, որ կուսակցությունը «կկանգնի ջատադուր՝ ազգային իրավունքներու պահպանման և զուտ վարչային ապակեղրոնացման դրություն» :

Այնուհետև որոշվում է կուսակցությունից դրոշի տակ համախմբել պարտաճանաչ Հայ հարուստը, ժրջան հայ աշխատավորը և գիտակից հայ մտավորականը» ու հենվել մեր ժողովրդի բնածին ռամկավարական խառնվածքի վրա, հասնել համազգային միակամություն:

Մերժելով սոցիալիզմի գաղափարախոսությունը և ընդհանրապես «հեռու մնալով վիճելի վարդապետություններն», խնդիր էր դրվում տնտեսական բնագավառում կապիտալի ազատ զարգացում, որն էլ ծրագրի հեղինակների կարծիքով ինքնըստիներքյան կբերի աշխատավոր ժողովրդի վիճակի բարելավում: Ծրագրի հեղինակների կարծիքով, գործելակերպի լավագույն միջոցներ են զբաղոր /մամուլ, զանազան հրատարակություններ/ և բանավոր ազդեցիկան ու պրոպանդազը: Անհրաժեշտ էր համարվում ամեն գնով պաշտպանել սահմանադրությունը՝ չբացառելով քաղաքական դաշինքը այլ քաղաքական կուսակցությունների ու խմբավորումների հետ, գործնական սկզբունք դարձնել բարենորոգումների միջոցով առատություն և բարօրություն հասնելը, այսինքն, որդեգրվում էր պառլամենտական, ռեֆորմիստական պայքարի ձևը:

Կուսակցությունից նպատակները բաժանվում էին երկու խմբի.

ա/ քաղաքական, որի տակ հասկացվում է օսմանյան սահմանադրությունը վերածել ռամկավարական սահմանադրության, այսինքն՝ ավելի ժողովրդականացնել այն և օսմանյան կայսրության ամբողջությունը պահպանելով հանդերձ, լայն ինքնավարական արտոնություններ շնորհել տեղական և ազգային իշխանություններին, և բ/ ազգային նպատակ, անխախտ պահել հայոց ազգային իրավունքներն ու սովորույթները, որը երաշխիք կդառնա կրոնական ազատության և կրթական զարգացման, հետամուտ լինել ազգային սահմանադրության վերափոխմանը՝ այն հարմարեցնելով ժամանակի պահանջներին, աշխատել «զուտ եկեղեցական գործերը անջատել անոնց ազգային վարչական կազմեն», ստեղծելով ազգային և կրթական միացյալ վարչություն, և ի վերջո, պահպանել ու զարգացնել հայոց լեզուն, պատմությունն ու մշակույթը:

Ծրագրի «Գործելակերպ» բաժնում հայտարարվում էր, որ ՀՄԻԿ-ն գործում է «սահմանադրական ռեֆորմի տակ, իբրև քաղաքական օրինական կազմակերպություն և ոչ իբրև հեղափոխական-ապս-

<sup>1</sup> ՌԱԿ, վավերագրեր, էջ 24:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 25:

տամբական գաղտնի մարմին»<sup>1</sup>, որի գործունեություն միջոցներն են մամուլը, միտինգները և հրապարակային ելույթները, ընտրական ու խորհրդարանական պայքարը: Նախկին բռնապետական ռեժիմի վերականգման ամեն մի փորձի դեմ կուսակցությունը պայքարելու էր բոլոր միջոցներով: Առաջնահերթ խնդիր էր համարվում ուսումնասիրել հայ ժողովրդի պահանջները և գործունեություն ծավալել դրանց իրականացման համար՝ ջանալով մյուս «ազգություններու հետ մշակել եղբայրակցական ոգի և համերաշխարար գործակցել անոնց հետ»:

Հաջորդ ենթաբաժնում, որն անվանված է «Հատակագիծ», հռչակվում է կուսակցություն իդեալը՝ իրավական սահմանադրական պետական համակարգի ստեղծումը, այն վարչաիրավական մոդելը, որը պիտի գործի ապագա կայսրությունում և մասնավորապես Հայաստանում: Նրանց կարծիքով, ապագայում ժողովրդի գերիշխանությունն ապահովելու համար անհրաժեշտ են սահմանադրական այնպիսի երաշխիքներ, ինչպիսիք են ազդեցիկ լիակատար հավասարությունը, բոլոր անհատների հավասարությունն օրենքի և պետություն առջև դրանից բխող իրավական հետևանքներով և պարտականություններով, անձի անձույնմխելիություն, խղճի, դավանանքի, ուսման, խոսքի, մամուլի ազատություն, ինչպես նաև խմբակցություններ, միտինգներ և ցույցեր կազմակերպելու իրավունք, աշխատանքի, առևտրի, ազատ տեղաշարժման ազատություն, զրաքննություն իսպառ բացառում և այլն:

Վերջին հաշիվով նրանք առաջարկում էին սահմանադրական միապետություն հետևյալ կառուցվածքով: Բուրգի վերևում էր «կայսրն օսմանցիներուն», ում անձը թեև անձույնմխելի էր ու նա թեև պատասխանատու էր օրենքի առջև, բայց պարտավոր էր հարգել սահմանադրությունը, օրենքները, հետամուտ լինել երկրի անկախությունն ու ամբողջականությունը: Օրենսդրական իշխանությունը պիտի իրականացվեր կայսեր և երկպալատ պառլամենտի կողմից՝ օրենսդրական նախաձեռնություն ընձեռելով նախարարների խորհրդին, իսկ գործադիր իշխանությունն իրագործելու էին կայսրը և նախարարները:

Խորհրդարանի ստորին պալատը երեսփոխանական ժողովը, ընտրվելու էր 25000 ձայնից մեկ պատգամավոր հաշվարկով, ընդհանուր, հավասար, գաղտնի և ուղղակի քվեարկությամբ 21 տարին լրացած այր ընտրողների կողմից: Ընտրվել կարող էին 30 տարեկանից: Վերին պալատը՝ ձերակույտը, ընտրվում էր նահանգային ժողովների կողմից՝ 9 տարի ժամկետով, 40 և բարձր տարիք ունեցողներից:

Ռամկավարների պատկերացմամբ արդարադատությունը, որպես պետական կարևորագույն ֆունկցիա, պիտի իրականացվեր

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 25-26:

<sup>2</sup> ՈԱԿ, վավերագիր, էջ 26:

Հետևյալ սկզբունքով. դատարանի անկախութիւնն վարչական իշխանութիւնէն, դատարանների ընտրովիութիւնն, տեղական լեզվի անպայման օգտագործում դատարանում և անհրաժեշտութեան դեպքում թարգմանչի առկայութեան ապահովում, անձի ձերբակալութիւն միայն դատախազի սանկցիայով, բանտային պայմանների բարելափում, պատճառած վնասների հատուցում:

Կրթական համակարգը, ըստ ռամկավարների ծրագրի, նախատեսում էր ազատ ուսուցում, նախնական ճիւղ և պարտադիր կրթութիւն, պետական հովանավորութեամբ ազգային լեզվով վարժարանների բացում, թուրքերենի դասավանդում միայն բարձր դասարաններում: Կարճ ասած, նմադրվում էր միասնական կրթական համակարգի ստեղծում հնարավորութիւնն ընձեռելով մայրենի լեզվի, պատմութեան, մշակութի և կրօնի դասավանդման համար:

Անհրաժեշտ էր համարվում բոլոր չափահաս տղաների պարտադիր ծառայութիւնը բանակում երկու տարի ժամկետով և ծառայութեան պայմանների բարելավումը:

Ծրագրում հատուկ ուշադրութիւն էր դարձվում հողային Հարցին: Պահանջվում էր բարեփոխել Հարկային համակարգը, սահմանել պրոգրեսիվ Հարկ, վերանայել մշակութեցիութիւնը կամ կապալառութիւնը, չեղյալ հայտարարել ապառքները, չքավորներից Հարկեր չՀավաքել, բաց թողնել էժան վարկեր, հողագործին հող տրամադրել «դուրամատչելի պայմաններով» նկատի ունենալով հատկապես «վերջին բռնակալութեան երեսն» տուժածներին: Հին վարչակարգից փախածները կամ բոլոր տարագիրները պետք է պետական ծախսերով վերադարձվեն իրենց բնակավայրերը: Մուհաջիրներին /նոր գաղթականներ/ բնակեցնելիս պիտի Հաշվի առնեն հնաբնակ տեղացիների կամքը: Բռնագրաված տարածքները տեղական քննիչ Հանձնաժողովների միջոցով պետք է անպայման վերադարձվեն նախկին տերերին, «բացարձակ ջնջում պետական և համայնական տարապարփակ աշխատանքներում»: Անհրաժեշտ էր համարվում հատուկ օրենքներով խրախուսել ընկերութիւնների և երկրագործական բանկերի ստեղծումն ու զարգացումը:

Ծրագիրը մշտական խաղաղութեան և կայսրութիւնում ապրող ժողովուրդների եղբայրութեան ապահովման երաշխիքներ էր համարում թուրք վերնախավի զանազան արտոնութիւնների վերացումը, «Ջնջել պեյերու և աղաներու ամատական իրավունքները և կամայական Հարկահանութիւնները», թափառաչրջիկ ու մակաբուլժ ապրելած և ունեցող ցեղերի գինաթափումն ու նստակյաց դարձնելը, բայց մինչ այդ անհրաժեշտ է պաշտպանել Հարեան խաղաղ բնակիչներին

կամ զենք տալ նրանց՝ ինքնապաշտպանության համար: Դրանց հետ մեկտեղ, պետք է «Ջնջել համիդլին գորագնդերը»:

Ծրագրի վերջում նշվում էր, որ կուսակցության մեջ կարող է մտնել ամեն մի հայ, առանց դավանանքի ու դասակարգի խտրութեան, ով նյութապես և բարոյապես կնպաստի այդ ծրագրի կենսագործմանը: Հայտարարվում էր, որ կուսակցության կենտրոնը գտնվելու է Կ. Պոլսում, իսկ մասնաճյուղերը հայաշատ բոլոր երկրներում: Դրանք, ենթարկվելով կենտրոնին, տեղերում կլինեին ինքնավար և կգոյատևեին տեղական միջոցների հաշվին:

Անշուշտ, ռամկավարների ծրագիրը, արտահայտելով մանր ու միջին սեփականատերերի շահերն ու տրամադրությունները, ազգային ժողովրդավարական ծրագիր էր, սակայն ոչ կատարյալ: Հավակնելով դեմոկրատական վարչակարգ ստեղծելուն, այն ուներ թերի կողմեր, բացառում էր կնոջ ընտրական իրավունքը, ազգային հարցում ընդունելով երկրի ամբողջությունը և քաղաքական անբաժանելիությունը, ենթարկվելով «թուրքական պատիր սահմանադրության խաբկանքներին»՝ այն հրաժարվում էր Հայաստանի անկախության գաղափարից, մշուշապատ էր պատկերացնում ընդհանրապես ազգային հարցի լուծումը, հնարավոր էր համարում պառլամենտական պայքարի միջոցով հասնել ադատությունների:

XX դ. սկզբին, երբ զարգացած երկրներում տեղի էին ունենում սոցիալ-տնտեսական, իրավական, քաղաքական խոշոր տեղաշարժեր, երբ մի շարք ժողովուրդներ միասնատենքին համարում էին թանգարանային ցուցանմուշներ, ռամկավարների կողմից սահմանադրական միասնությունը քաղաքական իդեալ հռչակելը պահպանողականություն էր, անկասկած՝ նահանջ ՀՍՌԿ-ի բաղկացուցիչ մասերը կազմող նախորդ կազմակերպությունների ծրագրերի հեղափոխական դրույթներից, բայց անհամեմատ ավելի առաջադիմական էր, քան միջինաստիան սահմանադրությունը, որովհետև մերժելով նրա խիստ սահմանափակությունն ու շովինիզմը, թուրքիայի զարգացման համար բացում էր համեմատաբար լայն հեռանկարներ: Անհրաժեշտ է շեշտել սակայն, որ ռամկավար առաջնորդները բացառապես արևմտահայեր էին, քաղածանոթ թուրքական դժնդակ իրականությունը, շատերն իրենց կաշվի վրա զգացել էին բռնատիրություն ճնշումը և ծրագիրը կազմելիս, անկասկած, հաշվի էին առել այն բոլոր հնարավորություններն ու խոչնդոտները, որոնք կնպաստեին կամ կարգիլակեին իրենց մտադրությունների իրականացմանը: Նրանք, գտնվելով կատարված անցուղարձի կենտրոնում, չէին կարող առաջարկել իրականությունից կտրված, ուսուպիստական և անիրագործելի ծրագիր:

<sup>1</sup> Նույն տեղում:

<sup>2</sup> Հայկական Սովետական Հանրագիտարան, հ. 10, Երևան, 1984, էջ 142

Կուսակցութեան ստեղծումից հետո ռամկավարների ղեկավարները Ալեքսանդրիայից տեղափոխվեցին Կ.Պոլիս, որ ավելի մոտիկից կազմակերպեն աշխատանքներն արևմտահայութեան մեջ և սովորացնեն իրենց կողմնակիցների թվաքանակը: Նրանք հուլյս ունեին իրենց ազգանպաստ գործունեութեամբ համախմբել նաև աշխարհի տարբեր մասերում ապրող հայերին, սակայն մեծ հաջողութեւնների չհասան, որովհետև մայրաքաղաքի մտափորականութեան զգալի մասն արդեն մտել էր առավելապես դաշնակցութեան մեջ, իսկ անկուսակցականները կամ հրաժարվում էին, կամ գերադասում էին չեզոք մնալ: Այդ պատճառով էլ նախկինի նման ռամկավարները գործում էին գլխավորապես Վան-Վասպուրականում, ուր գրեթե բոլոր արմենականները մեխանիկորեն ընդգրկվեցին նրանց շարքերը: Արդեն 1909թ. «Մշակի» Մտրակ ծածկանունով թղթակիցը գրում էր. «Քաղաքումս «սահմանադիր-ռամկավար կուսակցութեւնը» ուժեղանում է, նրա անդամների թիվը խտանում է»: ՀՌՍԿի տեղական մասնաճյուղեր առաջացան նաև Կ.Պոլսում, Իզմիրում, Խարբերդում, Տիգրանակերտում, Կիլիկիայի որոշ քաղաքներում, Եգիպտոսում, Բուլղարիայում, Թիֆլիսում /համակիրների խումբ/ ու Ամերիկայում: 1912թ. Հուլիս ծածկանունով թղթակիցը «Աշխատանք» թերթում գրում էր, որ ռամկավարների թիվը չի անցնում 100 մարդուց»: Սակայն մեր ամենահամեստ հայվումներով անգամ այդ թիվը իրականութեամբ չի համապատասխանում: Միայն Վան-Վասպուրականում կար ավելի քան 500 ռամկավար:

Լինելով տկար և նեղվելով քաղաքական կուսակցութեւնների, հատկապես դաշնակցականների կողմից, ռամկավարներն անցնում են պատրիարքարանի հովանավորութեան տակ և մի շարք հարցերում պաշտպանում են նրա վարքագիծը: Նրանք, օրինակ, քննադատում էին դաշնակցական կուսակցութեանը գտնելով, որ «մէպուսական աթոռները» խայծ են ևրիտթուրքերի կողմից հայ ազգային ներքին կյանքին իշխելու, հայ ազատագրական միասնականութեւնը խաթարելու իմաստով: Կամ, որ դաշնակցականները չպիտի խաթարեն պատրիարքարանի հեղինակութեւնը և «կպատեն նրա դարավոր իրավասութեւնները», որ գոնե Ադանայի կոտորածների օրերին այն պետք է ոչ թե հակադրվեր պատրիարքարանին, այլ ընթանար նրա հետ: Ռամկավար ղեկավարներից մեծանուն բանաստեղծ Վ. Թեքեյանը 1910թ. հուլիսին այդ առիթով գրում էր. «Երբ պատրիարքարանն արդարութեւն կիանդրեր կառավարութեանն ու Ս. Պատրիարքն ալ կհրաժարվեր այդ պատճառով, ազգը պետք էր ամբողջովին իբրև մեկ մարմին իր պատրիարքին հետ ըլլար և թե իր մեկ հատվածը կառավարա-

<sup>1</sup> Պարբինյան Ա., Եզվ. աշխ., էջ 206:

<sup>2</sup> «Մշակ», 1909, N 77:

<sup>3</sup> «Աշխատանք», 1912, N 49-96, էջ 6:

<sup>4</sup> Սույն աշխատանքի ծավալային պահանջները թույլ չեն տալիս ամբողջովին քննարկել կուսակցականների թվաքանակի խնդիրը:

կան գերհզոր կուսակցութեան մը հետ, որպիսին է իթթիհատ վե թերաքին, առանձին համաձայնութեան մը կնքելով, տկարեցներ պատրիարքի դիմումին ազդեցութեանը: Ասիկա գործնականաբար /թաքթիք/ սխալ մըն էր»<sup>1</sup>:

Կուսակցութեան ստեղծման առաջին օրվանից սկսած խնդիր էր դրված գումարել ընդհանուր պատգամավորական ժողով և ճշգրտել ինչպես ընթացիկ, այնպես էլ ապագային վերաբերվող բազում հարցեր: Երկար ձգձգումներից հետո հաղթահարելով անասելի շատ դժվարութիւններ ի վերջո այն գումարվեց «Պուսո Ալպանական Բլուսին մեջ» 1911թ.: Ներկա էին 25 պատգամավորներ եգիպտոսից, Փոքր Հայքից, Կիլիկիայից, Պուսից, Վասպուրականից, Ամերիկայից: Կազմվեց ղրվան և հաջորդաբար գումարվեց 20 նիստ: Համագումարի վերջին նիստին «Ներկա գտնվեցավ նաև «Մշակի» խմբագիր Համբարձում Առաքելյանը»<sup>2</sup>: Կուսակցութեան ծրագրի ոգուն համապատասխան քննարկվեցին և ընդունվեցին մի շարք որոշումներ:

Իր նշանակութեամբ առանձնանում էր համագումարից անջատ և սահմանափակ թվով գործիչներով բացառիկ նիստը, որի միակ օրակարգն էր «ինքնապաշտպանութեանը ներքին գավառներուն մեջ» հարցը. նկատի առնելով թուրքական իշխանութեաննների կեղծ և երկերեսանի քաղաքականութեանը, երկար խորհրդակցութեաններից հետո ընդունվեց պատմականորեն ճիշտ որոշում. «ամեն հնարավոր միջոցներ ձեռք առնել ներքին գավառներու հայութեանը զինելու, ապագա հավանական ինքնապաշտպանութեան պետքին համար»<sup>3</sup>: Նախապատվութեանը տրվում էր Վասպուրական աշխարհին, քանի որ այն աշխարհազորական նպաստավոր դիրքում էր սահմանակից Ռուսաստանին ու Պարսկաստանին և այնտեղ կար արմենականների զրական և ուսանելի փորձը:

Պատգամավորական ժողովից հետո կուսակցութեանը ձեռնամուխ եղավ ընդունված որոշումների իրականացմանը: Ժողովրդին զինելու և ինքնապաշտպանվելու անհրաժեշտ պայման էր դրամը, որի հայթհայթման համար պատվիրակներ ուղարկվեցին տարբեր շրջանակներ: Ինչպես նաև հանդես եկան հրատապ մի շարք խնդիրների քննարկմամբ մամուլում ու իրենց վերաբերմունքն արտահայտեցին: Այսպես. Հայկական հարցի քննարկման օրերին հանդես եկան չափավոր պահանջներով հերթական անգամ հանդես բերելով տեղաբնակի իրատեսութեան: Նրանք դեմ էին հեղափոխական ելույթներին և պաշտպանում էին օսմանյան ժողովուրդների հետ հայ բնակչութեան

<sup>1</sup> «Բյուզանդիոն», 1910, N 415:

<sup>2</sup> Երկրային Ս., Եզվ. աշխ., էջ 224:

<sup>3</sup> Երկրային տեղում, էջ 226:

<sup>4</sup> Երկրային տեղում:

խաղաղ գարգացման գաղափարը: 1913-ին «Վան-Տոսպոլում»<sup>1</sup> ռամկավարներն հայտարարում էին. «Մենք ապստամբներ չենք և Հայկական Հարցը անջատողական շարժում մը չէ երբեք, մեր պահանջները տարրական արդարության պահանջներ են, որոնց իրագործումով հավասարապես պիտի օգտվին նաև քուրդ ու թուրք ժողովուրդները և ի վերջո ամբողջ պետությունը»: Որ թեև հայ ազգը դժգոհ է, բայց ոչ ապստամբ, թեև նա վերջին 30 տարվա ընթացքում նպատակ է ունեցել սոսկ տեսնել «հայ ցեղի ինքնուրույն կուլտուրայի զարգացումը նորոգված ու բարեկարգ օսմանյան պետություն մեջ»: Իսկ 1913թ. փետրվարին ռամկավարներն արդեն կոնկրետ պահանջում էին տարրական իրավունքներ, գույքի, պատվի և կյանքի անձեռնմխելության և դրանք ապահովող գործնական երաշխիքներ:

Ռամկավարները գտնում էին, որ Հայկական Հարցի լուծման ամենագործող ազդակները եթե գտնվում են դրսում օսմանյան կառավարության և եվրոպական դիվանագիտության մեջ, ապա դրանից մեկն էլ «պետք է փնտրենք մեր մեջ, հայության ոգիի մեջ»: Ուստի կոչ էին անում հայ կուսակցություններին առժամանակ մոռանալ իրենց ներքին տարաձայնությունները և համախմբվել «այն հարցի շուրջը, որ կկոչվի տաճկահայկական Հարց»: Երբ 1913-ի մարտին Օլֆերը /Ռուսաստանի դեսպանը թուրքիայում/ փորձեց հաշտեցնել հայ քաղաքական կուսակցություններին ռամկավար կենտրոնական ակումբը անմիջապես արձագանքեց նրա կոչին և հոկտեմբերին Պոլսում դաշնակցության արևմտյան բյուրոյի, շնչական կուսակցության թուրքահայ կենտրոնական մարմնի և Վերակազմյալ Հնչակյան կենտրոնական վարչության հետ հանդես եկավ համատեղ հայտարարություն, որում ասվում էր, որ այսուհետև միասնաբար կգործեն հայկական բարենորոգումների իրականացման համար և որ պետք է վերջ տան տարիներ շարունակ ձգձգվող, ազգի ուժերը պառակտող սին վեճերին և համերաշխորեն գործեն հայկական Հարցի լուծման համար:

Յավոք, այս համերաշխությունը երկար չտևեց և 1914թ. սկզբին, երբ հրապարակ եկավ օսմանյան պառլամենտի հայ պատգամավորների ընտրության հարցը, հայ քաղաքական կուսակցությունները վերսկսեցին իրար դեմ մղվող պայքարը: Ու թեև արևմտահայ

<sup>1</sup> 1912թ. ԳՈՍԿ-ի Վասպուրականի շրջանակը Վանի երիտասարդական Բրիտանական ընկերությունից 120 ոսկով գնելով «Վան-Տոսպոլ» դեկտեմբերի 12-ից սկսում է վերահրատարակել այն որպես պաշտոնաթերթ Վարդան Պապիկյանի խմբագրապետությամբ:

<sup>2</sup> «Վան-Տոսպոլ», 1913, N 1, էջ 3:

<sup>3</sup> Նույն տեղում, N 2, էջ 14:

<sup>4</sup> Նույն տեղում, N 3, էջ 27:

<sup>5</sup> Նույն տեղում, N 4, էջ 40:

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 38:

<sup>7</sup> Համբարյան Ա. Ա., Երիտթուրքերի ազգային ու հողային քաղաքականությունը և ազատագրական շարժումներն Արևելյան Հայաստանում, էջ 143:

ազգային ուժերի համախմբման համար կային իրական պայմաններ, սակայն տարանջատող ու բաժանող գործոններն ավելի գորեղ գուրս եկան, քան միավորողները: Այդ պատճառով էլ ռամկավարների ու հասարակական տարրեր շրջանների ձգտումներն ազգային ուժերի համախմբման ուղղությամբ ապարդյուն անցան:

Ռամկավարները չէին անտեսում նաև սոցիալ-տնտեսական խնդիրները: Նրանք քննադատում էին Իթթիհատին, որ տարիներ շարունակ ձգձգում էին հողային հարցի լուծումը: «Վան-Տոսպում» շեշտվում էր, որ թուրքական կառավարությունը ոչ միայն չի լուծել հողային հարցը, այլև չի հաստատել գոնե անձի ու գույքի ապահովություն, որ գրությունը շարունակում է անտանելի մնալ:

Ինչպես իրենց ծրագրային փաստաթղթերում, այնպես էլ մամուլում ռամկավարները սուր քննադատության էին ենթարկում բոլոր նրանց, ովքեր արևմտահայության մեջ սոցիալիզմ էին քարոզում: Նրանք գտնում էին, որ պետք է վերջ դնել շահագործմանը թուրքիայում, կերպարանափոխել երկիրը, բարելավել նրա տնտեսական պայմանները, փերացնել ազքատությունն ու արտագաղթը, կասեցնել պետության սնանկությունը և գործարանային կյանքի բռնում «ի մի ձուլել ազգային ու կրոնական մոլեռանդությունը և անգործությունը»: Իրարմե մեկուսացած, բայց հավասարապես տանջվող ժողովուրդը»: Սակայն արևմտահայ աշխատավոր զանգվածների մեջ հակակրանք ու ատելություն չառաջացնելու համար ռամկավարները հարկ էին համարում նշել, որ իրենք կափտալիզմ են քարոզում ոչ թե բուրժուազներ լինելու, այլ նրա անհրաժեշտությունը լավ հասկանալու համար:

1914թ. հունվարի 26-ի հայտնի բարենորոգումներին ռամկավարներն արձագանքեցին ոչ միանշանակ: Բաղադրական դարգացումներին զուգընթաց փոխվում էր նաև նրանց վերաբերմունքը: Սկզբում ռեֆորմներին դրական վերաբերվեցին բնութագրելով տերությունների ընդունած ծրագիրը որպես «հաջող վերջավորություն», թե հայ ժողովուրդը «այսօր ուրեմն կրնա քիչ մը ավելի հույսով ու վստահությամբ նայել ապագային...»: Բայց հետո թերահավատությանը լցվեցին այդ ծրագրի հանդեպ, նշելով, որ թուրքիան անցյալում շատ է խոստացել բարելավել հայերի վիճակը և չի կատարել: Այս կանգնելով չեզոք դիրքում, ռամկավարները, այնուամենայնիվ, չուզեցին վատատես լինել. «Չենք կրնար գուշակել, թե ինչ ապագա պիտի ունենա, որչափ տոկոսն ու տեղական պիտի ըլլա /ծրագրեր/, բայց պետք է որ առանց հոռետեսության քիչ մը հույսով նայինք անոր վրա և մեր կողմն աշխատինք դյուրացնելու անոր գործադրությունը»:

<sup>1</sup> «Վան-Տոսպ», 1912, N 15, էջ 1:

<sup>2</sup> Նույն տեղում, N 8, էջ 87:

<sup>3</sup> «Ազք», 1914, մարտի 4, N 37:

<sup>4</sup> Նույն տեղում, մարտի 18, N 39:

Ռամկավարների այս անորոշ ու հեղհեղուկ գնահատականը պայմանավորված էր նրանով, որ Հայկական հարցի լուծումը կապում էին մեկ մեծ տերությունների; մեկ օսմանյան կառավարություն և մեկ էլ արևմտահայ քաղաքական ուժերի հետ: Համենայն դեպս, ռամկավարներից շատերը, հատկապես նախկին արմենականները արևմտահայություն ազատագրության հույսը կապում էին Ռուսաստանի հետ:

Ավելացնենք, որ թեև մեր պատմագիտություն մեջ ՀՍՌԿ-ն որակվել է որպես բուրժուազիայի կուսակցություն, որ նրանց վերագրել են միապետության պահպանի դեր, որակել «հետադիմական ու խավարամիտ» պիտակներով, սակայն իրականում մի փոքր այլ է վիճակը: Ծիշտ է, նրանց ծրագիրը ՀՅ Դաշնակցության ու ՍԴ. Հնչակյան ծրագրերի հետ համեմատած սահմանափակ էր, նրանում ընդգծվում էր միապետի առկայության անհրաժեշտությունը, նրանք բավարարվում էին չափավոր և նեղ միջոցառումներով, անտեսում էին արևմտահայության դասակարգային շերտավորումը և այլն: Սակայն իրականում նրանք շատ շուտ հրաժարվեցին սահմանադրական ինքնավանդումից, ավելի հաճախ սկսեցին հանդես գալ հասարակությանը հուզող կարևոր խնդիրների շուրջ և օդում օրեցօր խտացող արյան հոտը նրանց տեղացիներին պարզապես ստիպում էր ավելի զգուշավոր լինել, զուսպ ու գաղտնապահ: Նրանց հուզող ամենահիմնական հարցը հայության ֆիզիկական գոյության ապահովումն էր: Եվ այսպիսի պայմաններում, երբ վտանգված էր հայ մարդու գոյության իրավունքը, հասարակության բոլոր խավերը լծվեցին ինքնապաշտպանվելու նվիրական գործին: Նրանց հետ ու նրանց առջևից քայլեցին նաև ռամկավարները՝ հենարան ունենալով դավառական մանր ու միջին ունեւորների խավը, ում շահերի արտահայտիչն էր ՀՍՌԿ-ն:

Վերջում ավելացնենք, որ ՀՍՌԿ-ն որպես հայ առաջին Արմենական կուսակցության օրգանական շարունակություն և լավագույն ավանդույթների կրող ու իրագործող, ներառելով Վերակազմյալ Հնչակյաններին և ուրիշներին, 1921թ. հոկտեմբերի 1-ին մախառնվեց ՌԱԿ-ին՝ դառնալով շողկապող օղակ, առաջնեկ Արմենական և այժմ պայտեղ ավանդական կուսակցություններից մեկի՝ Ռամկավար ազատական /դեմոկրատական լիբերալ/ կուսակցության մեջ:

ՍՈՑԻԱԼԻՍՏ - ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ  
ԵՎ ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ՀԱՅԱՇԱՏ ՔԱՂԱՔՆԵՐՈՒՄ  
1900-1914 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Քաղաքական կուսակցությունների պատմության ուսումնասիրման ընդհանուր համակարգում իրենց ուրույն տեղն են զբաղեցնում «միջին դասերի» շահերն արտահայտող կուսակցությունները: Այդ կուսակցությունների գաղափարական ու պրակտիկ գործունեությունն ուսումնասիրությունը, հատկապես ռուսական երեք հեղափոխությունների ժամանակաշրջանում, հնարավորություն է տալիս իրական պատկերացում կազմելու մանրբուրժուական սոցիալիզմի աստիճանական զարգացման մասին:

Գիտական և պրակտիկ գործունեության տեսանկյունից մեծ հետաքրքրություն է ներկայացնում հատկապես ամենազանգվածային մանրբուրժուական՝ սոցիալիստ - հեղափոխականների /էսէռների/ կուսակցության գործունեության ուսումնասիրությունը, որն ամենից ավելի էր արտահայտում մանրբուրժուական հեղափոխականության միտումները:

Ցարիզմի դեմ պայքարի ժամանակաշրջանում անառարկելի է երկրի դեմոկրատացման, ագրարային հարցի լուծման գործում էսէռական կուսակցության դրական դերը: Պատմական գրականության մեջ, չնայած կատարված զգալի դրական աշխատանքին, մեծ քանակի պատմական նյութի հայտնաբերմանն ու օգտագործմանը, այսուհանդերձ բնորոշ է եղել էսէռական կուսակցության նկատմամբ միակողմանի մոտեցումը, այդ կուսակցության խաղացած դերի անտեսումը կամ նվազեցումը:

Սոցիալիստ-հեղափոխականների - «էսէռների» կուսակցությունը կազմակերպվել է նարոդնիկական տարրերի համախմբման հիման վրա, 1902 թվականին: Էսէռական կուսակցության ղեկավարները՝ Վ. Չեռնովը, Ն. Ավիկսենտեը, Գ. Գերշունին, Բ. Սավինկովը և ուրիշներ տեսական հարցերում հանդես էին բերում էլլեկտիզմ, փորձում նարոդնիկական տեսակետներ միաձուլել միջազգային սոցիալիզմի առանձին դրույթների հետ: Մերժելով ինքնակալությունը, դնելով դեմոկրատական հանրապետության պահանջը, էսէռներն իրենց ուշադրությունը հատկապես կենտրոնացնում էին ագրարային-հարցի վրա:

Առաջադրելով «Հողի սոցիալիզացիայի» լոզունգը, նրանք պահանջում էին հողը հանձնել գյուղացիական համայնքների տնօրինությանը՝ հավասար օգտագործման հիմունքով: Դեմ չլինելով ցարիզմի դեմ միասնական պայքարին՝ էսէռները, այսուհանդերձ, պայքարի հիմնական ձևը համարում էին ահաբեկչությունը:

Սոցիալիստ - հեղափոխականների կուսակցութունը նշանակալից դեր է խաղացել Հայաստանի և ընդհանրապես ամբողջ Անդրկովկասի Հասարակական-քաղաքական կյանքում:

Կուսակցության գործունեությունը հետագոտման տեսանկյունից մեծ նշանակություն ունի պարբերական մամուլը՝ Անդրկովկասի էսէռների հրատարակած թերթերը: Ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ 1903-1920թթ. ժամանակաշրջանում Անդրկովկասում լույս են տեսել 37 անուն թերթեր: Այդ թերթերի զգալի մասը, նրանցում եղած պատմական հարուստ նյութը առանձին քննարկման առարկա չի դարձել, իսկ որոշ թերթեր անհայտ են մնացել և չեն հիշատակվել: Թերթերը լույս են տեսել ռուսերեն, հայերեն, վրացերեն, ադրբեջաներեն:

Անդրկովկասում սոցիալիստ-հեղափոխականների կուսակցության գործունեությունը սկսվել է 1901-1902 թթ. երկրամասի Համեմատաբար խոշոր քաղաքներում, մասնավորապես Բաքվում և Թիֆլիսում: Սակայն խոսել այդ տարիների նրանց կազմակերպված գործունեության մասին չի կարելի, քանի որ սոցիալիստ-հեղափոխականների կուսակցությանը պատկանող անհատ գործիչների աշխատանքը չէր ունենում ցանկալի արդյունք և ընթանում էր փոփոխական «հաջողություններով»: Առաջին կազմակերպված խմբակները Անդրկովկասում սկսեցին գործել 1903 թվականից:

Նշված ժամանակաշրջանում նրանց գործունեությունը սահմանափակվում էր թուլացրիկների և կոչերի հրատարակմամբ ու տարածմամբ: Էսէռական սոցիալիզմն իր ոլորտի մեջ էր առնում բանվորների մի մասին, գյուղացիությանը և զինվորների զգալի մասին:

Գործունեություն սկզբնական շրջանում էսէռների հարաբերական թուլության կարևոր պատճառներից մեկը պետք է տեսնել նրանում, որ այստեղ՝ Հայաստանում և ընդհանրապես Անդրկովկասում, անցյալ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբին հանդես եկան ու գործում էին կուսակցություններ, որոնք թեպետև հիմնականում ազգայնական ուղղվածություն ունեին, բայց և միաժամանակ իրենց վրա էին վերցրել Ռուսաստանում գործող էսէռական կուսակցության ֆունկցիաները. «Ռուս սոցիալիստ-հեղափոխականներն Անդրկովկասում, - գրում է Ասքանազ Մուսվյանը, - ունեցել են սոցիալապես հարազատ քույր կուսակցություններ - Հայ դաշնակցականների, վրաց ֆեդերալիստների և մենչևիկների կուսակցությունները, որոնք հաջողությամբ կատարել են իրենց մեծ քրոջ դերը Անդրկովկասի սահմաններում»:

<sup>1</sup> ՏՊՄ, Партийные известия, 1907, 5 мая:

<sup>2</sup> ՏՊՄ, Спиродович А.И., Партия социалистов-революционеров и ее предшественники, 1886-1916, Пгр., 1918, сmp.93:

<sup>3</sup> Մուսվյան Ասքանազ, Հողվածներ և ճառեր, 1913-1929, Երևան, 1961, էջ 120:

Անդրկովկասում սոցիալիստ-հեղափոխականների կուսակցութ-  
յան առաջնեկն առաջացած Բաքվի կազմակերպությունն էր, որն իր  
գործունեությունը էսէռական խմբակի ձևով սկսեց 1903թ. գարնանից:  
Թիֆլիսում էսէռական կազմակերպության խմբակն իր գործունեութ-  
յունը սկսել է 1903 թ. աշնանից: 1903 թ. բեկտեմբերի 1-ին Թիֆլիսի  
էսէռական խմբակի հեկտոգրաֆով լույս ընծայած «Հայ եղբայրնե-  
րին» թռուցիկում նրանք ողջունում էին Հայ եկեղեցական կալվածք-  
ների բռնադրաման նախաձեռնող, Կովկասի կառավարչապետ, մոլի  
ռեակցիոներ, իշխան Գոլիցինի դեմ հայկական Հնչակյան կուսակ-  
ցության հոկտեմբերի 14-ի կազմակերպած մահափորձը: Թռուցիկում  
նրանք գովերգում էին ահաբեկչությունը և նշում, որ ընդհանուր  
թշնամու դեմ պայքարում «մենք ունս սոցիալիստ-հեղափոխական-  
ներս եղբայրանում էինք Հայ ժողովրդի հետ»:

Էսէռական խմբակներ էին գործում նաև Հայաստանում Կար-  
սում, Ալեքսանդրապոլում, Երևանում, Շուշիում և այլն:

1903-1905թթ. ընկած ժամանակահատվածում էսէռների գոր-  
ծունեության հիմնական նպատակը, իրենց իսկ խոստովանությամբ,  
ուղղված էր այն բանին, որպեսզի «նվաճեն Կովկասը» արդեն կազ-  
մակերպված սոցիալ-դեմոկրատիայից: Այդ նպատակի իրագործման  
ճանապարհին էսէռները ձգտում էին միասնական բլոկ ստեղծել հայ-  
կական «Դաշնակցություն» և վրացական սոցիալիստ-ֆեդերալիստնե-  
րի կուսակցությունների հետ:

Սկզբից ևեթ սոցիալիստ-հեղափոխականների կուսակցութ-  
յունն օգտագործում էր ամեն պատեհ առիթ Անդրկովկասում կուսակ-  
ցության մասնաճյուղեր ստեղծելու ուղղությամբ: «Կովկասի նվաճու-  
մը հեղափոխական սոցիալիզմի (էսէռների - Ս.Մ.) համար,- զբոսում է  
կենտրոնական «Партийные известия» թերթը,- դարձել է կուսակցութ-  
յան և նրա դադափարախոսների խնդիրներից մեկը, որոնք, իհարկե,  
չէին կարող չհասկանալ Կովկասյան մարտերում կոփված, խիզախ, մի-  
լիոնանոց բանակի ստեղծման ստրատեգիական խոշոր նշանակություն-  
նը»:

Ցարական պահնորդական բաժանմունքը հայտնում էր, որ  
1904թ. սկզբներին արտասահմանից որպես սոցիալիստ-հեղափոխա-  
կանների կուսակցության արտասահմանյան կոմիտեի լիազոր Կովկաս  
է ժամանել նշանավոր տարագիր Վլադիմիր Վոլսկին, որի նպատակն է  
«Կովկասում բարձրացնել սոցիալիստ-հեղափոխականների կուսակ-  
ցության դրոշը»: Նա նպատակ ուներ նաև «միաձուլել էսէռական կու-  
սակցությանը տեղի ազգայնական հեղափոխական կազմակերպութ-

<sup>1</sup> Տե՛ս, ՀՀԳԿՊԱ, Ոստիկանական Վարչ ու Բյու Օ(այսու հետև: ՌԿ), ՕՕ, 1905թ., գ 80, մ.2, ք.11:

<sup>2</sup> Революционная Россия, 1903, 1 декабря:

<sup>3</sup> Партийные известия, 1907, 5 мая:

յունները և հայկական զրոշակիստներին (Դաշնակցութեանը, Ս.Մ.)»<sup>1</sup> : Նույն նպատակով 1904թ. Պետերբուրգից Թիֆլիս է ժամանում սոցիալիստ-հեղափոխականների կուսակցութեան Կենտկոմի անդամ, ոչ անհայտ Մինորը :

1904թ. էսէռական կազմակերպութեան է ստեղծվում Շուշիում : Փետրվարին տեղի ռեալական ուսումնարանի բարձր դասարանցի հայ աշակերտները կազմակերպում են էսէռական խմբակ և հեկտոգրաֆով բազմացնում են թուռցիկներ : Նույն թվականի դարնանը Շուշիում կազմակերպվում է «Սոցիալ-դեմոկրատների և սոցիալիստ-հեղափոխականների միացյալ խումբը», որը հեկտոգրաֆով բազմացնում է թուռցիկներ էսէռական կուսակցութեան «Պայքարում ձեռք կբերես քո իրավունքը» նշանաբանով :

1904թ. ընթացքում ընդարձակվում է Անդրկովկասի էսէռական կազմակերպութեանները և խմբերի հրատարակչական գործունեությունը : Բացի թուռցիկներից և կոչերից, սկսում են հրատարակվել էսէռների ծրագրին և տակտիկական գործունեությունը նվիրված բրոշյուրներ : 1904թ. վերջերին Թիֆլիսի էսէռների խումբը հրատարակում է բանվորների համար նախատեսված «Ինչպես պետք է գործել» բրոշյուրը : Նրանում ասվում էր. «Մենք անհրաժեշտ ենք համարում հիշեցնել ձեզ, որ ինչքան էլ անձնուրաց լինի ձեր պայքարը ինքնակալութեան դեմ, ձեր հաղթանակը կասկածի տակ կլինի, եթե գյուղացիությունը չօժանդակի ձեզ : Հիշեցեք, ընկերներ, որ դուք ընդամենը մի փոքր խումբ եք, իսկ գյուղացիները միլիոններ են» :

Այնուհետև նշվում էր էսէռական կուսակցութեան ծրագրային սահանջների մասին, մասնավորապես հողի «սոցիալիզացիայի» և ծածայա բանվորական օր սահմանելու մասին : Նկատի ունենալով էսէռների սպաքարի գլխավոր մեթոդները, բրոշյուրի հեղինակը նշում էր. «Մենք սոցիալիստ-հեղափոխականներս անհրաժեշտ ենք համարում օգտագործել մեր նախնիների կողմից կուտակված պայքարի բոլոր հնարավոր միջոցները : Որպես հզոր ազիտացիոն և լավագույն մարտական միջոցի ծրագրում մենք, տեղ ենք տալիս քաղաքական տեռորին» :

Ցարիզմի քաղաքականությունն Անդրկովկասում 1900-1905թթ. աչքի էր ընկնում մի շարք հետադիմական միջոցառումների իրագործմամբ :

1903թ. հունիսի 12-ին Նիկոլայ 2-ը հրատարակում է հայ եկեղեցապատկան հողերը և գույքը բռնագրավելու վերաբերյալ օրենքը : Հունիսի 12-ի օրենքը ոտնահարում էր ոչ միայն հայերի կրոնական զգացմունքները, այլև հայ ժողովրդի քաղաքական ու մշակութային

<sup>1</sup> Վրաց. ԿՊՊԱ, ֆ. 129, ց. 13, գ. 655, ք. 6 :

<sup>2</sup> Как нужно действовать, Тифлис, 1904, с. 2 :

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 2-3 :

շահերը: Այդ կապակցութեամբ սոցիալիստ-հեղափոխականները կազմակերպութիւնը 1903թ. տարածեց մի թուղթիկ, որում ասվում էր. «Մենք ուես, վրացի, թաթար և մյուս ազգութիւններին պատկանող բանվորներս, պետք է օժանդակենք Հայ ընկերներին նրանց համար ստեղծված պայքարի այս ծանր միջոցին, մեր ընդհանուր թշնամու ինքնակալութեան դեմ»:

1905-1907թթ. առաջին բուրժուա-դեմոկրատական հեղափոխութեան տարիներին Անդրկովկասի էսէռականութեան կյանքում սկսվում է մի նոր ժամանակաշրջան:

«Սոցիալիստ-հեղափոխականների կուսակցութեանը,- նրա անդամներից մեկի արտահայտութեամբ - 1905թ. ընդհանուր հեղափոխական միջոցառում աճում էր ոչ թե օրերով, այլ ժամերով»<sup>1</sup>: Արտահայտելով քաղաքային մանրբուրժուական խավերի և գյուղացիութեան միջին շերտերի տրամադրութեանները, սոցիալիստ-հեղափոխականների կուսակցութեանը հեղափոխութեան տվյալ բուրժուա-դեմոկրատական էտապում հանդես եկավ ընդդեմ ցարիզմի, մի հանդամանք, որը նկատելիորեն ընդլայնեց նրա սոցիալական բազան:

1905թ. փետրվարին Անդրկովկասում գործող էսէռական կոմիտեները միավորվեցին, ստեղծելով «Սոցիալիստ-հեղափոխականների կուսակցութեան Կովկասյան միութեանը» իրեն ենթակա մարտական ջոկատներով, որոնց անմիջական նպատակը ահաբեկչական ակտերի իրագործումն էր:

1905թ. սկսում է գործել Երևանի էսէռական կազմակերպութեանը: Այդ մասին հիշատակվում է 1917թ. ապրիլին Թիֆլիսում կայացած սոցիալիստ-հեղափոխականների Անդրկովկասյան մարզային համագումարում Երևանի կազմակերպութեան ներկայացուցիչ Տեր-Հակոբյանի ելույթում: Նրանում ասված է. «էսէռական կուսակցութեան գործունեութեան սկիզբը վերաբերում է 1905թ., երբ «Դաշնակցութեանը» կուսակցութեանից դժգոհ հեղափոխական-սոցիալիստական էլեմենտները հեռացան այդ կուսակցութեանից և մի քանի էսէռ ուսանողները հետ հիմնեցին իրենց կազմակերպութեանը»:

1905թ. հաջողվում է էսէռական կազմակերպութեան ստեղծել Ելիզավետպոլում: Նրա կազմի մեջ մտնում էին սովորողներ, հիմնականում Հայկական մտավորականութեան ներկայացուցիչներ և երկաթուղայիններ:

1905թ. հեղափոխութեան Անդրկովկասի էսէռականութեանը զիմավորեց անկազմակերպ: Չունենալով գործողութեանների հստակ ծրագիր, Անդրկովկասի խոշոր քաղաքների էսէռական կոմիտեները հրատարակած թուղթիկներում աշխատավորութեանը կոչ էին անում

<sup>1</sup> Революционная Россия, 1903, 1 ноября:

<sup>2</sup> Спиридович А. И., Свјат աշխատք յու ըր, էջ 165:

<sup>3</sup> Եւոյն տեղում:

<sup>4</sup> Знамя труда, Тифлис, 1917, 11 апреля:

ամենուրեք պայքար ծավալել ցարական պաշտոնյաների դեմ, հիմնականում ղիմնրով ահաբեկչության: «Թողեք աշխատանքը և դուրս ելեք փողոց,- կոչ էր անում էսէռների Բաքվի կոմիտեի թողարկած թուղզիկը: Ոչնչացրեք ամեն տեսակի ժանդարմների և ոստիկանները»:

1905թ. ընթացքում «մարտական ջոկատներ» էին գործում միայն Բաքվի և Թիֆլիսի էսէռական կազմակերպություններին կից, որոնք նշանավորեցին իրենց գոյությունը 1905թ. սկսված ահաբեկչական ակտերով ընդդեմ ցարական ատելի պաշտոնյաների և կուսակցությունների շարքերում հայտնաբերված պրոֆուկատորների: Թիֆլիսի մարտական ջոկատը 1905թ. հուլիսի 12-ին ռուսների պայթյունով վիրավորել էր տեղի ոստիկանապետ Կովալյովին: Նույն խումբը Բաքվի էսէռական կազմակերպություն մարտական ջոկատի հետ միասին Թիֆլիսում մահափորձ էր կազմակերպել Բաքվի ոստիկանապետ Մարտինովի դեմ, որը նույնպես վիրավորվել էր: Երկար ժամանակ չէր հաջողվում իրականացնել մահապատիժը գեներալ-նահանգապետ Ալիխանով-Ավարսկու նկատմամբ, որը համընդհանուր ատելություն էր արժանացել Վրաստանում և Հայաստանում իր գլխավորած պատժիչ արշավախմբերով: Առաջին մահափորձը նրա դեմ կազմակերպվում է 1906թ. մայիսի 16-ին Բուլթախի երկաթուղային կայարանում, որի ժամանակ գեներալը վիրավորվում է: Երկրորդ մահափորձը տեղի է ունենում 1907թ. հուլիսի 3-ին Ալեքսանդրապոլում: Այն կազմակերպել էր Թիֆլիսի մարտական ջոկատը տեղի դաշնակցականների հետ համատեղ: Արդյունքը լինում է այն, որ Ալիխանով-Ավարսկին սպանվում է:

Էսէռների ահաբեկչություն քաղաքականությունը Անդրկովկասում պաշտպանություն էր գտնում հայկական Դաշնակցություն կուսակցության կողմից, որը շատ հարցերում հոգեհարազատ էր էսէռներին: Դաշնակցականները գործունե մասնակցություն էին ունենում էսէռների կողմից պատրաստվող ահաբեկչական գործողությունների կազմակերպմանը: Պետերբուրգ ուղարկված զեկուցադրում Կովկասի ոստիկանապետ, գեներալ Շիրինկինը հայտնում էր, որ 1905թ. օգոստոսի 26-ին Կարսում լիվիլիզացվել է դաշնակցականների մի «հանցագործ խումբ», որն օժանդակում էր սոցիալիստ-հեղափոխականներին ռուսների տեղափոխման գործին Թիֆլիսից Կարս և հակառակը:

Թիֆլիսում էսէռների և դաշնակցականների կուսակցությունները կապվում էին միմյանց հետ հատուկ միջնորդների օգնությամբ,

<sup>1</sup> Աղբ. ԿՊՊԱ, Ֆ. 185, ց. 34, գ. 48, ք. 100:

<sup>2</sup> Спиридович А. И., նշված աշխատության ցուցակ, էջ 304:

<sup>3</sup> ՀՀԴաշնակցության ահաբեկչություն էին Դրոն(Դրաստամատ Կանայան) և Մարտիրոսը (Չարսիցյան):

<sup>4</sup> Տե՛ս, Վարանդյան Սիլվեստի, ՀՀԴաշնակցության պատմության Գ. Բ. Խառոյ, 1981, էջ 149:

<sup>5</sup> Վրաց. ԿՊՊԱ, Ֆ. 83գ, ց. 1, գ. 37, ք. 13:

որոնցից մի քանիսի անուներ Հիշատակվում է ոստիկանութեան դեպարտամենտի արխիվում: Այդ թվում էին «Դաշնակցութուն» կուսակցութեան գործիչներ Հովսեփ Տեր-Դավթյանը, Համադասպ Օհանջանյանը և ուրիշներ:

Կարծում ենք, որ ժամանակի բոլոր սուր քաղաքական բնույթի, ազգային և այլ հարցերում սխալ կլինի նույնութուն տեսնել էսէռներին և ՀՀ դաշնակցութեան գաղափարախոսութեան և սրբակտիկ գործունեութեան միջև: Եթե էսէռները հիմնականում հետապնդում էին ցարիզմի տապալման, գյուղացիութեան շահերի պաշտպանութեան հարցերը, ապա ՀՀ դաշնակցութեանը խորապես հուզում էին հայկական հարցի լուծման, թուրքական լծից Արևմտյան Հայաստանի ազատագրման, Թուրքիայում բնակվող Հայ բնակչության բնաջնջման, դավանափոխութեան կանխման, ընդհանրապես նրա ինքնորոշման, երկրամասում ազգամիջյան կոտորածների կազմակերպման մեջ ուսական պետութեան արգահատելի քաղաքականութեան առաջն առնելու և այլ հարցեր: Այս ամենը որոշակի տարբերություն էր մտցնում էսէռների ու դաշնակցականների ծրագրերում ու գործելակերպում:

Ցարիզմի կողմից հրահրված Հայ-աղբբեջանական ջարդերը, որոնց նպատակը հեղափոխական ուժերի կազմալուծումը և պարտութունն էր, Անդրկովկասի հեղափոխական-դեմոկրատական ուժերի, այդ թվում և էսէռների կողմից ընդհանուր առմամբ ճիշտ գնահատվեցին: Նշավակելով ցարական իշխանութունների խաղացած բացասական դերը, սոցիալիստ-հեղափոխականների անդրկովկասյան մարզային կոմիտեի օրգան «Солдат» թերթն իր առաջին համարում գրում է. «Որպեսզի շեղի Անդրկովկասում ապրող ժողովուրդներին ժամանակակից կարգերի դեմ մղվող պայքարից, կառավարութունը ամեն կերպ թշնամանք է հրահրում հայերի և աղբբեջանցիների միջև: Շուշիի դեմերալ-նահանգապետը ճկուն, գործունյա զրսևորեց իրեն այդ գործում: Մերթ ուսս զինվորներին նա տանում էր զնդակահարելու աղբբեջանցիներին, իբր օգնելով հայերին, մերթ նույն ուսս զինվորների օգնութեամբ զնդակահարում էր հայերին օգնելով աղբբեջանցիներին»:

Սակայն Հայ-աղբբեջանական կոտորածների ժամանակ էսէռների վարած գործնական քաղաքականութունը, որն իր մարմնացումը գտնում էր տեռորի տարբեր ձևերում, ոչ մի դրական ազդեցություն չէր կարող ունենալ ջարդերի կանխման գործում: Այդ կապակցութեամբ բնորոշ է սոցիալիստ-հեղափոխականների կուսակցութեան I համագումարում (1906թ., Փարիզ) Անդրկովկասից Բաքվի կոմիտեի միակ պատգամավոր Բելսկայայի ճառը 1905թ. օգոստոսյան օրերի կապակցութեամբ էսէռների վարած քաղաքականութեան մասին: «Բոլորն են

<sup>1</sup> ԳԳՊԱ, ՈՒ, ՕՕ, 1905թ., գ. 80, մ. 2, ք. 12

<sup>2</sup> Солдат, Баку, 1906, августа:

Հիշու՞մ օգոստոսյան սարսափելի օրերը Բաքվում: Հայ-ադրբեյջանական ջարդը կանգնեցրել էր Բաքվի ողջ արդյունարերությունը, - նշում էր Բելսկայան: Կապիտալիստների մոտ ժողովրդական աղետը կանխելու ոչ մի ցանկություն էր նկատվում: Սոցիալ-դեմոկրատները փորձեցին կազմակերպել խաղաղ երթ, սակայն այդ փորձը դիմապորպեց զնդակների տարափոփ: Այդ ժամանակ Բաքվի սոցիալիստ-հեղափոխականների կուսակցություն կոմիտեն որոշեց դիմել ռիսկի և օգտագործել «Փարբիկային» տեռոր: Կոմիտեի որոշմամբ հրդեհվեցին այն կապիտալիստների նավթաշտարակները, որոնք ցանկանում էին այդ ջարդերի ժամանակ վերսկսել աշխատանքը: Մյուս կապիտալիստներին ուղարկվեցին ահաբեկիչ նամակներ»<sup>1</sup>:

Էսէռների նման տակտիկան, որը Բելսկայայի խոսքերով «ճգնաժամի լուծման միակ ելքն էր», էջր կարող իրականում լուրջ դրական նշանակություն ունենալ բարդ, արդեն ցարական իշխանությունների կողմից բազմիցս խճճված հարցի լուծման, եթե ոչ նրա ավելի սրման, գործում: Ահաբեկման իրենց տակտիկայով էսէռները բորբոքում էին կրքերը և կամա թե ակամա խորացնում ճգնաժամը:

Երկրամասում տեղի ունեցող ազգամիջյան կոտորածները, որոնք խորապես հուզում էին ամբողջ հայ ժողովրդին և որոնց դեմ վճռականորեն հանդես եկան հեղափոխություն ձախ ուժերը, առանձնակի ուժով ակտիվացրին և էջին կարող չակտիվացնել հատկապես հայկական ազգային-դեմոկրատական քաղաքական ուժերին, առաջադեմ մտավորականությունը:

Կոտորածների կազմակերպման և բորբոքման մեջ շէ Դաշնակցությունը, ազգային-դեմոկրատական մյուս կուսակցությունները մեղադրում էին ոչ միայն ցարիզմին, այլև թուրք-թաթարական վերնախավին, նրա թելադրանքով գործող ազգայնական-քաղաքական ուժերին, որոնք որդեգրել էին համիդյան հայահալած քաղաքականություն ձեռնարկները և պանթուրքիզմը՝ իսպառ բնաջնջելու հայ ժողովրդին, իրագործելու բաղձալի «մեծ թուրանի» ստեղծման երազանքը:

Այդ ամենը տեսնում ու հասկանում էին հատկապես պայքարում կռիված գործիչները: Դրա ուղղակի արձագանքը հանդիսացավ այն, որ նույն Բաքվում անվանի ազգային գործիչ Նիկոլայ Տեր-Հովհաննիսյանը («Նիկոլ Դուման») հայեոի կոտորածների թեժ օրերին նախաձեռնեց ու կազմակերպեց թաթարական «խուժանի» դեմ ուժեղ դիմադրություն, ապա հակահարված, որը զգալի չափով գնպեց երկրամասում հայ բնակչություն իսպառ բնաջնջելու պանթուրքիստական զագրելի պլանները:

<sup>1</sup> Протоколы первого съезда партии с.-р., Париж, 1906, с. 334:

<sup>2</sup> Նույն տեղում:

1905 չնայած ցարական ոստիկանության Հետապնդումներին, Անդրկովկասի էսէռական կազմակերպությունները բավականին ակտիվացնում են կուսակցության հրատարակչական գործունեությունը: Կուսակցության Կենտրոնում ուղղված հաշվետվություններին մենք իմանում ենք, թե ինչ անլեզավ հրատարակչական գործունեություն են ծավալել տեղի էսէռական կազմակերպությունները:

էսէռական կուսակցության գաղափարներն Անդրկովկասի բազմազգ բնակչության շրջանում տարածելու նպատակով էսէռները ջանք չէին խնայում կուսակցության կազմակերպություններ ստեղծելու նաև տեղական հիմնական ազգությունների շրջանում: Հատկապես հեշտ էր և նպատակահարմար այդպիսի կազմակերպություններ ստեղծել Թիֆլիսում, որը, ինչպես «Партийные известия» թերթն էր նշում, «Հայկական, վրացական, ռուսական մտավորականության կենտրոնն» էր: Քաղաքում միշտ կարելի էր գտնել էսէռական ուղղվածության գրականություն տարբեր լեզուներով, հայերեն, վրացերեն, ռուսերեն, օսեթերեն, լեհերեն, հունարեն և այլն:

1905-1907թթ. ընթացքում Անդրկովկասում կազմակերպվում են հայկական, վրացական, ադրբեջանական, հունական, օսեթական և այլ ազգային էսէռական կազմակերպություններ, որոնք իրենց մասնաճյուղերն են ստեղծում Բաքվում, Թիֆլիսում, Երևանում, Կարսում, Ելիզավետպոլում, Ալեքսանդրապոլում, Շուշիում և ևրկրամասի այլ քաղաքներում:

Անդրկովկասի էսէռ լիազորն էսէռական կուսակցության Կենտրոնին ուղղված հաշվետվության մեջ նշում էր, որ «ընդհանրապես աշխատանքը ըստ ինտենսիվության և կայունության Անդրկովկասի քաղաքներում տեղաբաշխված է հետևյալ հերթականությամբ՝ Բաքու, Թիֆլիս, Քուրթալիս, Բաթում, Փոթի, Կարս, Ալեքսանդրապոլ, Ելիզավետպոլ, Երևան և այլն:

1907թ. փետրվարին իր աշխատանքներն է սկսում սոցիալիստ-հեղափոխականների կուսակցության ևրկրորդ /արտակարգ/ համագումարը: Անդրկովկասը ներկայացնում էին Թիֆլիսի, Բաքվի և Քուրթալիսի կազմակերպությունները:

Համագումարում Անդրկովկասի էսէռականության ներկայացուցիչները հիմնականում հանդես եկան ՀՀ Դաշնակցություն և վրացական սոցիալիստ-ֆեդերալիստների կուսակցությունների նկատմամբ ունենալիք վերաբերմունքի կապակցությամբ: Քուրթալիսի կազմակերպության ներկայացուցիչն իր ելույթում նշում էր, որ «Դաշնակցություն» և վրացական սոցիալիստ-ֆեդերալիստների կուսակցությունների նկատմամբ ունենալիք վերաբերմունքի հարցը Կովկաս

<sup>1</sup> Партийные известия, 1907, 5 мая:

<sup>2</sup> Նուև տեղում:

<sup>3</sup> Նույն տեղում:

սուս այժմ ծայրաստիճան սրված է: Համաձայնությունը, որը հաստատվել է ժնեյան կոնֆերանսում նշված կուսակցությունների հետ, այժմ չի համապատասխանում իրականությանը: Անդրկովկասյան էսէռների մարզային վերջին համագումարը նշեց, որ «Դաշնակցությունը» ամբողջովին սոցիալիստ-հեղափոխական չի կարելի որակել: «Նրանում պայքարում են երկու ուղղություններ՝ սոցիալիստ-հեղափոխական և բուրժուական: Եվ այժմ, օրինակ Թիֆլիսում կազմակերպությունն ստիպված է կտրել բոլոր կապերը «Դաշնակցության» հետ: Ինչ վերաբերում է սոցիալիստ-ֆեդերալիստներին, ապա այդ կուսակցության ներսում նույնպես նկատվում են երկու ուղղություններ՝ սոցիալիստ-հեղափոխական և անարխիստական»:

Երկար վիճաբանություններից հետո համագումարը որոշում է այդ հարցի քննարկումը հետաձգել մինչև էսէռական ազգային կազմակերպությունների կոնֆերանսի հրավիրումը, իսկ մինչ այդ վերոհիշյալ կուսակցությունների հետ «պահպանել բոլոր տեսակի հարաբերությունները»:

«Դաշնակցության» նկատմամբ ունենալիք վերաբերմունքի հարցը քննարկվեց նաև Անդրկովկասի էսէռների III մարզային համագումարում, որն իր աշխատանքները սկսեց 1907թ. մարտին: Ուստիկանության հետապնդումների պատճառով համագումարին մասնակցում էին Անդրկովկասի ոչ բոլոր էսէռական կազմակերպությունները: Հայաստանում գործող էսէռական կազմակերպությունները ներկայացնում էին Ալեքսանդրապոլից և Կարսից եկած պատգամավորները: «Կազմակերպչական» հարցի քննարկման կապակցությամբ որոշվում է Անդրկովկասի էսէռական կազմակերպությունների կառուցվածքի հիմքում որպես օրինակ վերցնել Բաքվի էսէռական կազմակերպության կառուցվածքը: Համագումարը մեծ տեղ է հատկացնում կուսակցության քարոզչական գործունեությանը, հատկապես II Պետական դումայի ընտրությունների ժամանակ: Որոշվում է «լուրջ ուշադրություն դարձնել նաև զաղութաբնակ ռուս մոլոկանների և գերմանացիների շրջանում տարվող պրոպագանդիստական և կազմակերպչական աշխատանքներին»: Տեսորի հարցում համագումարը որպես հիմք ընդունում է II (Արտակարգ) համագումարի կողմից ընդունված բանաձևը, որտեղ ասվում էր. «Սոցիալիստ-հեղափոխականների կուսակցությունը չի դադարեցնում տեղորոշական գործունեությունը մինչև Սահմանադիր ժողովի հրավիրումը»:

Համագումարը հատուկ ուշադրություն է դարձնում «բանակում տարվող աշխատանքին» և պետք է ասել, որ այդ ժամանակվա-

<sup>1</sup> S tu Протоколы второго съезда П.С.-Р., Пб, 1907, с. 179:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 176:

<sup>3</sup> S tu u Известия Закавказского областного комитета П.С.-Р., Баку, 1907, июль:

<sup>4</sup> Партийные известия, 1907, 5 мая:

<sup>5</sup> Протоколы второго съезда П.С.-Р., Пб, 1907, с. 38:

նից էսէճները սիստեմատիկ և նպատակաուղղված աշխատանք են տանում Կովկասյան բանակի զորամասերում, որը շարունակվում է նաև առաջին Համաշխարհային պատերազմի տարիներին: Այդ Հարցի կապակցութեամբ Համադումարի ընդունած բանաձևում ասվում էր. «Նկատի ունենալով Հեղափոխական բանակի դերը աշխատավոր ժողովրդի հետ միասին «հողի և ազատութեան» նվաճման գործում, կուսակցութեանը անհրաժեշտ է Համարում լայն աշխատանքներ տանել բանակում»: Էսէճները սկսում են ակտիվացնել իրենց աշխատանքը նաև կասպիական և սևծովյան նավատորմում: Համադումարը ընտրում է Անդրկովկասի սոցիալիստ-Հեղափոխականների կազմակերպութեան մարզային կոմիտե: Նորընտիր կոմիտեի ամենազլխավոր խնդիրներից մեկը, ինչպես ընդգծվում էր Համադումարում, Անդրկովկասի էսէճական կազմակերպութեանների միավորումը և կենտրոնացումն էր:

1905-1907թթ. Հեղափոխութեան պարտութեանից հետո Անդրկովկասի դեմոկրատական ճամբարում գործող կուսակցութեանները, այդ թվում և էսէճները անցնում են ընդհատակ: Չնայած զգալի կորուստներին, սոցիալիստ-Հեղափոխականների կազմակերպութեաններին մի մասը Անդրկովկասում ունակցիայի տարիներին պահպանում են իրենց գոյութեանը:

Այդ տարիներին Անդրկովկասի քաղաքներում գործող էսէճական կազմակերպութեանների վիճակի մասին զգալի նյութ է հաղորդում Անդրկովկասի սոցիալիստ-Հեղափոխականների մարզային Համագումարը, որի աշխատանքներն ընթացան 1907թ. օգոստոսի 16-ից 20-ը: Պատգամավորներ էին եկել նաև Ալեքսանդրպոլից և Կարսից: Անդրկովկասի ազգային բազմազանութեանն իր արտահայտութեանն էր գտել նաև Համագումարում: 19 պատգամավորներից 7-ը վրացիներ էին, 6-ը՝ հայեր, 6-ը՝ ռուսներ: Համագումարի աշխատանքներին առաջին անգամ մասնակցում էին «Սոցիալիստ-Հեղափոխականների կուսակցութեան Հայ կազմակերպութեան» Թիֆլիսի և Բաքվի կազմակերպութեանների ներկայացուցիչները:

Ամենախոշոր կազմակերպութեաններն Անդրկովկասում գործում էին Բաքվում և Թիֆլիսում, որտեղ աշխատանքը սիստեմատիկ և կազմակերպված բնույթ էր կրում: 1907թ. վերաբերյալ մենք ստույգ տվյալներ ունենք նաև Հայաստանի և, ընդհանրապես, Անդրկովկասի էսէճական կազմակերպութեանների թվակազմի մասին, մի բան, որը շատ հազվադեպ է պատահում, քանի որ էսէճական կազմակերպութեանները չէին կատարում իրենց անդամների ճիշտ հաշվառում:

<sup>1</sup> Партийные известия, 1907, 5 մայիսի:

<sup>2</sup> S եւ Յնա րուդա, 1907, 12 սեպտեմբր:

Ըստ Անդրկովկասի սոցիալիստ-Հեղափոխականների IV Համագումարի Հաշվետվությունների երկրամասի էսէռական կազմակերպությունները հետևյալ պատկերն ունեին :

Քաղաքը	Ազգային կազմակերպությունները	Անդամների թիվը
Բաքու	ռուսական հայկական	1.500 670
Թիֆլիս	ռուսական հայկական օսեթական	365 200 50
Քուստաիս		200
Ճիաթուրի		120
Բաթում		120
Սուխում		120
Օզուրգետ		100
Փոթի		60
Սամարեղի		50
Կարս		
Ալեքսանդրապոլ		} միասին մոտ 300
Շուշի		
Ելիզավետպոլ		
Երևան		
Ընդամենը		մոտ 4.000

Ըստ ազգային պատկանելիության և էսէռական կազմակերպություններում ըստ նրանց տեղադրման, առաջին տեղում էին միասյալ, գլխավորապես ռուսական (մոտ 2.500 անդամներ) կազմակերպություններ, այնուհետև հայկական (մոտ 1.200 անդամներ), ապա մյուս ազգային կազմակերպությունները:

1907թ. հունիսին Անդրկովկասի էսէռականության կյանքում տեղի ունեցած կարևոր իրադարձություններից մեկը «Սոցիալիստ-Հեղափոխականների կուսակցության հայ կազմակերպության» ստեղծումն էր, որի կազմակերպման նախաձեռնությունն իրենց ձեռքն էին վերցրել այսպես կոչված «անջատականները» կամ «երկտասարդ դաշնակցականները», որոնք Լևոն Աթաբեկյանի (Ռիխարդ) և Արսեն Ամիրջանի գլխավորությամբ 1906թ. հեռացել էին «Դաշնակցություն» կուսակցությունից:

Սակայն «երկտասարդ դաշնակցականների» նպատակը ոչ թի «Դաշնակցություն» մերժումն էր, այլ բարենորոգումը էսէռական երանգներով, այդ կուսակցության գործունեության հարմարեցումը

<sup>1</sup> S Ես Знамя труда, 1907, 12 сентября:

<sup>2</sup> Վարանդան Ս., ՀՀ Դաշնակցության պատմության և բ. հատր, Թեհրան, 1981, էջ 162

կովկասահայ ռեալ իրականութեանը և տվյալ պատմական ժամանակաշրջանի պահանջներին: Առաջադրվում էր ավելի ձախ ծրագիր և ճկուն տակտիկա:

Այսպիսով, 1907 թ. հունիսին Բաքվում ձևավորվեց «սոցիալիստ-հեղափոխականների կուսակցութեան հայ կազմակերպութեանը»-ռուսական սոցիալիստ-հեղափոխականների կուսակցութեան հայկական մասնաճյուղը:

Շուտով էսէռները հայ կազմակերպութեան մասնաճյուղեր են ստեղծվում նաև Թիֆլիսում, Ալեքսանդրապոլում, Կարսում, Երևանում, Ելիզավետպոլում, Շուշիում և այլ քաղաքներում: Կազմակերպութեան անդամների թիվը 1907թ. դեպքում աճում էր: Բաքվի էսէռների հայ կազմակերպութեանը 1907թ. իր շարքերում ընդգրկում էր 670 անդամ, իսկ Թիֆլիսինը՝ 200: Ընդհանրապես Անդրկովկասում գործող բոլոր հայկական կազմակերպութեանները միասին իրենց շարքերում ընդգրկում էին մոտ 1200 անդամ: Հայ էսէռական կազմակերպութեանում ակտիվ դեր էին խաղում Լ. Աթաբեկյանը, Վ. Մինասորյանը, Վ. Խորխորունին, Գ. Մելիք-Շահնազարյանը, Գ. Բազադ-Աղաջանյանը, Բյուզանդը և ուրիշներ: 1908թ մարտից Բաքվում սկսում է լույս տեսնել էսէռների հայ կազմակերպութեան մամուլի անդրանիկ օրգան «Անիվ» շաբաթաթերթը, որի խմբագիրը Գրիգոր Բազադ-Աղաջանյանն էր: Թերթը հայտարարում էր, որ իրենք ոչ մի կապ չունեն «Դաշնակցութեան» կուսակցութեան հետ:

Սակայն պետք է նշել, որ անջատումը «Դաշնակցութեանից» և նոր՝ հայ էսէռների կազմակերպութեան ստեղծումը, եթե մի կողմից ապացույց էր հեղափոխական ուժերի ձախացման, ապա մյուս կողմից այն ավելի շատ ձևական բնույթ էր կրում, քան թե նշանակում էր արմատական շրջադարձ այդ երկու կուսակցութեանների կյանքում:

Սոցիալիստ-հեղափոխականների կուսակցութեան հայ կազմակերպութեան համեմատաբար ակտիվ գործունեությունը շարունակվում է մինչև 1909 թվականը և ապա երկար ժամանակով ընդհատվում: Նկատի ունենալով այդ հանգամանքը, Ասքանազ Մուսայանը գրում է. «Սակայն մեծ ազմուկով ծնված այդ փոխ ու օրապակաս մանուկը շուտով լռում է. նա մտնում է սոցիալիստ-հեղափոխականների ընտանիքը և կորցնում իր դեմքը: Նրանց ղեկավարներն էին հանգուցյալ բժիշկ Լևոն Աթաբեկյանը՝ և Արսեն Ամիրյանը: Վերջինս շուտով թողնում է սոց.-հեղափոխականների փոշին և մտավ բոլշևիկյան կուսակցութեան մեջ. նա սպանվել է Բաքվի 26 կոմիսարների շարքերում»:

<sup>1</sup> Տե՛ս «ԱՄԻՎ», Բաքու, 1908, 8 հունիսի:

<sup>2</sup> Լևոն Աթաբեկյանը գտնվել է Բաքվում 1918թ. ապրիլի 2-ին ազգամիջյան կոտորածների ժամանակ:

<sup>3</sup> Մուսայան Ասքանազ, նշված ժողովածու 6, էջ 120:

1908թ. օգոստոսին Լոնդոնում տեղի է ունենում «Սոցիալիստ-Հեղափոխականների կուսակցության առաջին համակուսակցական կոնֆերանսը», որի աշխատանքներին մասնակցում է նաև Էսէռների հայ կազմակերպության ներկայացուցիչը՝ Բյուզանդը:

Յարևան օւեսկցիան զգալիորեն ազդեց նաև Անդրկովկասի էսէռականության գործունեություն վրա: Թույլ կազմակերպությունները, ղրսևերելով նոր պայմաններում գործելու անընդունակություն, չդիմացան և ջախջախվեցին: Համեմատաբար կենսունակ դուրս եկավ Բաքվի էսէռական կազմակերպությունը, որտեղ աշխատանքը, ճիշտ է թուլացավ, բայց շարունակվեց օւեսկցիայի ողջ տարիներին: 1908թ. փետրվարին Բաքվի էսէռները մասնակցեցին Չարջուույի բանկից 300 հազար ռուբլու էքսպրոպրիացիային: Ինչպես հաղորդում էր Բաքվի պահնորդական բաժանմունքը, այդ գումարի որոշ մասը նախատեսվում էր ուղարկել էսէռական կուսակցություն Կենտկոմին, իսկ մյուս մասը ղրվելու էր Անդրկովկասի մարզային և Բաքվի կոմիտեների տրամադրություն տակ<sup>1</sup>:

Բաքվի էսէռական կազմակերպություն ջանքերով 1909թ. հոկտեմբերին գումարվում է Անդրկովկասյան սոցիալիստ-Հեղափոխականների կազմակերպության մարզային VI համագումարը<sup>2</sup>: Ինչպես նշում էր կենտրոնական էսէռական «Знамя труда» թերթը, նման համագումարի հրավիրումը օւեսկցիայի պայմաններում կապված էր մեծ դժվարությունների հետ, երբ կտրված էր Անդրկովկասի կազմակերպությունների կապը կենտրոնի հետ:

Անդրկովկասի էսէռական կազմակերպությունների կյանքում դժվարությունները շարունակվում են նաև 1910 թվականին: Չնայած ամբողջ երկրում նկատվող Հեղափոխական շարժման նոր վերելքին, ոստիկանություն հետապնդումների պայմաններում հայտնաբերվում են բազմաթիվ կազմակերպություններ, իսկ Բաքվում 1910թ. ապրիլին բռնագրավվում է կազմակերպության տպարանը: Այդ կապակցությունում «Знамя труда» թերթը գրում էր. «1910թ. կեսերին ոստիկանություն հետապնդումների հետևանքով, կազմակերպությունը մնաց առանց մտավորականության ներկայացուցիչների, առանց տպարանի, առանց որևէ կապերի և փողի, սակայն հարուստ արխիվով, կուսակցական գույքով և բանվոր դասակարգի շրջանում վարած անգնահատելի աշխատանքով»<sup>3</sup>: «Знамя труда»-ն շարունակում էր, որ շուտով նորից ստեղծվելու է տպարան, կազմվում են ֆինանսական և հրատարակչական հանձնաժողովներ, սակայն դա այն չէր, ինչ կար նախկինում: Բաքվի կազմակերպությունը ստիպված էր վերադառնալ 1903-1904թթ. խմբակային աշխատանքի ձևերին: 1911 թ. հունվարից նորից

<sup>1</sup> Վրադ ԿՊՄՍ, Ֆ. 94, գ. 1, գ. 104, թ. 6:

<sup>2</sup> Տե՛ս Знамя труда, 1910, февраль:

<sup>3</sup> Տե՛ս Մույն տեղում, 1912, սեպտեմբեր:

սկսվում են կազմակերպության անդամների զանգվածային ձերբակալությունները: Կազմակերպության 900 անդամներից աշխատանքը շարունակում էին մոտ 60-ը:

Ցարական պահնորդական բաժանմունքը պրոֆակատորների օգնությամբ ղանդաղ, բայց հաստատակամ, ձգտում էր արմատախիլ անել ոչ միայն սոցիալ-դեմոկրատական շարժումը այլև լիկվիդացնել նաև էսէռական կազմակերպությունները: Աշխատանքը փոքր-ինչ ակտիվանում է 1911թ. փետրվարից: Հրատարակվում են «Морская волна» /1910/ - Բաքվում, «Եռանդ»/1912/ թերթերը Թիֆլիսում և այլն:

1912թ. հունիսին գումարվում է Բաքվի կազմակերպության խորհուրդը: Այնտեղ ներկայացված էր նաև էսէռական հայ կազմակերպությունը, որի մասին մոտ երկու տարի ոչինչ հայտնի չէր: Կազմակերպության ներկայացուցիչը նշում էր, որ կուսակցական աշխատանքը կազմակերպությունում վերականգնվել է մոտ 6 ամիս առաջ: Առաջնահերթ խնդիրը համարվում էր հայերեն կուսակցական մամուլի օրգանի հրատարակումը: Հայկական կազմակերպության ներկայացուցիչն ավելացնում էր, որ Անդրկովկասի պայմաններում կուսակցություն անլեզու աշխատանքն արդյունավետ չէ, անհրաժեշտ է դուրս գալ լեզու աշխատանքի, հատկապես աշխուժացնել աշխատանքը արհմիություններում:

Չգտնելով ղեկավար դիրք ձեռք բերել բանվորական այդ զանգվածային կազմակերպություններում, էսէռները պրոպագանդում էին նրանց «անկուսակցականության և չեղքության» գաղափարը: Մենչևիկների նման նրանց նպատակը ևս արհմիությունները բոլշևիկյան կուսակցության ազդեցությունից կտրելն էր:

էսէռների գործունեությունը 1910-1914թթ. սահմանափակվում էր գաղտնի հավաքների կազմակերպմամբ, թռուցիկների և կոչերի հրատարակմամբ: Ինչպես հաղորդում էր Բաքվի ոստիկանությունը Կովկասի փոխարքային ուղղված ղեկուցադրում, Բաքվի կազմակերպության կենտրոնը 1911թ. Մարիա Սունդուկյանցի «Сотрудник» գրախանութն էր, որտեղ հավաքվում էր կազմակերպության ղեկավար կազմը<sup>2</sup>: Շուտով ձերբակալվում են այդ կազմակերպության և մյուս անդամները:

Առաջին համաշխարհային պատերազմի սկսվելու պայմաններում նրանց կազմակերպությունների մի մասը չզիմացան և ջախջախվեցին: Անդրկովկասի էսէռականության բազմաթիվ գործիչներ ձերբակալվեցին և աքսորվեցին Ռուսաստանի հեռավոր շրջանները: Նրանց մի մասը բռնեց վտարանդիություն ուղին: Օրինակ, Վ.-

<sup>1</sup> "Знамя труда", 1912, сентябрь.

<sup>2</sup> Աղբ. ԿՊՊԱ, ֆ. 46, ց. 3, գ. 178, ք. 14:

Լուսկեիչը (Վ. Արարատսկի), սկսեց աշխատակցել Փարիզում լուստեսանող «Отклики жизни» էսէռական էմիգրանտական թերթին<sup>1</sup>։

Պատերազմի տարիներին էսէռների ազդեցութիւնը զգալիորեն աճեց, հատկապես բանակում, այդ թիւում և Կովկասյան։

Չնայած ծանր պայմաններին 1905-1914 թթ. Բաքվում, Թիֆլիսում և այլ քաղաքներում գործող էսէռական կազմակերպութիւնները հրատարակում էին հետեւյալ թերթերը. „Кавказское слово„/1905-1906/, „Солдат„/1906/, „Молот„/1907/, „Известия закавказского областного комитета партии С - Р„/1907/, „Известия бакинской организации партии С-Р„/1908/, „Современник„/1909/, „Трудовой голос„/1909/, „Морская волна„/1910/ - Բաքվում, «Աշխատանք» /1906-1907/, „Солдатская неделя„/1907/ Թիֆլիսում և այլն։

Հայալեզու թերթերից և ամսագրերից հատկապես հիշատակութեան արժանի են. «Անիվ» /1908թ./, «Եռանդ», /1912թ./, Բաքու; «Աշխատանք» /1906-1907թթ./, հետագայում «Աշխատանքի դրոշակ» /1918-1919թթ./, «Նոր ձայն»/1917թ./, Թիֆլիս; «Սոցիալիստ-հեղափոխական» /1919-1920թթ./ Երևան; «Լույս» /1918թ./, «Աշխատանքի դրոշակ» /1920թթ./, Երևան; «Աշխատանք» /1917թ./ Սարիղամիշ և այլն։

Հատուկ ենտ էսէռական կազմակերպութիւններ պահպանվում են Բաքվում, Թիֆլիսում, Երևանում, Կարսում, Ալեքսանդրապոլում Ելիզավետպոլում և այլ քաղաքներում;

Սոցիալիստ-հեղափոխականների կուսակցութիւնն Անդրկովկասում «իր երկրորդ ծնունդը» ապրեց 1917թ. Փետրվարյան հեղափոխութիւնից հետո, երբ նրանց պատմութեան մեջ սկսվեց, ինչպես իրենք էսէռներն էին գրում, աննախողեալ և «փառավոր» մի շրջան։

<sup>1</sup> Отклики жизни, Париж, 1916:

ՌՍԴԲԿ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ  
ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ

Մարդկությունը՝ ամենաարդարացի հասարակարգին՝ սոցիալական հավասարության և ճշմարտախորհուրդ կյանքին հասնելու համար անցել է երկար՝ դեգերումների, հիասթափությունների, մաքառումների տառապալից ճանապարհ և ի վերջո հանգել այն եզրակացություն, որ ժողովուրդների ազգային ու սոսիալական ազատագրության ուղին նախանշել է սոցիալիզմը: Ռուսաստանում սոցիալիզմի կրողն անշուշտ աշխատանքի ազատագրության դրոշմ պարզած բանվոր դասակարգն էր: Հարկավ սոցիալիզմը ռուսական հասարակական կյանքի արդյունք չէր, այն ծագել էր Արևմտյան Եվրոպայում, Ռուսաստան անցել, ըստ էության, միայն XIX դ. վերջին — XX դ. սկզբին և դարձել ճնշված ու հարստահարված ժողովուրդների հավատո հանդանակը: Դասակարգային պայքարն էլ համարվում էր նոր հասարակարգի կառուցման ամենաուղիղ ճանապարհը:

Ռուսաստանյան ժողովուրդները՝ իրենց ազատագրության ուղիների որոնումներում հիմնականում միակամ էին: Այդ միակամության պատճառն այն էր, որ չնայած կայսրության մեջ բնակվող ժողովուրդների սոցիալական և քաղաքական կացության տարբերություններին, XIX դ. վերջին — XX դ. սկզբին, նրանք գտնվում էին մեկ ընդհանուր տնտեսական համակարգում: Մարդկության գալիքին՝ երանելի նպատակին հասնելու համար Ռուսաստանի ժողովուրդները խանդավառված հեղափոխություններ էին անում և նոր հասարակարգ կառուցում: Նրանց բոլորին բնորոշ էր ընդհանուր ոգևորությունը և լավատեսությունը: Մեկ առանձին վերցրած երկրում սոցիալիստական հեղափոխության հաղթանակի հնարավորությունը իրական էր թվում և ազատագրության ձգտող ժողովուրդների մոտ տակավին կասկած չէր հարուցում: Նոր Հասարակարգի թեղությունները շատ ուշ դրեորվեցին՝ խորհրդային Միության փլուզումից հետո միայն:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում՝ XX դ. սկզբին, հայությունը, Ռուսաստանի անքակտելի մասը կազմող կովկասյան երկրամասում, համախումբ չէր բնակվում: Նախահեղափոխական ժամանակաշրջանում, Երևանյան նահանգից բացի, պատմական ճակատագրի բերումով, մեծ քանակությամբ հայություն էր ապրում նաև Անդրկովկասյան մյուս վարչական միավորումներում, մասնավորապես՝ Թիֆլիսի, Բաքվի, Ելիսավետպոլի նահանգներում և Կարսի ու Բաթումի մարզերում: Այնպես, որ հայ աշխատավորության մասնակցությունը հեղափոխական շարժումներում չէր սահմանափակվում միայն Երևանյան նահանգով, այն համակովկասյան շառավիղ ուներ: Դրա սկզբնապատճառն այն էր, որ Կովկասում և մասնավորապես Անդրկովկասում

Հայ բանվոր դասակարգի առաջացումն ուներ որոշակի առանձնահատկություն: Աղբրեջանում և Վրաստանում վարձու աշխատավորների բանակն սկսեց ավելի շուտ ձևավորվել, քան բուն Արևելյան Հայաստանում: Գյուղացիության քայքայման հետևանքով առաջացած արտագնացությունն ուղղվում էր դեպի այն երկրները, ուր կար աշխատանքի հնարավորություն և զարգացած արդյունաբերություն: Դրա հետևանքով արտագնացները համալրում էին հարևան երկրների բանվոր դասակարգի շարքերը: Եվ օրինաչափ է, որ Աղբրեջանում և Վրաստանում Հայ բանվորների թիվը անհամեմատ ավելի մեծ էր, քան Հայաստանում: XX դ. սկզբին Արևելյան Հայաստանում բանվորների թիվը առանց գյուղական պրոլետարների, հաշվվում էր 20-22 հազար: Այդ նույն ժամանակ Վրաստանում բանվորների թիվը հաշվվում էր 38 հազար: Իսկ Անդրկովկասի ամենամեծ արդյունաբերական քաղաքում՝ Բաքվում բանվորների թիվը հաշվվում էր 55-60 հազար: Հայ բանվորները զգալի թիվ էին կազմում Վրաստանի և մասնավորապես Աղբրեջանի արդյունաբերական ձեռնարկություններում: Ինչպես ասվեց, XIX դարի վերջին տասնամյակը և XX դարի առաջին տարիները բեկումնային ժամանակներ էին արևելահայություն հասարակական – քաղաքական կյանքում: Կապիտալիստական հարաբերությունների արմատավորումը, վարձու աշխատավորների բանակի առաջացումը, բանվոր դասակարգի հանդես գալը, բանվորական շարժման նախաքայլերը, ռուսաստանյան պրոլետարիատի հուժկու ելույթները այն քաղաքական և գաղափարական ազդակներն էին, որոնք հիմք հանդիսացան մարքսիզմի որպես աշխարհը վերափոխող գաղափարախոսությունից տարածման համար: Սակայն ազգային զարթոնք ապրող Հայ հասարակությունը կյանքը երկփեղկված էր: Դրա պատճառն այն էր, որ արևելահայերի մասնակցությունը հեղափոխական շարժումներին յուրօրինակ կերպով զուգակցվում, միանում և տարանջատվում էր ազգային-ազատագրական այն գոյապայքարին, որ արևմտահայությունը մղում էր թուրքական կառավարությունից բարձրագույն քաղաքականություն: Հայ հեղափոխականները, հայ սոցիալ-դեմոկրատները, որոնց ազնվությունը կասկած չի հարուցում, համոզված էին, որ հեղափոխություն հաղթանակը Ռուսաստանում, և ինչու ոչ, նաև ամբողջ աշխարհում, ազատություն կբերի նաև արևմտահայությունը, ուստի և Հայ ազգային կուսակցությունների կռիվը արևմտահայությունից ազատագրության համար, վերջիններիս կողմից դիտվում էր որպես աննպատակ գործունեություն: Աշխարհի սոցիալիստների, այդ թվում և Հայ սոցիալ-դեմոկրատների ոչ թե սխալը, այլ դժբախտությունն էր, որ նրանց մեծամասնությունը թերագնահատում էր ազգային գաղա-

<sup>1</sup> Համբարյան Ա. Ա., Մուրադյան Դ. Ա., Կիմոնյան Ա. Դ., Արևելյան Հայաստանի պրոլետարիատի պատմություն, Երևան, 1988, էջ 65:

փարախոսութիւնը, ազգային հարցը և այն համարում միայն սոցիալականի ածանցյալ խնդիր:

Անդրկովկասի հեղափոխական շարժումները սերտորեն կապված են ռուսական հեղափոխական շարժումների հետ:

1885թ. Պետերբուրգում Վ. Ի. Լենինի ստեղծած «Բանվոր դասակարգի ազատագրութեան պայքարի միութեան» օրինակով, որը Ռուսաստանում հեղափոխական բանվորական կուսակցութեան սաղմն էր, բանվորական խմբակներ, սոցիալ-դեմոկրատական կազմակերպութիւններ ստեղծվեցին ողջ երկրում:

Անդրկովկասում սոցիալ-դեմոկրատական շարժումն սկսվեց 90-ական թվականներից: Այստեղ մարքսիզմի տարածմանը մեծ չափով նպաստեցին Ռուսաստանի արդյունաբերական վայրերից Անդրկովկաս քաղաքում ռուս հեղափոխականները և հատկապես Վ. Կուռնատովսկին, Ն. Կոզերենկոն, Ն. Պոլետաևը, Գ. Յրանչսկին, Ս. Ալիլուևը, Ֆ. Աֆանասևը և մյուսները: Մարքսի սկզբին Անդրկովկասում հեղափոխական շարժումների համար հողը արդեն պատրաստ էր:

1901-1902 թվականներին ստեղծվում են Բաքվի, Թիֆլիսի, Բաթումի ՌՍԴԲԿ կոմիտեները: Երկրամասի արդյունաբերական երեք ամենամեծ քաղաքներում ստեղծված սոցիալ-դեմոկրատական կոմիտեները իսկրայական ուղղութեան էին պատկանում: Այս կոմիտեների կազմում մասնակցում էին նաև զգալի թիվով հայ հեղափոխականներ: Ուշագրավ է այն փաստը, որ Բաքվի կոմիտեի հիմնադիր անդամներն էին Բողբան Կուռնյանցը, Լադո Կեցխովսկին և Մելիք Մելիքյանը /Դուրշևկա/: Հայտնի է, որ 1903թ. հուլիս-օգոստոս ամիսներին Լոնդոնում տեղի ունեցավ ՌՍԴԲԿ II համագումարը, որտեղ Ռուսաստանում գործող անջատ-անջատ կազմակերպութիւնների միավորումով ստեղծվեց իսկական մարքսիստական կուսակցութիւնը: Համագումարը համաշխարհային հեղափոխական շարժումների մեջ շրջադարձային նշանակութիւն ունեցավ: Անդրկովկասից համագումարին մասնակցում էին Բ. Կուռնյանցը, Ա. Զուրաբյանը, Դ. Թոփարիձե: Բ. Կուռնյանցը համագումարում բազմաթիւ ելույթներ է ունենում ի պաշտպանութիւն լենինյան դրոյթների: Հետաքրքիր է նաև այն զեկուցագիրը, որը Բաքվի կոմիտեի անունից Կուռնյանցը ներկայացնում է համագումարին, խոսելով Անդրկովկասում տիրող քաղաքական դրութեան մասին, ցույց է տալիս այն բարոյահոգեբանական վիճակը, որի մեջ գտնվում էր արևելահայութիւնը՝ ականատես լինելով Թուրքիայում բնակվող 3 միլիոն իր արյունակիցների հալածանքներին և զանազանային կոտորածներին: Անդրադառնում է նաև հայ քաղաքական կուսակցութիւնների առաջացման պատճառներին, արևմտահայ եղբայրներին օգնելու կովկասահայերի ձգտմանը և հայդուկային-հեղափոխական, ինչպես ինքն է ասում, խմբերի ստեղծման պատմութեանը:

Բ. Կնունյանցը, որի Հետագա գործունեությունը ևս դա ապացուցեց, Հայ այն սոցիալ-դեմոկրատներից էր, որ Համաշխարհային պրոլետարական Հեղափոխության Հաղթանակի Համար մարտնչելով էր դարձել անհայրենիք ինտերնացիոնալիստ, այլ մնացել ինտերնացիոնալիստ-Հայորդի<sup>1</sup>:

Հայաստանում առաջին մարքսիստական խմբակը կազմակերպվել է 1899թ. Ձալալ-օղլիում /Ստեփանավան/ Ստ. Շահումյանի կողմից:

1902թ. մի խումբ Հայ մարքսիստներ Ստ. Շահումյանի, Բ. Կնունյանցի, Ս. Զուրաբյանի ակտիվ մասնակցությամբ ՌՍԴԲԿ Թիֆլիսի կոմիտեի օգնությամբ հիմնադրեցին «Հայ սոցիալ-դեմոկրատների միությունը», որը Հետագայում միացավ Թիֆլիսի կոմիտեին: 1903թ. մարտի վերջերին Թիֆլիսում տեղի ունեցավ Կովկասի սոցիալ-դեմոկրատական կուսակցությունների առաջին համագումարը, որը հիմք դրեց ՌՍԴԲԿ Կովկասյան Միությունը: Ընտրվեց նաև Կովկասյան Միության ղեկավար օրգան Կովկասյան Միությանական կոմիտե: ՌՍԴԲԿ Կովկասյան Միությանական կոմիտեի կազմում տարբեր ժամանակներում ընտրվել են Բ. Կնունյանցը, Մ. Ցխակայան, Ստ. Շահումյանը, Ալ. Ծուլուկիձեն, Ի. Ստալինը, Ա. Զուրաբյանը, Ա. Զափարիձեն, Ֆ. Մախարաձեն, Աշ. Խումարյանը, Ս. Խանյանը, Վ. Բոբինսկին, Մ. Բոչորիձեն, Դ. Պոստայովսկին, Մ. Դավթիաշվիլին, Ն. Ժորդանիան և ուրիշներ: Կովկասյան Միությունը ղեկավարում և ուղղություն էր տալիս Անդրկովկասում Հեղափոխական շարժման մեջ ընդգրկված բանվորական և գյուղացիական զանգվածներին:

Կովկասյան Միության ղեկավարները կարևորում էին նաև երիտասարդությունը, մասնավորապես սովորող երիտասարդությունը Հեղափոխական շարժումների մեջ ընդգրկելու հարցը: Սոցիալ-դեմոկրատները մեծ նշանակություն էին տալիս գրավոր քարոզչությանը, ընդհանրապես և Հատկապես պրոլետարիատի կուսակցության ստեղծմանն ու ամրապնդմանը, և սոցիալիզմը բանվորական շարժման Հետ միացնելու գործում մարքսիստական Հեղափոխական մամուլին: Բացառիկ էր այս ուղղությամբ «Իսկրայի» կատարած դերը: Այն սկսեց հրատարակվել 1900թ. դեկտեմբերին արտասահմանում: Թերթը զաղտնի առաքվում էր Ռուսաստան և արտատպվում տեղական անլեզալ տպարաններում: «Իսկրայի» օրինակները բազմացվում էին նաև Բաքվում:

«Իսկրան» ուշադրությամբ Հետևում էր Կովկասում Հեղափոխական իրադրության զարգացմանը, ղեկավար ցուցումներ տալիս տեղերում աշխատող գործիչներին, տպագրում բազմաթիվ Հոդվածներ ու թղթակցություններ երկրամասի կյանքից:

<sup>1</sup> Второй съезд РСДПР, протоколы, Москва, 1959, стр. 530.

<sup>2</sup> Аветисян А. Г., Ленин В. И. и пролетарский интернационализм в революционном молодежном движении, Ереван, 1979.

,,Իսկրայի,, հրատարակությունից հետո, նրա օրինակով Անդրկովկասում ստեղծվեցին մի շարք սոցիալ-դեմոկրատական տեղական անըզալ օրգաններ: 1902թ. հոկտեմբերին լույս տեսավ «Պրոլետարիատ» հայերեն առաջին իսկրայական ուղղության թերթը, բաղկացած 24 էջից, որը հրատարակվում էր Թիֆլիսում ստեղծված «Հայ սոցիալ-դեմոկրատների միության» կողմից:

«Պրոլետարիատը» որպես առաջնորդող տպեց «Հայ-սոցիալ-դեմոկրատների միության մանիֆեստը»: «Մանիֆեստում» խոսվում էր «Միության» հանդես գալու պայմանների, նրա հետապնդած նպատակների մասին: «Մեր Միությունը Ռուսիայի ամեն ծայրում իր ցանցերը տարածող Ռուսիայի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության ճյուղերից մեկը լինելով միանգամայն համերաշխ է նրա հետ և նրա հետ միասին կռվելու է հանուն Ռուսիայի պրոլետարիատի շահերի ընդհանրապես և հայկականի՝ մասնավորապես»: Հետևելով «Իսկրային», «Պրոլետարիատը» ղնում էր բանվոր դասակարգի քաղաքական կուսակցության ստեղծելու խնդիրը, սուր քննադատության ենթարկում «էլիտոմիստներին», միջազգային օպորտունիզմը, դաշնակցականներին և հնչակյաններին:

Վ. Ի. Լենինը տարագրության մեջ ծանոթանալով «Պրոլետարիատի» բովանդակությանը, «Իսկրայի» 1903թ. N 33-ում տպագրեց հատուկ հոդված «Հայ սոցիալ-դեմոկրատների մանիֆեստի մասին» վերնագրով: Ողջունելով նոր սոցիալ-դեմոկրատական կազմակերպության հանդես դալը, նշելով նրանց օրգանի ընդհանուր զրական ուղղությունը, նա մանրամասն կանգ առավ «Մանիֆեստի» վրա, մեծ համակրանքով խոսելով հատկապես ազգային հարցի լուծման ճիշտ ուղիներ փնտրելու նրանց փորձի մասին: «Մենք ամբողջ հոգով ողջունում ենք «Հայ սոցիալ-դեմոկրատների միության» մանիֆեստը և մանավանդ ազգային հարցի ճիշտ զրվածքը տալու նրա հիանալի փորձը,- գրում է Վ. Ի. Լենինը: Խիստ ցանկալի կլիներ, որ այդ փորձը հասցվեր մինչև վերջ»:

Նույն հոդվածում և «Իսկրայի» N 44-ում Լենինը բարեկամաբար կշտամբում էր նաև «Հայ սոցիալ-դեմոկրատների միությանը» Ֆեդերացիայի հարցում թույլ տված առանձին սխալների համար: 1904թ. փետրվարին Ժնևում Լենինի նախաձեռնությամբ ստեղծվեց հայերեն և վրացերեն սոցիալ-դեմոկրատական զրականություն հրատարակող հանձնաժողով: Այդ հանձնաժողովը Ստ. Շահումյանի ղլխավորությամբ կարճ ժամանակամիջոցում զգալի թվով հայերեն սոցիալ-դեմոկրատական զրականություն հրատարակեց: 1904թ. Ստ. Շահումյանի և նրա բուհական դասընկեր Մ. Մանուչարյանի /Չար/ թարգմանությամբ հրատարակվեց Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի «Կոմուն-

<sup>1</sup> Պրոլետարիատ 1902, 1:

<sup>2</sup> Լենին Վ. Ի., ԵԼԺ. հ. 7, էջ 131-132

նիստական կուսակցութեան մանիֆեստի» ամբողջական տեքստը: 1903թ. մարտին տեղի ունեցած Կովկասյան Միութեան Հիմնադիր Համագումարի որոշմամբ վրացական «Իրճոյա» /Պայքար/ և հայկական ,,Պրոլետարիատ,, թերթերը միավորվեցին և ապրիլ-մայիս ամիսներին սկսեց լույս տեսնել ,,Պրոլետարիատի կռիվը,, անունով հայերեն և վրացերեն, իսկ 1905թ. նաև ռուսերեն: Թերթն իր գոյութեանը շարունակեց մինչև 1905թ. հոկտեմբերը:

Դեռևս 1903-1904թթ. «Պրոլետարիատի կռիվը» թերթին և նրա հրատարակչական ընդհատումների ժամանակ, հավելվածների ձևով, ապա ինքնուրույնաբար լույս էր տեսնում «Պրոլետարիատի կռիվի թերթիկը» հայերեն, վրացերեն, ռուսերեն: 1905թ. նոյեմբերից, արդեն լեզալ պայմաններում, որպես Կովկասյան Միութեան օրգան, սկսեց լույս տեսնել «Կավկասկի ռաբոչի լիստոկ» ռուսերեն թերթը, որը ղեկավարներին փակվեց ցարիզմի դեմ ապստամբութեան բացահայտ կոչ անելու համար:

«Պրոլետարիատի կռիվը» թերթում և «Պրոլետարիատի կռիվի թերթիկում» բազմաթիվ հոդվածներ, թղթակցութեաններ էին տպագրվում ինչպես Ռուսաստանի և միջազգային բանվորական շարժումների մասին, այնպես էլ անդրկովկասյան իրականութունից: Թերթը պարզաբանում էր պրոլետարիատի խնդիրները հասունացող հեղափոխութեանը, կազմակերպում ու դաստիարակում էր գյուղացիութեանը, բարձրացնում նրանց գիտակցութեանը: Ի դեպ թերթում տպագրվում են նաև Վ. Ի. Լենինի աշխատութեանները մայրենի լեզվով:

Այսպիսով, Անդրկովկասում բանվորական և ընդհանրապես աշխատավորական ղանդվածների քաղաքական դաստիարակութեան, բանվորական սոցիալ-դեմոկրատական կազմակերպութեանների ստեղծման գործում որպես կոլեկտիվ պրոպագանդիստ և կազմակերպիչ մեծ դեր է խաղացել իսկրայական մամուլը: 1899թ. Ջալալօղլիում ստեղծված վերոհիշյալ մարքսիստական խմբակը 20-րդ դարի սկզբին ընդլայնելով իր գործունեութեան շրջանակները, զգալի ազդեցութեան է ձեռք բերում նաև հարևան գյուղերի վրա: Կազմակերպութեանն ունենալով հեկտոգրաֆը, որով վաղտնի կոչեր ու թռուցիկներ էին տպագրվում և տարածվում բնակչութեան մեջ: Հին բոլշևիկ Անուշահյան թումանյանը հիշում է, որ 1902թ. Ղազարոս Աղայանի հոբելյանի կապակցութեամբ Ստ. Շահումյանի պատրաստած ճառը, որ նրան թույլատրեցին արտասանել, տպագրվել էր Ջալալօղլիում: Հետևապես հեղափոխութեանը նախորդող տարիներին, Հայաստանի ոչ միայն հիմնական արդյունաբերական կենտրոններում, այլև մի շարք գյուղերում, արդեն ստեղծվել էին սոցիալ-դեմոկրատական բջիջներ:

Ստ. Շահումյանը, խոսելով Հայաստանում սոցիալ-դեմոկրատական շարժման մասին, 1904 թվականին գրում էր. «Հայկական շատ

<sup>1</sup> Քիմ բուշևիկների հիշողութիւններ, զիբք առաքին, Ե., 1958, էջ 40:

գյուղերում կան գյուղական երիտասարդական կազմակերպություններ, որոնք կապված են մեր կոմիտեաների հետ, ստանում են մեր գրականությունը և լարված ուշադրությունով հետևում են հայ և այլազգի բանվորների հերոսական պայքարին» : 1902-1904թթ. ընթացքում սոցիալ-դեմոկրատական բժիշկներ ստեղծվեցին Ալեքսանդրապոլի կայսրությունում ու դեպոյում, Կարսի զորամասում, Նոր Բայազետում, Իզդիբում, ինչպես նաև Երևանում:

Կովկասյան միութենական կոմիտեի ուշադրության կենտրոնում էր հատկապես Լոռին՝ Ալավերդին և Լոռու տեղամասի հայկական գյուղերը: ՌՍ ԴԲԿ Թիֆլիսի կոմիտեն Հաղպատ գյուղն է գործուղում բանվոր-հեղափոխականներ Մելիք Մելիքյանին և Ասատուր Կախոյանին, որոնք տեղացի երիտասարդներ Մ. Թանդիլյանի, Ա. Սոխիկյանի, Ս. Իսրայելյանի, Ս. Շամբարյանի ակտիվ մասնակցությամբ 1903թ. հիմնադրեցին իրենց բժիշկը: Շուտով Հաղպատ գյուղը հայտնի դարձավ նաև իր «Հակաօրինական» ընդվզումով բազմաթիվ ապօրինություններ կատարած տեղացի կալվածատեր Բարաթովի և նրա կամակատարների դեմ:

Հաղպատը գտնվում էր Ալավերդուց 7-8 կիլոմետր հեռավորության վրա: Գյուղացիական տնտեսությունները, որոնց թիվը հասնում էր մոտ 150-ի, ունեին ընդամենը 500 ղեսյատին հող, իսկ գյուղի հողերի մեծագույն մասը՝ մոտ 2500 ղեսյատին պատկանում էր իշխան Բարաթովին: Գյուղացիները ժամանակավոր պարտավորյալ էին: Նրանց տրամադրության տակ եղած հաղաբաժինը չէր կարող բավարարել տնտեսության կարիքները: Գյուղացիները ստիպված էին ծանր պայմաններով, կապալով վերցնել իշխանի հողերը ու հսկայական հարկեր և տուրքեր վճարել նրան:

Չբավարարելով ստացվող եկամուտներով Բարաթովը և նրա կալվածքների կառավարիչը մտադրվեցին ավելացնել կապալավարձը: Մայրահեղ թշվառության մեջ գտնվող և խիստ զայրացած հաղպատցիները 1903թ. նոյեմբերի 5-ին կայացած համագյուղական ժողովում որոշեցին կազմակերպված հակահարված տալ Բարաթովին: Նրանք ժողովում վճռեցին ա/ հրաժարվել կալվածատիրոջ օգտին վճարվող հարկերից և պարտավորություններից, բ/ կտրել նրա հողերից 2 հազար ղեսյատին և բաժանել գյուղացիներին, գ/ իջեցնել հողի կապալավարձը և այլն: Գյուղացիներն իրենց որոշումները կայացնելուց հետո անցան դրանց կենսագործմանը:

Հաղպատցիների այս «օրինազանցությունը» անմիջապես իր վրա հրավիրեց նահանգական վարչությունը ուշադրությունը: Թիֆլիսի օկրուգային դատարանը, որին դիմել էր Բարաթովը, պարտադրեց գյուղացիներին վերադարձնել բռնագրաված հողամասերն ու արտավայրերը: Այդ վճիռն ի կատար ածելու համար նոյեմբերի 8-ին ստրաժնիկներ

<sup>1</sup> Շահու մյան Առ., Երկեր, հ. 1, Ե., 1955, էջ 52

րի ուղեկցուեթյամբ Հաղպատ եկան դատական և ոստիկանական սրիստայիները, սակայն գյուղացիները ոչ միայն հրաժարվեցին նրանց կարգադրուեթյունները կատարելուց, այլև զենքով դիմադրեցին: Տեղի ունեցած ընդհարման և փոխադարձ հրաձգուեթյան ժամանակ սպանվեցին հինգ գյուղացիներ:

Հաղպատցիների այս դիմադրուեթյունը իրարանցում առաջացրեց կովկասյան բարձր իշխանուեթյունների շրջանում: Թիֆլիսի նահանգապետը խիստ անհանգստացած, հեռագրով զավառապետից սահանջեց անմիջապես միջոցներ ձևառնել գյուղացիական ելուեթը ճնշելու համար: Նոյեմբերի 10-ին Զալալօղլիից ժամանած կազակային հարյուրյակը և տեղական ստրաժնիկները հարձակվեցին Հաղպատի վրա: Ներխուժելով գյուղ, կազակները հաշվհարդար տեսան գյուղացիների հետ, անխնա ծեծի և մտրակահարուեթյան ենթարկելով նրանց: Բանտարկվեցին 34 հոգի, որոնց մի մասը տեղափոխվեց Թիֆլիս՝ Մետեխի բանտ: Բավական չհամարելով հաղպատցիների տված զոհերը ու կրած վնասները զավառապետը կարգադրեց կազակային հարյուրյակին երկու շաբաթ մնալ գյուղում և «կարգ հաստատել այնտեղ»: Կազակների բռնուեթյունները, թալանն ու խժոժուեթյունները ծայրահեղ ազդատուեթյան հասցրին հաղպատցիներին: Կազակների հեռանալուց հետո զավառապետը գյուղում 5 հոգուց բաղկացած ոստիկանական սահակախումբ թողեց գյուղացիների վրեժխնդրուեթյունից Բարաթովին պաշտպանելու համար: Սակայն գյուղացիները, ինչպես կտեսնենք հետագայում, չէին մոռացել իրենց կրած տառապանքները և մի քանի անգամ կալվածատիրոջը սպանելու փորձ կատարեցին:

Թեպետև Հաղպատի գյուղացիական շարժումը պարտվեց, սակայն այն սլաստուեթյան մեջ մտավ որպես XX դարի սկզբի Հայաստանի գյուղացիական շարժումներում առաջին զինված ելուեթ, որը մեծ ազդեցուեթյուն ունեցավ հարևան գյուղերի աշխատավորների դասակարգային գիտակցուեթյան արթնացման, նրանց քաղաքական զարթոնքի գործում: Հետագայում ևս Հաղպատը սահեց իր հեղափոխական ավանդները: Հաղպատի գյուղացիները հայտնի էին որպես ըմբոստներ, որոնց մասին հարգանքով ու հպարտուեթյամբ էին խոսում շրջակա գյուղերի բնակիչները:

Ռուսական կայսրուեթյան ծայրամասերի ժողովուրդները, այդ թվում և հայ ժողովուրդը, ենթարկվում էին ոչ միայն սոցիալական կեղեքման, այլև ազգային հալածանքների:

Հեղափոխական սոցիալ-դեմոկրատները ելնելով ՌՍ ԴԲԿ II Համադումարում մշակված ազգային ծրագրից, ամենուրեք պաշտպանում էին ճշգրիտ ժողովուրդների սահանջները, նրանց ինքնորոշման իրավունքը, ընդհուպ մինչև անջատումը և առանձին պետուեթյան կազմելու:

Բուլգեիկները ջերմուեթյամբ էին վերաբերվում նաև արևմտահայերի ազգային-սոցալատարական շարժմանը: «Պրոլետարիատի կռի-

վր» թերթը /1903թ., N 2-3/ սուլթանական բռնապետության դեմ ըմբոստացող ժողովրդական զանգվածների պայքարի մասին գրում էր. «Ուղարկելով Տաճկահայաստանում կուլոզ եղբայրներին մեր սոցիալիստական ողջույնը, մենք բացարձակ կերպով հայտարարում ենք մեր համակրությունը բազմաչարչար տաճկահայ ժողովրդի գործին, և մեր անկեղծ ցանկությունն է, որ այդ ազատությունը հասնի որքան կարելի է շուտ»:

Արևելահայությունը արևմտահայությունից ազատագրությունը իր օրինավոր գործն էր համարում, արևմտահայությունն նույն տրամաբանությամբ կովկասահայությունից պայքարը իր կենսական խնդիրն էր համարում: Այսպիսով, մեր ժողովրդի երկու հատվածների ազատագրական պայքարը ըստ էության միասնական էր: Արևելահայերի մասնակցությունը արևմտահայության պայքարին սկսվել էր տակավին XIX դ. 90-ական թվականներից:

Արևմտահայերի մասնակցությունը անդրկովկասյան իրադարձություններին սկիզբ առավ եկեղեցական գույքի բռնագրավման կապակցությամբ 1903թ. ծաղած շարժման և հատկապես ռուսաստանյան առաջին հեղափոխության տարիներին բռնված հայ-ադրբեջանական ընդհարումների ժամանակ: Անդրկովկասում ցարիզմի վարած ծայրամասային-գաղութային քաղաքականությունը և տնտեսական ճնշումը, և քաղաքական հալածանքները միասնություն էր կազմում, որի նպատակը տեղական ժողովուրդներին, մասնավորապես հայությունն ազգային դիմահեղման ենթարկելն էր:

XX դարի սկզբին հայկական մշակութային միություններ, դպրոցների, մամուլի և մտավորականության դեմ ձեռնարկված արշավանքները, որոնք սկսվել էին անցյալ դարի 80-ական թվականներից, ավարտվեցին մի նոր բռնություն: 1903թ. հունիսի 12-ին ցար Նիկոլայ II -ը կառավարչապետ Գ. Գոլիցինի սադրանքով ստորագրեց մի հատուկ օրենք, որով պետությունը բռնագրավում էր հայոց եկեղեցուն պատկանող ամբողջ շարժական և անշարժ գույքը: Բռնության այս նոր, իր նախորդը չունեցող ակտը լցրեց ժողովրդի համբերության բաժակը: Օրենքի կիրառումն ամենուրեք հանդիպեց դիմադրության: Ընդլվացեց սոցիալական ու ազգային ճնշման տակ զսնվող ժողովուրդը:

Ինչպես Հայաստանի քաղաքներում և գյուղերում, այնպես էլ Անդրկովկասի հայկական կենտրոններում տեղի ունեցան բազմաթիվ ելույթներ, ցույցեր, որոնք հաճախ վերածվում էին ոստիկանության և ժողովրդի միջև զինված ընդհարումների: 1903թ. օգոստոսին Ելիսավետպոլում /Գանձակ/ տեղի ունեցավ առաջին զինված բախումը, որի

<sup>1</sup> Համբարյան Ա., Ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում /1898-1908/, Ե., 1999, էջ 139-141:

<sup>2</sup> Կոստանյան Է., Սկրուիչ Խրիսյան, Հասարակական-քաղաքական գործունեությունը, Ե., 2000, էջ 405-407:

ընթացքում բնակչութիւնն ից եղաւ մոտ 80 սպանված և վիրավոր: Ելիսավետապոլի դեպքերն իրենց արձագանքը գտան Անդրկովկասի բազմաթիւ վայրերում: Թիֆլիսում և Բաքվում նույնպէս ընդհարումներ եղան բնակչութեան և ոստիկանութեան միջև: Յուլյցեր և ելույթներ տեղի ունեցան նաև Ալեքսանդրապոլում, Երևանում, Շուշիում, Էջմիածնում և բազմաթիւ գյուղերում:

Հայաստանում իրենց և եկեղեցու ունեցվածքը հետ վերադարձնելու խնդրում ակտիւ գործունեութիւն ծափայեցին Հայ քաղաքական կուսակցութիւնները: Փաստորեն սկսվում է ցարիզմի դեմ ուղղված ազգային-ազատագրական պայքար, որը ղեկավարում էին Հայ հեղափոխական ղառակցութիւն և սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցութիւնները: Հայկական ժողովրդական շարժումների հանդէպ անտարբեր չմնաց սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցութիւնը: Այդ օրերին ընդհատակում հրատարակվեց և «Իսկրա» թերթում լույս տեսաւ նշանավոր հեղափոխական Բողջան Կսեմեյանցի «Նոր կողոպուտ» հոդվածը, որտեղ նա մերկացնում էր ցարական իշխանութիւնների ավազակութիւնը Հայ եկեղեցու նկատմամբ:

ՌՍ ԴԻ Կ Կովկասյան Միութիւնը հրատարակեց այս շարժումներին նվիրված բազմաթիւ պրոկլամացիաներ, կոչեր, որոնց մեջ բացատրվում էր կառավարութեան քաղաքականութիւնը, նշվում էին պայքարի այն ուղիները, որ պետք է ընտրեն բանվոր դասակարգն ու աշխատավոր գյուղացիութիւնը: Այսպէս Հայաստանի Գ. Գոլիցինին վիրավորելու կապակցութեամբ հրատարակած «Գազանը վիրավորված է» կոչում նշված էր, որ նա արժանի էր մահվան և հազարավոր սրտեր ուրախութեամբ բարախեցին իմանալով կառավարչապետին ահաբեկելու լուրը ու ցավում էին, որ գազանը չի սպանվել: Հարգանքի տուրք մատուցելով մահափորձը կատարող հերոսներին, միաժամանակ զգուշացվում և խորհուրդ էր տրվում հեռու մնալ անհատական տեռորի սխալ մարտավարութիւններից: Կոչի հեղինակները պեկոծված ժողովրդին հասկացնում էին, որ անհրաժեշտ է մի կողմ տանել Գոլիցինի անձնավորութեանը և ապստամբութեան միջոցով վերջ տալ բոլոր գոլիցիններին, այսինքն՝ ցարական միապետութեանը:

Մի այլ «Դիմակր պատուած» վերնապիրը կրող կոչում տպագրված էր ներքին գործերի մինիստր Վ. Պլեխեի գաղտնի նամակը կաթողիկոսին, որտեղ մինիստրը սպառնում էր Հայոց եկեղեցու պետին: Տպագրելով նամակը և մեկնաբանելով այն, ցույց էր տրվում, որ միապետութիւնն անհամատեղելի է ինքնավարութեան հետ նույնիսկ այնպիսի հարցում, ինչպիսին ազգային եկեղեցին է:

<sup>1</sup> "Искра", 1903, N 49.

<sup>2</sup> Բարխուդարյան Վ. Բ., Սուրբայան Գ. Ա., Հայաստանի աշխատավորները ցարիզմի դեմ մղված համաժողովրդական պայքարում /1905-1907/, Ե., 1968, էջ 44:

Կովկասյան սոցիալ-դեմոկրատների ծավալած քաղաքական-բացատրական աշխատանքներն իրենց զրական արդյունքը տվեցին. «Անելգալ գրականությունը,- գրում է «Իսկրան»,- արագությամբ տարածվում է: Միութենական կոմիտեն ամեն կողմից ազիտացիոն գրականության պահանջ է ստանում: Այս իրադարձությունների ժամանակ մեր պրոկլամացիաները թափանցեցին Կովկասի բոլոր անկյունները, որտեղ կա հայկական բնակչություն»:

1903թ. հունիսի 12-ին օրենքի դեմ ելած հայ աշխատավորության ազգային-ազատագրական շարժումը լիցք էր ստանում այն պայքարից, որ կովկասյան պրոլետարիատը մղում էր ինքնակալության դեմ: Ամեն տարի կատարվող մայիսմեկյան տոնակատարությունները, քաղաքական ազիտացիան և հատկապես հարավ-ուսական քաղաքներում և Կովկասում 1903թ. բռնկված հուլիսյան ընդհանուր գործադուլը ժողովրդական շարժումներին հեղափոխական բնույթ էին հաղորդում:

XIX դ. վերջերին Եվրոպայում սկսված արդյունաբերական ընդհանուր ճգնաժամը իր ոլորտի մեջ առավ նաև Ռուսաստանը և , XX դ. սկզբին ընդդիմեց ուսական արդյունաբերությունը: Ճգնաժամի տարիներին 1900-1903թթ. Ռուսաստանում մի քանի հազար ձեռնարկություն փակվեց: Առաջացավ գործազրկություն, կրճատվեց աշխատավարձը: Այս բոլորի հետևանքով էլ ավելի էր վատանում բանվորների դրությունը: Սակայն բանվորական շարժումը չէր դադարում: Ընդհակառակը, հասունացող քաղաքական ճգնաժամի պայմաններում բանվորների պայքարը դառնում էր ավելի գիտակցված: Երկրամասում բուռն իրադարձություններ էին հասունանում: Անդրկովկասի համար պատմական նշանակալից իրադարձություն էր 1901թ. ապրիլի 22-ի /հին տոմարով/ մայիսմեկյան բանվորական ցույցը Թիֆլիսում, որը նույնպես ավարտվեց զինված ընդհարումով և բազմաթիվ ձերբակալություններով: Այդ ցույցով բացվում է քաղաքական դործադուլների և հեղափոխական ցույցերի մի ամբողջ շարան:

Թիֆլիսի ցույցի վերաբերյալ ժնևում հրատարակվող դաշնակցության «Դրոշակ» թերթը «Մայիսի մեկը Թիֆլիսում» վերտառությամբ թղթակցություն սպաղրեց, որը արտատպվեց «Իսկրա» թերթի 1901թ. թիվ 6-ում:

Հայաստանում բանվորական շարժման վաղազույն ժամանակաշրջանի նշանակալից փաստերը վերաբերում են Թիֆլիս-Կարս երկաթուղային շինարարության տեղամասերում XIX դ. վերջին տեղի ունեցած կուլթյուններին:

XX դ. սկզբներին Հայաստանում տեղի ունեցած հեղափոխական հուզումները կրում էին Հարավային Ռուսաստանի և Կովկասի արդյունաբերական քաղաքներում սկսված գործադուլների և քաղա-

քական ցույցերի ազդեցութեանը: Արխիպային վափերապրերը ցույց են տալիս, որ առաջին գործադուլը տեղի է ունեցել 1903թ. ապրիլ-մայիս ամսիններին՝ Այափերգու հանքարդուներուհարկան շրջանի Շամբուղի հանքերում:

1903թ. գործադուլներ տեղի ունեցան նաև Կարսի մի քանի մանր ձեռնարկութեաններում: Այափերգու պղնձահանքերում երկրորդ գործադուլը բռնկվեց 1904թ. զարնանը: Տնտեսական հոյի վրա ծագած այս գործադուլը ևս, ինչպես Այափերգու նախորդ գործադուլը, անհաջողութեամբ վերջացավ: Գործադուլների այսօրինակ անհաջողութեանները բացատրվում են բանվորների անկազմակերպվածութեամբ, նրանց քաղաքական գիտակցութեան տակավին ցածր մակարդակով, որը նրանք աստիճանաբար հաղթահարում են:

Հայաստանի առանձին քաղաքներում այդ տարիներին տեղի ունեցած գործադուլներից պետք է նշել նաև 1904թ. ապրիլին Ալեքսանդրապոլի կենցաղային ձեռնարկութեանների աշատողների և տնային ծառայողների հայտարարած գործադուլը, որ կազմակերպել էին ԻՍՊԻԿ տեղական կազմակերպութեան անդամները: Սակայն այս գործադուլը ևս անհաջողութեամբ վերջացավ:

1905թ. Հունվարի 9-ին /22-ին/ Պետերբուրգում խաղաղ ցույցի դուրս եկած բանվորների գնդակահարութեամբ սկսվեց բուրժուադեմոկրատական առաջին հեղափոխութեանը Խոստատանում:

Բանվորների նկատմամբ ցարի և նրա կառավարութեան կազմակերպած արյունահեղ դատաստանը ալեկոծեց ամբողջ երկիրը: Պետերբուրգում սկսված ընդհանուր գործադուլն անմիջական արձագանք գտավ Մոսկվայում, երկրի կենտրոնական-արդյունաբերական շրջանում, Սիբիրի քաղաքներում, Մերձբայթեան երկրներում, Անդրկովկասում: Հունվարի 18-ին գործադուլ Հայտարարեցին Թիֆլիսի երկաթուղային արհեստանոցների բանվորները: Հունվար-փետրվար ամիսներին անընդհատ գործադուլներ, ցույցեր էին տեղի ունենում նաև Բարսիում:

Փետրվարի վերջերին, մարտի սկզբներին գործադուլային շարժումների մեջ ընդգրկվեց Հայաստանը: Այստեղ բանվորական խոշոր կազմակերպված առաջին ելույթն Այափերգու հանքագործների մարտյան գործադուլն էր:

Դեռևս փետրվարի վերջերին Այափերգու բանվորների մեջ հուզումներ էին տեղի ունենում, որոնք սկսվեցին մարտի 5-ին և աստիճանաբար խորանալով ու ծավալվելով մարտի 8-ին ընդգրկեցին մի մեծ զանգված՝ գործադուլավորների թիվը հասցնելով հազար հոգու:

Հանկարծակի պայով բանվորների միահամուռ ելույթից ֆրանսիական Լճակերութեան Այափերգու հանքերի և գործարանների տնօրենը նախ փորձեց խաբուութեամբ խախտել բազմազգ բանվորների համախմբվածութեանը, ապա հայհոյանքների ու բռնութեան միջոցով ձախողել գործադուլը: Սակայն ոչ նրա ջանքերը, ոչ էլ Այափերգու ժա-

մանած գալառապետի սպառնալիքները և կազակների ներկայութիւնը չվախեցրին գործադուլավորներին: Ընդհակառակը, դիմադրափելով նրանց, բանվորներին հաջողվեց 20-ին գործադուլն ավարտել իրենց օգտին: Բանվորների և գործարանատիրոջ միջև կնքվեց 28 կետից բաղկացած մի համաձայնագիր-պայմանագիր, որում չնայած տնտեսական խնդիրներ էին արձարձվում հիմնականում, բայց ընդհանուր առմամբ դրանք բավական արժատական էին:

Այսպես, բանվորները պահանջում էին ավելացնել աշխատավարձը 20 % -ով, կրճատել աշխատանքային օրը, մեկ ամիս արձակուրդ տալ, ապահովել կենցաղային տարրական պայմաններ, վերջ տալ ինժեներների կոպուտութեանը և արհամարհական վերաբերմունքին և այլն:

Հեղափոխութեան սկզբին, Հայաստանի սրբազանատրիատի այս անդրանիկ ելույթը բանվորական շարժման հետագա ծավալման համար զգալի նշանակութիւն ունեցավ:

Բանվորները փորձով համոզվեցին, որ կազմակերպված հանդես գալով, կարող են ստիպել կապիտալիստներին՝ ընդունել իրենց առաջարկած պայմանները: Բանվորների համար գործադուլային սլաքարը քաղաքական դաստիարակութեան դպրոց էր: Հետագայում նրանք ավելի համախմբված էին հանդես գալիս, և չսահմանափակվելով տնտեսական պահանջներով, առաջադրում էին ավելի արժատական, քաղաքական պահանջներ:

Այսօրվերջում բանվորական հոծ զանգվածի և ուժեղ սոցիալ-դեմոկրատական կազմակերպութեան առկայութեամբ պայմանավորում էր նրանց առաջատար դերը Հայաստանի հեղափոխական շարժումների մեջ:

Այրիլի սկզբներին Անդրկովկասում սկսվեց երկաթուղային բանվորների ընդհանուր գործադուլ, որին արձագանքեցին նաև Հայաստանի երկաթուղայինները, մասնավորապես Ալեքսանդրապոլի երկաթուղային բանվորները, որոնք Այսօրվերջում հանքագործների հետ միասին ընթանում էին սլաքարող բանվորների առաջին շարքերում:

Այրիլ ամսին գործադուլներ տեղի ունեցան նաև Երևանում: Գործադուլ Հայտարարեցին Սարաջևի կոնյակի և Շուստովի դինու ու կոնյակի գործարանների բանվորները: Նրանց պահանջները հիմնականում վերաբերում էին աշխատավարձի ավելացմանը, բանվորական կայուն օր սահմանելուն և աշխատանքի ընդունելու պայմաններին: Գործադուլը տեղեց երկու շաբաթ և վերջացավ բավորների պահանջներին մասնակի բավարարումով:

Ինչպես ամբողջ երկրում, այնպես էլ Անդրկովկասում մայիս ամսին և ամառվա ընթացքում հեղափոխական շարժումները գնալով խորանում էին: Հայաստանի աշխատավորները ևս այդ ամիսներին մի շարք ելույթներով արձագանքեցին Ռուսաստանի, Ալյորեջանի ու

Վրաստանի պրոլետարիտի և գյուղացիութեան հեղափոխական պայքարին:

Ալավերդում բանվորները դուրս եկան մայրամեկյան ցույցերի: Ստ. Շահումյանը, որ այդ ժամանակ շրջադաշտում էր Լոռիում, մայիսի մեկին հանդես եկավ ճստով և նշեց հեղափոխական պայքարի այն խնդիրները, որոնք կուսակցութեւնը դնում էր բանվորների և գյուղացիների առջև: Բանվորները միտինգին բարձրացրին կարմիր դրոշ: Ելույթ ունեցան նաև մի շարք առաջավոր բանվորներ, այդ թվում Սերգո Փիրուզյանը:

1905թ. մայիսի սկզբներին Հաղպատ, Զայալօղլի, Ուզունչար, Որնակ գյուղերի, Ալավերդու գործարանների, Ախթալա և Հաղպատ կիսակայարանների սոցիալ-դեմոկրատական բջիջների ներկայացուցիչների ժողովում Ստ. Շահումյանի ղեկավարութեամբ դրվեց ԽՍ ԴԲԿ Բորչալոււի /Լոռու/ գավառական կոմիտեի հիմքը, որը վերջնականապես ձևավորվեց 1905թ. օգոստոսին: Լոռու կազմակերպութեան մեջ աշխատում էին Ս. Էլիոյանը, Ս. Կախոյանը, Աշոտ Թումանյանը, Անուշավան Թումանյանը, Ս. Փիրուզյանը, Ա. Իսրայելյանը և ուրիշներ: Հաճախակի լինելով Հայաստանում, այդ կազմակերպութեւնների աշխատանքներին ակտիվ մասնակցութուն էին ցույց տալիս Մելիք Մելիքյանը: ԽՍ ԴԲԿ Լոռու կոմիտեն, որի ընդհանուր ղեկավարութեւնը իրականացնում էր Ստ. Շահումյանը, Հայաստանում դարձավ ամենակենսունակ և ամենամարտական կազմակերպութեւններից մեկը: Ստ. Շահումյանը լինում է նաև Մեծ Ղարաքիլիսա գյուղաքաղաքում, և օգտագործելով առիթը, կուլյթներ է ունենում նաև դաշնակցականների դեմ: Այդ օրերին Վ. Տերյանը Մեծ Ղարաքիլիսայում ներկա գտնվելով նրա ելույթներից մեկին, իր հուշերում պատմում է. «Կարծես հրաշալի զամպանի գորութեամբ դուրսված՝ յուր ու հանդիսատսում էք այդ ամբոխը, որը սովոր էր բանվորական կուսակցութեան ներկայացուցիչներին աղմուկի ատելութեամբ ու շփոցներով դիմավորելու և ճանապարհ դնելու...»:

Շահումյանը այնուհետև մեկնեց Երևան:

Դեռևս 1902-1904թթ., ինչպես նշել ենք, Ուլուխանյու-Երևան ներկայթուղային տեղամասի բանվորների, քաղաքի արական և իգական զիմնագիւանների ուսուցիչ-ուսուցչուհիների և փոստ-հեռագրատան ծառայողների մեջ գործում էին սոցիալ-դեմոկրատական մարքսիստական խմբակներ: Դրանց ակտիվ անդամներից էին զիմնագիւայի ուսուցիչներ Լաբինսկին, Սալիմիչը, ժողովրդական ուսումնարանի դիրեկտորի կին Զիլինաձեն, կանանց զիմնագիւանների դասատուներ Վախտիան, Վորոբյով ամուսինները և ուրիշներ: Առանձին գործող այս խմբակներ-

<sup>1</sup> Մելիքյան Զ. Ա., Սարքիստական կազմակերպութեւնները և ունյուսցիւն շարժումները Լոռիում, Ե., էջ 107:

<sup>2</sup> Տերյան Վ., Երկերի ժողովածու, Ե., 1925, էջ 241:

րը, որոնց ղեկավարներից էին Գեորգի Սոկոլովսկին և Ալեքսանդր Մալխասյանը, միավորելու և նրանց աշխատանքները կենտրոնացնելու համար կովկասյան Միութենական կոմիտեի հանձնարարությունը տակավին 1904թ. սեպտեմբերին Երևան էր եկել Ստ. Շահումյանը:

Երկրորդ անգամ Ստ. Շահումյանը Երևան է գալիս արդեն 1905թ. մայիսին: Այստեղ սոցիալ-դեմոկրատական խմբակների աշխատանքները զգալիորեն աշխուժացել էին: Ընդարձակվել էին կադմակերպություն կապերը նաև Երևանի նահանգում գործող առանձին խմբակների հետ: Հասունացել էր համաքաղաքային ընդհանուր կազմակերպություն ստեղծելու հարցը և, 1905թ. մայիսի 12-ին Ստ. Շահումյանը հիմնադրեց ՌՍԴԲԿ Երևանի քաղաքային կոմիտեն: «Այդ ժամանակվանից Երևանի կազմակերպությունը, - վերհիշում է Գ. Սոկոլովսկին, - Ստեփանի միջոցով սերտորեն կապվեց Թիֆլիսի կազմակերպության հետ: Ստեփան Շահումյանը դարձավ իմ անձնական բարեկամը և մեր Երևանի կազմակերպության ընկեր-բարեկամը»:

Բացառիկ է եղել նաև Ստ. Շահումյանն իր մարդկային հատկանիշներով: Անձնվեր զաղափարականությունը և անձնական հմայքը մարմնավորվելով բոցաշունչ նկարագրի մեջ, նրան դարձրել էին Անդրկովկասի բոլշևիկների ամենասիրելի առաջնորդներից մեկը: Երևանի կոմիտեի ակտիվ անդամներից էին նաև Կ. Ալավերդովը, Վ. Բարժանսկին, Ն. Նիտոչվիլին, Վ. Բաղդասարյանը և ուրիշներ: Հետագայում կազմակերպությունը համալրվեց նոր կարող ուժերով: Երևան փոխադրվեցին Մարտիրոս Միրաքյանը /բանվոր Շանթ/, Ասքանազ Մառտյանը, Լևոն Տեր-Հովսեփյանը, Լևոն Յաղուբյանը:

1905թ. ամռանը Երևանում լինում է նաև Բ. Կսուեյանցը և հանդիպումներ ունենում տեղական կազմակերպության ղեկավարների հետ:

Բանվորական գործադուլներն իրենց ազդեցությունն ունեցան գյուղերի վրա; Գարնանից սկսվեցին գյուղացիական շարժումները: Ուժեղ էին այդ շարժումները հատկապես Ռուսաստանի կենտրոնում՝ Պավլովսկում, Արևմտյան Վրաստանում:

ՌՍԴԲԿ կովկասյան Միութենական կոմիտեն, որ ղեկավարում էր գյուղացիական ելույթները Արևմտյան Վրաստանում, միջոցներ ձևափոխեց հեղափոխական շարժումներն ամբողջ Անդրկովկասում տարածելու համար: Մարտի 19-ին հրասպարակվեց կովկասյան Միութենական կոմիտեի «Հայ գյուղացիներին» կոչը, որտեղ Հայաստանի աշխատավոր գյուղացիությունը կոչ էր արվում միանալ ռուս և վրացի բանվորների և գյուղացիների պայքարին: Այն առաջադրում էր նաև գյուղացիական շահերից բխող 12 պահանջներ, որոնց թվում

<sup>1</sup> Փն բուշևիկների հիշողության ԳՆԵՐ, դ. 1, Ե., 1958, էջ 101-102

<sup>2</sup> Բարսեղյան Խ. Յ., Մարքսիզմի տարածումը Հայաստանում, մ. գ. 2, Ե., 1975, էջ 68:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 69:

«օտարեզկաների» վերադարձ, ձրի ուսուցում, 300 ուսուցիչ պակաս եկամուտ ունեցող տնտեսությունների հարկերի վերացում և այլն<sup>1</sup> : «Սակայն դրանց հասնելու համար, - ասվում էր կոչում, - անհրաժեշտ է ոտքի ելնել, ջանջախել ցարին և նրա կառավարությունը» :

1905թ. գարնան-ամռան-աշնան ամիսներին ամբողջ երկրում տեղի ունեցող գյուղացիական շարժումների ընդլայնման և խորացման պայմաններում, Հայաստանում ևս գյուղացիական շարժումները ծախսվեցին նոր թափով : ՌՄ ԴԲԿ Կոմկասյան Միությունը կազմակերպչական աշխատանքներին գուղահեռ ծավալել էր նաև գրավոր քարոզչություն անվեղալ գրականություն, թերթերի, կոչերի, թուղայինների տարածման միջոցով : Այդ օրերին ձևաքիչ-ձեռք էր անցնում թիֆլիսի կոմիտեի նշանավոր կոչը՝ ուղղված «Բորջայուի գյուղացիներին» : Հայերեն գրված այդ կոչում գյուղացիներին բացատրվում էր, որ նրանց բոլոր թշվառությունների պատճառը ցարիզմն է, որն իրեն փրկելու, ժողովրդի ուժերը ջլատելու համար հրահրում և կազմակերպում է ազգամիջյան ընդհարումներ և հրեական ջարդեր : Անդրադառնալով դաշնակցականներին, կոչում գրված է, որ նրանք իրենց «կոմիտեներին» միջոցով ստիպում են վճարել պետական և կալվածատիրական հարկերը, իսկ քաղաքներում՝ ճնշում բանվորական գործադուլները : Ակտիվ գործողություն, քաղաքական պայքարի մղելով աշխատավոր գյուղացիներին, կոչի հեղինակները առաջարկում են միանալ բանվորներին և համախմբված սոցիալ-դեմոկրատիայի շուրջը՝ տպալույսի շահագործողների լուծը : Կոչը ստորագրված էր «Հայ բանվոր» :

Երկրում ստեղծված հեղափոխական իրադրությունը տեղաշարժելով հասարակության բոլոր դասակարգերին, հարկադրում էր ստեղծված իրավիճակին համապատասխան մշակել նոր մարտավարություն : Հասունացած խնդիրները անհրաժեշտաբար պահանջում էին, որ Պրոլետարիատի ղեկավար կուսակցությունն էլ մշակի իր տակտիկան : Միասնական տակտիկա մշակելու համար բոլշևիկները 1905թ. ապրիլի 25-ին Լոնդոնում հրավիրեցին կուսակցության III համագումարը : Մինչև իկները հրաժարվելով մասնակցել համագումարին, ժնևեում հրավիրեցին իրենց կոնֆերանսը : Կուսակցության III համագումարը ելնում էր նրանից, որ չնայած մեղի ունեցող հեղափոխությունն իր բնույթով բուրժուական էր, նրա հաղթանակով ավելի շահագրգռված էր պրոլետարիատը, քան բուրժուազիան :

Համագումարի առաջին և գլխավոր հարցը դիմված սուպսում-բություն հարցն էր : Համագումարը քննարկեց Վ. Ի. Լենինի «Կոմկասի իրադարձությունների առթիվ» բանաձևը և որջույն հղեց Կոմկասի մարանչոյ պրոլետարիատին և գյուղացիությանը, որոնք իրենց հա-

<sup>1</sup> Листовки кавказского союза РСДРП 1903-1905гг., 1955, стр. 292-293:

<sup>2</sup> Ռևոլյուցիոն կոչեր և բուրժուական խաղաղություն և խմբագրել է Խ. Չ. Բարսեղյանը, Ե., 1960, էջ 129-131:

մատուց պայքարում ցույց են տալիս, թե ինչպես պետք է իրականացնել բանվոր դասակարգի և աշխատավոր գյուղացիութան դաշինքը:

Հեղափոխութեան տարիներին զրվեց նաև Հայաստանի գյուղացիութեան ժամանակավոր-պարտավորյալ հարաբերութեանները վերացնելու հարցը և այդ կապակցութեամբ կառավարութեանը ներկայացվեցին մի շարք նախագիծ-առաջարկութեաններ: Սակայն տեղական կալվածատերերը սեփական շահերի «ոտնահարումը» նկատելով, այդ առաջարկութեաններին մեջ, մերժում էին դրանք, փոխարենը առաջարկելով իրենց նախագիծը, որոնց էութեանը գյուղացիներին տրվող հողի դիմաց կրկնակի փրկավճար ստանալն էր:

1905թ. Հոկտեմբերին սկսվեց համառուսաստանյան քաղաքական գործադուլը, որով հեղափոխական շարժումը երկրում թևակոխեց իր զարգացման ավելի բարձր աստիճանը:

Հոկտեմբերյան քաղաքական գործադուլների ալիքը Ռուսաստանի կենտրոններից հասավ նաև Անդրկովկաս, այդ թվում և Հայաստան:

Հոկտեմբերի 15-ին ժամը 6-ից Ալեքսանդրապոլի հանդուլցում դադարեցին աշխատանքները. դնացքների երթևեկութեանը կանգ առավ նաև Ալեքսանդրապոլ-Երևան, Ալեքսանդրապոլ-Կարս գծամասերում: Կազմակերպվեց գործադուլային կոմիտե Ս. Շահբազյանի գլխավորութեամբ: Կոմիտեն բանվորական վերահսկողութեան սահմանեց Ալեքսանդրապոլի ամբողջ հանդուլցի և երկաթուղային երթևեկութեան վրա: Հոկտեմբերի 16-ին հրապարակվեց գործադուլային կոմիտեի թուղթերը, որտեղ շարադրված էին բանվորների պահանջները, որոնք տնտեսական և քաղաքական բնույթ ունեին: Հոկտեմբերի 17-ին գործադուլները տարածվելով ամբողջ երկրում, դարձան համառուսաստանյան: Այսպիսի միջնորդություն համառուսական քաղաքական գործադուլը ցարիզմին դեմ ուղղված համաժողովրդական ասպտամբութեան նախարանն էր արդեն: Այս պայմաններում ցար Նիկոլայ II-ը ստիպված եղավ հրապարակել հոկտեմբերի 17-ի մանիֆեստը, որը հռչակում էր «քաղաքացիական ազատութեանների անխախտ հիմունքներ անձի իսկական անձնումխելութեան, խղճի, խոսքի, ժողովների, միութեանների ազատութեան»: Այն խոստանում էր նաև օրինադիր դուրս: Մանիֆեստը մեծ ոգևորութեան առաջացրեց ռուսական ազատական կուսակցութեանների շրջանում: Մանիֆեստը զոհունակութեամբ ընդունեցին նաև մենչևեիները ու էսեները:

Միայն բոլշևիկյան կուսակցութեանն էր, որ կոչ արեց չհավատալ ցարին և նրա խոստումներին: Ելնելով ստեղծված դրութեանից, բոլշևիկները առաջարկեցին շարունակել գործադուլային պայքարը, նախապատրաստվել նոր, ավելի հզոր ընահանուր գործադուլի, որը պետք է վերաճեր զինված ասպտամբութեան:

ՌՍ ԴԲԿ Հայաստանյան կազմակերպութեանները որդեգրեցին բոլշևիկյան ռազմավարութեանը: Հոկտեմբերի 26-ին ՌՍ ԴԲԿ Կարսի

կազմակերպուելով յուրևնր մարտական բովանդակությամբ մի կոչ հրապարակեց «Բոլոր քաղաքացիներին» վերնադրով: Կոչի ստալին մասուում բացատրվում էր, որ այս «խակական ազատությունը», որ շնորհել է թաղավորը, մեծ և փոքր ավազակների, թալանի ու ճնշումների ազատություն է, որ «ազատության» այս պայմաններում բանվորները շարունակում են քաղցից մեռնել բանտերում, գյուղացիները՝ խեղդվել վաշխատուներին և կալվածատերերին ճանկերում, աղանդավորները հալածանքների ենթարկվել իրենց հավատի համար, իսկ հրեաներին, հայերին, վրացիներին, լեհերին և ուրիշներին իրավունք է վերապահված մեռնել «կատաղած ամբոխի» գնդակների և մահակների հարվածների տակ:

Վերջում տրվում էին հետևյալ լոզունգները.

«Միացե՛ք, մոտ է ազատության ժամը:

Կորչեն ցարի կեղծ մուրհակները:

Կորչի նրա ողորմածությունը:

Կեցցե՛ հեղափոխությունը և դեմոկրատական հանրապետությունը:

Կեցցե՛ սոցիալիզմը»:

Մանիֆեստի բնույթը մերկացնող բոլշևիկյան բովանդակություն ուներ նաև Ալեքսանդրապոլի կազմակերպության հոկտեմբերի 29-ի կոչը: Այդ կոչում բացատրվում էր, որ մանիֆեստը ոչինչ չտվեց բանվոր դասակարգին: Ցարը և կառավարությունը փորձում են դիմադրավել հեղափոխությանը, ուստի նրանք համախմբում են իրենց ուժերը, նախապատրաստում գործը, որպեսզի հենված նրա սպինների վրա կանգնեցնեն ժողովրդական շարժումը և հրաժարվեն այն խղճուկ արատնությունից, որ սովել էր մանիֆեստը: Կոչը վերջանում էր մարտական լոզունգներով:

Մանիֆեստի հռչակումից հետո էլ ամենուրեք շարունակվում էին ցույցերը:

Նշանակալից էին Կարսի բանտից Բաքվի կազմակերպության 32 նշանավոր հեղափոխական գործիչների ազատվելու կասալկցությամբ Կարսում և Ալեքսանդրապոլում տեղի ունեցած ցույցերը: Ազատվելով բանտից, բոլշևիկները հոկտեմբերի 22-ին և 23-ին Կարսում մեծ ցույցեր կազմակերպեցին: Կարսից Բաքու մեկնելիս ազատված բոլշևիկներն անցան Ալեքսանդրապոլով: Լուր ստանալով Ալեքսանդրապոլ ժամանելու մասին, քաղաքի սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունը հոկտեմբերի 28-ին կազմակերպեց նրանց դիմավորումը: Ավելի քան երկու հազար մարդ կարմիր դրոշներով դուրս էին եկել փողոց: Տեղի ունեցավ մեծ ցույց, որի ժամանակ ելույթ ունեցող հետադուրները մարտական ճառեր էին ասում հայերին, ռուսներին, վրացերին՝ կոչ անելով տապալել ցարական կարգերը: Բանվորների, գինվորների և մտավորականության տրամադրությունը այնքան բարձր էր, որ ոստիկանությունը չհամարձակվեց միջամտել, այլ բավարարվեց

միայն տեղի ունեցածի մասին գաղտնի գործակալների միջոցով տեղեկութուններ հաղորդել Կովկասի ոստիկանութւան պետ գեներալ Շիրինկինին:

Յարիգժը, սակայն, ինչպես պետք էր սպասել, իր դիրքերը հնչտութեամբ չէր զիջում: Մավալովոյ շարժումների առաջն առնելու, հեղափոխական ուժերը մասնատելու համար հասարակութւան տակաճքներից կազմակերպված և ոստիկանութւան կողմից ֆինանսավորվող ռուս միապետականների «Հայրենասիրական» կուսակցութւունները, որոնց ժողովուրդը «սև հարյուրակներ» անունը տվեց, ամբողջ երկրում ահաբեկչական և սադրիչ գործողութիւն ծավալեցին: Անդրկովկասում հեղափոխական շարժումների առաջն առնելու, ժողովուրդների համերաշխութիւնը խախտելու համար, տակավին 1905թ. փետրվարին Բաքվում կազմակերպվեցին հայ-ադրբեջանական արյունալի ընդհարումներ: Դժբախտաբար չարիքը միայն Բաքվով չսահմանափակվեց: Բաքուն ազդանշան ծառայեց Անդրկովկասի մյուս քաղաքների և գավառների համար: Ընդհարումներ եղան Երևանում և նահանգում, Ելիսավետպոլի նահանգում: Ընդհարումներից զերծ չմնաց նաև Թիֆլիսը: Ընդհարումները չդադարեցին նաև հաջորդ տարում: 1906թ. ընթացքում Անդրկովկասի զանազան վայրերում մերթնդմերթ լսվում էր «կարմիր քրքիջը», ինչպես ժամանակին անվանում էին այդ արյունալի ողբերգութիւնը: Հայ-ադրբեջանական ընդհարումների ժամանակ կովկասյան իշխանութիւնների անտարբերութւան կամ, ավելի ճիշտ, ադրբեջանամետ դիրքորոշման պատճառով հայ ժողովրդի գինված ինքնապաշտպանութւան կազմակերպումը հանձն առավ դաշնակցութիւն կուսակցութիւնը:

ՌՍԴԲԿ կազմակերպութիւնները գրավոր-քաղաքական մեծ դործունեութիւն ծավալեցին: Դեռևս 1905թ. փետրվարին տեղի ունեցած ընդհարումների ժամանակ Մոսկվայի բոլշևիկյան կոմիտեն թռուցիկներ հրատարակեց, որոնցում մերկացվում էին կոտորածների խսկական հեղինակները:

1905թ. սեպտեմբերին տեղի ունեցած սոցիալ-դեմոկրատական կազմակերպութիւնների համառուսական կոնֆերենցիան հատկապես անդրադարձավ կովկասյան դեպքերին, անարգանքի սյունին գամելով ցարական կառավարութւանը ժողովուրդներին իրար դեմ գրգռելու դահճային գործում: Հայ-ադրբեջանական ընդհարումների մասին խոսել է նաև Վ. Ի. Լենինը: Նա մատնանշել է ազգամիջյան հակասութիւնների բուն պատճառները, մերկացրել ցարական բոլորակրատիայի սադրիչ արարքները: «Թուլացել են ոստիկանական մեխանիզմների զսպանակները» - գրում է Վ. Ի. Լենինը, - բավական չեն սոսկ ռազմա-

<sup>1</sup> Листовки московских большевиков в период первой русской революции, М., 1955, стр. 110-113.

<sup>2</sup> ԱՄԿՊ համազու մարտերի, կոնֆերենցիաների և կենտկոմի պետու մերում և որոշու մերում, մա, Ե., 1954, էջ 117:

կան ուժերը միայն: Պետք է բորբոքել ազգային ռասսայական թշնամանք պետք է «սև հարյուրակներ» կազմակերպել քաղաքային /և ապա հասկանալի է, նաև գյուղական/ մանր բուրժուազիայի ամենասակավ դարգասցած խավերից, պետք է փորձել դահի պաշտպանութան համար համախմբելու բուն իսկ բնակչության մեջ եղած բոլոր հետադիմական տարրերին, պետք է խմբակների դեմ ոստիկանութան մղած պայքարը դարձնել ժողովրդի մի մասի պայքարը ժողովրդի մյուս մասի դեմ:

Հենց այդպես է այժմ վարվում կառավարութունը Բաքվում թաթարներին գրգռելով հայերի դեմ»:

Ռուսաստանի ժողովրդական առաջին հեղափոխութան տարիներին աշխուժացրին իրենց գործունեութունը նաև արտասահմանից ներթափանցած պանթուրքիստական-պանիսլամական գործակալները: Պետերբուրգում հրատարակվող բուլչեիկյան «Նովայա ժիզն» լրագիրը մերկացնելով պանիսլամիստների գործունեութունը հարցնում է. «Ո՞րն է ոգևորում պանիսլամիզմը»: Եվ պատասխանում է,- Առաջին հերթին բուրժուական մտավորականութանը, որը երազում է միավորել բոլոր «ուղղափառներին» խալիֆի իշխանութան ներքո... Երկրորդ, թաթարական բեգերին, խաներին, աղաթարներին և իր դարն անցկացրած ֆեոդալիզմի. զանազան ժառանգորդներին, որոնք նախանձով են նայում արտասահմանում իրենց հարազատ Պարսկաստանում և Թուրքիայում տիրող կամայականութան և բռնութան աշխարհին, վախենում են դալիք ռեֆորմներից, երանությամբ և հույսով կառչում պանիսլամիզմի ցնցոտիներից: Եվ վերջապես երրորդ, «Պանիսլամիզմը ոգևորում է թաթարական արդյունաբերական բուրժուազիային, որը գրգռելով խուլիգաններին՝ հրդեհների և ջարդերի անտանելի պայմաններ է ստեղծում ոչ մոտսուլմանների համար, դուրս է մղում նրանց հայրենի վայրերից և ազատվում է այսպիսով վտանգավոր և ուժեղ մրցակիցներից»:

«Կովկասի խաղաղ և կուլտուրական զարգացման շահերը,- շարունակում է լրագիրը,- պահանջում են, որ պանիսլամիզմը վնասագերծվի, այդ կանի սոցիալ-դեմոկրատիան, մերկացնելով պանիսլամիզմի էությունը կովկասյան պրոլետարիատի առջև ընդհանրապես և թաթարականի՝ մասնավորապես»:

Հոկտեմբերյան իրադարձութունները չսահմանափակվեցին միայն բանվորական շարժումներով և գյուղացիական ելույթներով: Հեղափոխական ալիքը ուժեղորեն ցնցեց նաև ցարիզմի հենարանը բանակը: Հայաստանում տեղավորված կայազորները ևս արձագանքեցին հեղափոխական շարժումներին: Իր հեղափոխական տրամադրութ-

<sup>1</sup> Լենին Վ. Ի., ԵԼԺ, հ. 9, էջ 411-412

<sup>2</sup> Галоян Г. А., Рабочее движение и национальный вопрос в Закавказье /1900-1922/, Ереван, 1969, стр. 75.

յուններով աչքի էր ընկնում հատկապես Ալեքսանդրապոլի կայազորը, ուր դեռևս 1902թ. գործում էր ՌՍ ԴԲԿ Ալեքսանդրապոլի զինվորական կազմակերպութունը: ՌՍ ԴԲԿ Ալեքսանդրապոլի զինվորական կազմակերպութունը սաղմնավորման շրջանում խորը ընդհատակում էր և նրա գործունեութունը հաղիվ էր նշմարվում: Հետագայում ընդլայնելով իր շրջանակները և սերտացնելով շփումները այլ քաղաքների զինվորական կազմակերպութունների, ինչպես նաև Ալեքսանդրապոլի բոլշևիկների հետ և նրանց օգնությամբ տպարան ձեռք բերելով, բավականին աշխույժ գրավոր պրոպագանդա ծավալեց: Մեծ շափերի հասավ հատկապես պրոկլամացիաների հրատարակութունը ինչպես ռուսերեն, նույնպես և հայերեն:

Զինվորական հոգումները, որոնց համար Ալեքսանդրապոլի կայազորում միշտ պատճառ կար, սաստկացան աչնանից: Նոյեմբերի 20-ին Ալեքսանդրապոլի կայազորի մոտավորպես 300 զինվորներ հրաժարվեցին ներկայանալ պահակության և հավաքվելով միտինգի, մի շարք պահանջներ ներկայացրեցին: Նոյեմբերի 23-ին ելույթ ունեցան նաև կայազորի Բաքվի 153-րդ և կարադիմյան 80-րդ դեղերի զինվորները: Ալեքսանդրապոլի զինվորական կազմակերպութունն անմիջապես արձագանքեց դրանց:

Նոյեմբերին կազմվեց «Համառուսական զինվորական միության Ալեքսանդրապոլի կայազորի սովետը», որը լայն գործունեություն ծավալեց Ալեքսանդրապոլի զինվորների շրջանում: Սովետը հրատարակեց նաև իր որոշումը ազրաբային հարցում կիրառվելիք միջոցառումների մասին: Ուշագրավ էր նաև նույն ժամանակներին վերաբերող Ալեքսանդրապոլի զինվորական սոցիալ-դեմոկրատական կազմակերպության դիմումը շարքայիններին տուն արձակելը ձգձելու կապակցությամբ: Պրոկլամացիայի ձևով հրատարակված այս դիմումը զինվորներին մատչելիորեն բացատրում էր նրանց անելիքները: Պրոկլամացիան միաժամանակ պուշացնում էր չհավատալ սևհարյուրակային հրամանատարության այն բարբառանքներին, թե տեղական ժողովուրդները փորձում են անջատվել Ռուսաստանից, որ Կովկասում ինչ-որ տեղացիներ հիմնել են իրենց թագավորութունը և ուզում են ռուսներին քշել այստեղից:

Կովկասյան ժողովուրդների նկատմամբ դիտակից զինվորների կողմից համերաշխության կոչերն Ալեքսանդրապոլում հատկապես կարևոր էին նրանով, որ քաղաքի ռեակցիոն սպայութունը գնդապետ Լեիցկու գլխավորությամբ, սևհարյուրակային կազմակերպութուն էր հիմնել, որի գլխավոր նպատակն էր զորքի և տեղի բնակչության միջև թշնամություն սերմանել: Հայաստանում զինվորական ելույթներին մյուս օջախը՝ Կարսի կայազորն էր: Կարսում հեղափոխական խմբորդներն աշխուժացան հատկապես մանիֆեստի հրատարակումից հետո: Տեղի բոլշևիկների և զորքի մեջ աշխատող հեղափոխական գործիչ-

ների ջանքերով կազմակերպվեցին մի շարք ելույթներ: Զինվորական հուշումներ և ելույթներ տեղի ունեցան նաև Մարիդամիչում:

1905թ. Հայաստանի պրոլետարիատի հեղափոխական պայքարի ամենափայլուն էջերից մեկը Ալավերդու բանվորների նոյեմբերյան քաղաքական գործադուլն էր: Այս գործադուլին ակտիվ մասնակցութուն ցույց տվեցին Սանահինի երկաթուղայինները: Սանահինի բոլշևիկները սերտ կապի մեջ էին Ալավերդու կազմակերպության հետ և նոյեմբերյան գործադուլի նախապատրաստական աշխատանքները միասին էին տանում: Գործադուլին մասնակցում էին նաև շրջակա գյուղերի բնակիչները: Այս փաստը բանվորական շարժման և գյուղացիական ելույթի զուգակցումը, եզակի երևույթ էր, Հայաստանում ռուսական առաջին հեղափոխության տարիներին բանվոր դասակարգի և գյուղացիության համերաշխության մի արտահայտություն: Նման ելույթը հնարավոր էր դառնում այնտեղ, ուր ուժեղ էր հեղափոխական սոցիալ-դեմոկրատիայի ազդեցությունը քաղաքային և գյուղական պրոլետարիատի վրա: Նոյեմբերի 20-ին Սանահինի գործադուլավոր երկաթուղայինները, շրջակա գյուղերի գինված բնակիչների հետ միասին գնացքով, որը զարդարված էր կարմիր դրոշներով, հանդիսավոր ժամանեցին Ալավերդի: Նրանց ժամանումը ազդանշան ծառայեց Ալավերդում աշխատանքները դադարեցնելու և գործադուլ Հայտարարելու համար: Կազմվեց գործադուլային կոմիտե տեղի սոցիալ-դեմոկրատական կազմակերպության անդամներից և առաջավոր բանվորներից: Գործադուլի կազմակերպման մեջ ակտիվ դեր կատարեցին նաև Թիֆլիսից ժամանած Մելիք Մելիքյանը և Ասատուր Կախոյանը: Գործադուլային կոմիտեն կազմեց և բանվորների անունից հանքերի և գործարանների դիրկեցիային ներկայացրեց 22 կետից բաղկացած արմատական պահանջներ, որոնք վերջանում էին «Կեցցե ՌՍԴԲԿ-ն» կարգախոսով:

Գործադուլին մասնակցում էին մոտ 3000 մարդ: «Գործադուլի ժամանակ, - գրում էր կովկասյան բոլշևիկների օրգան «Կովկասյան ռաբոչի լիստոկ» թերթը, քաղաքական բնույթի միտինգներ էին կազմակերպվում: Հետաքրքիր էր տեսնել, թե ինչպես միանման պայմանները միացրել էին տարբեր ազգերի բանվորներին, ինչպես այս խուլ անկյունում բանվորները որոշեցին ինչ էլ որ լինի, դիմանալ մինչև իրենց պահանջների բավարարումը»: Նոյեմբերի 25-ին Ալավերդու «Կովկասյան արդյունաբերական և մետաղագործական ընկերություն» հրապարակեց հատուկ «Հայտարարություն» ձեռնարկության մեջ աշխատանքային կարգի մասին: Այդ «Հայտարարությունը» բանվորների համառ պայքարի և նրանց ձեռք բերած հաղթանակի արդյունք

<sup>1</sup> Մելիքյան Գ. Ա., Մարքսիստական կազմակերպությունները և ռևոլյուցիոն շարժումները Լուդու մ. Ե., 1957, էջ 122-124:

“Кавказский рабочий листок” 1965, N 6.

էր: Նրանում արտահայտվել էին բանվորների պահանջների գրեթե բոլոր գլխավոր կետերը:

Հեղափոխական իրադրութեան Հասունացումը դեկտեմբերին երկիրը հասցրել էր գինված ապստամբութեան: Առաջին ազդանշանը տվեցին Մոսկվայի բանվորները, սակայն կառավարութեանը հաջողվեց այլ վայրերից զորքեր փոխադրելով՝ ճնշել ապստամբութիւնը և պարտութեան մատնել պրոլետարիատին: Դեկտեմբերի Գին Մոսկվայում սկսված գինված ապստամբութեան լուրն առնելով ընդհանուր քաղաքական գործադուլ Հայտարարեցին երկրի մի շարք երկաթուղային գծերի հետ նաև Անդրկովկասի երկաթուղային բանվորներն ու ծառայողները: Գնացքների երթևեկութիւնը դադարեց նաև Հայաստանի բոլոր երկաթուղագծերում: Ինչպես հոկտեմբերյան, այնպես էլ դեկտեմբերյան գործադուլների օրերին ամենաակտիվ մասնակցութիւն ունեցան Ալեքսանդրապոլի Հանգուլցի բանվորներն ու ծառայողները: Ալեքսանդրապոլը միաժամանակ Հայաստանի երկաթուղային բանվորների գլխավոր կենտրոնն էր: Դեռևս հոկտեմբերյան համառուսաստանյան գործադուլի օրերին քաղաքում ստեղծված գործադուլային կոմիտեն, որը ղեկավարում էին բոլշևիկները, նորից ակտիվացրել էր իր աշխատանքները: Կոմիտեն իր վերահսկողութիւնը հաստատեց ոչ միայն տեղի հանդուլցի, այլև Ալեքսանդրապոլ-Ուլուխանլու-Երևան գծամասերի վրա: Կոմիտեի ամենաակտիվ անդամներից էր մեքենավար Սարգիս Շահբազյանը, որը դեռևս հոկտեմբերյան գործադուլի օրերին կոմիտեի նախագահներից մեկն էր և նրա ստորադրութեամբ բազմաթիվ հեռագրեր էին ուղարկվել զանազան վայրեր: Դեկտեմբերյան օրերին Ալեքսանդրապոլում դրութեան տերը քաղաքի բանվոր դասակարգն էր, հատկապես նրա միջուկը՝ երկաթուղային բանվորութիւնը:

Միայն Մոսկվայում սկսված գինված ապստամբութեան պարտութիւնից հետո ցարական կառավարութեանը հաջողվեց ճնշել գործադուլային շարժումները երկրում: Ինչպես ամենուրեք, այնպես էլ Անդրկովկասում և Հայաստանում, երկաթուղայինները Հայտարարվեցին ռազմական դրութեան մեջ: Գործադուլավոր երկաթուղայինների զգալի մասը ազատվեց աշխատանքից և նրանց նկատմամբ սկսվեց բռնութիւնների մի ամբողջ շրջան:

Չնայած պրոլետարիատի 1905թ. դեկտեմբերյան գրոհը հետ էր մղվել և սկսվել էր հեղափոխութեան աստիճանական նահանջը, սակայն պրոլետարիատի դիմադրողական կորույրը չէր ընկճվել: 1906-1907թթ. և ս ինչպես ամբողջ երկրում, այնպես էլ Անդրկովկասում և Հայաստանում, շարունակվում էին հեղափոխական գոտեմարտերը: Մայիսմեկյան տոնակատարութիւնները դրա վառ ապացույցն էին:

Դեռևս 1906թ. ապրիլի վերջերին հրատարակվել էին ՌՍԴԲԿ Երևանի կազմակերպութեան թռուցիկները հայերեն, ռուսերեն, վրացերեն, որոնց մեջ բացատրվում էր պրոլետարիատի միջազգային տոնի

նշանակու թյունը: Մայիսի մեկին քաղաքում երեացին կարմիր գրողներ: Բանվորներին սարսափեցնելու համար, իշխանությունները նախօրոք քաղաքի զանազան մասերում զորքեր էին կենտրոնացրել. չնայած դրան, տոնակատարությունը սեղի ունեցավ և անցավ քաղաքական դարձր մակարդակով:

1906թ. Հայաստանում տեղի ունեցած զուրթագուլների մեջ ամենանշանավորն Այափերզու բանվորների օգոստոսյան ելույթն էր: Տեղի սոցիալ-դեմոկրատական կազմակերպության ղեկավարութեամբ հանքագործները օգոստոսի 2-ին Այափերզում ընդհանուր գործադուլ հայտարարեցին: Այդ գործադուլին մասնակցում էր 4500 մարդ: Կազմվել էր գործադուլային կոմիտե, նախորդ 1905թ. նոյեմբերյան գործադուլի օրերին ստեղծված կոմիտեի անդամների, ինչպես նաև այլ բանվորների մասնակցութեամբ: Կոմիտեն, անցյալի օրինակով կազմեց 10 կեսից բաղկացած պահանջներ և ներկայացրեց գործարանատերերին:

Գործադուլը ղեկավարելու համար բողիկեների կովկասյան բյուրոն Այափերզի գործուղեց նախ Սուբեն Սպանդարյանին, ապա Ստեփան Շահումյանին: Բանվորներին օգնելու համար Թիֆլիսից եկան նաև բանվոր-հեղափոխականներ Գաբո Սադոյանը և Ասատուր Կախոյանը: Գործադուլը սեեց մոտ մեկ ամիս: Տեսնելով բանվորների վճռականությունը, իշխանությունները դիմեցին զենքի ուժի: Բորչայուի գաղափարապետի գիմնորական սեղակալ զեղապետ Զոլոտորոյովը օգոստոսի վերջերին Զայազօղլից ժամանած գիմնորների վաշտով, կազակային հարյուրակով, զեղացիքներով և լեռնային երկու թնդանութով սղառեց Այափերզին և սպառնաց աշխատանքները չվերականգնու գեպքում քարուքանդ անել այն:

Օգոստոսի 10-ին բանվորները զաղարեցրին գործադուլը:

Ասկայն գործադուլի ընթացքում բանվորները թույլ տվեցին նաև լուրջ սխալներ:

Ստեփան Շահումյանը օգոստոսի 30-ին թղթակցություն ուղարկեց «Նոր խոսք»-ին «Անհաջող գործադուլ» խորագրով: Անդրապառնայով գործադուլին, Շահումյանը գրում էր. «Բանվորների տրամադրությունը չափազանց բնկճվել է: Նրանք չէին սպասում այդ սեռակ սղարություն: Բայց սղարությունը դժբախտաբար սղասելի էր, ինչպես նկատեցինք վերը և մինչև իսկ անխուսափելի: Դրա սղատճառը ամենից առաջ բանվորական մասսայի գիտակցության սղակասն էր... Եթե մասսան ասիլի գիտակից լիներ և լսեր Թիֆլիսի ս. դ. կազմակերպության ներկայացուցիչներին և սեղական գործադուլը ղեկավարող ս. դ. կազմակերպության անդամներին, երբ նրանք առաջարկում էին համաձայնվել այն խոշոր գիջումների հետ, որ անում էր գործարանի աղմինխտրացիան առաջին բանակցությունների ժամանակ և վերջացնել գործադուլը, այդ ժամանակ բանվորները շատ խոշոր հաղթություն սղարած կլինեին և գործադուլը մեծ նշանակություն

կուեննար բանվորական շարժման և սոցիալ-դեմոկրատական գործի հաջողութեան տեսակետից :

Անշուշտ ճիշտ էր Շահուժյանը, որ նույնիսկ Հեղափոխութեան առաջին տարիներին բանվորներին կոչ էր անում լինել շրջահայաց և զգուշանալ ավելորդ ոգևորութեանից :

1906թ. Երևանում ծավալված գործադուլային շարժումների մեջ նշանակալի էր Սարաջևի ռեկտիֆիկացիոն և կոնյակի գործարանների բանվորների նոյեմբերի սկզբին հայտարարած գործադուլը, որը ընդմիջումներով տևեց մոտ երեք ամիս և ավարտվեց բանվորների հաղթանակով: Գործադուլը զեկավարում էր ՌՍԴԲԿ Երևանի կազմակերպութեանը: Բանվորների և գործարանատիրոջ միջև կնքվեց համաձայնագիր, որը բաղկացած էր երեք կետից և ամբողջովին տպագրվեց Երևանում լույս տեսնող «ՓԱԿՏԵՆ» սոցիալ-դեմոկրատական թերթում: 1907թ. ևս, չնայած հեղափոխութեան ալիքի տեղատվութեանը, Հայաստանում տեղի ունեցան մի շարք գործադուլներ, որոնցից ամենանշանավորը Ղափանի մարտյան գործադուլն էր:

1907թ. սկզբներին Ղափան եկան Բաքվում աշխատած մոտ 50 բանվոր-հեղափոխականներ: Այս բանվորներն էլ Հենց կազմակերպված բնույթ տվեցին Ղափանի հանքագործների մեջ տեղի ունեցող խմորումներին: Եկած բանվորները, որոնց գործուղել էր Բաքվի ՌՍԴԲԿ կոմիտեն, իրենց հետ բերել էին անլեզալ գրականութուն, թերթեր, թռուցիկներ:

Նախապատրաստական որոշ աշխատանքից հետո, մարտի 26-ին, երկուշաբթի, Ղափանի բոլոր հանքերի ու պղնձագործարանների բանվորները ընդհանուր գործադուլ հայտարարեցին: Մոտ 2500 բանվոր դադարեցրին աշխատանքները: Կազմվեց գործադուլային կոմիտե, որը ձեռնարկատերերին ներկայացրեց 27 կետից բաղկացած բանվորների պահանջները, որոնք գերազանցապես տնտեսական էին:

Լուր ստանալով գործադուլի մասին, կազակների ուղեկցութեամբ այնտեղ շտապեցին հանքատերերը և զավառական իշխանութեան ներկայացուցիչները: Սկսվեցին բանակցութեաններ գործադուլային կոմիտեի հետ: Սակայն այդ բանակցութեանները ոչ մի արդյունքի չհասցրին: Ժամանած ոստիկանական սրիստավը, հավաքելով բանվորներին, սկսեց սալառնալիքներ կարգալ նրանց և սաղրիչ հայտարարութեաններ անել, սակայն բանվորները մնացին անդրդվելի: Չկարողանալով ոչ մի կերպ ընկճել բանվորների դիմադրութեանը, գործարանատերերը վերջիվերջի գիջեցին և ընդունեցին նրանց պահանջների զլսավոր կետերը: Մարտի 29-ին գործադուլավորներն անցան աշխատանքի:

Ղափանի մարտյան այս գործադուլը ընթացավ Բաքվի պրոլետարիատի պայքարի ազդեցութեան տակ: Այն զգալի ազդեցութուն

<sup>1</sup> Շահուժյան Առ., ԵԼԺ, հ. 1, Ե., 1975, էջ 329-330:

ունեցալ նաև պրոլետարական ավանդներ արժատալորելու ուղղութ-  
յամբ: Գործազուլից հետո, Ղափանում բանվորներն սկսեցին մայրու-  
կաներ կազմակերպել: Առաջինը տեղի ունեցավ 1907թ, մայիսի 7-ին՝  
«Սյունիք» գործարանի մոտ: Հետագա տարիներին Ղափանում շարու-  
նակվեցին մայրամեկյան տոնակատարությունները: Ընդհանրապես  
Ղափանում ուժեղ էր Բաքվի ազդեցությունը, որը հետագայում ևս  
չթուլացավ Ամբոջի երկրում մոլեզնոց ունակցիայի տարիներին Բա-  
քուն էր, որ դեռևս էջը խոնարհել պրոլետարիատի մարտական զրոշը,  
շարունակում էր պայքարը և ամեն տարի բանվորական մայրուկաներ  
կազմակերպում:

Կուսակցության մեջ առանձին ֆրակցիաների գոյությունը  
գլխավորեն խոչընդոտում էր հեղափոխական շարժումների ծավալմա-  
նը: Միասնական կազմակերպություն ստեղծելու շարժումը համակել  
էր ՌՍԴԲԿ շարքային բոլոր անդամներին:

Ինչպես ամբողջ երկրում, այնպես էլ Անդրկովկասում, 1906թ.  
ընթացքում ստեղծվեցին ՌՍԴԲԿ միացյալ մի շարք կազմակերպութ-  
յուններ, այդ թվում Բաքվի և Թիֆլիսի կոմիտեները, ինչպես և ընտր-  
վեց Անդրկովկասյան մարզային կոմիտե, ուր գերակշռում էին  
մենչեիկները: Հետագայում, 1907թ. սկզբներին, Անդրկովկասի  
բոլշևիկները ստեղծեցին իրենց առանձին կենտրոնը՝ ՌՍԴԲԿ մարզա-  
յին բյուրոն, որը կոնսպիրատիվ նկատառումներով կոչվում էր «Գրա-  
կան բյուրո»: Կուսակցության միասնությունը վերականգնելու հա-  
մար բոլշևիկները մենչեիկներին առաջարկեցին հրավիրել միավորիչ  
համագումար:

1906թ. ապրիլին Ստոկհոլմում տեղի ունեցավ կուսակցության  
/միավորիչ/ համագումարը, որը, սակայն, միայն ձևականորեն միավո-  
րեց կուսակցության ֆրակցիաները: Համագումարում մեծամասնությ-  
յուն էին կազմում մենչիկները, որը և պայմավորեց հեղափոխութ-  
յան մի շարք հարցերի վերաբերյալ համագումարի մենչիկյան դիրքորոշու-  
մը: Հայաստանի բոլշիկյան կազմակերպությունների կողմից կուսակ-  
ցության համագումարին, որպես ՌՍԴԲԿ Երևանի բոլշիկյան կազմա-  
կերպության անդամ, մասնակցում էր Ստ. Շահումյանը «Սուբենին»  
ծածկանունով:

Վերադառնալով Ստոկհոլմից, Ստ. Շահումյանը մարտի վերջե-  
րին այցերեց Երևան և տեղի կոմիտեի նիստում զեկուցեց տվեց կու-  
սակցության համագումարի մասին: Հաջորդ օրը նա հանդես եկավ ս-  
փիլի բաղամամարդ մի ժողովում, որին ներկա էին ոչ միայն բոլշիկյան  
կազմակերպություն անդամներն ու առաջավոր բանվորները, այլև  
չրջակա գյուղերի սոցիալ-դեմոկրատական կազմակերպության ան-  
դամները, որոնք կապիված էին ՌՍԴԲԿ Երևանի կոմիտեի հետ:

Երևանում Ստ. Շահումյանն այցելեց նաև Գաբրիելյան եղ-  
բայրների կաշկարածարանը, տեղում ծանոթացավ բանվորների դրուժ-  
յանը, նրանց աշխատանքային պայմաններին: Ստ. Շահումյանի հետ

կաշեգործարան այցելեցին ՌՍ ԴԲԿ Երևանի կոմիտեի մի շարք ղեկավար գործիչներ, այդ թվում՝ Մարտիրոս Միրաքյանը /բանվոր Շանթ/, Ասքանազ Մուսվաթյանը և Արամ Շուշանյանը:

ՌՍ ԴԲԿ Երևանի կազմակերպությունը 1906-1907թթ. ընթացքում քաղաքի հիմնարկ-ձեռնարկություններում և մերձակա շրջաններում ակտիվացրեց քաղաքական-կազմակերպական աշխատանքները: Հատկապես Ուլուխանլուի երկաթուղային բանվորների մոտ պարբերաբար լինում էին ՌՍ ԴԲԿ Երևանի կազմակերպության անդամներից Մարտիրոս Միրաքյանը և Լևոն Յաղուբյանը: Նրանք այնքան էին հաճախակիացրել իրենց այցելությունները, որ հարուցեցին երկաթուղային ժանդարմների կասկածները և հսկողություն սահմանվեց նրանց վրա:

1906թ. հունիսի 23-ին Ուլուխանլուում Միրաքյանը և Յաղուբյանը ձերբակալվեցին: Խուզարկության հետևանքով նրանց մոտ հայտնաբերվեց գրականություն գրքեր, թուղթիկներ՝ հայերեն, ռուսերեն, վրացերեն: Ազատվելով կալանքից, Միրաքյանը և Յաղուբյանը շարունակեցին հեղափոխական եռանդուն գործունեությունը, հատկապես անլեգալ գրականության տարածելու ուղղությամբ: Այդ գրականությունը հիմնականում տպագրվում էր Թիֆլիսի Հավլաբարի տպարանում, որի աշխատանքներին մասնակցում և նրա հրատարակություններին առաքման հարցերով զբաղվում էր նաև վերոհիշյալ Մարտիրոս Միրաքյանը:

1907թ. մայիսին Լոնդոնում գումարվեց կուսակցության V համագումարը, որը բոլշևիկների խոշոր հաղթանակն էր բանվորական շարժման մեջ:

ՌՍ ԴԲԿ Երևանի կազմակերպությունն այս անգամ էլ մասնակցեց համագումարին, որպես պատգամավոր ընտրելով կազմակերպության անդամ, Երևանում լույս տեսնող «ՓԱԿՏԵՆ» սոցիալ-դեմոկրատական թերթի խմբագիր Գ. Սոկոլովսկուն:

Գ. Սոկոլովսկուն ընտրության կապակցությամբ Թիֆլիսի մենշևիկյան մարզային կոմիտեն ղիմեց բոլոր միջոցների նրա թեկնածությունը տապալելու համար: Սակայն այդ փորձերը անհաջողությամբ վերջացան: Չկարողանալով տեղերում տապալել բոլշևիկյան թեկնածուներին, մենշևիկները սկսեցին համագումարում վիճարկել կովկասյան բոլշևիկների՝ ոչ միայն նրեանյան պատգամավորների մանդատը, այլև Բորջալուի կազմակերպության մանդատները, զանազան կեղծ փաստարկներ բերելով այն մասին, որ իբր թե այդ կազմակերպություններն իրավասու չեն պատգամավորներ ուղարկել համագումար:

Անդրկովկասի բոլշևիկների ամենաուժեղ կազմակերպություններից մեկը ՌՍ ԴԲԿ Բորջալուի կազմակերպությունն էր, որն ընդգրկում էր ինչպես Լոռու գործարանային կազմակերպությունները, այնպես էլ գյուղական բժիշկները:

Դեռևս 1906թ. հոկտեմբերի 15-ին Հայաստանում տեղի ունեցավ ՌՍ ԴԲԿ Բորչալուի կազմակերպութեան առաջին կոնֆերանսը, որի աշխատանքներն ընթացան Ստ. Շահումյանի ղեկավարութեամբ: Կոնֆերանսը, որտեղ մասնակցում էին 10 տեղական կազմակերպութեալուներ, քննեց կուսակցական կյանքի մի շարք հարցեր: Նույն թվականի դեկտեմբերի 25-ին տեղի ունեցավ Բորչալուի կազմակերպութեան II կոնֆերանսը Հաղպատում, դարձյալ Շահումյանի ղեկավարութեամբ: Կոնֆերանսում ներկայացված էին 21 տեղական կազմակերպութեալուներ: Այն քննութեան առավ դումայական կամպանիայի անցկացման, բուրժուական կուսակցութեալուների դեմ մղվող պայքարն ու ժողովուրդը և այլ հարցեր: Կոնֆերանսը միաժամանակ անցկացրեց Լոնդոնում գումարվելիք կուսակցութեան համագումարի պատգամավորների ընտրութեալուներ: ՌՍ ԴԲԿ Բորչալուի /Լոռու/ կազմակերպութեան կողմից, որն ուներ հազարից ավելի անդամ, վճռական ձայնով պատգամավորներ ընտրվեցին Ստեփան Շահումյանը և Ասատուր Կախոյանը /«Բորչալինովի» ծածկանունով և խորհրդակցական ձայնով Միխայիլ Յլախայան: Կոնֆերանսը նրանց տվեց հատուկ փաստաթղթեր, որոնք պետք է ներկայացվեին համագումարին՝ իբրև մանդատ: Սակայն զանազան մեքենայութեալուների միջոցով, թիֆլիսում մենչիկևերին հաջողվեց չեղյալ համարել նրանց մանդատները:

Շահումյանը ստիպված եղավ վերադառնալ Լոռու և նոր կոնֆերանս հրավիրել: Կոնֆերանսը, որ ներկայացնում էր 926 անդամի, վերընտրեց նրանց և նոր մանդատներ տալով, հաստատեց կուսակցութեան համագումարի Բորչալուի կազմակերպութեան պատգամավորներ: Չկարողանալով տեղում չեղյալ հայտարարել կովկասյան բուշևիկների մանդատները, մենչևիկները, ինչպես նախորդ, այնպես էլ V համագումարում սկսեցին դարձյալ վիճարկել փաստաթղթերի իսկութեալունը, ենթարկելով դրանք կրկնակի քննութեան: Մենչևիկների առարկութեալուները, հատկապես Բորչալուի կազմակերպութեան պատգամավորների դեմ, պատճառաբանվում էր նրանով, որ այնտեղ իբր թե կազմակերպութեալուն չկա, որ սոցիալ-դեմոկրատական աշխատանքներ կատարել:

Ստ. Շահումյանը համագումարում հանդես եկավ մարտական ճառով, և մերկացնելով մենչևիկների վարքագիծը, ցույց տվեց այն աշխատանքը, որ կատարել էր ՌՍ ԴԲԿ Բորչալուի կազմակերպութեալունը:

1907թ. մարտին Լեջանում տեղի ունեցավ ՌՍ ԴԲԿ Բորչալուի կազմակերպութեան III կոնֆերանսը, որին մասնակցում էին 13 կազմակերպութեալուների ներկայացուցիչներ: Կոնֆերանսը քննարկեց կուսակցութեան մի շարք հարցեր, ինչպես և ընդունեց առանձին գործերին վերաբերող կոնկրետ որոշումներ: Կոնֆերանսից հետո հրատարակվեց «Ընկերներ» թուռցիկը, որով ազդարարվում էր տեղի ունեցած

<sup>1</sup> Շահումյան Առ., ԵԼԺ, հ. 1, Ե., 1975, էջ 408-409:

կոնֆերանսի մասին և Հայտնվում այն որոշումները, որոնք ընդունվել էին Լեջանում:

1907թ. աշնանը Հաղպատի ձորի այգիներում տեղի ունեցավ ՌՍԴԲԿ Բորչալուի կազմակերպութայն IV կոնֆերանսը: Մասնակցում էին կազմակերպութայն 35 տեղական բջիջներից 55 մարդ՝ վճռական ձայնով:

Այդ տարիներին, ինչպես ամբողջ երկրում, այնպես էլ Անդրկովկասում մոլեգնում էր ռեակցիան. կուսակցական կազմակերպությունների աշխատանքների համար ստեղծվել էին նոր դժվարություններ և բարդություններ: Կազմակերպությունները հարկադրված անցան խոր ընդհատակ: ՌՍԴԲԿ Բորչալուի կազմակերպութայն ղեկավար կենտրոնը՝ կոմիտեն իր գոյությունը պահպանեց մինչև 1909թ.: Հետագայում քաղաքական Հայածանքների սաստկացման պատճառով դավառական կոմիտեն դադարեցրեց աշխատանքները: Գործում էին միայն առանձին տեղական կազմակերպություններ:

1905-1907թթ. ծավալված բանվորական շարժումները, դյուղացիական ելույթները, զինվորական հուզումները ստիպեցին կառավարութայնը օրենք հրատարակել համառուսաստանյան բարձրագույն օրենսդիր ատյան՝ Պետական Դումա հրավիրելու մասին: 1906թ. ապրիլին բացվեց առաջին պետական դուման, որը, սակայն անհնազանդ գտնվեց իշխանությունների նկատմամբ, ուստի այն ցրվեց: 1907թ. փետրվարին բացվեց երկրորդ դուման, որն ավելի հեղափոխական դուրս եկավ, ուստի կառավարությունը 1907թ. հունիսի 3-ին օրենք հրատարակեց այն ցրելու և նրորդ դումա հրավիրելու մասին: Դրանով կառավարութայն ղեկավար Պ. Ստոլիպինը պետական հեղաշրջում կատարեց, որովհետև կառավարությունը խախտելով Դումայի օրենսդիր իրավունքը, օրենք հրատարակեց առանց նրա գիտութայն:

1907թ. հունիսերեքյան հեղաշրջումով ավարտվեց Ռուսաստանի առաջին ժողովրդական հեղափոխությունը:

1905-1907թթ. ռուսաստանյան առաջին հեղափոխությունը բացարձակ միապետութայն դեմ ուղղված ժողովրդական ամենամեծ հուզումն էր 1789թ. Ֆրանսիական մեծ հեղափոխությունից հետո:

Մինչև վերջերս, ոչ շատ վաղ անցյալում, հեղափոխութայն պարտութայն Հիմնական պատճառը համարվում էր այն, որ չհաջողվեց միասնական հեղափոխական հոսանքի մեջ միավորել բանվորների, գյուղացիների և զինվորների ելույթները:

Այժմ, մեր երկրի ժողովուրդների անցած տասնամյակների պատմութայն քննական վերլուծությունը, վերակառուցման ու բացախոսութայն ընձեռած պայմաններում նոր փաստաթղթերի հրապարակումները, ղեգմատիկական մտածողութայն աստիճանական հաղթահարումը ստիպում է պատմաբաններին Ռուսաստանի անկյունադար-

ձային շատ իրադարձությունների մասին մեր ունեցած նախկին գնահատականներին մոտենալ վերապահությամբ:

Նախ և առաջ որքանով էր հիմնավորված մեկ առանձին վերցրած երկրում, այն էլ Ռուսաստանի նման Հետամնաց երկրում, սոցիալիստական Հեղափոխության Հաղթանակի Հնարավորությունը: Եվ այս գլխավոր հարցից բխող սոցիալ-դեմոկրատ մեծամասնականների /բոլշևիկների/ համոզմունքը, որ ռուսական առաջին բուրժուա-դեմոկրատական Հեղափոխության հեղեղները պետք է լինի պրոլետարիատը: Այս հարցի հետ առնչվում է նաև 1905թ. հոկտեմբերի 17-ի մանիֆեստից հետո, դեկտեմբերին դինված ապստամբությունից դիմելու լենինյանների կոչը, որին խիստ դեմ էր Գ. Ն. Պլեխանովը: Երկրորդ բուրժուա-դեմոկրատական Հեղափոխության նախապատրաստման տարիներին սոցիալ-դեմոկրատական կուսակցության տարբեր ֆրակցիաների մեջ բուռն փիճաբանությունների տեղիք է տալիս Հեղափոխության մեջ կուսակցության ղեկավար դերի հարցը. սոցիալ-դեմոկրատական կուսակցության փոքրամասնական ներկայացուցիչների գալի մասը պտնում էր, որ հասունացող Հեղափոխության հիգենները պետք է լինի բուրժուազիան: Այս հարցի վրա խորհում էին ոչ միայն փոքրամասնականները: Նույնիսկ բոլշևիկյան կոհորտայի այնպիսի ականավոր ներկայացուցիչ, ինչպիսին Բոգդան Կոուլյանցն էր, ուներ ուրույն կարծիք: 1905թ. նոյեմբերին «Новая жизнь» թերթի N 3-ում «Բանվորների դեպուտատների Սովետը, թե՞ կուսակցությունը» հոդվածում քաղաքականության մեջ զերակայությունը փորձում էր տալ սովետներին: Վ. Ի. Լենինը, որն ընդհանրապես խիստ էր վերաբերվում դադափարական շեղումներ թույլ տված ընկերներին, երբեմն-երբեմն ցուցաբերում էր նաև մտավորականի լայնախոհություն, մեղմ դիտողություն էր անում Հեղինակին, զրելով, որ ընկեր Ռադինը /Կոուլյանցը/ սխալվում է, որ հարցը պետք է դնել այսպես... և բանվորների դեպուտատների Սովետը և կուսակցությունը»:

Սակայն նշանավոր Հեղափոխականի այսպես կոչված «սխալները» պատահական երևույթներ չէին: Հեղափոխության մեջ կուսակցության ղեկավար դերի հարցը նա քննում է նաև 1911 թվականին «Наша партия» թերթում հրատարակած «Հանրազուստներից մեկը», «Հինը և նորը» հոդվածներում՝ և կասկածի տակ էր առնում կուսակցության ավանգարդային դերի հարցը գալիք Հեղափոխության մեջ,

<sup>1</sup> Լենին Վ. Ի., Երկեր, հ. 10, էջ 5, 6, տես նաև Խ. Գ. Բարսեղյան, Մարքսիզմի տարածումը Քայաստանում, գիրք երկրորդ, Ե., 1975, էջ 216-217: Վ. Ի. Լենինի մեծախոյուքյան մասին հայտնի է նաև այն փաստը, որ երբ նրան լուր է հասնում, թե 1918թ. նշանավոր մեծիկ Մարտովը անլեզավ կերպով արտասահմանից եկել էր Մոսկվա և Ձերժոմսկին պատրաստվում էր վերջինիս ձերբակալել, բոլշևիկների առաջնորդը փառաբերելով ընկերների միջոցով Մարտովին փախցնել է տալիս արտասահման: Տես Է. Կազակիչի հոդվածը «Վուրոսի խտորի» հանդեսի 1957թ. 2-ու մ:

<sup>2</sup> Բարսեղյան Խ., նշվ. աշխ., էջ 219-220:

այսինքն հարուժ է լիկվիդատորությանը: Հայտնի է, որ ՌՍԴԲԿ կուսակցության պատմության մեջ լիկվիդատորությունը մի ուղղություն էր, որի սխալ լինելը չապացուցվեց մեր երկրի անցած տասնամյակների ընթացքում: Եվ, ընդհակառակը, պատմական իրադարձությունների վերիմաստավորման արդի ժամանակներն ապացուցեցին Բողոքան Կնունյանցի նման նշանավոր անհատականությունների իրատես և հեռատես լինելը:

ՍՈՑԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՀԱՅ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ «ՍՊԵՑԻՖԻԿՆԵՐ»

19-րդ դարի վերջը և 20-րդ դարի սկզբները համընդհանուր և մասնավորապես Ռուսաստանի պատմության մասշտաբով նշանավոր-վեցին խոշոր իրադարձություններով: Այդ շրջանում համաշխարհային տնտեսության ու քաղաքականության մեջ տեղի ունեցած որակական փոփոխությունները սոցիալիստները բնութագրեցին որպես իմպերիալիզմի փուլ:

Տարբեր երկրների սոցիալ-տնտեսական ու հասարակական-քաղաքական կյանքի բարդ ու հակասական զարգացմանը զուգընթաց, ասուլարեղ իջան տասնյակ ու հարյուրավոր քաղաքական կուսակցություններ և կազմակերպություններ, որոնք փորձում էին պատասխան տալ ու լուծում գտնել ազգերին ու լայն հասարակաշերտերին հուզող կենսական շատ հիմնահարցերի:

Այդ նույն ժամանակամիջոցում հայ հասարակական-քաղաքական մտքի կիրճակետը շարունակում էր մնալ արևմտահայերի ազատագրության գերխնդիրը՝ Հայկական հարցը, որի իրագործման համար մղվող պայքարը տարբեր մարտավարություններ կազմակերպում և ուղղություն էին տալիս հայ ազգային քաղաքական կուսակցությունները՝ Հ. Հ. Դաշնակցությունը, Հնչակյանները՝ իրենց երկու հատվածներով՝ Հին և Վերակազմյալ և խիստ թուլացած Արմենականները: Միաժամանակ, Ռուսաստանի ու Անդրկովկասի /ուսսահայ/ հայ հասարակական, մտավորական ուսյալ շրջանակներում ձգողական զգալի ուժ էր դարձել սոցիալիստական-մարքսիստական ուսմունքը: Ներմուծվելով Արևմտյան Եվրոպայից ու Ռուսաստանից՝ այն սկսեց արձագանք գտնել նաև հայ իրականության մեջ իր բոլոր դրսևորումներով՝ արմատական /բոլշևիկյան/, չափավոր/մեղմ/բոլշևիկյան/, ազգային-սոցիալիստական /հնչակյան/, էսէռական և այլ գունավորումներով: Սոցիալիզմի գաղափարական հենքի վրա հանդես եկան սոցիալ-դեմոկրատական ու սոցիալիստական բնույթի տարբեր կուսակցություններ և կազմակերպություններ, որոնք ունեին ծրագրային, կազմակերպական ու մարտավարական տարբեր յուրահատկություններ ու դրսևորումներ: Հատկանշական է, որ ճնշված ժողովուրդների շրջանում սոցիալիզմի գաղափարները և ազգային-ազատագրական պայքարը հաճախ հանդես էին գալիս իրար հետ կապված<sup>1</sup>:

<sup>1</sup> Г. А. Галоян. Рабочее движение и национальный вопрос в Закавказье 1900-1922. Ереван. 1969. с. X.

Նկատենք, որ սոցիալիզմի դասակարգային-մարքսիստական գաղափարախոսութիւնը բուն Հայաստանում թե Արևելահայաստանում և թե առավել ևս Արևմտահայաստանում իր առաջացման ու տարածման համար բավարար սոցիալական հող ու նախադրյալներ չի ունեցել: Խնդիրն այն է, որ բուն Հայաստանում, ըստ էութեան, գոյութիւն չի ունեցել այդ գաղափարախոսութիւնը կրող հիմնական դասակարգը բանվոր դասակարգը: Սակայն մյուս կողմից չանտեսենք, որ նման գաղափարակիր կազմակերպութիւններ կարող էին ստեղծվել Հայաստանից դուրս հայահոծ բանվորաշատ շրջաններում, ինչպիսին էր, օրինակ, նախթարդունաբերական Բաքուն, ուր դարասկզբին աշխատում էր մի քանի տասնյակ հազար հայ բանվոր: Ռուսաստանում և Անդրկովկասում նոր թափ ստացավ հեղափոխական շարժումը, գործադուլային սլայքարը: Միաժամանակ ուժեղացավ ազգային շրջանների պայքարը ցարիզմի հալածական ազգային-գաղութային քաղաքականութեան դեմ: Այդպիսով, հիմնականում արտաքին և մասամբ ներքին գործոնների ազդեցութեամբ հայ մտավորականութեան շրջանում արմատներ ձգեցին սոցիալիզմի գաղափարները:

Ընեց այդ դրսեկ գաղափարների ազդեցութեան հետևանքով դարաշնորհն Հ. Հ. Դաշնակցութիւնն կուսակցութիւնից՝ ձախից, անջատվեց երիտասարդ դաշնակցականների մի խումբ, որի մի մասը մտավ Ռուսական սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցութեան /ՌՍ ԴԲԿ/ մեջ /Ստ. Շահումյան, Ա. Զուբարյան, Ա. Մելիքյան, Ալ. Բեկզադյան և ուրիշներ/, իսկ մյուս մասը ժնկում և Բաքվում /Բ. Իշխանյան, Ղ. Տեր-Ղազարյան, Տ. Իսախանյան, Ալ. Ծատուրյան /Ռուբենի/, Պ. Մակինցյան, Ալ. Մյասնիկյան, Վ. Տերյան, Ա. Մուսիկյան և ուրիշներ, հետագայում սրանց մի մասը նույնպես մտավ ՌՍ ԴԲԿ-ի մեջ/ կազմեց ՌՍ ԴԲԿ-ից առանձին, ինքնուրույն ,,Սոցիալ-դեմոկրատական բանվորական հայ կազմակերպութիւն,, /Ս ԴԲԿԿ/, որին անվանեցին ,,սպեցիֆիկներ,,: Ի դեպ, նախկին Դաշնակցականների այս խումբը, հեռանալով կուսակցութիւնից, հետագայում դարձավ Դաշնակցութեան անհաշտ հակառակորդներից մեկը: Այդ անջատումը տեղի ունեցավ 1903թ. ՌՍ ԴԲԿ 2-րդ համագումարից ու բուլշևիզմի առաջացումից անմիջապես հետո:

Երիտասարդ դաշնակցական մտավորականների այդ խումբը առաջարկութիւն արեց ՀՀԴ-ին՝ մասնակցել Ռուսաստանյան ազատագրական-հեղափոխական շարժումներին, այսինքն՝ կռվել երկու ճակատով: Սակայն առաջարկը մերժվեց, քանի որ այն կարող էր ջլատել կուսակցութեան ուժերը և վնասել արևմտահայ դատին: Դրանից հետո խումբն անջատվեց Դաշնակցութիւնից և հիմք դրեց Ս ԴԲԿԿ: Այդուհանդերձ, քիչ ավելի ուշ Դաշնակցութիւնը որովորեց սոցիալիզմի

<sup>1</sup> Վեմ, Փարիզ, 1933, քիվ 1, էջ 103:

վարդապետութիւնը, մշակեց Կովկասում ազգային և սոցիալ-դասակարգային պայքարի գործունէութեան հատուկ նախադիմ և սկսեց գործել նաև ս.ու.սաստանդան ճակատում:

Կազմակերպութեան հիմնադրման ստույգ տեղի ու թվականի մասին պատմական գրականութեան մեջ կարելի է հանդիպել տարակարծութիւններին: Ոմանք գտնում են, որ ՍԴԴԷԿ հիմնվել է ժնևում, իսկ ոմանք՝ Բաքվում. կան հեղինակներ, որոնք կազմակերպութեան հիմնադրման տարեթիվը 1903-ի փոխարեն ընդունում են 1904թ. և այլն: Այս տարակարծութիւնների համար հիմք է ծառայել այն հանգամանքը, որ սոցիալ-դեմոկրատական մարքսիստական հայացքներ ունեցող այդ խմբի անջատումը Դաշնակցութիւնից տեղի է ունեցել գրեթէ միաժամանակ և՛ ժնևում, և՛ Անդրկովկասում՝ բանվորաշատ Բաքվում: Բաքվի հասարակական-քաղաքական կյանքին քաջ ծանոթ ու մասնակից, ՀՀԴ գործիչ Ա. Գյուլխանբանյանն իր հուշերում գրում է, որ սոցիալ-դեմոկրատների անջատումը Դաշնակցութիւնից սկսվեց ժնևից: Այն տեղի ունեցավ 1903 սեպտեմբերին: Հեռացողներից էին Ղ.Տեր-Ղազարյանը, Հ.Յուզբաշյանը, Տ.Խախանյանը: Այդ անջատումը չկարողացավ կասեցնել նաև ժնև մեկնած Քր. Միքայելյանը: Դաշնակցութիւն կուսակցութիւնից հեռացածները միավորվեցին 1900թ. ի վեր ժնևում սոցիալիստական լայն քարոզչութիւն տանող, նախկին Հնչակյան Երվանդ Պալյանի և նրա խմբապրած «Հանդես», ամսագրի շուրջ ու ստեղծեցին «Հայ սոցիալ-դեմոկրատիա», մարքսիզմին հետևող խումբը:

Հաջորդ ամսին՝ 1903թ. հոկտեմբերին, ժնևյան իրենց համակիրներին հետ կապեր հաստատելով, ՀՀԴ Բաքվի մարմնից հեռացան մարքսիստական ըմբռնումներ ունեցող երիտասարդ դաշնակցական մտավորականների ևս մի խումբ՝ Ն. Տեր-Ղազարյանը, Ալ. Մատուրյանը և ուրիշներ: «Երիտասարդ Ալ. Մատուրյանը, վերհիշում է նրա հայրենակից ու զտարնկեր Ալ. Հովհաննիսյանը, Շուշիից փոխադրվելով Բաքու, սկզբում հարում է դաշնակցութեանը, իսկ 1903թ. հոկտեմբերին արդեն մի քանի հայ մարքսիստների հետ լույս է ընծայում Սոցիալ-դեմոկրատական բանվորական հայ կազմակերպութեան անդրաձայնիկ մանիֆեստը»: Հենց այդ ժամանակ էլ ժնևի «Հայ սոցիալ-դեմոկրատիա» խումբը ձուլվում է Բաքվի ՍԴԴԷԿ հետ և զրանով ամալաւում կազմակերպութեան ձև ամբողջումը:

<sup>1</sup> Հայ ժողովրդի պատմություն հ.6, Ե., 1981, էջ 364. Բարսեղյան Խ.Յ., Սարքիզի սուրբնու մը Հայաստանում /1880-ական թթ- 1904թ./ գիրք 1, Ե., 1967, էջ 358-359, գիրք 2, Ե., 1975, էջ 556. Հայկական Սովետական հանրագիտարան, հ.11, Ե., 1985, էջ 27. Программы ро.интересных партия в России, Москва, 1917, с. 22 и др.

<sup>2</sup> Հայրենիք, Բոստոն, 1925, թիվ 4, էջ 110:

<sup>3</sup> Վեմ, Փարիզ, 1933, թիվ 1, էջ 103, Հայրենիք, 1925, թիվ 4, էջ 110-111, Սոսալյան,

Դաշնակցու թյան կրիգիսը, 1907, էջ 51:

<sup>4</sup> Հովհաննիսյան Ա., Երկու բնութագիր Աս. Եսաիու մյան և Ալ. Ռուբինի, Ե., 1927, էջ 22:

Դ. Անանուները հաստատում է, որ ՍԴԲՀԿ հիմքը դրվել է 1903թ. Հոկտեմբերին, Բաքվում՝ Հ Հ Դ-ից հեռացած մի խումբ մտավորականների կողմից<sup>1</sup>։ Ս. Կասյանը «Ապեցիֆիկներին, նվիրված իր հատուկ աշխատության մեջ գրում էր, որ ՍԴԲՀԿ երևան է եկել 1903թ. Հոկտեմբերին<sup>2</sup>։ Սա այն շրջանն էր, երբ ՌՍԴԲԿ 2-րդ համագումարից անմիջապես հետո սկսվել էին կազմակերպական պրոպագանդայի և դադարափարաքաղաքական սուբ պայքարն այդ կուսակցության երկու թևերի՝ բուլշևիկ-լենինյանների ու մենշևիկ-մարտովականների միջև<sup>3</sup>։ Հենց այդ ժամանակ էլ հայ սոցիալ-դեմոկրատների մի փոքր խումբը հրատարակեց իր մանիֆեստը, որի գլխավոր միտքն էր. «Կազմակերպել ու դաստիարակել հայ պրոլետարիատը և ղեկավարել նրա կռիվը»<sup>4</sup>։ Այդ ժամանակ էլ առաջացավ ՍԴԲՀԿ։ Այս կազմակերպության 1903թ. Հոկտեմբերին ձևավորելու մասին է փաստում իր իսկ օրդան «Ձայնը»<sup>5</sup>։

Այսպիսով, վերը ասվածներից կարելի է եզրակացնել, որ խմբի՝ Դաշնակցութունից անջատման խնդրումը սկսվել է 1903թ. սկզբներից ժնեում՝ ռուսահայ ուսանողության շրջանում, իսկ այդ հոսանքի կազմակերպական ձևավորումը կատարվել է նույն թվականի Հոկտեմբերին Բաքվում, վկան նրա հրատարակած մանիֆեստը։ Ավելացնենք նաև, որ նոր ձևավորված կազմակերպության մեջ /բացի դաշնակցականներից/ մտավ Հնչակյան կուսակցութունից հեռացած մի փոքր խումբը<sup>6</sup>։ Կազմակերպության դադարափարական ձևավորման գործում հարկ է առանձնահատուկ ընդգծել նախկին Հնչակյան Երվանդ Պալյանի ու նրա հրատարակած «Հանդես» ամսագրի խաղացած դերը<sup>7</sup>։

ՍԴԲՀԿ հիմնադիր-դադարափարախոսներն էին Բախչի Իշխանյանը, Ալեքսանդր Ծատուրյանը /Ռուբենին/, Երվանդ Պալյանը, Ղազար և Նարիման Տեր-Ղազարյանները, Գարեգին Կոզիկյանը /Եսայեմ/, Տիրգրան Իսախանյանը, 1905 թվականից՝ Դավիթ Տեր-Դանիելյանը /Անանուև/ և ուրիշներ<sup>8</sup>։ Տարածայնութունների պատճառով կազմակերպութունից հեռացավ նրա հիմնադիրներից մեկը՝ Եր. Պալյանը<sup>9</sup>։

ՍԴԲՀԿ-ն պրոլետարիատի դասակարգային-մաքսիստական դադարափարոսությամբ առաջնորդող կազմակերպութուն էր, որը, սակայն, կազմակերպական առումով նախընտրեց Բուլնդի կազմակերպական սկզբունքը, այսինքն՝ յուրաքանչյուր ազգության բանվոր դասակարգի ազգային հատկանիշով կազմակերպումը<sup>10</sup>։ Հայ պրոլետարիատի ինքնուրույն կազմակերպութուն անհրաժեշտութունը Ե. Պալյանը մասնավորապես բացատրում էր այն հանգամանքով, որ հայ կազմա-

<sup>1</sup> Անանուև Դ., Ռուսահայերի հասարակական զարգացումը /1901-1918/, հ. 3, Վենետիկ, 1926, էջ 93։

<sup>2</sup> Կասյան Ա., Ապեցիֆիկները և սպեցիֆիզմը, Թիֆլիս, 1928, էջ 15-16։

<sup>3</sup> Ձայն, Թիֆլիս, 22 հոկտեմբերի 1906թ. թիվ 4, էջ 55-56։

<sup>4</sup> Ռ. Խան-Ազատ, Չայ հեղափոխականի հուշերից /Քայրենիք, 1929, թիվ 6, էջ 109։

<sup>5</sup> Ավետիսյան Վ. Ա., Չայ հասարակական մարզի զարգացման մարտա-լենինյան փուլի սկզբնավորումը, Ե., 1976, էջ 308-312։

կերպությունը պետք է իր ձևաբը վերցնեն մայրենի լեզվով սոցիալիստական գրականության թարգմանությունը և հրատարակությունը: Ի տարբերություն 1902թ. հոկտեմբերին երևան եկած լենինյան-խսկրայական ուղղության մեկ այլ, «Հայ սոցիալ-դեմոկրատների միության», և նրա օրգան, «Պրոլետարիատի», որը կողմնակից էր պրոլետարիատի անկախ ազգությունից կազմակերպման կենտրոնաձիգ ինտերնացիոնալիստական սկզբունքին, զրան հակառակ նորաստեղծ ՍԴԲՀԿ ավստրիական սոցիալիստների և Ռուսաստանի բունդականների նման դառնում էր, որ Կովկասի յուրաքանչյուր ազգության բանվոր դասակարգը պիտի ունենա իր առանձին կազմակերպությունը, որը ֆեդերատիվ /պաշնային/ սկզբունքով կմտնի ռուսական ընդհանուր սոցիալ-դեմոկրատական կուսակցության մեջ: Հավելենք, որ 1898թ. ավստրիական սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը ձևավորվել էր կազմակերպական այդ սկզբունքով, այն է՝ այդ կուսակցության մեջ մտնում էին վեցը ազգությունների ինքնավար կազմակերպություններ: Ռուսաստանում նույնպիսի կազմակերպական ձև նախընտրեց Ռուսաստանի, Լեհաստանի և Լիտվիայի հրեական սոցիալ-դեմոկրատական բանվորական միությունը /Բունդը/: Այդպիսի կազմակերպական ձև որդեգրեց նաև ՍԴԲՀԿ-ը, որն էլ դարձավ Հայ բանվորների այս կազմակերպության ամենաբնորոշ կողմը: Կառուցվածքային այդ սկզբունքը կազմակերպությունը հիմնավորում էր նրանով, որ Հայ հասարակությունն ունի իր յուրահատուկ սպեցիֆիկ պայմանները, հատուկ խնդիրներն ու պատմությունը և չպետք է պրոլետարիատին անջատել իրեն շրջապատող ազգային-հասարակական կյանքից:

1904թ. սկզբներին հրատարակվեց նորաստեղծ կազմակերպության օրգան «Բանվոր» ամսագիրը, որից լույս է տեսել ընդամենը երկու համար: Խմբագրակազմի աշխատանքներին մասնակցում է Գ. Կողիկյանը: «Բանվորի» միջոցով ավելի են հստակեցվում կազմակերպության Հայաքցները թե՛ տեսական-գաղափարախոսական հարցերում և թե՛ կազմակերպական: «Բանվորում» ավելի էր որոշակիացվում Հայ պրոլետարիատի կազմակերպական կառուցվածքի ազգային-տարածքային ձևը: Ամսագրի պատկերացմամբ կովկասահայ պրոլետարիատը պետք է ունենար իր առանձին կազմակերպությունը, տաճկահայը՝ առանձին, ամերիկահայը՝ առանձին և այլն, քանզի, իբր, Հայ ժողովրդի շահերը, ըստ իր բնակչության երկրների, տարբերվում են:

1904թ. մայիսից Բաքվում սկսում է լույս տեսնել կազմակերպության պաշտոնական օրգան «Սոցիալիստ» երկշարաթաթերթը, որը, մի քանի համար ընդհատակյա պայմաններում հրատարակվելուց հետո ցարական հետապնդումների պատճառով հաջորդ տարվանից փո-

<sup>1</sup> Պայան Եր., Հայ սոցիալ-դեմոկրատ միությունը և իր «Պրոլետարիատ» օրգանը, Ռուսումբ, 1903, էջ 19:

<sup>2</sup> Բանվոր, ԺՆԸ, 1904, քիվ 1-2, էջ 10-14, 25:

խաղրվում է ժնև<sup>1</sup>: Թերթի համարները մեծ դժվարություններ էին հասնում Կովկաս: «Սոցիալիստի» շուրջ, համախմբված էին Ղազար Տեր-Ղազարյանը, Բախչի Իշխանյանը, Կարեզին Կոզիկյանը և ուրիշներ:

ՍԴԲՀԿ ժնևի կազմակերպությունը դարձավ նրա արտասահմանյան կոմիտեն, որը պաշտոնական հարաբերություններ էր իրականացնում Երկրորդ սոցիալիստական ինտերնացիոնալի բյուրոյի, ինչպես նաև եվրոպական մի շարք երկրների սոցիալ-դեմոկրատական կուսակցությունների հետ:

Քարոզչության ճանապարհով Հայ կազմակերպությունը առանձին խմբակներ է հիմնում Թիֆլիսում, Բաթումում, Շուշիում, Նուխիում և այլուր: 1903թ. նոյեմբերին Բուլղարիայի Ֆիլիպի քաղաքում հիմնվում է «Հայ սոցիալ-դեմոկրատների Ֆիլիպի» խումբը, որն իր գաղափարակցությունն է հայտնում ՍԴԲՀԿ-ին: Բիչ ուշ Հայ կազմակերպությունը իր խմբերն է հիմնում նաև Հայաստանում Ալեքսանդրապոլում, Երևանում, Էջմիածնում, Կարսում, Կաղզվանում, Ղարաբիլիսայում և այլն<sup>2</sup>: Կազմակերպությունը փոքր խմբեր է ունեցել նաև Ռուսաստանում՝ Նոր Նախիջևանում, Ստավրոպոլում, Աստրախանում, Սիմֆերոպոլում և ուրիշ վայրերում:

Ասկեց, որ կազմակերպությունը պատմություն մեջ հայտնի է «սպեցիֆիկներ» անունով: Սրանք այս անունը ստացել էին բոլշևիկների կողմից այն պատճառով, որ կազմակերպության գաղափարախոսները՝ որպես կանխադրույթ հաճախակի էին մատնանշում հայ իրականության և կյանքի յուրահատուկ /ուռսերեն՝ ,սպեցիֆիկ/, պայմանները:

ՀՍԴԲԿ ուռսահայ՝ մտավորականների կողմից ստեղծված սոցիալ-դեմոկրատական, մարքսիստական ուղղությունն էր, որի անդամների թիվը, չհաշված համակիրներին, հասնում էր մի քանի հարյուրի: Իրենց փոքրաթիվությունը պատճառով սրանք, նույնիսկ չհամարձակվեցին իրենց անվանել կուսակցություն<sup>3</sup>: Սոցիալ-դասակարգային կազմի տեսակետից, «սպեցիֆիկները», զուտ հայ բանվորական մարքսիստական կազմակերպություն էր, որը գործել է միմիայն հայ իրականության մեջ: Նրա ոչ ստվար շարքերում, բացի հայ բանվորներից, սրոշակի քանակ էին կազմում նաև տարբեր դրազմուռների մտավորականները: «Սպեցի-

<sup>1</sup> Հայաստանի Հանրապետության հասարակական-քաղաքական կազմակերպության 66-րդ կազմակերպության անունով կենտրոնական արխիվ /այսուհետև՝ ԳՂԿԿ ՊԿԱ/ ֆ. 1022, ց. 7, գ. 63, թ. 1, Չայն, Թիֆլիս, 22 հոկտեմբերի 1906թ. թիվ 4, էջ 56, 29 հոկտեմբերի 1906թ. թիվ 5, էջ 68-69:

<sup>2</sup> Չայն, 29 հոկտեմբերի 1906թ., թիվ 5, էջ 69:

<sup>3</sup> ԳՂԿԿ ՊԿԱ, ֆ. 1022, ց. 7, գ. 5, թ. 2, Բանվոր, Ժնև, 1904, թիվ 1-2, էջ 64:

<sup>4</sup> Չայն, 29 հոկտեմբերի 1906թ. թիվ 5, էջ 91:

<sup>5</sup> Շահու մյան Առ., Երևանի լիակատար ժողովածու /ԵԼԺ/, հ. 2, Ե., 1976, էջ 419:

<sup>6</sup> Հայրենիք, Բոստոն, 1925, թիվ 4, էջ 111-112

ֆիլկները» գաղափարախոսական, ծրագրային հարցերում գրեթե լիովին կանգնած էին արևմտանվորապական սոցիալ-դեմոկրատների և ռուս-մենչևիկների դիրքերում: Նրանք համար գաղափարական առաջնորդներ են եղել Կ.Մարքսը, Կ. Կառլսկին, Գ. Պլեխանովը, Յու. Մարտովը, Պ. Լաֆարգը, Ժ. Գեղը, Ժ. Ժորեսը և այլ մարքսիստ-սոցիալիստներ:

Կազմակերպական կառուցվածքի տեսանկյունից, ինչպես արդեն ասվեց, նրանք խիստ նմանվում ու գրեթե նույնացվում էին Ռուսաստանի, Լեհաստանի և Լիտվայի հրեական սոցիալ-դեմոկրատական բանվորական միությանը՝ «Բուռնդին»: Այս առնչությամբ կարծում ենք, որ համոզիչ է Հայտնի գրականագետ ու գաղափարախոս Արտաշես Կարինյանի, Նախկին մենչևիկ Միմոնիկ Փիրումյանի և մյուսների ժամանակին արտահայտած այն տեսակետը, թե «սպեցիֆիկները» եղել են նույն բուլչևիկները: Նախկին «Սպեցիֆիկ» Ա. Կարինյանը /Նա մինչև 1910թ. եղել է ՍԴԲՀԿ շարքերում/ այդ միտքը վարդացել է հավանաբար այն դիտավորութամբ, որպեսզի նույնացնելով «սպեցիֆիկներին» ու բուլչևիկներին, դրանով իսկ արդարացի իր սպեցիֆիկյան անցյալը:

Բուռնդական կազմակերպական կառուցվածքի հետևողական ջատագովներից էր հատկապես Ալ. Ռուբենին: Նա ոչ միայն դեմ էր մեծամասնականների կենտրոնաձիգ կազմակերպական համակարգին և դրան հակառակ՝ պաշտպանում էր ՌՍԴԲԿ մեջ մտնելու բուռնդականֆեդերալիստական սկզբունքը, դեռ ավելին, գտնում էր, որ սոցիալ-դեմոկրատիան իր պրոպագանդայի առաջին շրջանում առհասարակ չպետք է գբաղվի կազմակերպչական խնդիրներով, այլ միայն պետք է տանի սոցիալիստական գաղափարների քարոզչություն: Ըստ Ռուբենու՝ պրոլետարիատի կազմակերպության ստեղծման խնդիրը անհրաժեշտ կդառնա այն ժամանակ, երբ սոցիալիզմի գաղափարները բավարար հող կդառնեն բանվոր դասակարգի մեջ: Ռուբենին տրամաբանական ու անհրաժեշտ էր համարում Ռուսաստանի նման հսկայական և բազմազգ երկրի պրոլետարիատի կազմակերպումը հրեական բուռնդի կազմակերպության սկզբունքով: Հայտնի է, որ ամբողջ Ռուսաստանով մեկ ցրված հրեաներն իրենց բանվորական կազմակերպությունները հիմնել էին զուտ ազգային հատկանիշով: Եվ սա ուներ իր պատճառներն ու տրամաբանությունը, քանզի՝ հրեաներին հատուկ էին բնորոշված ազգային-կրոնական առանձնահատկություններ, և Ռուսաստանում նրանք չուներին տարածքային որևէ բնոջանրություն: Հայ սոցիալ-դեմոկրատական նորաստեղծ այս կազմակերպությունը ևս կարծում էր, որ հայերն ու հայ բանվորությունը, ինչպես ցանկացած

<sup>1</sup> Կարինյան Ալ., Ալ. Մարտու Գի-Սյանցիկյան, Մոսկվա, 1925, էջ 14-15, Ա. Կայան, նշվ. աշխ., էջ 131-133, 140:

<sup>2</sup> Կյանց, Թիֆլիս, 1 հուլիսի, 1906թ. թիվ 16, էջ 247:

ազգի բանվոր, ունեն իրենց կյանքի, պայքարի և նպատակների առանձնահատուկությունները: Օրինակ, նրանք ցույց էին տալիս, որ հայ բանվորությունը ցրված է ամբողջ Կովկասով մեկ /Բաքու, Թիֆլիս, Բաթում, Գրոզնի, Արմավիր և այլն/, չհաշված արտերկրի գաղթավայրերը, որ հայ ժողովուրդն ունի Հայկական հարց, գտնվում է աշխարհաքաղաքական և ազգային-մշակութային յուրահատուկ պայմաններում և այլն: Դրանից ելնելով նրանք գտնում էին, որ հայ բանվորին չսկսեք է նույնացնել մյուս ազգերի բանվորների հետ, քանզի յուրահատուկ են նրա կարիքները, պահանջներն ու ձգտումները, անգամ հոգեբանությունը: Բացի այդ, յուրաքանչյուր ազգի ներսում գոյություն ունեն ասարբեր հոսանքներ, ազգայնականություն՝ յան տարբեր դրսևորումներ, ուստի ամեն մի ազգություն պրոլետարիատի կազմակերպությունը ինքը պետք է կազմակերպի ու ղեկավարի իր բանվորության պայքարն ազգայնականություն ընդ որ դրսևորումների դեմ: «...Ամեն մի ազգություն պրոլետարիատի կռիվը,- գրում էր «սպեցիֆիկներին» հայտնի տեսաբան Ալ. Ռուբենին,- այդ տեսակետից տարբեր է մյուս ազգություն բանվորության կռիվից այնքան, որքան նացիոնալիզմի արտահայտությունները, տարբեր ազգությունների մեջ, տարբեր են»: Ալ. Ռուբենու կարծիքով կովկասահայ բանվորը ենթարկվում էր հայ ազգայնական շարժման ուժեղ ներգործությունը, ուստի անհրաժեշտ էր ինքնուրույն հայ բանվորական կազմակերպություն ստեղծել, որպեսզի զրա միջոցով հայ բանվորությունը հեռու մնար ազգայնական շարժման ազդեցությունից: Այստեղից էլ կազմակերպություն հիմնադիրները գտնում էին, որ ՍԴԲԿ պետք է կազմավորվի ազգային սկզբունքով և ՌՍԴԲԿ հետ կապվի ֆեդերատիվ /պաշտպան/ հիմունքներով:

Նիշեցնենք, որ բացի Բուկուրից և հայ «սպեցիֆիկներին» կազմակերպական նման կառուցվածք ընտրեցին նաև լատիշական, լեհական և ուկրաինական սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունները: Այս կազմակերպությունները կազմակերպական առումով ասակենտրոն էին, այսինքն պաշտպանում էին բանվոր դասակարգի ազգային կյանքի չբջանակներում կազմակերպվելու և ինքնավար գործելու սկզբունքը: Սրանց գաղափարախոսները գտնում էին, որ Ռուսաստանի նման հսկայածավալ ու բազմազգ երկրում սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների ազգային սկզբունքով կառուցումը միանգամայն անհրաժեշտ ձև է, որպիսին վաղուց ի վեր կիրառվում էր Ալիստրո-Հունգարիայում:

Ի դեպ, սպեցիֆիկ-բուկուրիական կազմակերպական կառուցվածքով է առաջնորդվել նաև 1918թ. սկզբներին Թիֆլիսում հիմնված,

<sup>1</sup> Կյանք, Թիֆլիս, 1 հուլիսի, 1906թ. թիվ 16, էջ 247:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 248:

<sup>3</sup> ԳԳՉԿԳ ԳԿԱ, ֆ. 1022, ց. 7, գ. 68, ք. 1:

այսպես կոչված Հայաստանի կոմունիստական կուսակցությունը: Գր. Վարդանյանի, Գ. Հայկունու, Հ. Հովսեփյանի գլխավորութեամբ հիմնված այս կուսակցությունը կազմակերպական այդ սկզբունքով աշխատում էր բացառապես Կովկասի արևմտահայ գաղթականության մեջ: Բայց սրա գործունեությունը երկար չտևեց: Տեսնելով, որ այս կազմակերպությունը պործում է ոչ թե տարածքային, ինտերնացիոնալ, այլ «սպեցիֆիկյան» ազգային-էթնիկական սկզբունքով, ՌԿԿ Կովկասյան երկրային կոմիտեն բազասական դիրք զբաղեցրեց Գ. Հայկունու կոմկուսի նկատմամբ: Շուտով 1919-1920թթ. վերջ արվեց Ս. Կասյանի բնորոշմամբ «սպեցիֆիկյան այդ ռեցիզիվին»:

Այսպիսով, «սպեցիֆիկները» ժխտում էին բոլշևիկների հռչակած «պրոլետարական ինտերնացիոնալիզմի» և կուսակցության կազմակերպական «ցենտրալիզմի» սկզբունքները: Եվ պետք է ասել, որ մոսկեցուկների ու պորձելակերպի նման կարվածքում նրանք, մեծամասնական-լենինյանների համեմատությամբ ավելի ճիշտ էին վարվում, երբ ձգտում էին Հայ բանվորին հեռու պահել ինտերնացիոնալիզմի կեղծ ու անորոշ կարգախոսներից և նրան դնել գործնական ընկերային-դասակարգային սյայքարի ուղու վրա: Նրանք, համերաշխվելով մենչևիկ մարտավականներին, պաշտպանում էին կուսակազմակերպությունների գործունեության ոչ կենտրոնաձիգ /ապակենտրոն/ ներքևից-վերև ենթարկվածության ինքնավար /ավտոնոմ/ սկզբունքը, սկզբունք, որը բոլշևիկ-լենինյանները սրակեցին որպես մանրբուրժուական անարխիզմ: Այս և այլ պատճառներով «սպեցիֆիկները» Հայ ազգային կուսակցություններին գրեթե համահավասար, ուժեղ հարվածի թիրախ դարձան բոլշևիկների կողմից: Վերջիններս պնդում էին, որ բանվորների ազգային սկզբունքով կազմակերպումը մեկուսացնում է Հայ, ուստի, վրացի, հրեա, թուրք և այլ ազգի բանվորներին իրարից և դրանով իսկ մնասում Անդրկովկասի բազմազգ ժողովուրդների դասակարգային ինքնավարականության աճին: Այս իմաստով Հայ բոլշևիկ-լենինյաններ Բ. Կոնյանցը, Ստ. Շահումյանը, Ս. Սպանդարյանը, Ս. Կասյանը, Ա. Մալոյանը և ուրիշներ իրենց հակասպեցիֆիկյան քննադատությունների ժամանակ առանձնապես էական տարբերություն չէին տեսնում «սպեցիֆիկների» և ազգային տիպի կուսակցությունների միջև: Եթե Հայ բոլշևիկները «սպեցիֆիկներին» որակում էին որպես «ազգայնական-մեջհանական և ինտելիգենտական» կազմակերպություն, ապա «սպեցիֆիկներին» էլ իրենց հերթին համանման որակումներ էին տալիս Հայ ազգային կուսակցություններին:

<sup>1</sup> Կասյան Ա, նշվ. աշխ., էջ 21-22, Մուսլյան Ա., Գողթմեթ և ճանք, Ե., 1961, էջ 325:

<sup>2</sup> Կասյան Ա, նշվ. աշխ., էջ 5:

<sup>3</sup> Գրք 40 ՊԿԱ, ֆ. 1022, ց. 7, գ. 43, ք. 1-2, գ. 63, ք. 1:

Հանրահայտ են ոչ միայն Հայ բոլշևիկներին քննադատական ելույթները, հեղինական արտահայտությունները /օրինակ՝ «Բուճղի դամբաշ»/ «սպեցիֆիկներին» հասցեին, այլև այդ նույն կազմակերպությունը տրված Վ. Ի. Լենինի որակումները՝ «ժնկյան կազմալուծիչներ», «Բուճղական կրեատուրա», «հրապարակազիր-կազմալուծիչների շայկա», «տականք» և այլն: Բոլշևիկ առաջնորդի նման որակումների գլխավոր պատճառն այն էր, որ «սպեցիֆիկներին» կազմակերպական ֆեդերալիզմը /բուճղիզմը/ հակադիր էր բոլշևիկներին հուշակամ պրոլետարական ինտերնացիոնալիզմին:

ՍԴԲՀԿ հակադրվում էր բոլշևիկներին ոչ միայն կազմակերպական, այլև գաղափարական, ծրագրային ու մարտավարական շատ հարցերում: Ինչպես մյուս սոցիալ-դեմոկրատական ու սոցիալիստական կուսակցությունները, «սպեցիֆիկները» ևս խոսում էին պրոլետարիատի դասակարգային ինքնագիտակցություն, տնտեսական և սոցիալ-քաղաքական շահերի ըմբռնողություն դարգացման, ընկերվարական հասարակարգի հաստատման անհրաժեշտություն մասին:

Սպեցիֆիկները՝ դասակարգային գիտակցությունից զատ որոշակի նշանակություն էին տալիս նաև ազգային գործոնին. «Հայը, գրում էր «սպեցիֆիկներին» գաղափարախոս Դ. Անանունը, - այս կամ այն դասակարգի անդամ լինելուց բացի, նաև ազգություն անդամ է»:<sup>1</sup> Սակայն որպես սոցիալ-դեմոկրատ մարքսիստներ, «սպեցիֆիկներին» համար առաջնայինը դասակարգային շահն էր: Այստեղից էլ սրանք դասվում են ոչ թե ազգային, այլ ոչ ազգային սոցիալիստական տիպի կուսակցությունների շարքը: Հետևողական ընկերվարների այս կազմակերպությունը դասակարգային և ազգային հարաբերակցության հարցում նախապատվությունը տալիս էր առաջինին: Ի տարբերություն Հայ ազգային կուսակցությունների, որոնց համար առաջնայինը համազգային շահն էր /օրինակ, Հայկական հարցի լուծումը/, իսկ դասակարգային շահը, ընկերային խնդիրները ամանցյալ էին, հեռավոր նպատակ, ապազգային-սոցիալիստական կուսակցությունների համար առաջնայինը դասակարգային պայքարը, ընկերվարական պահանջներն էին: Այստեղից էլ հետևում է, որ չնայած իր ազգային որոշ երանգավորման, ՍԴԲՀԿ ոչ ազգային, սոցիալ-դեմոկրատական մարքսիստական կազմակերպություն էր: Այս հիման վրա էր, որ նրանք ընդդիմանալով Դաշնակցությանը, երես դարձրին արևմտահայ դասից, այն համարելով իրենց արևմտահայերի գործը: Մինչդեռ այդ ժամանակ Հայ քաղաքական մտքի ու կազմակերպությունների առջև ծառայած գերխնդիրը նախ կոստրվող ժողովուրդն ազատագրելն էր, ապա հետո մտածել սոցիալ-տնտեսական շահագործման վերացման

<sup>1</sup> Լենին Վ. Ի., Երկերի լիակատար ժողովածու /ԵԼԺ/, հ. 47, էջ 79-80:

<sup>2</sup> Կյանք, 18 մարտի, 1906թ., թիվ 1, էջ 3:

<sup>3</sup> Բանվոր, Բաքու, 24 ապրիլի 1917թ.:

մասին, Հ. Հ. Գ. հիմնադիր Քր. Միքայելյանի պատկերավոր խոսքերով ասած. «Այնտեղ, ուր կա հավելյալ արյան խնդիր, չի կարող լինել հավելյալ աշխատանքի հարց»:

Ինչ վերաբերում է Հայ ժողովրդի քաղաքական կողմնորոշման խնդրին, ապա Հայ կաղմակերպութունը հանդես էր գալիս հիմնականում ռուսական կողմնորոշման օգտին: Օրինակ, «Երկրի ձայնը» դատափետում էր արեւմտյան կողմնորոշումը Հայ ժողովրդի դժբախտութեան զլխավոր պատճառը տեսնելով եվրոպական միջամտութեան մեջ»:

ՍԴԻՀԿ գործունեութեան ամենաբեղուն ժամանակաշրջանը կարելի է համարել Ռուսական առաջին հեղափոխութեան /1905-1907թթ./ տարիները: Կաղմակերպութեան կենտրոնը դարձյալ Բաքուն էր: Հայ բանփութեան շրջանում կաղմակերպչական և քարոզչական լայն գործունեութուն էին ծավալում Բաքվի և Թիֆլիսի կոմիտեները: Կովկասում գործում էին Բաթումի, Շուշիի և Էլի մի քանի քաղաքների կոմիտեներ, իսկ արտասահմանում ժնեի կոմիտեն: Հեղափոխութեան և դրան հաջորդող տարիներին գերազանցապես Բաքվում և Թիֆլիսում լույս էին տեսնում մարքսիստական «սպեցիֆիկայան» ուղղութեան «Սոցիալ-դեմոկրատ», «Երկրի ձայն», «Կյանք», «Զայն», «Բանփութ», «Գործ», «Շեփոք», «Ուղի», «Կոչ», «Նոր կյանք», «Կովկասի լրագրեր», «Նոր ույժ» և այլ պարբերականներ: «Սպեցիֆիկայան» մամուլում բազմակողմանիորեն արծարծված են կաղմակերպութեան ռազմավարական և մարտավարական հիմնադրութեանը:

Իրենց քաղաքական հայացքներով ավելի մոտ կանգնած լինելով մենչեիկներին՝ «սպեցիֆիկները» ևս ռուսաստանյան հեղափոխութեան մեջ զգալի դեր էին տալիս լիբերալ բուրժուազիային: ՍԴԻՀԿ օրգան «Զայն» շարափաթերթը գտնում էր, որ մեծամասնականները չեն հասկացել ռուսական հեղափոխութեան բնույթը, շարժիչ ուժերն ու բնութագրը:

1905թ. հոկտեմբերի սկզբներին գումարովեց ՍԴԻՀԿ առաջին կոնֆերանսը /խորհրդածողովր/, ուր քննութեան առնվեցին կաղմակերպութեան մոտեցումները և վերաբերմունքը մի շարք ծրագրային և մարտավարական խնդիրների շուրջ: Խորհրդածողովն ընդունեց համապատասխան որոշումներ Պետական գումարի, Հայ-թուրքական ջարդերի, Դաշնակցութեան, ՌՍԴԲԿ և այլ կուսակցութունների նկատմամբ վերաբերմունքի և այլն: Խորհրդածովի ավարտից երկու օր հետո հրապարակվեց Հոկտեմբերի 17-ի մանիֆեստը: Հայ կաղմակերպութունը և նրա տեղական խմբակները անցան գրեթե լեզու գործու-

<sup>1</sup> Հայրենիք, Բոստոն, 1925, քիվ 4, էջ 109:

<sup>2</sup> Երկրի ձայն, Թիֆլիս, 15 հոկտեմբերի 1906թ. քիվ 2, էջ 4, 14, 15:

<sup>3</sup> Չայն, 24 դեկտեմբեր 1906թ., քիվ 13, էջ 202:

<sup>4</sup> Նույն տեղում, 29 հոկտեմբեր 1906թ., քիվ 5, էջ 70:

նեռության: Նրանք դատապարտեցին Հոկտեմբերի 17-ի մանիֆեստը: Այս առնչությամբ «սպեցիֆիկները» քննադատում էին ոչ միայն ցարիզմին, այլև ռուսական լիբերալներին՝ զգուշավորության ու չնչին ռեֆորմներով բավարարվելու համար:

Ինչ վերաբերում է Պետական դումայի ընտրություններին, ապա պետք է ասել, որ ՍԴԲՀԿ բոլորիս հայտարարեց ոչ միայն Բուլի-զինյան, այլև առաջին Պետական դումայի ընտրություններին: Այն բանից հետո, երբ Առաջին դումայի ընտրությունների նախօրյակին ՌՍԴԲԿ Բաքվի միացյալ կազմակերպությունը ի վերջո որոշեց մասնակցել ընտրություններին՝ կոչ անելով ձայն տալ սոցիալ-դեմոկրատներին, ՍԴԲՀԿ մնաց իր նախկին մարտավարությունը և դատապարտեց ՌՍԴԲԿ փոփոխական վարքագիծը:

Սորհրդածողովում քննություն դրվեցին նաև կազմակերպությունների ծրագրային և կազմակերպական կառուցվածքի հարցեր: Հայ կազմակերպությունների ծրագրային կարևոր հիմնադրություններից էր ազգային հարցը: Այս խնդրում «սպեցիֆիկները» դեմ արտահայտվեցին բոլշևիկ-լենինյանների առաջ քաշած ազգերի ինքնորոշման ծրագրային պահանջին և պաշտպանեցին ավստրիական սոցիալիստների մշակած ազգային-մշակութային ինքնավարությունից ծրագիրը: Նրանց տեսաբան Դ. Անանուևը իր «Ազգային հարցը և դեմոկրատիան» հոդվածաշարում հիմնավորում էր այն գաղափարը, որ հայերի ազգային շահը պահանջում է, որ իրենք հանդես գան ազգային-մշակութային ինքնավարության կարգախոսով<sup>1</sup>: Դ. Անանուևը պարզաբանում էր, որ եթե ինքնորոշման իրավունքի տակ «հասկացվում է անջատում Ռուսաստանից, ապա հայ կազմակերպությունը հրաժարվում է նման արտոնությունից»: Նա սովյալ փուլում ձեռնտու էր համարում Հայաստանի քաղաքական անկախությունը: Դ. Անանուևի այս տեսակետն էին պաշտպանում նրա գաղափարակից Բ. Իշխանյանը և ուրիշներ: Ի տարբերություն Դ. Անանուևի, Բ. Իշխանյանի և մյուս «սպեցիֆիկներին» Ալ. Թուրքենին դեմ էր հայերի ազգային-մշակութային ինքնավարության պահանջին և, ըստ էության պաշտպանում էր բոլշևիկների տեսակետը: Հարկ է նշել, որ մինչև 1918թ. գարունը, հայ քաղաքա-

<sup>1</sup> Նույն տեղում, 29 հոկտեմբեր 1906թ., թիվ 5, էջ 70:

<sup>2</sup> Սոցիալ-դեմոկրատ, Բաքու, 1905թ., թիվ 2, էջ 18:

<sup>3</sup> Կյանք, Թիֆլիս, 29 ապրիլի 1906թ., թիվ 7, էջ 159-160:

<sup>4</sup> Չայն, 29 հոկտեմբերի 1906թ., թիվ 5, էջ 70:

<sup>5</sup> Անանուև Դ., Եզվ. աշխ., էջ 95-96, Հովհաննիսյան Ա., Երկու բնութագիր Առ Շահու մյան և Ալ. Ռուբենյն, Ե., 1927, էջ 25:

<sup>6</sup> Նոր հոսանք, Թիֆլիս, 1913, թիվ 2, էջ 358-372:

<sup>7</sup> Անանուև Դ., Եզվ. աշխ., հ. 3, էջ 95:

<sup>8</sup> Չաբարյան Ա. Ա., Հայ հասարակական-քաղաքական միտքը արևմտահայրության պատմագրության ու դիմերի մասին, Ե., 1990, էջ 463-464:

<sup>9</sup> Նոր կյանք, Բաքու, 19 փետրվարի 1912թ., թիվ 3-4, էջ 121-126, Հայաստանի կրոնաբանության, Երևան, 31 հունիսի, 1920թ., էջ 570:

կան զրեթե բոլոր կուսակցութիւնները և Հոսանքները, չհաշված, իհարկե, բոլշևիկներին, այսպես թե այնպես արտահայտվել են Ռուսաստանի կամ Թուրքիայի կալմում ազգային-մշակութային լայն ինքնապարութիւն ձեռք բերելու /ստանալու/ օգտին: «Մեզանում չկա մի կուսակցութիւն,- նշել է Ստ. Շահումյանը,- կղերական թե բուրժուական, «խաւարամիտ», թե «ազատամիտ», որ կողմնակից չլինի ազգային-կուլտուրական ավտոնոմիային»:

Հավանաբար, ժամանակաշրջանի տվյալ կտրվածքում ազգային-մշակութային ինքնավարութիւնն սպահանջը հայ ժողովրդի ազգային անվտանգութիւնն տեսակետից ավելի իրատես ու ապահով էր, քան բոլշևիկների հուշակած ազգերի ինքնորոշման վերացական սպահանջը, որն ինչպես ցույց տվեց կյանքը, իրենց իսկ /բոլշևիկների/ վարած քաղաքականութիւնն հետեւանքով այդպես էլ մնաց որպէս ղեկավարատիվ հայտարարութիւն ու չկենսագործվեց կյանքում: Ավիւթի ապացույցներն էլ 1917թ. դեկտեմբերի 29-ին ժողկոմխորհի ընդունած «Թուրքահայաստանի մասին» դեկրետը, 1920թ. դեկտեմբերի 2-ի Երևանի Հայ-ռուսական Համաձայնագիրը, ԽՍՀՄ երեք սահմանադրութիւնները և այլն, որոնցում խոսվում /հուշակվում/ էին ազգերի ինքնորոշման իրավունքի մասին, բայց իրականում ոչ միայն չէր խրախուսվում այն, այլ մեծազույնս հետապնդվում ու հալածվում էր նման մտայնութիւնը:

Ռուսաստանյան առաջին հեղափոխութիւնն տարիներին Անդրկովկասում տեղի ունեցած ամենացնցող իրադարձութիւնը, անշուշտ, Հայ-թաթարական կոտորածները եղան: 1905թ. փետրվարից Բաքվում և այլուր սկսված Հայ-թաթարական ընդհարումների կապակցութիւնում հայ կազմակերպութիւնը հավատարիմ իր դասակարգային-էթնիկական դավանանքին, կոչ էր անում անակնկալի եկած հայ պրոլետարիատին զինվել ու հակահարված տալ թուրք մոլեռանդ ելուզակներին: «Սոցիալիստ» պաշտոնաթերթը կոչ էր անում հայ պրոլետարիատին «պաշտպանվել ամենակտրական միջոցներով»: Առանձին վայրերում հանդանակութիւնների միջոցով ձեռք է բերվել զենք: Օրինակ՝ Նուխի և Զիվանշիրի շրջաններում ստեղծվել էին զինված մի քանի խմբեր: «Սոցիալիստի» տեղեկացմամբ, «Բաքվի 1905թ. սեպտեմբերյան ընդհարումներից մեկի ժամանակ ՍԴԲՀԿ Բաքվի կոմիտեն բանվորներին էր բաժանել երկու մոսինի հրացան, երեք բերդան ու մի քանի ատրճանակ, դաշնակցականները մոտ 10 հրացան, իսկ հնչակյանները ոչինչ»: Հայերի ինքնապաշտպանութիւնն ամբողջ գործի ղեկավարութիւնը, անշուշտ գտնվում էր ՀՀԴ ձեռքում:

<sup>1</sup> Շահումյան Ար., ԵԼԺ, հ. 2, էջ 373:

<sup>2</sup> Սոցիալիստ, ԺԸԸ, 14 հոկտեմբերի 1905թ.:

<sup>3</sup> Նույն տեղում, 25 հուլիսի 1905թ.:

<sup>4</sup> Չայն. Թիֆլիս, 29 հոկտեմբերի 1906թ., քիվ 5, էջ 69:

<sup>5</sup> Սոցիալիստ, 14 հոկտեմբերի 1905թ.:

Ինքնապաշտանական քայլերից զատ, առանձին դեպքերում, Հանդամանքների թելադրանքով «սպեցիֆիկները» Հայ և թուրք բանվորների Համերաշխության կոչեր էին անում՝ հորդորելով գերծ մնալ վրեժխնդրությունից և ծայրահեղ գործողություններից: ՍԴԲԿ և սայդ արյունալի ընդհարումների գլխավոր սագրիչը Համարում էր ցարական կառավարությանը:

Ռուսական Հեղափոխության տարիներին ՍԴԲԿ ուշադրության կենտրոնում է հղել բանվորական խնդիրը: Ելնելով դասակարգային պայքարից Հայ կազմակերպությունը նավթարդյունաբերական Բաքվում, ինչպես նաև Թիֆլիսում, Բաթումում, Փոթիում, Նուխիում, Շուշիում իրականացրել է բանվորական գործադուլներ, որոնք Հիմնականում ունենին տնտեսական պահանջների բնույթ, այն է՝ ծածայ աշխատանքային օր, աշխատավարձի բարձրացում, մեկամսյա կայուն տարեկան վճարովի արձակուրդ, առողջապահական և կենցաղային պայմանների բարելավում և այլն:

1905թ. կեսերին գործադուլային պայքարի վերելքի շրջանում ՍԴԲԿ Բաքվի կոմիտեն Հիմնում է «Հայ բանվորական բյուրո»: Բյուրոն բանակցությունների մեջ է մտնում նավթարդյունաբերողների հետ և զգալի ջանքերի զեղով կարողանում է Հայ բանվորների Համար կորզել 600 հազար ռուբլի դումար և հարյուրավոր բանվորների աշխատանքի տեղավորում նավթահանքերում: Այս քայլը բավականաչափ բարձրացրեց «սպեցիֆիկներին» վարկը բանվորաշատ Բաքվում:

Հեղափոխության շրջանում ՍԴԲԿ ժնեի արտասահմանյան կոմիտեն յուրովի արտահայտեց իր մասնակցությունը այդ Հեղափոխությանը: Կոմիտեն Եվրոպայում անցկացնում էր դասախոսություններ Կովկասում ծավալվող իրադարձությունների վերաբերյալ, եվրոպական լեզուներով հրատարակում էր կոչեր, կազմակերպում Հանգանակություններ և այլն:

ՍԴԲԿ թև՝ կովկասյան և թև՝ արտասահմանյան կոմիտենները մրցակցում էին մի կողմից ՀՀ Դաշնակցության, իսկ մյուս կողմից ՌՍԴԲԿ -ի հետ՝ ձգտելով ավելի շատ բանվորներ ներգրավել իրենց շարքերը: Հայ կազմակերպության պաշտոնաթերթ «Սոցիալիստը», Հայ ազգային կուսակցություններին Համարում էր «Հայ պրոլետարիատի դասակարգային գիտակցությունը թունավորողներ»: ՍԴԲԿ իր պարբերականներում բանակերիվ էր մղում մի կողմից ՀՀ օրգաններ «Դրոշակի», «Հառաջի», «Ալիքի», «Զանգի», «Երկրի» և հնչակյան թերթերի «Հնչակի», «Երիտասարդ Հայաստանի», «Վերածնության» դեմ, իսկ մյուս կողմից ՌՍԴԲԿ պարբերականներ «Պրոլետարիա-

<sup>1</sup> Սոցիալիստ 14 հոկտեմբերի 1906թ.: Կայան Ա, Եզվ. աշխ., էջ 23-24:

<sup>2</sup> Կյանք, Թիֆլիս, 18 մարտի 1906թ., թիվ 1, էջ 13, Բանվոր, Բաքու, 25 փետրվարի 1907թ., թիվ 1:

<sup>3</sup> Չայն, 5 նոյեմբերի 1906թ. թիվ 6, էջ 90: Կայան Ա, Եզվ. աշխ., էջ 25-26:

<sup>4</sup> Չայն, 29 հոկտեմբերի 1906թ., թիվ 5, էջ 70:

տի կուրի», «Սոցիալ-դեմոկրատ», «Կայծ», «Նոր խոսք», «Հոսանք» լինելովների գեմ:

Հեղափոխութեան շրջանում տեղի ունեցաւ ինքնակալութեանը ընդդիմադիր կուսակցութեան ներքին ու քաղաքական ուժերի նկատելի մերձեցում: 1906թ. ապրիլին Ստոկհոլմում գումարված ՌՍԴԲԿ 4-րդ /միավորիչ/ համագումարում, չնայած ռազմավարական ու մարտավարական բնույթի առկա տարակարծութեան ներքին, այնուամենայնիւ, ինքնակալութեան դեմ պայքարում միասնական ճակատ կազմելու նպատակով, տեղի ունեցաւ ռուսական սոցիալ-դեմոկրատական կուսակցութեան երկու /բոլշևիկյան և մենշևիկյան/ թևերի և ազգային սոցիալ-դեմոկրատական կազմակերպութեան ներքին միավորումը ՌՍԴԲԿ-ի մեջ: Բացի փոքրամասնական և մեծամասնական կազմակերպութեան ներքին ՌՍԴԲԿ մեջ միավորվեցին նաև ազգային-տարածքային սկզբունքը ընդունած Բուկոբ, լեհական և լատիշական սոցիալ-դեմոկրատական կազմակերպութեան ներքին, որով ՌՍԴԲԿ դարձաւ միասնական: Արդեն 1907թ. գարնանը նա իր շարքերում ուներ 150 հազար անդամ<sup>1</sup>: ՌՍԴԲԿ միանալու ցանկութեան հայտնեց նաև ՍԴԲՀԿ: Սակայն վերջինիս քանիցս արված դիմումները մերժվեցին ՌՍԴԲԿ կէի և համագումարի կողմից: «Սպեցիֆիկները» միավորվելու համար պայման էին դրել պահպանել իրենց կազմակերպական սիստեմը: Դրա համար էլ, ըստ Ս. Կասյանի, հայ կազմակերպութեանը այնպիսի պայմաններ էր ներկայացրել, որ միավորիչ համագումարը ավելորդ համարեց անդամ հարցը քննարկել:

1906թ. հունիսին Թիֆլիսում տեղի ունեցաւ ՍԴԲՀԿ 2-րդ - խորհրդաժողովը, որը քննարկեց սեփական մարտավարութեան ուղեգիծը և կրկին պատրաստակամութեան հայտնեց միանալու համառու-սաստանյան սոցիալ-դեմոկրատական կուսակցութեանը: Խորհրդաժողովը ընդունեց ՌՍԴԲԿ հետ միավորման բանաձև հետևյալ պայմաններով.

1. Հայ սոցիալ-դեմոկրատական բանվորական կազմակերպութեանը, իբրև հայ պրոլետարիատի միակ ներկայացուցիչ, ինքնավար է իր ներքին գործերում, 2. ՍԴԲՀԿ ընդունում է ՌՍԴԲԿ ծրագիրը՝ մերժելով միայն ա/ՌՍԴԲԿ ծրագրի 9-րդ կետը՝ ազգերի ինքնորոշման մասին և ը/վերապահելով իրեն Անդրկովկասի և մասնավորապես հայաբնակ վայրերի ազգային ծրագրի մշակումը, 3. Համակուսակցական համագումարների որոշումները և կենտրոնական կոմիտեի հրահանգները պարտադիր են ՍԴԲՀԿ համար, 4. ՍԴԲՀԿ իր ներքին կազմակերպութեան պրոպագանդայի և ագիտացիայի շրջանակներում ինքնուրույն է, 5. նա հրափրում է իր համագումարները, ստեղծում իր տեղական ու

<sup>1</sup> История КПСС, т. 2, М., 1966, с. 215.

<sup>2</sup> Կասյան Ա., Աշխ., էջ 58

<sup>3</sup> Գրգռեմ Գրգռ., Գ. 1022, գ. 7, գ. 42, ք. 1:

կենտրոնական կոմիտեները և պաշտոնավթերթը /օրգանը/, Ն. ՍԴԲՀԿ - պահպանում է իր ներկայացուցչությունը միջազգային կոնգրեսներում և այլն<sup>1</sup>:

ՍԴԲՀԿ 2-րդ խորհրդատուովը համապատասխան որոշումներ ընդունեց օրակարգային մի շարք խնդիրների շուրջ: Մասնավորապես Պետական դումայի խնդրում Հայ կազմակերպությունը շարունակում էր պաշտպանել դրա դատապարտման և բոյկոտի մարտավարությունը: Սակայն 1906թ. վերջերից ՍԴԲՀԿ փոխում է դումայի բոյկոտման տակտիկան. «լայն դանդախների քաղաքական գիտակցությունը հասունացման, հետադիմության դեմ պայքարի և նրա տապալումն արագացնելու համար» կոչ էր անում ՌՍԴԲԿ Անդրկովկասյան կոմիտեին, մուսուլման սոցիալ-դեմոկրատների «Հումմեթ» կազմակերպությունը և մյուս «ձախ» ուժերին միասնական ճակատով հանդես գալու ընտրություններում, որպեսզի դաշնակցականները և կադետները հնարավորինս քիչ ձայներ հավաքեն: ՍԴԲՀԿ, Իհարկե, չունեիր այն կշիռը, որ դումայի ընտրություններում առաջադրեր իր թեկնածուներ:

Խորհրդատուովը բանաձև ընդունեց նաև արհմիությունների մասին: ՍԴԲՀԿ կողմնակից էր անկուսակցական արհեստակցական միությունների կազմակերպման գործին: «Սպեցիֆիկները» դեմ էին զուտ ազգային կամ կուսակցական հատկանիշներով արհմիություններ ստեղծելուն, ինչպիսին որ անում էր Դաշնակցությունը: ՀՀԴ նախընտրում էր կուսակցական-ազգային ձևը զուտ ինքնապաշտպանական նպատակներով, որպեսզի ազգամիջյան ընդհարումների ժամանակ կարողանան զենքի միջոցով միասնաբար ինքնապաշտպանվել:

Արհեստակցական միությունների հարցում Եսայեմը և մյուսները դառնում էին, որ արհմիությունների ազգային-կուսակցական ձևով հիմնումը կնշանակեր ազգայնականությունն աճ և թշնամանքի ու անվստահությունն սերմանում կովկասի բազմազգ ժողովուրդների միջև<sup>2</sup>: «Բանվոր» թերթի կարծիքով. «Տնտեսական կռիվը պահանջում է համերաշխություն և միություն և ոչ թե անջատում, առանձնացում»<sup>3</sup>: Այս առնչությունը նկատենք, որ իրավացի է է Ա. կարինյանը, երբ հայտնում է, թե «սպեցիֆիկները» դաշնակցության նման ստեղծեցին ազգային արհմիություններ<sup>4</sup>:

Խորհրդատուովը որոշում ընդունեց նաև ազգաբային հարցի վերաբերյալ, մի խնդիր. որը, ինչպես հայտնի է, կազմում էր ռուսաս-

<sup>1</sup> ԳԴ ՊԿԿԱ, ֆ. 4051, ց. 1, գ. 10, Կյանք, 24 հուլիսի 1906թ., թիվ 15, էջ 230, Դ. Ա. Галоян, նշվ. աշխ., էջ 112-113:

<sup>2</sup> Կյանք, 12 նոյեմբերի 1906թ., թիվ 7, էջ 98, 19 նոյեմբերի 1906թ., թիվ 8, էջ 113, 26 նոյեմբերի 1906թ., թիվ 9, էջ 129, 143-144, 17 դեկտեմբերի 1906թ., թիվ 12, էջ 176-179:

<sup>3</sup> Նույն տեղում, 24 հուլիսի 1906թ., թիվ 15, էջ 230-231:

<sup>4</sup> Նույն տեղում, 17 հուլիսի 1906թ., թիվ 14, էջ 222:

<sup>5</sup> Բանվոր, Բաքու, 25 փետրվարի 1907թ., թիվ 1:

<sup>6</sup> Կարինյան Ա., Դաշնակցու թյու նը և իր զինակիցները, Ե., 1932, էջ 98:

տանդան Հեղափոխութեան առանցքային հիմնահարցերից մեկը: ՍԴԲԶԿ, Համակարգիչը չլինելով ՌՍԴԲԿ 4-րդ միավորիչ համադումարում քննարկված ազդարարային ծրագրի նախագծին, որոշեց ստեղծել մի հանձնաժողով և դրա միջոցով առաջիկա համադումարին ներկայացնել ազդարարային ծրագրի իր նախագիծը: «Սպեցիֆիկները» ազդարարային խնդրի հայանի մասնագետներ էին համարվում Դ. Անանունը, Գ. Պիճիկյանը և ուրիշներ: Հետագայում նրանք մշակեցին հոլային խնդրի լուծման իրենց ծրագիրը:

2-րդ խորհրդածոցովի ավարտից հետո ՍԴԲԶԿ առջև ծառայած առաջնահերթ խնդիրներից էր դարձյալ ՌՍԴԲԿ միանալու հարցը: 1907թ. ապրիլ-մայիսին Լոնդոնում գումարովեց ՌՍԴԲԿ հերթական 5-րդ համադումարը: ՍԴԲԶԿ դիմումով կրկին պատրաստակամութուն հայանեց միանալու ՌՍԴԲԿ-ին՝ ինքնավար կազմակերպութեան կարգավիճակով: Անգամ համադումարին որպես հյուրեր մասնակցեցին հայ կազմակերպութեան երկու ներկայացուցիչներ Դ. և Ն. Տեր-Ղազարյանները: Չնայած բուլեիկների դիմադրութեանը՝ այնուամենայնիվ 5-րդ համադումարը սկզբունքորեն ընդունեց կազմակերպական այն համակարգը, որն արդեն կիրառվում էր հրեաների, լեհերի, ուկրաինացիների, լատիշների, հայերի և ֆեդերատիվ հիմունքներով ՌՍԴԲԿ-ի մեջ մտնող բանվորական այլ կազմակերպութեանների կողմից: Թեև համադումարը բնորոշեց Հայ կազմակերպութեան միացման առաջարկը, բայց ըստ Ս. Կասյանի՝ «սպեցիֆիկները գերադասեցին մնալ կուսակցութեանից դուրս, որովհետև վրա էին հասնում ուսուցիչային կտանգավոր օրերը»:

Երկու խորհրդածոցովներից հետո՝ 1907թ. սկզբներին, ՍԴԲԶԿ-Կենտկոմը որոշում ընդունեց հրավիրել կազմակերպութեան առաջին համադումարը՝ հետևյալ օրակարգով՝ ա/ Կենտկոմի հաշվետվութեանը, բ/ Պետական գուման, գ/պրոֆմիութեանները, դ/մեր վերաբերմունքը դեպի մյուս կուսակցութեանները և այլն: ՌՍԴԲԿ 5-րդ և ՍԴԲԶԿ 1-ին համադումարների օրակարգի հարցերի համեմատութեանից դժվար է նկատել, որ դրանք փաստորեն կրկնվել են: Հայ կազմակերպութեան առաջին համադումարը որոշ ձգձգումներից հետո կայացավ 1907թ. սեպտեմբեր սոսիսին: Ընտրված 38 պատգամավորներից համադումարին ներկա էին 32-ը: Հեղափոխութեան վայրէջքի ու պարտութեան շրջա-

<sup>1</sup> Կյանք, 24 հուլիսի 1906թ., քիվ 15, էջ 232:

<sup>2</sup> ԳՅՊԿԱ, ֆ. 404, ց. 1, գ. 12, ք. 7:

<sup>3</sup> Буржуазные и мелкобуржуазные партии России в Октябрьской революции и гражданской войне, М., 1980, с. 72.

<sup>4</sup> Կասյան Ս., նշվ. աշխ., էջ 107:

<sup>5</sup> ԳՅՊԿԱ, ֆ. 1022, ց. 7, գ. 38, ք. 1, գ. 4, ք. 1: Բանվոր, Բարև, 25 սեպտեմբերի 1907թ.

թ. 1:

<sup>6</sup> ԳՅՊԿԱ, ֆ. 1022, ց. 7, գ. 43, ք. 1:

նուժ համագումարը որոշում կայացրեց ավելի ակտիվ մասնակցութ-  
յուն ունենալ դումայական/խորհրդարանական/ ընտրապայքարին:

Համագումարը հատուկ վերաբերմունք ցուցաբերեց սոցիա-  
լիստ-հեղափոխականների/էսէռների/ կուսակցութեան նկատմամբ:  
Նկատի առնելով այն հանգամանքը, որ այս շրջանում, «երիտասարդ  
դաշնակցականներ» Ա. Ամիրյանի, Լ. Աթաբեկյանի և մյուսների ջան-  
քերի շնորհիվ հայ իրականութեան մեջ սկսել էր մուտք գործել էսէռա-  
կանութեան գաղափարախոսութեանը, համագումարը տվեց այդ կու-  
սակցութեան մանրբուրժուական գաղափարախոսութեան ու քաղաքա-  
կանութեան սպեցիֆիկյան գնահատականը: Էսէռները որակվեցին որ-  
պես մանրբուրժուական, հակապրոլետարական կուսակցութեան «էկ-  
լեկտիկ ուտոպիական աշխարհայացքով և մասնավորապես ազդարա-  
յին պահպանողականութեամբ/կոնսերվատիզմով/»<sup>1</sup>: «Սպեցիֆիկները»  
նկատի ունենալով ՀՀԴ և էսէռների միջև առկա մերձակցութեանը,  
գտնում էին, որ վերջինս հովանավորում և «ջուր է լցնում հայ ազ-  
գայնականութեան ջրագացին»: Ուստի համագումարի որոշմամբ  
հանձնարարվեց ՍԴԶ կազմակերպության մարմիններին և օրգաննե-  
րին՝ «եռանդուն ջանքերով մերկացնել այդ հակապրոլետարական կու-  
սակցութեան մանրբուրժուական իդեոլոգիան և հետ մղել նրան հայ  
պրոլետարիատի շարքերից»<sup>2</sup>:

Համագումարը ընդունեց կազմակերպութեան ամբողջական  
ծրագիրը և կանոնադրութեանը: Ծրագրի ներածական մասում ընդգծ-  
վում էր կազմակերպութեան նվիրվածութեանը սոցիալ-դեմոկրատա-  
կան, մարքսիստական ուսմունքին: Նրանք իրենց գործունեության  
գերադուռն խնդիրն էին համարում «ակտիվ մասնակցութեան բերել  
Ռուսաստանի հեղափոխութեան գործին, ազատագրվել ինքնակալութ-  
եան սպանիչ լծից՝ կազմակերպելով հայ բանվոր դասակարգին ու ամ-  
բողջ հասարակութեանը»<sup>3</sup>: Այնուհետև խոսվում էր բանվորական պա-  
հանջների, աղգային փոքրամասնութեանների իրավունքների, եկեղե-  
ցու և պետութեան հարաբերութեանների և համանման այլ խնդիրնե-  
րի մասին:

«Սպեցիֆիկները» կողմնակից էին Ռուսաստանի ապակենտրո-  
նացմանը, որի համաձայն ամբողջ երկիրը/կայսրութեանը/ ըստ պատ-  
մական, տարածքային և տնտեսական պայմանների, բաժանվելու էր  
ինքնակառավարվող շրջանների՝ կանտոնների: Այդպիսի մի ինքնա-  
վար շրջան/կանտոն/ էր կազմելու Անդրկովկասը: Հայտարարվում էր  
քաղաքացիների անձի ու բնակարանի անձնուձևխելիութեան, խոսքի,  
մամուլի և ժողովների կատարյալ ազատութեան: Վերացվելու էին  
անձնագիրը, մշտական զորքը, անուղղակի հարկերը, բոլոր պաշտոն-

<sup>1</sup> Նույն տեղում:

<sup>2</sup> Նույն տեղում:

<sup>3</sup> Նույն տեղում, գ. 44, ք. 3-10:

ները դառնալու էին բնարովի: Մացվելու էր ութժամյա աշխատանքա-  
յին օր, գործադուլների և բանվորական միությունների կատարյալ ա-  
գատութիւն, վերացվելու էր գիշերային աշխատանքը, արդելվում էր  
կանանց աշխատանքը արտադրութեան փնասակար ճյուղերում: Տեղե-  
րում կրթությունը տարվելու էր մայրենի լեզվով, եկեղեցին անջատ-  
վում էր պետությունից և այլն:

Ծրագրի առանձին պարագրաֆներում շոշափվում էր  
արևմտահայ դատը: «Սպեցիֆիկները» ըմբռնումով էին մոտենում այդ  
խնդրին: Նրանք թեև գտնում էին, որ «Տաճկահայ դատը տաճկահայե-  
րի գործը պիտի լինի», բայց և միաժամանակ ամեն մի հայի բարոյա-  
կան պարտքն էին համարում օգնել արևմտահայերին, համբերութ-  
յամբ ու պատկառանքով վերաբերվել այդ խնդրին: «Ամեն մարդ ու  
կազմակերպություն, - կարդում ենք ծրագրում, - իր ուժերի ու հնարա-  
վորությունների սահմաններում, իր բարոյական պարտքը պետք է հա-  
մարի օգնել ու աջակցություն ցույց տալ տաճկահայերին»:

Հայ կազմակերպութեան ղեկավար գործիչներից Բ. Իշխանյանը  
Հայկական Հարցի լուծումը կապում է համաթուրքական շարժումների  
հետ: Դարասկզբին Օսմանյան կայսրությունում Աբդուլ Համիդ 2-  
րդի բռնավարչակարգի դեմ ուժեղացող ընդդիմութեան պայմաննե-  
րում «սպեցիֆիկները» առաջ էին քաշում հայ, թուրք, քուրդ, ասորի  
և մյուս ճնշված զանգվածների բնդհանուր հեղափոխութեան գաղա-  
փարը: Սրանք ևս միամտաբար կարծում էին, թե քաղաքականապես  
հետամնաց և կրոնապես մոլեռանդ ու անհանդուրժող թուրք և այլ  
մուսուլման զանգվածները կղաշնակցեն հայերի և մյուս քրիստոնյա-  
ների հետ և համատեղ ուժերով կտապալեն համիդյան ռեժիմը: Ասվա-  
ծից երևում է, որ ՄԴԲՀԿ ցուցաբերում էր Հայկական Հարցի լուծման  
սոցիալ-դասակարգային մոտեցում, որով դարձյալ ընդգծվում էր  
«սպեցիֆիկներին» սոցիալիստական բովանդակությունը: Մեկ այլ պա-  
րագրյում, հանգամանքների թելադրանքով, նույն Բ. Իշխանյանը  
Հայկական Հարցի լուծումը կապում էր մեծ տերությունների ղեկավա-  
րական միջամտութեան հետ: Բաղաքական գիրքորոշումներով փո-  
փոխական, իսկ յառնվածքով խիստ զգացմունքային Բ. Իշխանյանը  
ստորև մասնանշած աշխատութեան մեջ ոչ պակաս սրությամբ դատա-  
փետում էր Ռուսաստանի նվաճողական նկրտումները ու երկդիմի կեց-  
վածքը Հայկական Հարցում: Սակայն «սպեցիֆիկներին» համար ընդ-

<sup>1</sup> ՀՀ ԳԿՊ ՊԿԱ, ֆ. 1022, ց. 7, գ. 44, ք. 10-11:

<sup>2</sup> Նույն տեղում:

<sup>3</sup> Նույն տեղում, ք. 10:

<sup>4</sup> Հայ ժողովրդի պատմության 6, Ե., 1981, էջ 514:

<sup>5</sup> Երկրի ծայն, Թիֆլիս, 8 հոկտեմբերի 1906թ., թիվ 1, էջ 2, 14, 15, հոկտեմբերի 1906թ., թիվ 2,  
էջ 16, թիվ 5, էջ 8:

<sup>6</sup> Իշխանյան Բ., Տաճկահայ խնդիրը և միջազգային դիպլոմատիան, Թիֆլիս, 1907, էջ 14-17:

<sup>7</sup> Կյանք, 8 հուլիսի, 1906թ., թիվ 17, էջ 258:

Հանրականն ու էականն այն էր, որ մյուս Հայ սոցիալ-դեմոկրատների և սոցիալիստների նման արևմտահայ դատը առանձնացնում էին ռուսահայ խնդրից: Արևմտահայ և ռուսահայ դատերը իրար խառնելը և միասնացնելը նրանց կարծիքով «կթուլացնի Հայ զանգվածների դասակարգային զիտակցութունը, հանգամանք, որ ձեռնտու կլինի Հայ բուրժուազիային»<sup>1</sup>:

Այսպիսով, ՍԴԲՀԿ 1907թ. ծրագրի հիմնադրույթների հպանցիկ դիտարկումից դժվար չէ կռահել, որ դասակարգային, մարքսիստական, սոցիալիստական կոչման կուսակցութուն է, որի համար առաջնայինը Հայ բանվորի սոցիալ-տնտեսական ազատագրութունն էր, իսկ համազգային գերխնդիր համարվող արևմտահայ դատը, մղվելով երկրորդական պլան, համարվում էր միայն իրենց արևմտահայերի գործը: Այս իմաստով էլ նրանք ավելի մոտ էին կանգնած ոչ ազգային, ձախակողմյան կուսակցութուններին՝ մենշևիկներին, էսէռներին, բոլշևիկներին:

Ինչ վերաբերում էր ՍԴԲՀԿ կանոնադրությանը, ապա պետք է ասել, որ նրանում դարձյալ ընդգծվում էր կազմակերպության բուն-դական-ֆեդերալիստական սկզբունքը, որով նա ինքնավար էր իր ներքին գործերում: Կազմակերպության հիմքը /միջուկը/ կազմում էին խմբերը: Քաղաքներում և գյուղերում ստեղծված խմբերը միակույով կարող էին կազմել քաղաքային կոմիտեներ կամ գյուղական ենթակոմիտեներ, որոնք դարձյալ ինքնավար կերպով վարում էին իրենց գործերը: Նրանք պարտավոր էին տանելու գրավոր և բանավոր սոցիալիստական ազիտացիա և պրոպագանդա: ՍԴԲՀԿ բարձրագույն ղեկավար գործադիր մարմինը կազմակերպության Կենտրոնական կոմիտեն էր<sup>2</sup>:

Ռուսաստանյան առաջին հեղափոխության տարիներին «սպեցիֆիկները» զբաղվել են ոչ միայն ծրագրային, տեսական-զաղափարախոսական հարցերով, այլև իրենց հնարավորութունների սահմաններում սուր և անհաշտ բանակռիվ էին մղում այլ կուսակցութուններին ՌՍԴԲԿ, ՀՀԴ, Հնչակ և այլոց հետ: «Սպեցիֆիկները» առանձնապես ուժեղ հակամարտության մեջ էին հնչակյանների հետ, որովհետև երկուսն էլ իրենց համարում էին սոցիալ-դեմոկրատական մարքսիստական կուսակցութուն: Հայ բունդականները հնչակյաններին մեղադրում էին հակապրոլետարական լինելու մեջ: Նրանք իրենց թերթերում, քարոզչական մյուս միջոցներով ծաղրում էին հնչակյանների զաղափարական երկվութունը /դուալիզմը/՝ ազգային և սոցիալ-դեմոկրատական գործունեութունը: Այս կապակցությամբ հնչակյան գործիչ Ռուբեն Նանազատն իր հուշերում նշում էր, որ Հայ մարքսիստները՝ սոցիալ-դեմոկրատները և «սպեցիֆիկները» «չատ տեղին հարձակումներ էին անում մեր դեմ ու ծաղրում էին՝ ապացուցելով, թե

<sup>1</sup> Չալս, 29 հոկտեմբերի 1906թ., քիվ 5, էջ 72

<sup>2</sup> ԳԳ ԳԶԿՓ ՊԿԱ, ֆ. 1022, ց. 7, գ. 44, քք. 13-17:

մենք Երկու աթուռի վրա ենք նստած և մեր ազգայնականությամբ մթազնուում ենք Հայ բանվորների դասակարգային գիտակցությունը»:

Պետք է ասել, որ Հնչակյանները, «սպեցիֆիկները», էլ չենք խոսում սոցիալ-դեմոկրատ բոլշևիկների մասին, շարունակ մրցակցում էին իրար Հետ, թե իրենցից ով է ավելի Հետեոզական ու հավատարիմ մարքսիզմին՝ «գիտական» սոցիալիզմի ուսմունքին: Այդ մրցակցությունը ուժեղացավ հատկապես հեղափոխության տարիներին: «Սպեցիֆիկները» Անդրկովկասի պրոլետարական շրջաններում անդուլ քարոզչություն էին տանում Հայ բանվորներին Հնչակյանների ու դաշնակցականների ազդեցությունից դուրս բերելու համար: Այդ նպատակով նրանք հրատարակում էին կոչեր, տարածում թուռեցիկներ: 1906թ. այդպիսի մի կոչ է գրել Ալ. Ռուբենին: «Սպեցիֆիկները» իրենք քննադատության սլաքն ուղղեցին նաև ՀՀԴ դեմ՝ հատկապես 1906.-1908թթ. վերջինիս ճգնաժամի ու նրա «աջից» ու «ձախից» պառակտման շրջանում: Սակայն, եթե Հնչակյանները ամենից ավելի քննադատվում էին հակասոցիալիստական, հակամարքսիստական լինելու համար, ապա Դաշնակցությունը քննադատվում էր սոցիալիստական ֆրոգաբանության /դարձվածամոլության/ և զուտ ազգային ծրագրերի ու մտադրությունների համար:

Ե՛վ հեղափոխության տարիներին, և՛ դրա պարտությունից Հետո ընկած ժամանակաշրջանում ՍԴԲՀ պայքարում էր ազգայնականության այն բոլոր դրսևորումների դեմ, որոնք կարող էին խոչընդոտ Հանդիսանալ Հայ պրոլետարիատի դասակարգային պայքարին: ՍԴԲՀ ապագային ու դասակարգային բովանդակությունը մեկ անգամ ևս ցուցահանելու համար բերենք մի քաղվածք նրա ընդունած փաստաթղթերից: «ՍԴԲՀ նպատակն է անխնա կռիվ մղել այն բուրժուականացիոնալիստական կուսակցությունների դեմ, որոնք սիրամարգի փետուրներով զարդարված, խաբուսիկ հրապույրով պղտորում են Հայ պրոլետարիատի միտքը, շեղում նրան իր դասակարգային կռիվի միակ ճիշտ ու փրկարար ճանապարհից և գիտակցաբար օգտագործում են նրա ուժը՝ իրենց նացիոնալիստական քաղաքականության համար»: Այսպիսի վկայակոչումներից Հետո հազիվ թե կարելի է համաձայնվել խորհրդահայ պատմակուսակցական գրականության մեջ տարածում գտած այն մտայնությանը, երբ «սպեցիֆիկները» դուրս էին բերվում որպես ոչ պրոլետարական, հակահեղափոխական կազմակերպություն: Այս կապակցությամբ պատմաբան Հ. Վարդանյանը գրում է. «Սպեցիֆիկները ժխտում էին ազգի ներսում դասակարգային կռիվը, քարոզում էին պրոլետարիատի ու բուրժուագիայի դասակարգա-

<sup>1</sup> Խան-Վզան Ռ., Գայ հեղափոխականի հուշերից /Հայրենիք, 1929, թիվ 6, էջ 109:

<sup>2</sup> ՀՀ ԳԵԿԹ ԿՊԱ, ֆ. 1022, ց. 7, գ. 36, թ. 1:

<sup>3</sup> ՀՀ ԳԵԿԹ ԿՊԱ, ֆ. 1022, ց. 7, գ. 63, թ. 1:

յին համերաշխութունը»<sup>1</sup>: Այնինչ, վերը բերված փաստերը հակառակն են ասացուցում:

Հեղափոխութեան պարտութեան և ստորիւպինյան վարչակարգի հակահարձակման պայմաններում մյուս ընդդիմադիր կուսակցութեանների ու կազմակերպութեանների նման «սպեցիֆիկները» ևս անցան ընդհատակ: Դաժան զրաքննութեան պայմաններում փակվեցին մի շարք թերթեր: Բայց և այնպես չընդհատվեցին ՍԴԲՀ պարբերական հրատարակութեանները: Կարճատև ընդհատումներով Բաքվում և Թիֆլիսում լույս տեսան «Գործ», «Շեփոր», «Ուղի» շաբաթաթերթերը: Հետադիմութեան հարձակման պայմաններում հոգւթածազիր հեղինակները հետապնդումներից խույս տալու նպատակով, որպես կանոն հանդես էին գալիս կեղծանուններով:

Հունիսերեքյան հեղաշրջումից հետո ցարական հետադիմութեան բռնաճնշումներից զերծ չմնացին նաև ՍԴԲՀ առանձին գործիչներ: Առանձնապես շատ տուժեց կազմակերպութեան փաստացի ղեկավար Բախչի Իշխանյանը: 1908թ. ապրիլին խուզարկվեց նրա բնակարանը, զրախանութներից բռնագրավվեցին նրա տպագիր գրքույկները: Ձուտ քաղաքական մեղադրանքով ավելի քան երկու տարով Բ. Իշխանյանը ազատազրկվեց և իր պատիժը կրեց Թիֆլիսի հայտնի Մետեխի բանտում: Ի դեպ, Իշխանյանը այն եղակի գործիչներից է, որին բախտ է վիճակվել ճաշակել թե՛ ցարական և թե՛ խորհրդային բանտի դառնութեանները:

Բացի Իշխանյանից, ցարական պահնորդութեանը հաջողվում է Թիֆլիսում, Բաքվում, Բաթումիում ձերբակալել Հայ կազմակերպութեան մի շարք այլ ակտիվիստների՝ ոմանց բանտարկելով, իսկ ոմանց էլ աքսորելով կայսրութեան խորքերը: Կազմակերպութեան մի քանի գործիչներ էլ ստիպված հեռացան արտասահման: Դրանից հետո ՍԴԲՀ առանց այն էլ թույլ կազմակերպութեանը փաստորեն կազմալուծվեց: Որոշ խմբեր դադարեցին դրոժել, իսկ գործող տեղական կոմիտեաների և խմբերի միջև կապը գործնականում կտրվեց: Այս առընչութեամբ միանգամայն անհիմն է խորհրդահայ-պատմագրութեան մեջ տարածում դրած այն թյուր վարկածը, թե իբր, «սպեցիֆիկները», համակերպվել են տիրող կարգերին, ուստի և չեն ենթարկվել հալածանքներին և որ, իբր, ոչ մի ձերբակալութուն չի կատարվել այդ կազմակերպութեանից: Ավելին, որոշ հեղինակներ Հայ կազմակերպութեանը որակել են որպես ցարիզմի գործակալ: Այնինչ իրականում, իր հիմնադրման ժամանակից, ՍԴԲՀ կազմակերպութեանը ՌՍԴԲԿ-ից և Հայ ազգային կուսակցութեաններից ոչ պակաս ենթարկվել է ցարական կառավարութեան հալածանքներին ու հետապնդումներին:

<sup>1</sup> Վարդանյան Յ. Գ., Հայ բուրժուազային կուսակցու թյու ճնդրի դիրքավորումը բուրժուական Առաջին հեղափոխութեան տարիներին /1905-1907/, Ե., 1975, էջ 162:

<sup>2</sup> Ուղի, Բաքու, 1 հուլիսի 1909թ., թիվ 1, էջ 13:

<sup>3</sup> Հայ ժողովրդի պատմութեան ճիւղ, հ. 6, Ե., 1981, էջ 423:

ՄԴԻՀԿ կենդանության նշաններ ցույց տվեց արդեն 1910-ական թվականների սկզբներից՝ Հետադիմության տեղատվության և հեղափոխության նոր վերելքի շրջանում: Լույս են տեսնում «Կոչ», «Նոր կյանք», «Կոպկասի լրագրեր», «Նոր ույժ» պարբերականները: Սակայն այս շրջանում «սպեցիֆիկների» գործունեության համար բնորոշ է դառնում ոչ այնքան բանվոր դասակարգի սոցիալ-տնտեսական ու քաղաքական պայքարի խնդիրների արծարծումը, որքան գրական-գեղարվեստական, տեսական-փիլիսոփայական հիմնահարցերը: Այ. Ռուբենին, Դ. Անանունը, Գ. Պիճիկյանը, Ալ. Մարտունին, Ա. Կարինյանը, Ս. Վարդանյանը և ուրիշներ տպագրում են քաղաքական, գրականագիտական և փիլիսոփայական բնույթի հոդվածաշարեր ու գրքուկներ: Օրինակ, Ալ. Ռուբենին իր «Գրական նկատողություններ» ստվարածավալ հոդվածաշարում քննության էր առնում ռուսական ու համաշխարհային գեղարվեստի խնդիրները և փորձում գրանք կապել ու տեղայնացնել հայ իրականության ու գեղարվեստի ներկայացուցիչների հետ:

Փիլիսոփայության հարցերում «սպեցիֆիկ» տեսաբանները հիմնականում կանգնած էին դիալեկտիկական մատերիալիզմի դիրքերում: Օրինակ, «Հայկական իմաստասիրության ազդարարները» հոդվածաշարում հեղինակ Գ. Պիճիկյանը քննադատում էր 20-րդ դարի սկզբի փիլիսոփայական «Նոր» ուղղությունը՝ է. Մախի և Ռ. Ավենարիտուսի սուբյեկտիվ իդեալիստական էմպիրիոկրիտիցիզմը և զրա փոխարեն պաշտպանում Մարքսի և էնգելսի աշխարհը վերափոխող մատերիալիստական աշխարհայացքը: Պիճիկյանը ցույց էր տալիս, որ այդ սուբյեկտիվ իդեալիստական փիլիսոփայությունը, հանձինս Ֆրանգյանի, Կուզեանի,<sup>2</sup> Սնարի, Հովհաննիսյանի թափանցում է նաև Հայ իրականության մեջ՝:

1910-ական թթ. սկզբի ուշագրավ աշխատություններից է նաև Դ. Անանունի «Ազգային հարցը և դեմոկրատիան», որը տպագրվել է «Նոր հոսանք» ամսագրում: Այստեղ հեղինակը, բանավիճելով բուլղերիկ գործիչներ Վ. Լևնինի, Ի. Ստալինի, Ստ. Շահումյանի և մյուսների հետ, դարգացնում ու ամբողջացնում է ազգային-մշակութային ինքնավարության դադափարը:

Այսպիսով, մեկ տասնամյակի ընթացքում ՄԴԻՀԿ բավականաչափ գործունեություն է ծավալել հայ հասարակական-քաղաքական կյանքում և ռուսական ու միջազգային սոցիալ-դեմոկրատական շարժման մեջ: Առանց այս ինքնատիպ կազմակերպության դադափարախոսության ու գործունեության ուսումնասիրման անհնարին է ամ-

<sup>1</sup> Նոր կյանք, Բաքու, 11 դեկտեմբերի 1911թ., թիվ 1-2, էջ 9-38:

<sup>2</sup> Կոչ, Բաքու, 3 ապրիլի 1911թ., թիվ 1, էջ 7:

<sup>3</sup> Նույն տեղում:

բողջական պատկերացում ունենալ 20-րդ դարասկզբի հայ հասարակական-քաղաքական մտքի խճապատկերի մասին:

Ուշագրավ է, որ իր գործունենությունների կրկրորդ տասնամյակի ընթացքում «սպեցիֆիկների» կազմակերպությունը վերաճեց քաղաքական կուսակցության: Պատմաքաղաքական գործընթացների ներգործությունը նա դադարափառաքաղաքական բարեշրջում /էվոլյուցիա/ ապրեց և հայ սոցալին կուսակցություններին գրեթե համահավասար, քալլ առ քալլ կանգնեց Հայաստանի անկախության գաղափարի և ազգային-պետական շահերի պաշտպանության հողի վրա: Սակայն 1920թ. Հայաստանի խորհրդայնացումից հետո «սպեցիֆիկների» կուսակցությունը՝ ՀՍԴԲԿ, մյուս այլախոհ կուսակցությունների պես, բռլչևիկների իշխանություն կողմից ենթարկվեց լուծարման ու բռնադատության:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

### ԱՐՄԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԱՐՄԵՆԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ  
ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ..... 3

### ԳԵՂԱՄ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՍՈՑԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ՀԵԶԱԿՅԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ ..... 26

ՎԵՐԱԿԱԶՄԹԱԼ ՀԵԶԱԿՅԱՆ ԿՐԻՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ ..... 56

### ԳԵՎՈՐԳ ԽՈՒԴԻՆՅԱՆ

ՀԱՅ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ..... 76

### ՍՈՒՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՅ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՌԱՄԿԱՎԱՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ ..... 110

### ՍԱՍՈՒՆ ՄԵԼԻՔՅԱՆ

ՍՈՑԻԱԼԻՍՏ - ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ  
ԵՎ ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ՀԱՅԱՇԱՏ ՔԱՂԱՔՆԵՐՈՒՄ  
1900 - 1914 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ..... 130

### ԴԵՐԵՆԻԿ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՌՍԴԲԿ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ  
ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ ..... 146

### ԱՐԱՐԱՏ ՀԱԿՈՐՅԱՆ

ՍՈՑԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՀԱՅ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ «ՍՊԵՑԻՑԻԿՆԵՐ» ..... 177

130092

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՈՒ ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ  
ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ  
ԱԿՆԱՐԿՆԵՐ / 1885-1914 ԹԹ. /

Խմբագիր՝	Է. Ա. Կոստանոյան
Սրբագրիչ՝	Գ. Ստեփանյան
Տեխ. խմբագիր՝	Դ. Չիսջյան

Հանձնված է շտաբում 06. 01. 2003թ.  
Ստորագրված է տպագրության՝ 15.04.2003թ.

---

«ԵԳԵԱ» ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ  
375009, ԵՐԵՎԱՆ, ԻՍԱՀԱԿՅԱՆ 28, ՀՏՈ. 52 64 09

Գիրքը տպագրվել է Վարդհրատ ՍՊԸ տպարանում  
Հասցե՝ Երևան, Զարյան 22



A  $\pi$   
88346